ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918-1930 թթ.

ԵՐԵՎԱՆ 2009

649392

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ՌՈՒԲԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա 99562

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ (ԱՄԵՐԿՈՄ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918-1930 թթ.

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՄՆԱՐԿԸ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա791

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Վիրաբյան
Գրախոս՝ պատմական գիտությունների թեկնածու Կ. Հ. Խաչատրյան

Ա 791 Ավետիսյան Ս.Ռ.
Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամեր - կոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, -239 էջ:

Մենագրության մեջ արխիվային նորահայտ բազմաթիվ փաստաթղթերի և վավերագրերի, թեմային առնչվող պատմագիտական գրականության հիման վրա ուսումնասիրվել և լուսաբանվել է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի իրականացրած մարդասիրական և որբախնամ գործունեությունը: Աշխատության մեջ ներկայացված է այն փաստերը, որ այդ դժվարին ու ծանր տարիներին ցուցաբերվել է Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող լայն հասարակայնության համար: Այն հատկապես մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել հայ-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրման համար:

ISBN 978-99941-73-29-7 ԳՄԴ 63.3 (2Հ)

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի Առաջին և Երկրորդ /խորհրդային/ հանրապետությունների պատմության մի շարք հիմնահարցերի նորովի մեկնաբանությունը հայոց պատմագիտության առաջնահերթ խնդիրներից է:

Գաղտնիք չէ, որ խորհրդահայ պատմագիտությունը Առաջին հանրապետության պատմությունը ներկայացրել է բացառապես մերժողական դիրքերից, իսկ խորհրդային շրջանի իրադարձությունները, ընդհակառակը, ներկայացվում էին որպես փառահեղ հաղթանակների շարք՝ առանց քննադատության որևէ ակնարկի: Սփյուռքահայ պատմաբանների մոտեցումը տրամագծորեն հակառակն էր:

Սխալ էր նաև 1990-ական թվականներին որդեգրած մոտեցումը, երբ Առաջին հանրապետության պատմությունը սկսեց ներկայացվել միայն վառ դույներով, իսկ 1920-ական թվականների պատմությունը, բնականաբար, միայն մռայլ երանգներով:

Այսօր ժամանակն է ներկայացնելու քննարկվող ժամանակաշրջանի օբյեկտիվ պատմությունը, իրադարձությունները և փաստերը բնութագրել այնպես, ինչպես իրականում դրանք եղել են:

Մեր կողմից ուսումնասիրվող թեման նշված ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության մեջ կարևոր տեղ է գրավում ոչ միայն այն պատճառով, որ այդ պատմության բաղկացուցիչ մասն է կազմում, այլև այն, որ նշված ժամանակաշրջանում արտաքին գործոնը կարևոր դեր է կատարել մեր ժողովրդի ճակատագրում: Ապացուցված փաստ է, որ առանց արտաքին օգնության գաղթականական Հայաստանը կմատնվեր սովամահության ինչպես 1919-1920 թվականներին, այնպես էլ 1920-ական թվականների սկզբին:

Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է նաև քննարկվող ժամանակաշրջանի պատմության մասին հնարավորինս ամբողջական պատկեր կազմելու տեսանկյունից և արդիական է նրանով, որ մեր ժողովուրդը դոյատևելու խնդրին բախվեց նաև 1990-ական թվականներին, և այսօր դժվար է պատկերացնել, թե

առանց արտաքին օգնության ինչպես կղարդանային գործընթացները:

20-րդ դարի սկզբին ողջ Հայաստանի և հարակից երկրներում ապաստանած արևմտահայ գաղթականների ու որբերի համար ուղղակի փրկություն էր Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) բարեգործական-մարդասիրական օգնությունը, որի շնորհիվ հարյուր հազարավոր մարդիկ կարողացան գոյատևել և նորից բնականոն կյանք վերադառնալ:

Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց բարեգործական հաստատությունը ձևավորվեց 1915-ի վերջին, սակայն Ամերիկայի կառավարությունը Արևմտյան Հայաստանում և Մերձավոր Արևելքի երկրներում միսիոներական գործունեություն էր սկսել դեռևս 19-րդ դարի կեսերից: Ամերիկյան միսիոներները, որոնց հիմնական նպատակը կրոնի դասավանդումն ու քարոզն էր, Արևմտյան Հայաստանի խոշոր բնակավայրերում հիմնել էին զանազան վարժարաններ ու կրթարաններ, իսկ 1894-1897 թթ. Թուրքիայի իրականացրած հայերի զանգվածային կոտորածների ժամանակ նաև որբանոցներ: 20-րդ դարի սկզբին միսիոներները կամավոր հանձն առան շատ ավելի դժվար և մեծ ջանք ու միջոցներ պահանջող, բայց կենսական անհրաժեշտություն ունեցող մի այլ խնդիր, այն է՝ օգնել ջարդերից փրկված բնակչությանը ինչպես կարող են և ինչով կարող են: Համագործակցելով Ամերիկյան կարմիր խաչի հետ՝ միսիոներները մեծ օգնություն կազմակերպեցին Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի հայաշատ բնակավայրերի բնակչությանը՝ հիմնելով հիվանդանոցներ, որբանոցներ, սննդակայաններ և այլն:

Այն, ինչ կատարվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, իր նախընթացը չուներ համաշխարհային պատմության մեջ: Օգտվելով պատերազմի խառնակ իրադրությունից՝ երիտթուրքական բարբարոսները իրականացրին դաժան ցեղասպանություն՝ հայազրկելով Արևմտյան Հայաստանը: Զանգվածային բռնադաղթի միջոցով արտաքսեցին հայ ժողովրդի արևմտյան հատվածին և ոչնչացրին մոտավորապես միլիոն հայերի: Հարյուր հազարավոր հայ մանուկներ որբացան ու ցրվեցին տարբեր երկրներ:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմից առավելապես տուժած երկրներին օգնություն ցույց տալու նպատակով ԱՄՆ-ում ստեղծվել էին մի քանի նպաստամատույց հանձնախմբեր: Եվ 1915թ. նոյեմբերին Հայ նպաստի կոմիտեի ("Armenian Relief Committee") միավորումով (մինչ այդ 1914 թ. դեկտեմբերից գործող Սիրիա-Պաղեստինյան նպաստի կոմիտե ("Palestine-Syrian Relief Committee") ստեղծվեց Հայաստանի և Սիրիայի նպաստի ամերիկյան կոմիտեն (American Committee for Armenian and Syrian Relief), որի բարեգործական գործունեությունը ընդգրկում էր երեք միացյալ խմբերի կողմից ներկայացված տարածաշրջանները: Նոր գործունեություն ծավալած հանձնաժողովի աշխատակիցները հավատարիմ էին մնում Հայ նպաստի կոմիտեի գործունեությանը[1]:

Նպաստամատույց կոմիտեն հետագայում ընդարձակեց դրանց սահմանները, բազմապատկեց կոմիտեի անդամների թիվը, որոնց մեծ մասը կամավորներ էին, և արդեն 1916 թվականից ծավալեց աննախադեպ մարդասիրական գործունեություն ոչ միայն Արևմտյան Հայաստանի շուրջ 50 խոշոր բնակավայրերում, այլև Սիրիայի, Լիբանանի, Հունաստանի տարածքներում ապաստանած գաղթականների շրջանում:

1917թ. միայն Արևմտյան Հայաստանի տարածքում Նպաստամատույցը իր խնամքի տակ էր առել մոտ 12.000 որբերի, որոշ քայլեր էին կատարվում նաև Կովկասում և Հայաստանում ապաստանած հայ գաղթականներին և որբերին սնունդ և հագուստ մատակարարելու, բժշկական օգնություն կազմակերպելու ուղղությամբ:

Մինչ Հայաստանի անկախ պետության ստեղծումը, Նպաստամատույցը համագործակցում էր հայկական հասարակական տարբեր կազմակերպությունների հետ՝ ջանալով իր աշխատանքներին տալ ավելի ուղղորդված բնույթ:

Այսպես՝ 1917 թ. մայիսի 2-ին արևմտահայերի՝ Երևանում գումարված առաջին համագումարի մասնակիցների մեջ էր նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ներկայացուցիչ Էռնեստ Յարրոն, որն ընդգրկվեց համագումարի ձևավորած վերաշինության հանձնաժողովի կազմում (այս հանձնաժողովի 11 անդամնե-

[1] Barton J., Story of Near East Relief, 1930. page 14.

րի մեջ էին նաև Արամ Մանուկյանը, Փանոս Թերլեմեզյանը, Կարո Սասունին և այլք)[2]:

Նույն թվականին ամերիկյան միսիոներները Արևելյան Հայաստանում Երևանում և Ալեքսանդրապոլում (Գյումրի), բացել էին արհեստանոցներ, որտեղ կանայք և տղամարդիկ մանածագործությամբ և ատաղձագործությամբ հոգում էին չքավոր բնակչության և գաղթականների առտնին հոգսերը, բացի այդ, ընտանիքներում ապաստանած որբերից յուրաքանչյուրի կեցության համար հատկացվում էր ամսական 10 ռուբլի[3]:

1918 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի որոշմամբ մինչ այդ գործող և Առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին օգնություն ցույց տվող Հայաստանի և Սիբիրյի Նպաստի ամերիկյան կոմիտեի հիմքի վրա ստեղծվեց «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն» Ամերկոմը ("American Committee for Relief in the Near East"), որը հետագայում կրճատ անվանվեց Մերձավոր Արևելքի Նպաստամատույց (Near East Relief): Կոմիտեի ձևավորման գործին մեծ աջակցություն ցույց տվեցին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն, ամերիկյան միսիոներական կազմակերպությունների ընդհանուր քարտուղար Ջեյմս Բարտոնը (Jemes L. Barton) (ասենք, որ այս կազմակերպությունը իր առաքելությունը հայերի շրջանում սկսել էր արդեն 19-րդ դարի վերջին Թուրքիայում սկսված զանգվածային ջարդերի ժամանակ), մեծահարուստ բարերար Քլիվլենդ Դաջը (Cleveland H. Dodge), Չարլզ Վիքրին (Charles V. Vickrey), Սամուել Դատոնը (Samuel Dutton) և այլք:

Առաջին հանրապետության հռչակումից հետո Հայաստանում ստեղծված ծանր կացությունը թեթևացնելու նպատակով կառավարության ձևավորած մի շարք պատվիրակություններ մեկնեցին տարբեր երկրներ, որոնց ջանքերով, ինչպես նշել ենք սույն աշխատության մեջ, Ամերկոմի գործունեությունը և ներկայությունը Հայաստանի Հանրապետությունում 1919 թ. մայիսից ստացավ բոլորովին այլ բնույթ, ընդգրկեց ողջ Հայաստանի տարածքը փրկելով բնիկ և գաղթական ազգաբնակչության մի զգալի մասին սովից և համաճարակներից:

---

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, գ.5, գ.169, թթ. 23-28:

[3] Աշխատանք, 23 սեպտեմբեր 1917, N 40:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ամերիկոմը շարունակեց համագործակցել նաև խորհրդային Հայաստանի հետ, սակայն Մերձավոր Արևելքի երկրներում, Բուլղարիայում, Հունաստանում ապաստանած հայ գաղթականներին, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերին օգնելու հարցում նրան աջակցում և նրա հետ գործում էին նաև Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Հայ ազգային պատվիրակությունը, այլ հասարակական կազմակերպություններ: Այս համագործակցությունը շարունակվեց ընդհուպ մինչև Ամերիկոմի աշխատանքների դադարեցումն ու լուծարումը:

Աշխատության նպատակն է ինչպես նորահայտ, այնպես էլ նոր մեկնաբանություններ պահանջող արխիվային փաստաթղթերի և վավերագրերի, թեմային առնչվող հուշագրությունների ուսումնասիրման հիման վրա ներկայացնել տարածաշրջանում Ամերիկոմի ծավալած շուրջ 15 տարվա գործունեությունը:

Սույն ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում մեր կողմից հայտնաբերված բավականին արժեքավոր նյութեր, որոնց մեծ մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Անշուշտ, դրանք թեմայի ուսումնասիրության առումով ունեն կարևոր նշանակություն և հարցադրումները փաստարկելու և վերլուծական եզրահանգումները հիմնավորելու տեսանկյունից միանգամայն վստահելի դերակատարում են ունեցել[4]:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ամբողջական և առանձին ուսումնասիրություններ չկան, այն չի եղել հատուկ ուսումնասիրության առարկա: Տպագրվել է ընդամենը փաստաթղթերի մեկ հրապարակում, որտեղ ներկայացված 10 փաստաթղթերով փորձ է արվել ցույց տալ Ամերիկոմի գործունեությունը խորհրդային Հայաստանում, վեր հանել որբանոցներում «Ամերիկոմի ստեղծած կենցաղային, գաղափարական և այլ անհանդուրժելի պայմանները»[5]:

---

[4] ՀԱԱ ֆոնդեր՝ 39, 57, 113, 114, 116, 119, 122, 131, 138, 154, 199, 200, 202, 205, 207, 282, 430, 1387:

[5] Տե՛ս Ամերկոմի գործունեությունը Հայաստանում, Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, N 4, էջ 47-68:

Հայաստանի Հանրապետությանը Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կողմից կազմակերպված օգնության խնդրին իրենց հուշագրություններում անդրադարձել են նաև Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետներ Ալ.Խատիսյանը և Ս.Վրացյանը[6]: Նրանք հիմնականում ներկայացրել են Ամերկոմի իրականացրած օգնության ծավալները:

Մեծ մարդասեր ու հայասեր, Ազգերի ընկերակցության գաղթականական հանձնաժողովի նախագահ, նորվեգացի նշանավոր բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենը իր «Խաբված ժողովուրդ» գրքում ևս անդրադարձել է Ամերկոմի գործունեությանը Հայաստանում[7] ներկայացնելով հատկապես նրա որբախնամ գործունեությունը[7]:

Ռիչարդ Հովհաննիսյանը և Էդուարդ Մելքոնյանը այն եզակի հայ պատմաբաններից են, որ իրենց աշխատություններում այս կամ այն չափով ուշադրություն են դարձրել Ամերկոմի գործունեությանը[8]: Առաջինը ներկայացրել է Հայաստան ամերիկյան սննդամթերք առաքելու, իսկ երկրորդը[8] որբախնամ գործունեության հետ կապված հարցերը:

Հայաստանի սովահար ժողովրդին Ամերկոմի ցույց տված մարդասիրական օգնության մասին քանակական տվյալներ են ներկայացված ակադեմիկոս Գալուստ Գալոյանի մենագրությունում[9]:

Ամերկոմի գործունեությունը որոշ չափով իր լուսաբանությունն է գտել պատմաբան Հովիկ Մելիքսեթյանի աշխատություններում[10] «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.)» և «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենա-

---

[6] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968., Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982.:

[7] Ֆ.Նանսեն, Խաբված ժողովուրդ, Երևան, 2000:

[8] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հատոր 1, Առաջին տարին, 1918-1919, Եր., 2005: Մելքոնյան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005:

[9] Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999:

[10] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Եր., 1975:

դարձությանը»[11]: Առաջին գրքում հեղինակը անդրադառնում է Ամերկոմի և խորհրդային իշխանությունների փոխհամագործակցությանը, իսկ երկրորդ գրքում ընդամենը մեկ անգամ է հիշատակվում Ամերկոմի անունը՝ կապված խորհրդային կառավարության կողմից նրա ուժերը և միջոցներն օգտագործելու շրջահայաց քաղաքականության հետ: Սակայն Հ. Մելիքսեթյանի աշխատությունները կարևոր աղբյուր են գաղթականության հիմնահարցի ուսումնասիրման համար:

Վերջին տասնամյակում Հայաստանում պաշտպանության են ներկայացվել երկու ատենախոսություններ նվիրված գաղթականության հիմնահարցին: Է.Դանիելյանի ատենախոսության թեման Անդրկովկասում 1914-1922 թթ. Եղեռնից փրկված հայ փախստականների շարժը, կացությունը և թվակազմն է[12]: Ճիշտ է, ատենախոսության մեջ չենք հանդիպում Ամերկոմի գործունեության մասին տվյալների, բայց հեղինակը շրջանառության մեջ է դրել փաստական մեծաքանակ նյութ հայ փախստականների մասին:

Կ. Հայրապետյանի ատենախոսությունը,[13] որը պաշտպանվել է 2006 թ., ներկայացնում է գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում 1918 թ. հունիսից-1919 թ. մայիսը, երբ Ամերկոմը դեռևս չէր ծավալել իր գործունեությունը Հայաստանում, ուստի և այն հիմնականում դուրս է մնացել հեղինակի տեսադաշտից: Բայց ատենախոսության նյութը, որը հիմնականում շրջանառության մեջ է դրված առաջին անգամ, և եզրակացությունները մեր աշխատանքի համար ունեն կարևոր նշանակություն:

Արդեն մեր օրերում հրապարակ եկան դիտական և քաղաքական նշանակություն ունեցող, Հայաստանի Հանրապետության և Հայկական հարցի պատմությանը նվիրված փաստաթղթե-

---

[11] Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985:

[12] Դանիելյան Է.Գ., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996:

[13] Հայրապետյան Կ.Պ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. հունիս-1919 թ. մայիս), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006:

րի և նյութերի երկու ժողովածուներ, որոնցում թեև չես հանդիպի Ամերկոմի գործունեությանը նվիրված նյութերի, սակայն դրանք մեր ուսումնասիրության համար ունեն թե սկզբնաղբյուրի, թե հայեցակարգային կարևոր նշանակություն[14]:

Սկզբնաղբյուրների նշանակություն ունի և արժե հիշատակել նաև Վահե Արծրունու «Հայ-տաճկական պատերազմը» աշխատությունը: Հեղինակը, 1920 թ. լինելով Կարսում ներգաղթի գծով պետական պաշտոնյա, համագործակցել է Ամերկոմի հետ, զբաղվել ամերիկացիների տնօրինության տակ գտնվող որբանոցների հարցերով, նկարագրել դրանց վիճակը Կարսի անկման նախօրյակին և դրանից հետո մինչև 1921 թ. հունվարը, երբ որբանոցների սաների մնացորդները տեղափոխվեցին Ալեքսանդրապոլ[15]:

Վերջին տարիներին լույս է ընծայվել Վ.Ղազախեցյանի «Հայաստանը 1920-1940 թթ.» մենագրությունը,[16] *որտեղ ևս հեղինակը անդրադարձել է Հայաստանում խորհրդային իշխանության առաջին տարիներին Ամերկոմի գործունեությանը: Նա հատկապես ընդգծել է այն փաստը, որ հանրապետության ղեկավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում որբերի գաղափարական դաստիարակության հարցերին և ձգտում էր դաստիարակչական աշխատանքը հանել Ամերկոմի տնօրինությունից:*

Լիսարիտ Ազատյանը հայ որբերի ճակատագրին նվիրված «Հայ որբերը Մեծ եղեռնի» եռագիրք աշխատության մեջ փաստագրական մեծաթիվ նյութեր է ներկայացրել Ամերկոմի որբախնամ գործունեության մասին[17]: *Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է որբանոցներում որբերի կենցաղային պայմանների և կրթական դաստիրակության որոշ հարցերի:*

---

[14] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000: Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и коментарий. В 2 т.-М., 2000 - т.1-М. 2003-т. 2, ч.1, -М., 2005 т. 2, ч.2.:

[15] Արծրունի Վահե, Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայությունը: Շատախ, Երևան, 2002:

[16] Ղազախեցյան Վ.Ն.,Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006:

[17] Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, գիրք երկրորդ, 1999, գիրք երրորդ, 2002:

Խորհրդային Հայաստանի ներքին կյանքի և արտաքին դրության, Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, միջպետական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հիմնահարցերին է նվիրված Կ. Խաչատրյանի «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին» ուշագրավ մենագրությունը: Հեղինակը արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի, թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա ուսումնասիրել և նորովի ներկայացրել է նշված հիմնահարցերը: Աշխատության մեջ բարձր է գնահատվում Խորհրդային Հայաստանի առաջին տարիներին Ամերիկոմի ցուցաբերած օգնության նշանակությունը, կան որոշ տվյալներ օգնության տեսակի և չափերի վերաբերյալ[18]:

Հունաստանի հայկական գաղթօջախի՝ 20-ական թվականների պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի՝ «Հունահայ գաղութի պատմությունից» աշխատությունը, որտեղ որոշակի տվյալներ են բերվում հունական գաղթավայրերում հայերի թվի վերաբերյալ, և ներկայացվում է Ամերիկոմի որբանոցներում տիրող իրավիճակը[19]:

Ամերիկյան գրականության մեջ իր ուրույն տեղն է գրավում Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի պատմության ուսումնասիրությանը վերաբերվող Ջ. Բարտոնի՝ «Story of Near East Relief (1915-1930)» ծավալուն աշխատությունը: Հեղինակը, լինելով Ամերիկոմի պաշտոնատար անձ, հետագայում մանրամասն շարադրել է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի պատմությունը, որտեղ անդրադառնում է նաև հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած վայրագություններին, բռնագաղթին և Հայաստանում տիրող ծանր իրավիճակին, ինչպես նաև Ամերիկոմի բարեգործական գործունեությանը[20]:

Արժեքավոր է նաև Մերրիլ Փիթերսոնի՝ «"Starving Armenians": America and the Armenian Genocide,1915-1930 and after» աշխատությունը, որտեղ մի գլուխը հեղինակը նվիրել է

---

[18] Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., 2007:

[19] Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927թթ.), Եր., 1965:

[20] Barton J., Story of Near East Relief (1915-1930) an interpretation, the Macmillan company New York 1930.

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր Արևելքի նպաստամատույցի իրականացրած մարդասիրական և որբախնամ գործունեությանը[21]:

Վերջերս լույս է տեսել Վ. Տերոյանի «Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում» գիրքը: Ամերիկոմում բազմաթիվ ղեկավար պաշտոններ զբաղեցրած Վ. Տերոյանը իր հուշերը խորհրդային վարչակարգի ժամանակ չէր կարող անկողմնակալ ներկայացնել, սակայն սույն աշխատությունը մեզ հստակ պատկերացում է տալիս Ամերիկոմի կատարած աշխատանքի և կառուցվածքի մասին[22]:

Աշխատության մեջ ի մի են հավաքված մամուլում, դրականության մեջ, արխիվներում պահպանվող նյութերը, հուշագրությունը, փաստաթղթերը աշխարհով մեկ սփռված հայկական որբանոցների և որբերի մասին, ուստի և այն ունի սկզբնաղբյուրի նշանակություն: Այսպիսով, թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում Ամերիկոմի գործունեության ուսումնասիրմանը քիչ ուշադրություն է դարձվել, ուստի և աշխատության աղբյուրագիտական հիմքն են կազմում վերը նշված արխիվային նյութերը և փաստաթղթերը, որոնց ճնշող մեծամասնությունը առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում:

Սույն ուսումնասիրությունը ուսանելի կլինի Հայաստանի Երրորդ հանրապետությունում արտասահմանյան մի շարք հասարակական կազմակերպությունների հետ հարաբերությունների ձևավորման գործընթացի, ինչպես նաև հայ-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրման համար:

---

[21] Peterson M., "Starving Armenians": America and the Armenian Genocide,1915-1930 and after, University of Virginia Press, 2004.

[22] Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., 2008:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԿՈՄԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1. Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը և Ամերկոմի գործունեության սկիզբը

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը, սակայն հենց իրենց՝ անկախության հռչակագիրը կազմած ու ստորագրած քաղաքական գործիչների վկայությամբ, երկրի անկախությունն առաջին մի քանի ամիսներին կարծես թե ավելի շատ հայտարարագրի բնույթ էր կրում: Մայիսից մինչև տարեվերջ նորաստեղծ հանրապետությունն իր սահմանները ճշտելու և դրա հետ կապված բազմաթիվ վիճահարույց հարցեր լուծելու համար ստիպված էր տևական բախումների և կռիվների մեջ մտնել հարևան թուրքերի, վրացիների ու ադրբեջանցիների հետ:

«Փաստորէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ, հազիւ 12.000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու թշւառութիւն, կոտորածի սարսափ»[23],- գրում է Ս. Վրացյանը:

Ազգամիջյան կռիվներն ու բախումները, քաղաքական ծանր իրավիճակը երկրում ստեղծել էին նույնքան ծանր տնտեսական մի կացություն, որի պատճառով հաճախ անպատասխան էին մնում հանրապետության կառավարությանը, խնամատարության ու աշխատանքի, պարենավորման նախարարություններին Հայաստանի համարյա բոլոր բնակավայրերից հաղորդագրված և օգնություն աղաղակող բազում խնդրագրեր, քանի որ ողջ երկիրն էր հայտնվել սովի և համաճարակների ճիրաններում, ճիշտ այնպես, ինչպես Մեծ Ղարաքիլիսայի, Համամլուի շրջանի տեղա-

[23] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982 թ., էջ 177:

ցի և գաղթական բնակչությունը, որոնց համախոսականի «....ժողովուրդը սովից կմեռնինք, 15-20 օր է կերածներս միայն խոտ է, մինչև 5 օր էլ որ այսպես շարունակվի, ժողովրդի գոյությունը վերջացած պետք է համարել»[24] տողերը այս կամ այն թվային փոփոխություններով կրկնվում էին խնդրագրից խնդրագիր և ստեղծում այն համապարփակ պատկերը, որ առկա էր ողջ Հայաստանում:

«Դրությունը քանի գնաց, ծանրացաւ: Մինչեւ հոկտեմբեր գրեթէ վերջացաւ Հայաստանի սահմաններում գտնուած հացի պաշարը, -գրում է Ս. Վրացյանը: -Դրսից ոչինչ չէր գալիս: Պետական եւ հասարակական ամբարները պարապ էին: Ստեղծուեց սարսափելի կացութիւն: Ոչ միայն գաղթականութիւնը, այլ եւ տեղացիներից շատերը մատնուեցին սովամահութեան.... Վեց ամսւայ ընթացքում սովից ու հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ մօտ 180.000 մարդ: Թիւրքերը գտել էին կոտորածի նոր ձեւ՝ աւելի իրական եւ աւելի անողմուկ.... Ժողովուրդը սպառուում էր վառուող մոմի պէս»[25]:

Անապաստան երեխաների և որբերի թիվը օրեցօր ավելանում էր: 1918 թ. հուլիսին Հայաստանի տարածքում կար 35 որբանոց՝ 2250 երեխաներով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց՝ 1950 երեխաներով: Սովը և համաճարակը օրական հարյուրավոր երեխաների էին տանում, և այսպես՝ 1918 թ. նոյեմբերին յուրաքանչյուր 5000 որբից 480-ը մեռնում էր[26]:

Երկրի վիճակը ավելի ծանրացավ աշնանն ու հատկապես դեկտեմբերին, երբ սկսվեցին հայ-վրացական նոր տարաձայնություններ Լոռի և Ախալքալաք հայկական գավառների շուրջ, որն ավարտվեց դեկտեմբերին բռնկված հայ-վրացական պատերազմով: Թեև պատերազմը տևեց երկու շաբաթ, սակայն այն ևս լուրջ վնաս հասցրեց Հայաստանի առանց այն էլ քայքայված տնտեսությանը:

1918-1919 թթ. ձմեռն ամենաերկարատևներից ու առավել խստաշունչներից էր Երևանի տարեգրության մեջ: Անտուն զանգվածները, որոնք չունեին պարեն, հագուստ, դեղեր, դժոխա-

---

[24] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.777, թ.171:
[25] Վրացեան Ս., նույն աշխ., էջ 192:
[26] Բանբեր Երևանի համալսարանի, 1968 թ., N 2, էջ 217:

յին ամիսներն անցկացրին բուք ու բորանի պայմաններում: Սովամահ ժողովուրդը երբեմն առ երբեմն ցույցեր էր անում կամ խռովություն բարձրացնում ուտելիքի համար, բայց այս առանձին պոռթկումներն անօգուտ էին: Պետական շտեմարանները դատարկ էին, իսկ Երևան եկած դաշնակից երկրների պաշտոնյաները հուսադրում էին, որ շուտով պարենամթերք կներմուծվի արտասահմանից[27]:

1919 թ. սկզբին կարճատև խաղաղության մի շրջան սկսվեց, որի ընթացքում կառավարությունը վերջապես կարողացավ իր ուշադրությունը կենտրոնացնել սովի, ցրտի, հիվանդությունների, դաղթականների անընդհատ տեղաշարժերի պատճառով «հալվող մոմի նման սպառվող» ժողովրդի վրա:

Դրությունն ավելի քան օրհասական էր: Սովի դեմ պայքարելու նպատակով բոլոր շրջաններում և խոշոր բնակավայրերում հիմնվեցին սննդակայաններ, որոնք օրվա մեջ մի քանի անդամ տաք կերակուր կամ հաց, ալյուր էին տալիս հաշվառման ենթարկված .չքավորներին և դաղթականներին: Սակայն երկրի մթերքի պաշարը աղետալի արագությամբ սպառվում էր, քանի որ երկաթուղու՝ դրեթե անդործության մատնված վիճակի պատճառով դրսից համարյա թե ներմուծում չէր կատարվում:

Բաթումի պայմանագրով Անդրկովկասի հանրապետությունների երկաթուղային տրանսպորտի ողջ գույքը տրվեց վրացիներին, թուրքերին և ադրբեջանցիներին, քանի որ վրացիներն ունեին մոտ 500 վերստ երկաթուղադիծ, թուրքերն ու ադրբեջանցիները միասին՝ մոտ 700 վերստ, իսկ հայերը միայն 72 վերստ: Ավերված էին կայարանների շենքերն ու պահեստները, գործածության համար ոչ պիտանի էր դարձել վագոնների ու շոգեմեքենաների առանց այն էլ փոքր քանակի մի զգալի մասը:[28]

Ժողովրդին սովի ճիրաններից փրկելու գործը խոչընդոտում էր նաև դաղթականների անկանոն ու չկանխատեսված տեղաշարժը: Յուրաքանչյուր օր պարզվում էր, որ սննդակայաններից օգտվողների թիվը աճել է, նախորդ օրվա համեմատությամբ, որի հետևանքով սննդակայաններում հաճախ սկիզբ առնող

---

[27] Հովհաննիսյան Ռ.,Հայաստանի Հանրապետություն, հատոր 1-ին, էջ 136:
[28] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.498, թ.15:

ծեծկռտուքն ու թալանը երբեմն դառնում էին խիստ վտանգավոր և անկառավարելի:

Վերջապես 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին Հայաստան են մտնում Բաթումից ֆրանսիացիների ուղարկած ալյուրի առաջին երկու գնացքները և մասամբ շտկում ծայրաստիճան լարված դրությունը:

Սթերքի բաշխումը կանոնավոր և նպատակային կազմակերպելու համար խնամատարության և աշխատանքի նախարարության պահանջով շրջաններում կրկին սկսվում է չքավորների և գաղթականների հաշվառում, ճշգրտվում են նախկին ցուցակները: Աշխատանքն ավարտելուց հետո նախարարությունում ամփոփվում են հաշվառման արդյունքները, և 1919 թ. ապրիլի 25-ին կառավարությանն է ներկայացվում բավական ընդարձակ մի զեկուցագիր: Ըստ այդ զեկուցագրի՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների թիվը հասնում էր 463.000-ի, որոնցից Հայաստանի Առաջին հանրապետության սահմաններում ապաստանել էին 263.000-ը, իսկ 200.000-ը ցրվել էին Հայաստանի սահմաններից դուրս և հանգրվանել Վրաստանում, Ատրպատականում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի այլ բնակավայրերում: Զգալի թիվ են կազմել նաև կովկասահայ գաղթականները, որոնք տեղաշարժվել են Կարսի, Շարուրի, Նախիջևանի տարածքներից և ցրվել ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում և Ռուսաստանում[29]:

«Բոլոր գաղթականների դրությունն էլ խիստ ծանր է,- նշվում է զեկուցագրում,- ամենաթշուառ վիճակի մէջ են գտնուում նոքա, որովհետև սով է, և օրական հարիւրներով են մեռնում սովից: Գաղթականների նման թշուառ դրութեան մէջ է գտնուում և բնիկ ազգաբնակութիւնը. նա էլ սովի է մատնուած և մեծ զոհեր է տալիս, որովհետև թուրքերը գրաւել են և ոչնչացրել են նրա 1918 թուի բերքը»[30]:

Անմխիթար վիճակում էին գտնվում Հայաստանում հաշվառված մոտավորապես 40.000 որբերը, որոնցից կառավարությունը 1918 թ. հոկտեմբերից մինչև 1919 թ. առաջին ամիսները կարողացել էր որբանոցներում տեղավորել 15.612-ին: Փողոցնե-

---

[29] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.22, թ.84:
[30] Նույն տեղում, ֆ.199, ց.1, գ.22, թ.84:

ում անխնամ թափառող որբերի թիվը մի քանի անգամ գերազանցում էր պետության հոգածության տակ գտնվողներին, և նրանցից ամեն օր մի քանի հարյուրը մեռնում էին պատերի տակ ու փողոցներում՝ նույնքան անօգնական և հոգածության կարոտ մեծերի հենց աչքի առաջ:

Զեկուցագիրը փաստում է նաև, որ ֆրանսիական օգնությունից դատ, մարտ ամսին Հայաստանի սովյալների համար մթերքի որոշ քանակ է ստացվել նաև Ամերիկայից, որն անմիջապես սպառվել է, և եթե այն չշարունակվի, բնակչությունն ուղղակի կկոտորվի[31]*:*

1919 թ. մարտին Ամերիկայից ստացված ցորենի բաշխումը մի նոր խոչընդոտի հանդիպեց դուտ կազմակերպչական առումով: Խնամատարության և աշխատանքի նախարար Սահակ Թադևոսյանը վարչապետ Ալ. Խատիսյանին ապրիլի 19-ին ներկայացրած զեկուցագրում իր դժգոհությունն է հայտնում պարենի բաշխման հարցում տիրող խառնաշփոթ վիճակի առիթով.

«Հայաստան եկող պարենն Ամերիկական կոմիտեից ստանում է Պարենաւորման մինիստրությունը, որը եւ բաշխում է համապատասխան հաստատություններին: Այդ բաշխման եղանակը մինչեւ այսօր եղել է անորոշ և կախված պարենաւորման մինիստրի անձնական բարեհայեցողությունից: Այսպիսի կարգը խանգարում է նպատակայարմար աշխատանքին, ուստի եւ պէտք է փոխել այն եւ տեղը հաստատուն կանոններ դնել: Այժմ այդ կանոնաւորումն աւելի քան անհրաժեշտ է, որովհետեւ Կարսի նահանգի փախստականների շարժման հետ կապված է Ալեքսանդրապոլի գաւառում Խնամատարութեան մինիստրութեան գործելակերպի փոփոխությունը: Մինչեւ այսօր այդ գաւառում փախստականների կարիքները հոգում էին Ամերիկական կոմիտէն եւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը: Այժմ այդպէս լինել չի կարող: Խնամատարութեան մինիստրութեան Կարս մեկնող պաշտոնեաները պիտի նախօրոք ապահովված լինեն պարէնի որոշ պաշարով, որ կարողանան գործել»[32]*:*

Նախարարը խնդրում է հատակություն մտցնել պարենավորման և խնամատարության նախարարությունների գործա-

---

[31] Տե՛ս նույն տեղում, գ.22, թ.84:
[32] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.22, թ.75:

ռուլթների միջև՝ առաջարկելով, որ Ալեքսանդրապոլի և Երևանի սովյալների խնամքը հանձնվի պարենավորման նախարարությանը, իսկ մյուս բնակավայրերինը՝ խնամատարության[2]:

1919 թ. դարնանը հայկական կառավարությունն արդեն պատվիրակություն էր ուղարկել Ամերիկա՝ գլխավորապես հաց ձեռք բերելու համար: Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հայախնամ գործունեությունն այդ ժամանակ հիմնականում տարածվում էր օտար երկրներում ապաստանած հայ գաղթականների, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերի վրա, որոնց համար Սիրիայում, Հունաստանում, Պոլսում և այլուր բացվել էին սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ. դրանց հատկացվող օգնությունը համեմատաբար կանոնավոր և կարգավորված բնույթ էր կրում, մինչդեռ դաշնակից պետությունների, թե Ամերկոմի օգնությունը Հայաստանին 1918 թ. և 1919 թ. առաջին կեսին այնքան էլ շոշափելի չէր, որը Ա. Խատիսյանը բացատրում է նրանց կենտրոնատեղին Թիֆլիսում գտնվելու հանգամանքով:

«Առհասարակ, պետք է ըսել, որ Թիֆլիսը իր մէջ կը կեդրոնացներ Դաշնակիցներու ներկայացուցիչները ի դէմս բարձր քոմիսարներու, իսկ Երեւանը եւ Բաքուն կը պահէին բարձր քոմիսարներու «ներկայացուցիչները»: Գլխավոր քոմիսարները կու գային Երեւան միայն երբեմն, առանձին կարեւոր դէպքերու պարագային: Այդ ունէր իր բացասական կողմը: Որովհետեւ Թիֆլիսի մէջ անոնք կենթարկուէին այնպիսի ազդեցութիւններու եւ տպաւորութիւններու, որոնց շատ դժուար էր հակազդել Երեւանէն, - գրում է Ա.Խատիսյանը ու շարունակում, - Թիֆլիսը Դաշնակիցներու քաղաքական կեդրոնն էր նաեւ այն խնդիրներու լուծման համար, որոնք Հայաստանի եւ հայերու համար առաջնակարգ կարեւորութիւն կը ներկայացնէին:

Պետք է ըսեմ, որ Թիֆլիսի այդ դերակշռող դիրքը բացասական ազդեցութիւն կը նէր ընդունելիք որոշումներու վրայ: Դաշնակիցներու գլխավոր կեդրոնավայրը ենթակայ չէր հայկական իրականութեան, հայ տեղական կեանքի եւ անոր էական պահանջներու անմիջական տպաւորութիւններուն: Ամէն անգամ

---

[2] Տե՛ս նույն տեղում:

պէտք կըլլար այդ բոլորը պարզել բարձր քոմիսարներու առջեւ, պէտք կըլլար համոզել եւ ազդել անոնց վրայ՝ բերելով ապացոյցներ իրականութենէ մը, զոր անոնք յաճախ չեն տեսած սեփական աչքերով»[34]:

Ինչպես վերը նշեցինք, Ամերիկոմի գործունեությունը 1918 թ. մայիսից մինչև 1919 թ. ապրիլը Առաջին Հանրապետության տարածքում տարերային բնույթ էր կրում, դրսևորվում էր առանձին, մասնավոր քայլերով միայն և համարյա եղանակ չէր ստեղծում նորանկախ հանրապետությունը աղետալի վիճակից հանելու հարցում: Այսպես՝ խնամատարության նախարարության 1918 թ. դեկտեմբերի 6-ի տեղեկագրում, որտեղ ներկայացված է Հայաստանի տարածքում գործող 12 սննդակայանների վիճակը, նշված է նաև, որ երեք կայանների՝ Նորագավթի, Ղամարլուի և Դավալուի կազմակերպումն ու ապահովումը «սիրով յանձնառու եղաւ Ամերիկեան նպաստամատոյց կոմիտեն»[35]: Իսկ նույն օրվա մեկ այլ տեղեկագրում հաղորդվում է, որ «Ղարաքիլիսայի սննդատու կայանի ուժեղացման համար վրացական տերիտորիայից և այլ վայրերից վերադարձող գաղթականութեան ծառայելու նպատակով Ամերիկեան նպաստամատուց կոմիտեն իր սննդատու կայանը տեղափոխեց Ղարաքիլիսա»[36]:

Մի այլ փաստաթուղթ հավաստում է, որ Ալեքսանդրապոլի «Պոլիդոն» կոչվող թաղամասում կուտակված հայ որբերի խնամքին մասնակցող Ամերկոմի ներկայացուցիչները կազմակերպել են որբերի աշակերտական միություն, որպիսիք արդեն գործում էին Սիրիայում, Հունաստանում և Արևմտյան Հայաստանում՝ Ամերկոմի խնամքի տակ գտնվող որբանոցներում, և որոնք ակտիվ մասնակցում էին որբանոցների ներքին կյանքի կազմակերպման գործին:

Հանրապետության լուսավորության նախարարը 1918 թ. դեկտեմբերի 19-ի գրությամբ ողջունել է այդ միության ստեղծումը.

---

[34] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 177:
[35] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.22, թ.6:
[36] Նույն տեղում, թ.7:

«Ձեր գրական օրգան «Փարոսի» ամսույս 16-ի համարից տեղեկանալով "Ամերիկեան որբերու աշակերտական միութիւն" կազմելու մասին՝ ի սրտէ շնորհաւորում եմ ձեզ՝ ի նկատի ունենալով այն գեղեցիկ և բարի նպատակները, որ "միութիւնը" ձգտում է իրագործել:

Մեր կեանքը ծարաւ է այդ վսեմ նպատակների իրագործումին, և ես ողջունում եմ, որ ձեր աշակերտութեան մէջ է այդ միտքն յղացել:

Իմ կողմից կարևոր դէպքում պատրաստ եմ ամեն տեսակ աջակցութեան: Միութեանը և կամ լրջամիտ պարբերական օրգանին ցանկանում եմ կատարեալ յաջողութիւն»[37]*:*

«Վաղարշապատն ու շրջաններն ապաստանող արևմտահայ գաղթականությունը ծայրահեղ թշվառության մատնելով, նյութական ու տնտեսական տագնապի մեջ է, սովամահության դեպքերն երթալով կը զարգանան ու ժամ առ ժամ սուր կերպարանք կընդունին», -նշվում է Էջմիածնից հունվարի 27-ին «Աշխատանք» թերթին ուղարկված հաղորդագրությունում[38]*: «Վերջին ժամանակներս շրջանիս մեջ ապաստանող փախստականությունը սկսել է ամեն տեսակ անվայել և ստորացուցիչ միջոցների դիմել: Առանց չափազանցնելու, նրանցից շատ շատերը կաշի ուտելով օր կանցուցեն, իսկ վերջերս հրապարակի վրա միս չճարվելու առթիվ տեղիս գաղթականները, հանձինս Վանքի հանրակացարաններու մեջ ապրողներուն, սկսած են շներ ու կատուներ մորթել և ուտել: Դրությունը չափազանց հուսահատական է, - հաղորդում են նույն Էջմիածնից, - այս մի քանի օր է՝ մեռելները սայլերով կը տանեն և իրարու վրա կը լցնեն խրամի պես փորած փոսերու մեջ... Ամսույս 28-ին (փետր.) տեղս եկավ Ամերիկյան կոմիտեի լիազոր Մստր Էլդրը և յուր խոսակցության միջոցին խոստացավ շուտով նյութական օժանդակություն հասցնել սովն տառապող գաղթականության: Հետո ինքը անձամբ գնաց գաղթականական գերեզմանատուն, երբ հոն հասավ, ուղղակի շշմեցավ ու զարմանքով հարցրեց, «սա գերեզմանատուն է, թե*

---

[37] ՀԱԱ, ֆ.207, ց.1, գ.46, թ.1:

[38] Աշխատանք, 1919, 4 փետրվարի :

խրամ», նրանք պատասխանեցին (դերեզմանափորները), թե դերեզման է, միայն թե տասնյակ զոհերու»[39]:

«Փարպիի և Թաքեի մեջ բնակվող դլխավորապես արևմտահայ փախստականությունը՝ սովէն օրական տասնյակներով կը մեռնի, թաղելու հնարավորություններ չկան նույնիսկ», - փետրվարի 16-ին հեռագրում են Աշտարակից փախստականության ներկայացուցիչները: Նույն օրը Աշտարակից դարձյալ հեռագիր է ստացվում Ամերիկյան կոմիտեի գործավարից և մի քանի գաղթականական ներկայացուցիչներից հետևյալ բովանդակությամբ. «Այսօր կոմիտեի դրասենյակն եկան գաղթականական քսան ներկայացուցիչներ և սոված ժողովուրդ, պարզեցին սովէն կոտորվող գաղթականության դրությունը և խնդրեցին անմիջապես դիմում ընել ձեզ խնդրելու, որ օր առաջ հաց ուղարկեք անտեր գաղթականության, որ օրական տասնյակներով կը մեռնի»[40]:

Համատարած սովի հաղթահարման նպատակով Կարսից և այլ տեղերից հացահատիկի ներկրման վերաբերյալ կառավարությունը բազմաթիվ դիմումներ է հղել Անդրկովկասում բրիտանական հրամանատարությանը: Սակայն այդ դիմումները մնում էին անպատասխան[41]: Այդպիսի մի դիմում դաշնակիցներին արվեց հունվարի 31-ին: Վարչապետ Հ. Քաջազնունին հեռագրով դիմեց Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարին. «Կառավարական պահեստների հացի վերջին մնացորդները սպառված են: Երկրորդ օրն է, որ դադարեցված է հացի տրամադրումը հիվանդանոցներին, որբանոցներին և աննդատու կայաններին: Սովից մահացությունը ընդունում է սարսափելի չափեր: Կարսից և մյուս շրջաններից հացի ներկրման ուշացումը կհանգեցնի ժողովրդի կործանմանը: Հայաստանի կառավարությունը իր պարտքն է համարում ևս մեկ անգամ այդ մասին ասել դաշնակիցների հրամանատարությանը»[42]:

Պարենավորման նախարարության կողմից մարտի 10-ին վարչապետի պաշտոնակատար Ա.Խատիսյանին ներկայացված տեղեկանքի համաձայն՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին

---

[39] Աշխատանք, 1919, 19 մարտի :
[40] Ժողովուրդ, 1919, 23 փետրվարի :
[41] ՀԱԱ, ֆ.198, g.1, գ.15, թ.88:
[42] ՀԱԱ, ֆ.199, g.1, գ. 32, թ.34:

Կարսից Հայաստան է հասել 22 վագոն հացահատիկ, Թիֆլիսից 101 փութ 22 ֆունտ ալյուր: Այդ 22 վագոնից 8-ը թողնվել է Ալեքսանդրապոլում, իսկ 14-ը ուղարկվել է Երևան: Մայրաքաղաք հասած 11620 փութ 34 ֆունտ հացահատիկը բաշխվել է խնամատարության, ռազմական նախարարություններին և Երևան քաղաքին: Վերջինիս տրվել է 2386 փութ 02 ֆունտ հացահատիկ: Բացի դրանից Ամերիկյան կոմիտեն նույն ժամանակաշրջանում ստացել է 14 վագոն ալյուր և 10 վագոն բրինձ, որոնք բաշխվել են կոմիտեի կողմից[43]: Ծով կարիքի պայմաններում Անդրկովկասում բրիտանական հրամանատարության օժանդակությամբ ստացված պարենը չէր կարող հանրապետության ազգաբնակչությանը, այդ թվում նաև գաղթականությանը, դուրս բերել սովի ճիրաններից: Պարենավորման նախարարության կողմից կատարված հաշվարկների համաձայն հանրապետությունում սովը հաղթահարելու համար անհրաժեշտ էր ամսական 750 հազար փութ ցորեն[44]: Արդյունքում սովից և հյուծվածությունից օրական մահացությունը կազմում էր միայն Երևանում մինչև 50 մարդ[45], իսկ Հայաստանի Հանրապետությունում մոտ երկու հազար մարդ[46]:

«Դրությունը հուսահատական էր, -վկայում է Ս. Վրացյանը, - մայիսի վերջերին Երևանի հացաբաժինը իջեցվեց մեկ քառորդ ֆունտի, իսկ գավառի ժողովուրդը արածում էր դաշտերում: Սով Արքայի ուրվականը սավառնում էր Հայաստանի գլխին»[47]: Հանրապետությունում սովը շարունակվեց մինչև 1919 թ. կեսերը: Իրավիճակը փոխվեց միայն մայիսի վերջերին, երբ Հայաստան հասավ ամերիկյան ծավալուն օգնությունը:

Այսպիսով, 1918-1919 թթ. Ամերկոմի գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության տարածքում կրում էր տարերային բնույթ և դրսևորվում էր առանձին քայլերով միայն և համարյա եղանակ չէր ստեղծում երկիրը աղետալի վիճակից հանելու հարցում:

---

[43] Նույն տեղում, գ. 26, թ. 29:
[44] Նույն տեղում, ֆ.198, g.1, գ.15, թ. 89:
[45] ՀԱԱ, ֆ.199, g.1, գ. 32, թ.133:
[46] Նույն տեղում, գ.26, թ.27:
[47] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 253:

2. Ամերիկայի օգնությունը Հայաստանին (1919 թ. մայիս-1920 թ.մայիս)

1919 թ. մայիսից Ամերիկայի ներկայությունը Հայաստանում դարձավ զգալի և տվեց իր ցանկալի արդյունքը: Նշենք, որ այս հարցում մեծ դեր ունեցան նաև Հայաստանի կառավարության տարբեր պատվիրակությունները, որոնք մեծ աշխատանք էին ծավալել արտասահմանյան շատ երկրներում:

1919 թ. ապրիլի 8-ին Փարիզում կնքվել էր մի համաձայնագիր մի կողմից Ամերիկյան օգնության վարչության ներկայացուցիչ Հերբերթ Հուվերի (Herbert Hoover) և մյուս կողմից Փարիզի հայկական պատվիրակության ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի միջև, որը ապրիլի 28-ին Երևանում վերահաստատվեց Հ. Հեյնցի (Howard Heinz) և Հ. Քաջազնունու կողմից[48]: Համաձայնագրի հիմնական դրույթները նախատեսում էին կանխել սովի հետագա տարածումը Արևմտյան Հայաստանում և Հայաստանի Հանրապետության տարածքում, որի շնորհիվ կկանխվեր նաև անիշխանության տարածումը, ու կհաստատվեր կարգուկանոն: Ամերիկյան կողմը հանձն էր առնում ևս 5000 տոննա ալյուր ուղարկել Հայաստան և շարունակել այդ տեսակ հայթայթումները մայիս, հունիս, հուլիս ամիսներին:

Համաձայնագրում շոշափվում էին նաև մթերքի տեղափոխման ծախսերը հոգալու և դրա ճիշտ բաշխմանը նպաստող երկկողմ համագործակցությանն ու պարտավորություններին առնչվող հարցեր[49]:

Մայիսի առաջին օրերին կառավարության նիստերում վարչապետը բազմիցս անդրադարձել է այս պայմանագրին, կառավարության ուշադրությունը բևեռել նրա հիմնական դրույթների վրա: Պարզաբանվել է, որ պայմանագիրը նախատեսում է ստացած վարկի սահմաններում ձեռք բերված ալյուրի համար վճարումները կատարել առանց ուշացումների, հենց Նյու Յորքում և միայն դոլարով, որ Ամերիկայի կառավարությանը պարբերաբար պետք է ներկայացվի Հայաստանին անհրաժեշտ սերմա-

---

[48] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.303, թ.14:
[49] Նույն տեղում, ֆ.207, g.1, գ.46, թ.96:

ցուի տեսակի և քանակի պահանջը, որ մթերքների տեղափոխությանը նպաստելու նպատակով Բաթումում, Թիֆլիսում և Երևանում ամերիկացիների կողմից կնշանակվեն պաշտոնյաներ, որ ամերիկացիների կողմից հսկողություն է սահմանվելու մթերքի բաշխման և սպառման վրա, Ամերիկան պիտի ճանաչվի արտոնյալ պետություն Հայաստանի նկատմամբ և նրան թույլատրվի օգտվել վարկից այնպիսի պայմաններով, ինչպիսի պայմաններով օգտվում է Հայաստանը Ամերիկայի վարկից[50]:

«Հայաստանի Խորհրդի ու կառավարության դիմումները, ինչպէս նաեւ արտասահմանում կատարուած աշխատանքները, վերջապէս, լուսեցին, եւ օգնութիւնը շատ չուշացավ: Այս անգամ օգնութեան հասնողը Ամերիկան էր՝ Միացյալ Նահանգների պարենաւորման դիկտատոր Հուվէրը՝ Եւրոպայի փրկիչը յետպատերազմեան սովից: Հուվէրը եղաւ եւ Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը: Ինչ էլ լինի մեր վերաբերումը դէպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկեան մարդասիրական նպաստն ու պարէնը երբեք չենք մոռանայ. չպետք է մոռանանք:

Մայիսի 20-ին Բաթում եկաւ ամերիկեան առաջին նաւը՝ 125.000 փութ ալիւրով, մի շաբաթ անցած՝ հասաւ եւս 600.000 փութ: Այդ մթերքը Հայաստան փոխադրելու համար վրաց կառավարութիւնը հայկական կառավարութիւնից պահանջեց 579 վագոն եւ 14 շոգեշարժ, այն ժամանակ, երբ Հայաստանի ունեցած վագոնների ընդհանուր թիւը 520 էր եւ շոգեշարժներինը՝ 16: Պետք եղաւ ամերիկացիների եւ անգլիացիների միջամտութիւնը, 4 օրով կանգնեցուց Հայաստանի երկաթուղային մարդատար հաղորդակցութիւնը, եւ բոլոր միջոցները յատկացուեցին ալիւրի փոխադրութեան»[51]:

Ամերկոմից ստացվող կանոնավոր և մեծաքանակ օգնությունը հրատապ խնդիր դարձրեց պարենի և այլ կարգի օգնության բաշխման կարգը քիչ թե շատ կառավարելի և վերահսկելի դարձնելը, քանի որ լսվող դժգոհությունը ոչ միայն հանրապետության մի քանի նախարարությունների կողմից էր, այլև հենց Ամերկոմի ներկայացուցիչների: Մերձավոր Արևելքի Նպաստա-

---

[50] Նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ. 732, թթ.15-16:
[51] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 242:

մատույց կոմիտեի Կովկասի տարածաշրջանի լիազոր կոմիսար Յարրոյի՝ Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությանը ուղղած հուլիսի 8-ի գրության մեջ ասվում է. «Թիֆլիսում Ամերիկյան օգնության կոմիտեն թիֆլիսաբնակ հայերին օրական տրամադրում է մոտ 30.000 հաց, ընդ որում, ալյուրը, որից թխվում է այդ հացը, պատկանում է Հայաստանի կառավարությանը, իսկ բաժանելու ծախսերը ընկնում են կոմիտեի վրա:

Մենք ամեն ինչ արինք, որ այդ աշխատանքը լինի ազնիվ և համապատասխանի իր կոչմանը, բայց զգում ենք, որ ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ դեպքում մեզ չի հաջողվել հասնել հաջողության: Բացի այդ, մենք կասկածներ ունենք, թե արդյոք քաղաքի բնակչության՝ անվճար սննդի կարիք ունեցողների թիվը ստույգ է, այն դեպքում, երբ այդ ալյուրը նախատեսված է Հայաստանի համար: Մեզ նաև անհանդստացնում է հնարավոր տարաձայնությունների ծագումը, քանի որ ալյուրը պատկանում է Հայաստանի կառավարությանը, իսկ բաշխման ծախսերը կրում է Ամերկոմը՝ կազմակերպություն, որը ալյուրի սեփականատերը չէ:

Սրանով ես պաշտոնապես տեղեկացնում եմ Ձեզ, որ 10 օրից, այն է՝ հուլիսի 18-ից, Ամերիկյան օգնության կոմիտեն դադարեցնելու է հացի բաշխումը: Եթե Հայաստանի կառավարությունը կցանկանա Թիֆլիսում շարունակել այդ գործունեությունը, Ամերիկյան կոմիտեն ուրախ կլինի նրան հանձնել այդ աշխատանքը իր ողջ զինանոցով և բոլոր հարմարություններով»[52]:

Մթերքի բաշխման առիթով կառավարությանը իր դժգոհությունն էր հայտնել նաև խնամատարության և աշխատանքի նախարարը հուլիսի 3-ի իր գրությամբ. «Ես մի քանի անգամ դիմել եմ Ամերիկեան նպաստամատույց կոմիտէին՝ խնդրելով, որ Հայաստանի կառավարութեան անունով ստացած կաթը յանձնի մեզ: Մինչեւ այժմ ինձ յանձնված է հիւանդանոցի համար 125 արկղ, իսկ որբերի համար ոչինչ չեմ կարողանում ստանալ. այնինչ այդ կաթը միևնույն ժամանակ մեծ քանակութեամբ ծախսւում է շուկայում: Ստացած շաքարից, լոբիից և կակաոյից էլ ոչինչ չստացանք: Այսօր երկաթուղու կայարանում ամերիկեան ներկայացուցիչ Ֆիքսը շատ կոպիտ ձևով մերժել է մեր խնդիրը:

---

[52] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 767, թ. 203:

Վերոյիշեալի մասին խնդրում եմ Ձեզ ի գիտութիւն և ի տնօրինութիւն»[53]:

Հարցը ինչ-որ կերպ կարգավորելու առումով կառավարության որոշմամբ հուլիսի 5-ից միացվեցին խնամատարության և աշխատանքի ու պարենավորման նախարարությունները, սահմանվեց նաև կառավարության և Ամերկոմի համատեղ գործունեության կարգը, որոնց աջակցելու էին նաև տեղերում ստեղծված գյուղական պարենավորման կոմիտեները[54]:

Այսպիսով, Ամերկոմի կանոնակարգված գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության հետ սկսվեց 1919 թ. մայիսի վերջերից, երբ երկիրը կարծես թե կարճատև խաղաղության շրջան էր ապրում: Ետևում էին մնացել 1918-ի ազգամիջյան բախումներն ու կռիվները, լուծվել էր նաև Կարսի ու Նախիջևանի խնդիրը, և նրանք արդեն գտնվում էին Հայաստանի Առաջին հանրապետության իշխանության ներքո: Սակայն երկիրը տնտեսապես ծայրաստիճան քայքայված և ողբերգական վիճակի մեջ էր, և Ամերկոմի գործունեությունը ընդգրկեց նորաստեղծ հանրապետության ներքին կյանքի համարյա բոլոր բնագավառները՝ գաղթականների և տեղացի չքավոր բնակչության խնամատարություն, որբերի հավաքագրում և որբանոցների բացում, հիվանդանոցների, շրջիկ բուժկայանների, արհեստանոցների ստեղծում, կրթական գործի կազմակերպում, օգնություն բանակին և զինվորականներին, շինարարություն, հացահատիկի և այլ կուլտուրաների սերմացուի ձեռքբերում, ցանքի կազմակերպում, մշակում և այլն:

«Ամերիկեան ալիւրի հասնելով՝ կամաց-կամաց սովը մեղմացաւ, երկիրը սկսեց մտնել բնականոն հունի մէջ, եւ ժողովուրդն ու կառավարութիւնը կարողացան նիւրուել երկրի վերաշինութեան ու պետութեան կազմակերպման գործին»,-գրել է հետագայում Ս. Վրացյանը[55]:

Ալյուրի և պարենի առաջին գնացքների մուտքը Հայաստան հնարավորություն ընձեռեց բոլոր գավառներում բազմապատկել գործող սննդակայանների թիվը, որոնք անվճար տաք

---

[53] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ.22, թ. 174:
[54] Նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ. 732, թ. 155:
[55] Վրացեան Ս., նշված աշխ., էջ 242:

կերակուր, հաց ու ալյուր էին մատակարարում բնակչության չքավոր խավին և գաղթականությանը:

1919 թ. հունիս-օգոստոս ամիսներին Ամերիկոմի ներկայացուցիչները խնամատարության նախարարության աշխատակիցների հետ շրջում էին գավառներում, ճշտում կարիքավորների ցուցակները, փորձում շինություններ առանձնացնել պահեստների և սննդակայանների համար, կարգավորել հատկացվող սննդի չափաբաժինը, տեսականին և այլն:

Այն, ծայրաստիճան թշվառությունը, որին ականատես եղան Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները Հայաստանի գավառներում, վեր էր ամենավառ երևակայությունից:

Մեկը մյուսի հետևից Թիֆլիս՝ Կովկասում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կենտրոնական գրասենյակ ուղարկած նրանց զեկուցագրերն արդեն ականատեսների կողմից ստեղծված փաստաթղթեր էին և բոլորովին կասկած չէին հարուցում իրավիճակի իրական պատկերը ներկայացնելու հարցում:

«Իմ տպավորությունները Զանգիբասարում շրջագայելուց» ծավալուն զեկուցագրում Ամերիկոմի տեսուչը գրում է, որ ավելի սարսափելի պատկերներ ինքը մինչ այդ չէր տեսել և չէր էլ պատկերացրել: Մեկ առ մեկ նկարագրելով գյուղերի վիճակը՝ տեսուչը գրում է, որ ինքն այն տպավորությունը ստացավ, թե Զանգիբասարը ժողովրդի մի մեծ գերեզման է դառնալու, քանի որ սովն ու գողէրոցքը ուղղակի հնձում են մարդկանց, և նրանք, ովքեր սեփական մաշկի վրա չեն զգացել այդ սարսափները, չեն կարող պատկերացնել դրության ողջ ահավորությունը: Զեկուցագիրն ավարտվում է շուտափույթ աջակցող խմբեր և գեղորայք ուղարկելու խնդրանքով՝ ավելացնելով, որ այլապես հապաղումը ճակատագրական կլինի[56]:

Նույն վիճակն էր տիրում նաև մյուս գավառներում ու շրջաններում, որտեղ բաշխումն անմիջականորեն իրականացնում էին Ամերիկոմի գործակալները:

1919 թ. օգոստոսին Երևան ժամանեց Փարիզի խաղաղության վեհաժողովի լիազոր դեսպան Ուիլյամ Հասկելը (William N. Haskell), որը վերահսկում էր Հայաստանի մատակարարման գործը:

---

[56] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 484, թթ. 31-33:

Հասկելի ժամանումը բավական օգտակար եղավ Ամերիկայից ստացվող օգնության բաշխումն ավելի նպատակաուղղված դարձնելու և արդյունավետ կազմակերպելու համար: Ժամանակի պետական այրերը, համարյա բոլորն անխտիր, հետագայում իրենց հուշերում միշտ երախտագիտությամբ են հիշատակել Հասկելի անունը, որը Հայաստան այցելելուց հետո էլ շարունակում էր ուշադրության կենտրոնում պահել երկրի մատակարարման գործը: Ահա թե ինչ է գրում այդ մասին վարչապետ Ալ. Խատիսյանը. «Գնդ[ապետ] Հասկելի դերը հայ ժողովուրդին անունդ մատակարարելու, որբերը խնամելու, արհեստանոցներ բանալու գործին մէջ իրոք հսկայական էր: Իբրեւ պետ ահագին ոչ քաղաքական կազմակերպութեան մը, որուն ցանցը կը տարածուէր ամբողջ Հայաստանի մէջ, եւ որը դեղեցիկ կերպով կըմբռնէր իր գործը եւ անձամբ կը մտնէր անոր բոլոր մանրամասնութեանց մէջ, Հասկելը իր անունը ոսկի տառերով գրած է հայ ժողովրդի փիլիքական գոյութեան պահպանման գործին մէջ:

Ան բաժանած էր Հայաստանը մէկ քանի շրջաններու. ամեն մէկ շրջան ունէր իր կառավարիչը, կառավարիչը ունէր իր պահեստը, ուր կը մտնէին պաշարեղէնը եւ հագուստը՝ Ալեքսանդրապոլի կեդրոնական պահեստէն»[57]:

1919 թ. սպասված բերքը համարյա չմեղմեց կացությունը, քանի որ գաղթականների հոսքը այդպես էլ չէր դադարում, իսկ երկաթուղու անկանոն աշխատանքը հաճախ խոչընդոտում էր Ամերկոմի աշխատանքները՝ առիթ տալով մեծ մասամբ նաև անհիմն դժգոհությունների:

Սակայն հանրապետության խնամատարության նախարարության և Ամերկոմի համատեղ ջանքերով 1919 թ. ամռան ամիսներին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Դիլիջանում և այլ խոշոր բնակավայրերում, անգամ գյուղերում բացվեցին արհեստանոցներ, որոնք հնարավորություն տվեցին բնակչությանն օգնել նաև այլ հարցերում: Փայտամշակման արհեստանոցները, կոշկակարանոցները, կարի և մանածագործական արտելները, որ համատեղ կազմակերպել էին տեղական իշխանություններն ու Ամերկոմը, հնարավորություն էին տալիս ապահովել թե՛ զորքի, թե՛ որբանոցների, թե՛ հիվանդանոցների կարիքների գոնե մի մա-

[57] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 192:

սը: Կառավարությունը Ամերկոմին օգնում էր շենքերով, փայտանյութով, փոխադրամիջոցով, իսկ վերջիններս աշխատատեղեր էին ստեղծում, մատակարարում սնունդ, անհրաժեշտ արհեստագործական գործիքներ և այլն:

Ս. Վրացյանի վկայությամբ, 1920 թ. օգոստոսի 1-ին գործում էին. «Երևանում՝ ջուլհականոց (կտավ), վերանորոգումների բաժին, կարուձևի արհեստանոց, փականագործարան, ատաղձագործարան. Սարըղամիշում՝ տախտակի սղոցարան, ջուլհականոց (կտավ), ատաղձագործարան, փայտի չոր թափման, որ պատրաստում էր սեւ փիւթ, ածուխ, սոսինձ եւ այլն. Ալեքսանդրապոլում՝ ջուլհականոց (բրդեղէն) , 2-րդ ջուլհականոց (կտավ, գուլպա). Կարսում՝ ջուլհականոց (բրդեղէն), կաշեգործարան. Էջմիածնում՝ ջուլհականոց (կտավ). կօշկակարանոց. Դիլիջանում՝ ջուլհականոց (բրդեղէն), շինուածանիւթերի արհեստանոց, կահկարասիքի արհեստանոց. Նոր-Բայազետում՝ կօշկակարանոց, ջուլհականոց (բրդեղէն). մանարան Բաշ-Ապարանում, ջուլհականոց Ջալալ-Օղլիում, կօշկակարանոց Ղամարլուում, մանարան Սարդարապատում եւ այլն»[58]:

1919 թ. Ամերկոմից ստացվող սննդի ու հագուստի բաշխումը դաղթականներին և չքավոր ազգաբնակչությանը մինչև աշուն զուգահեռաբար իրականացնում էին հանրապետության խնամատարության նախարարությունը և Ամերկոմի տարածաշրջանային ներկայացուցիչները:

Համաձայն Հայաստանի վարչապետին Ամերկոմի Թիֆլիսյան դրասենյակի ներկայացրած պաշտոնական տեղեկագրի՝ սեպտեմբերի 10-ի դրությամբ Ամերկոմը Հայաստանին տրամադրել էր 11.500.000 դոլար արժողությամբ մթերք: Տեղեկագրում նշվում էր, որ քանի դեռ Հայաստանի և Ամերիկայի կառավարությունների միջև վճարումների վերաբերյալ վերջնական համաձայնագիրը ստորագրված չէ, Հայաստանի կառավարությունը պետք է Ամերկոմի ներկայացուցիչ մայոր Հուվերին, որը վարում էր հաշվառումը, վճարի այդ գումարը և վճարման ստացականները կցի մթերքի ստացականներին: Վերջնական հաշվարկից հետո Ամերկոմը պարտավորվում էր վերադարձնել ավելորդ գումարը,

---

[58] Վրացեան Ս., նշվ. աշխ ., էջ 426:

եթե այն կլիներ, կամ էլ այն հաշվարկել իբրև կանխավճար հետագա մուտքերի համար[59]:

Մեկ այլ գրությամբ պահանջվում էր կենտրոնական գրասենյակ ներկայացնել հաշվետվություն մթերքի բաշխման վերաբերյալ:

Այստեղ հարկ ենք համարում ամբողջությամբ ներկայացնել Հայաստանի կառավարությունից Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի Կովկասյան տարածաշրջանի գերագույն կոմիսար Յարրոյին 1919 թ. սեպտեմբերի 20-ին ներկայացրած զեկուցագիրը, որը տալիս է աշխատանքի իրական և ամբողջական պատկերը:

«Ամերիկյան ալյուրը Հայաստանի կառավարությունը սկսել է ստանալ սույն թվականի հունվարի 1-ից: Այդ ալյուրը ստացվել է «Երևան» և «Էջմիածին» կայարաններում, կառավարությունը ստացել է նաև այն ալյուրը, որը նախատեսված է եղել Նախիջևանի նահանգի համար:

Ղարսի նահանգի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների վերաբերյալ մենք տեղեկություններ չունենք, քանի որ նրանց համար ալյուրը ստացվել և բաշխվել է Ամերիկյան կոմիտեի կողմից:

Ալյուրի ստացման ժամանակ խնամատարության նախարարն ամեն անգամ անձամբ ինքն է շրջաններին բաշխում վագոնները՝ ելնելով նրանից, թե որտեղ է ավելի շատ մոլեգնում սովը: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում այն շրջանները, որոնք ենթարկվել են թուրքերի թալանին: Ընդ որում, առաջին հերթին բավարարվում են որբանոցների կարիքները, այնուհետև՝ բնակչության:

Նախարարի կարգադրությամբ, շրջանների վարիչները ստանում են ալյուրը և բաշխում ինչպես հայերին, այնպես էլ թաթարներին և այլոց:

Որոշ շրջաններում շրջանային վարիչներին կից կան կառավարության ծառայողների գրասենյակներ, որոնք իրականացնում են ալյուրի բաշխումը: Կան շրջաններ էլ, որտեղ կառավարության ներկայացուցիչները ալյուրը բաշխում են տեղի կոոպերատիվ միությունների միջոցով:

---

[59] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 98:

Բնակչության այն մասը, որ անընդհատ տեղաշարժի մեջ է գտնվում (արևմտահայերը), ալյուրը ստանում է երկաթուղային կայարաններում՝ հատկապես Երևանում:

Բաշխումը մեծ մասամբ կատարվում է ալյուրի տեսքով: Չափաքաժինը կախված է ստացվող ալյուրի քանակից և կարիքից: Երբեմն մեկ շնչին շաբաթվա համար հատկացվում է 5 ֆունտ,* երբեմն՝ 2 ֆունտ, երբեմն էլ՝ ավելի շատ: Մեկ շաբաթից ավել (միանվագ) ոչ ոք չի ստանում, միայն տեղաշարժվող դաղթականները (թուրքահայերն ու եզիդները) ստանում են 10 ֆունտի չափով:

Հացը բաշխվում է Երևանում, Վաղարշապատում, Աշտարակում և Իգդիրում, ընդ որում, յուրաքանչյուրը ստանում է օրը կես ֆունտ, երբեմն՝ ավելի շատ: Հացը բաշխվում է վճարով, չքավորներն այն ստանում են անվճար:

Հայաստանի կառավարությունը որոշել է հացի կեսը բաշխել անվճար, մյուս կեսը՝ ինքնարժեքին համարժեք դնով: Բայց քանի որ սովը դեռևս մոլեգնում է, անվճար ալյուր ստացողներն ավելի շատ են. բնակչության միայն մեկ քառորդն է վճարում ալյուրի համար: Հուսով ենք, որ երբ կհավաքվի տեղի հացահատիկը, անվճար ստացողների թիվը կկրճատվի:

Նախարարությունը ներկայումս ունի հացահատիկի երկու պահեստ (Երևանում), ուր կենտրոնացվում է ալյուրը և այստեղից բաժանվում բնակչությանը:

Նախարարությունը ենթադրում է դժբախտ պատահարից խուսափելու համար ունենալ նաև լրացուցիչ ամբարներ և առաջին հերթին այդպիսի ամբար հիմնել Վաղարշապատում (Էջմիածին):

Նախարարությունը հիմնել է հատուկ վերահսկիչների բաժին՝ մեկ գլխավոր և 6 կրտսեր վերահսկիչներով, որոնց պարտականությունն է շրջել շրջաններում, ստուգել հաշվետվությունները, փուները, բնակչության հարցման միջոցով ծանոթանալ, թե որքանով է ճիշտ և արդարացի բաշխվում հացը:

Հանցավոր գործունեություն հայտնաբերելու դեպքում գործը հանձնվում է արդարադատությանը՝ հանցավորին պատասխանատվության ենթարկելու նպատակով:

---

* Մեկ ֆունտը հավասար է 0,4 կգ-ի:

Հացի թխման համար նախարարությունն առաջնորդվում է հետևյալով. փուռ մտնող յուրաքանչյուր 100 փութ* ալյուրից հացթուխը պետք է տա 140 փութ լավ թխված հաց:

Ներկայումս փուռերը խնդրում են փոխել պայմանները, քանի որ ամերիկյան ալյուրից ավելի շատ հաց է ստացվում:

Հայաստան մտնող ալյուրից Ամերիկյան կոմիտեն ինքը առաջնահերթ վերցնում է այնքան ալյուր, որքան պետք է իրեն որբանոցների համար և նոր միայն մնացած ալյուրը տրամադրում է կառավարությանը բաշխելու համար»[60]:

Զեկուցագրից արտաքուստ թվում է, թե ամեն ինչ լիակատար վերահսկողության տակ է, և ալյուրի բաշխումը կանոնավոր ընթացք ունի: Սակայն բավական է ուշադիր ընթերցել այն, որպեսզի հասկանալի լինեն հետագայում ծագած բոլոր դժգոհությունները ու բողոքները մթերքի բաշխման հարցում, որոնք ուղղված էին ոչ միայն տեղական իշխանության, այլև Ամերիկոմի գործունեության դեմ: Բնակչության ընդվզումը, իրոք, որոշակի հիմք ուներ, քանի որ հենց վերոհիշյալ փաստաթղթից երևում է, որ յուրաքանչյուր շրջանում բաշխումն իրականացվում էր տարբեր ձևերով (շրջանային վարիչի, հատուկ գրասենյակի, կառավարության ներկայացուցչի, տեղի կոոպերատիվների և այլնի կողմից), որը կամայականության ծաղկման անսահման հնարավորություն էր ընձեռնում շատ անբարեխիղճ և անազնիվ մարդկանց համար թե՛ բաշխումն իրականացնելու, թե՛ անվճար օգնություն ստացողների ճշգրիտ ցուցակները, կազմելու, թե՛ օրվա չափաբաժինը որոշելու հարցում:

Լուրջ դժվարություններ էին առաջանում նաև ալյուրի տեղափոխման հարցում: Փոխադրամիջոց չլինելու պատճառով կենտրոնի մեկ-երկու ամբարներից մինչև ալյուրը տեղ կհասներ, 15-20 օր բնակչությունը դարձյալ հայտնվում էր սովի ճիրաններում և ապավինում բուսակերությանը:

Այս հարցում լուրջ խոչընդոտ էր նաև Հայաստանի կառավարության և Ամերիկոմի միջև այդպես էլ մինչև վերջ հստակություն չստացած այն խնդիրը, թե ով էր իր վրա վերցնելու երկրի տարածքում բեռների տեղափոխման ծախսերը: Կառավա-

---

* Մեկ փութը հավասար է 16,38 կգ-ի:

[60] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 562, թ. 247:

ությունը միջոցներ չուներ, իսկ Ամերիկայի աշխատողներն իրավացիորեն պնդում էին, որ այդ հոգսը պետք է իր վրա վերցնի կառավարությունը, հրաժարվում էին վճարել սայլերով, ձիերով, սահնակներով այլուր տեղափոխողներին, որն էլ իր հերթին դրդռում էր սովի մատնված բնակչությանը, հաճախ անցանկալի խժդժություններ, թալանի և անդամ զինված հարձակումների տեղիք տալիս:

Որպեսզի ինչ-որ ձևով կանոնավորեն և ապահովեն բնակչությանը սնունդ մատակարարելու խնդիրները և առանց լուրջ ցնցումների անցկացնեն 1919 թ. ձմեռը և 1920 թ. գարունը, Ամերիկայի առաջարկով Հայաստանի խնամատարության նախարարությունը 1919 թ. նոյեմբերի 25-ին հատուկ շրջաբերականով կարգադրում է բոլոր գավառներից կենտրոն ուղարկել իրավիճակը ներկայացնող մանրամասն զեկուցագրեր: Դեկտեմբեր ամսին բոլոր գավառներից ներկայացրած զեկուցագրերը, պարզվում է, ամենևին էլ միմիթարական չեն, քանի որ միմյանցից տարբերվելով միայն հաշվառված չքավորների ու դաղթականների թվաքանակով՝ դրանք համարյա նույնությամբ նկարագրում են այն թշվառ դրությունը, որի մեջ գտնվում է տվյալ գավառը կամ գավառակն ընդհանրապես:

Ղարաքիլիսայում[61], Ալեքսանդրապոլում[62], Կարսում[63], Նոր Բայազետում[64], Էջմիածնում[65] և մյուս գավառներում նույն իրավիճակն էր, ինչ Երևանի գավառում, ուստի միայն այս գավառի կյանքը ներկայացնող զեկուցագրի քննությունը հնարավորություն կտա պատկերացում կազմելու ողջ երկրում տիրող ծանր սոցիալ-տնտեսական պայմանների և այդ վիճակը բարելավելու ուղղությամբ թե՛ կառավարության, թե՛ Ամերիկայի ներկայացուցիչների գործադրած ջանքերի մասին:

Երևանի գավառում հաշվառված 53.161 չքավորներից 25.867-ը դաղթականներ էին: Ախտայի շրջանի 14.919 չքավորներից 4005-ը Բուլանիխից և Մանազկերտից եկած դաղթականներ

---

[61] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ. 755, թթ. 25-28:
[62] Նույն տեղում, գ. 801, թթ. 207-210:
[63] Նույն տեղում, գ. 799, թթ. 57-62:
[64] Նույն տեղում, գ. 688, թթ. 47-50:
[65] Նույն տեղում, գ. 873, թթ. 304-305, 354-355:

էին, Կոտայքի շրջանի 11.057 չքավորներից 4559-ը՝ Վանից, Բիթլիսից և Էրզրումից եկածներ, Բաշ Գառնիի 2017 չքավորներից 437-ը վանեցիներ, ալաշկերտցիներ ու մանազկերտցիներ էին, Ղամարլուի շրջանի 24.115 չքավորներից 16.097-ը այստեղ էին հանգրվանել Շարուր-Նախիջևանից, Դարալագյազից, Ալաշկերտից ու Վասպուրականից, իսկ Երևանի արվարձաններում բնակվող 1053 չքավորներից 769-ը Բայազետից և Վասպուրականից եկած փախստականներ էին:

Բացի գաղթականներից, գավառի տարածքում հաշվառվել են ընտանիք չունեցող և տեղից տեղ թափառող շուրջ 3700 որբեր, որոնց հավաքելու և կերակրելու համար ոչ մի հնարավորություն չի ստեղծվել:

Գավառի բոլոր շրջաններում բացօթյա մնացած գաղթականներ համարյա թե չեն եղել, բացի Ղամարլուի շրջանից, որտեղ գաղթականների ամենաստվար կուտակումն էր, և գաղթականների որոշ մասը տեղավորվել է ավերակների ու կիսաքանդ հյուղակների մեջ:

Ամերիկյան կոմիտեն որբանոցներ ու սննդակայաններ ուներ Ալեքսանդրապոլում, Քանաքեռում, Դարաչիչակում, սակայն իր ուշադրության կենտրոնում պահում էր հատկապես Ղամարլուի շրջանը:

Ղամարլուի շրջանում գործող 7 սննդակայաններից օրական օգտվում էին 7-8 հազար գաղթականներ և տեղացի չքավորներ, որոնց մատակարարվում էր լոբի, ալյուր, կաթ, կակաո: Ամերկոմը բացել էր 6 որբանոց՝ 1000 որբերով, որոնց ապահովում էր և՛ հագուստով, և՛ սննդով: Նրա ջանքերով գործում էին կարի արհեստանոցներ, ջուլհականոցներ՝ մանարանի, գզրարների, ճախարակով մանողների բաժանմունքներով, որտեղ աշխատում էին շուրջ 300 հոգի: Գործում էր հիվանդանոց՝ 70 մահճակալով: Որբանոցներում, հիվանդանոցներում և դրասենյակներում պաշտոնավարում էին շուրջ 180 հոգի, որոնք ևս օրապահիկ էին ստանում:

Զեկուցագրում նշվում է, որ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի՝ Երևանի գավառի պատասխանատու և գերագույն լիազոր գնդապետ Տելֆորդի կողմից եռանդուն աշխատանք է տարվում օգնությունը կանոնավոր կազմակերպելու, այս ու այնտեղ

գտնվող սերմացուն ալյուրով փոխանակելու և ալյուրը սովյալներին բաժանելու ուղղությամբ[66]:

Ղարաքիլիսայի գավառում Ամերիկոմի ուշադրության կենտրոնում ավելի շատ արևմտահայ գաղթականներն ու որբերն էին, որոնք հիմնականում կենտրոնացված էին Ղարաքիլիսայում և Համամլուում:

Վերոհիշյալ զեկուցագրում նշվում էր, որ որբանոցներում Ամերիկոմը որբերի համար ստեղծել է բավական բարեկեցիկ պայմաններ. որբերն ապահովված են սննդով, հագուստով, դեղորայքով, և «միակ պակաս կողմը երեխաների դաստիարակությունն է, որը պատշաճ հիմունքների վրայ չի դրուած. կան մեծ թիւով դպրոցական տարիք ունեցող երեխաներ, որոնց կրթութեան համար դեռ ոչինչ չի արուած»[67]:

Թեև տեղի չքավորները չէին օգտվում Ամերիկոմի սննդակայաններից, սակայն նրանք Նպաստամատույց կոմիտեից երբեմն անվճար ստանում էին հագուստ, սպիտակեղեն, ձմեռվա տաք շորեր և այլն:

Կարսից եկած զեկուցագրում նշվում է, որ անօթևան որբեր չկան, բոլորը (մոտ 4.000 որբեր) տեղավորված են ամերիկյան 6 որբանոցներում և որբանոցներին կից երեք հիվանդանոցներում, որոնց նկատմամբ մեծ հոգատարություն է ցուցաբերվում: Կարսում ապաստանած 15.000 արևմտահայեր (հիմնականում գաղթած Բասենից և Ալաշկերտից) սնվում են Ամերիկոմի բացած սննդակայաններում, որոնք հոկտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 15-ը 1 շնչի հաշվով ստացել են օրական կես ֆունտ ալյուր, նաև սիսեռ, լոբի, բրինձ, որոնց չափը կարգավորվել է Ամերիկյան կոմիտեի պարենավորման բաժնի կառավարչի կողմից: Կարսի ներկայացուցիչը զեկուցագրում նշելով, որ Ամերիկոմի աշխատողները հաճախ թույլ են տալիս սխալներ՝ տեղական պայմաններին անծանոթ լինելու և խնամատարության գործին մասամբ անտեղյակ լինելու պատճառով, այնուամենայնիվ ավելացնում է. «Պէտք է խոստովանել, որ Ամերիկեան կոմիտէի և՛ ներկայացուցիչ, և՛ աշխատակից իսկական ամերիկացիներն սրտանց աշխատում են Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդներին աջակցելու

---

[66] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ.806, թթ.19-23:
[67] Նույն տեղում, գ. 755, թ. 27:

գործում, բայց ցաւալին այն է, որ նրանց շտատում մտնող հայ ծառայողներից շատ շատերը անբարեյոյս քաղաքացիներ են, և ժամանակ է հարկաւոր, որպեսզի նրանք լաւն ու վատը և բարին ու չարը ճանաչեն»[68]:

Նոր Բայազետում գործող Ամերկոմի մասնաճյուղի գործունեությունը ընդհանուր առմամբ գնահատելով դրական՝ տեղի ներկայացուցիչը գրում է, որ կոմիտեն պահում է 850 որբ որբանոցներում և մոտ 400 որբ տնային պայմաններում, որբերը պահվում են օրինակելի մաքրությամբ ու խնամքով:

Սակայն որբերի թիվը օրավուր աճում է՝ կապված ծնողների մահվան և երեխաների թափառումների հետ, իսկ դա դայրացնում է Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի լիազորին, որը կարծում է, թե գավառում որբերը հավաքվում են «ինչ-որ հետին մտքով»: Այսուհանդերձ Ամերկոմի լիազորը տեղական իշխանությանը խնդրել է իրեն տրամադրել մի հարմար շենք՝ ևս 2000 որբ խնամելու պատրաստակամությամբ:

Գաղթականներին սնունդը բաշխվել է ամիսը 2 անգամ: Յուրաքանչյուր օր միայն քաղաքում բաշխվել է 84 փութ 6 ֆունտ ալյուր, իսկ ողջ գավառում՝ ամեն օր 287 փութ 27 ֆունտ: Ալյուրից զատ, բնակչությանը հատկացվել են նաև լոբի, շաքարավազ, օճառ, աղ՝ մի մասը վճարով, մի մասը՝ անվճար: Ամերիկյան կոմիտեն սկսել էր մերկ գաղթականներին նաև զգեստ բաժանել:

Ավելի քան խոսուն է Նոր Բայազետից ստացված զեկուցագրի հետևյալ հատվածը. «Ամերիկեան կոմիտէները հանդիսանում են որպէս ամերիկեան պրոպագանդի օջախներ: Մեր յարաբերութիւններն այդ կոմիտէի հետ լաւ են, այնքան լաւ, որքան մեր միւս և աւելի մեծ հիմնարկութիւնների՝ նը: Շատ բան Ամերիկեան կոմիտէի մէջ տանել չենք կարող, օրինակ՝ նրա ներկայացուցչի խառնելը մեր գործերի մէջ, սակայն տանում ենք, ղիջում ու յարմարւում, ինչպէս ուրիշ տեղ տանում ու յարմարւում են»[69]:

Էջմիածնում ապաստանած 9.300 գաղթականներից Ամերկոմի սննդակայաններում ալյուր և տաք կերակուր են ստացել

---

[68] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 799, թ. 61:
[69] Նույն տեղում, գ. 688, թ. 50:

4.300 մարդ: Գաղթականների ցուցակը կազմել է անձամբ մայոր Հոլվեյը, և ինքն էլ հսկել աննդակայաններից տրվող պարենի չափաբաժնի և որակի պահպանումը:

Սակայն շրջանի լիազորը բողոքում է, որ սեպտեմբեր ամսին Վաղարշապատում սովից մեռել է 270 մարդ, հոկտեմբերին՝ 230, և իր թախանձանքները՝ ավելացնելու կերակրվողների թիվը, մնում են անպատասխան, ավելին, մայորը հաճախ կամայականորեն դադարեցնում է մթերքի բաշխումը, որի հետևանքով երբեմն ստեղծվում է քաոսային վիճակ: Լիազորը բողոքել է նաև մայոր Հոլվեյի կոպիտ պահվածքից՝ մատնանշելով, որ հաճախ ծեծում է գաղթականներին, ատրճանակով սպառնում նրանց, միջամտում տեղական կառավարման մարմինների ներքին գործերին և այլն[70]:

Ամերիկոմի գաղթախնամ գործունեությանը դրական գնահատական տվող գրությունների կողքին ստվար թիվ են կազմում կառավարությանը հասցեագրված բողոքներն ու դժգոհությունները ամերիկացիների ոչ այնքան անաչառ պահվածքի և գործելակերպի վերաբերյալ: 1919 թ. դեկտեմբերի 18-ին Հայաստանի խնամատարության նախարար Ա. Բաբալյանը պաշտոնական գրությամբ դիմում է գնդապետ Հասկելին՝ ներկայացնելով իր առաջարկները Ամերիկոմի պահեստներից մթերքի բաշխման վերաբերյալ:

«Կարիքավոր բնակչությանը նպատակաուղղված և արդարացի օգնություն ցույց տալու նպատակով, - գրում է նախարարը, - անհրաժեշտ է մթերքի բաշխումը կենտրոնացնել մեկ նախարարությունում: Մյուս կողմից նախարարությունը խիստ հսկողությամբ սահմանում է անվճար աննդի կարիք ունեցողների թիվը, որը, երկրի վերականգնմանը զուգընթաց, գնալով կնվազի:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ եմ համարում հետևյալ կազմակերպչական միջոցառումները.

1) Յուրաքանչյուր վայրում, ուր կա մթերքի պահեստ, խնամատարության նախարարության կողմից և անմիջապես նրա ենթակայության տակ ստեղծել 3 հոգուց կազմված կոմիտե:

2) Մթերք ստանալու պահանջմթերքները գալիս են այդ կոմիտեի հասցեով, որը, համաձայն գրության, Ամերիկյան

[70] ՅԱԱ, ֆ. 205, g. 1, q. 873, p. 305:

նպաստամատույց կոմիտեին է ներկայացնում համապատասխան պահանջագիր:

3) Անվճար սննդի կարիք ունեցողների ցուցակները կազմվում են խնամատարության նախարարության ներկայացուցիչների անմիջական հսկողության տակ:

4) Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի աշխատողները կարող են ստուգել ցուցակները, սակայն մթերքի մատակարարումը ստուգումների պատճառով չի ընդհատվելու:

5) Ամերիկյան կազմակերպությունները մթերք ստանում են անմիջապես պահեստներից՝ տեղական կոմիտեի գիտությամբ:

6) Մթերք ստանալու համար այլ կազմակերպությունների պահանջագրերը (զինվորական, երկաթուղային և այլն) ներկայացվում են նախարարության տեղական կոմիտեներին, և առանց վերջիններիս համաձայնության մթերքը բաց չի թողնվում:

7) Պահեստներում հաշվետվությունը վարում են նպաստամատույց կոմիտեի աշխատողները:

8) Պահեստների վիճակի մասին յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ տեղեկություններ են տրվում խնամատարության նախարարությանը:

9) Պահեստների մեջ մթերքը բաշխելու հարցում նկատի են առնվում խնամատարության նախարարի հրահանգները:

10) Խնամատարության նախարարության և Ամերկոմի միջև ծագող բոլոր անհամաձայնությունները լուծվում են խնամատարության նախարարության և Ամերկոմի՝ երևանյան ներկայացուցչի կողմից»[71]:

Նույն օրը կայացավ կառավարության և Ամերկոմի համատեղ նիստը, որին մասնակցում էին գնդապետ Հասկելը, Ամերկոմի քաղաքական գծով պատասխանատու մայոր Կոլլախը, մթերքի մատակարարման գծով պատասխանատու Յուլիանը, Երևանի գավառի մատակարարման գծով պատասխանատու գնդապետ Տելֆորդը, վարչապետ Ալ. Խատիսյանը, ֆինանսների նախարար Արարատյանը, խնամատարության նախարար Բալալյանը: Այս-

[71] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 636, թ. 305:

տեղ Բաբալյանի՝ Հասկելին ներկայացրած գրությունից բացի, քննարկվեցին նաև մթերքի տեղափոխման, սերմացու ցորեն ձեռք բերելու, Հայաստանից դուրս ցորենի վաճառքի, Հայաստանի կառավարությանը շաքար, լոբի, խտացրած կաթ վաճառելու, Հայաստանից աղ և բամբակ գնելու, Բաթումում ստացած ապրանքի գլխաց ստացական ներկայացնելու որոշակի կարգ սահմանելու և այլ հրատապ խնդիրներ:

Երկուստեք համաձայնություն ձեռք բերվեց, որ Հյուսիսային Կովկասից սերմացու ձեռք բերելու հոգսը կհոգա մայոր Կոլլախը, որ ներմուծված հացաբույսը բնակչությանը կվաճառվի տեղական գրամով, իսկ օճառը կբաշխվի միայն զինվորականներին և այն էլ անվճար[72]:

Շուտով հետևում է նաև Գերագույն բարձր կոմիսար գնդապետ Հասկելի հրամանը, որը ուղարկվում է նպաստամատույցի բոլոր գրասենյակներ և Հայաստանի կառավարություն: 21 կետից կազմված հրամանը, փաստորեն, հետագայում ուղենիշ դարձավ Ամերիկոմի հետագա գործունեության համար, ուստի նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել առավել մանրամասնությամբ:

«Գլխավոր հրաման N 22:

1. Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի 1919 թ. նոյեմբերի 8-ի N 11 գլխավոր հրամանը չեղյալ է հայտարարվում:

2. Հայաստանում հացի և ալյուրի բաշխումը կատարվում է Հայաստանի կառավարության կողմից՝ Ամերիկոմի հսկողությամբ:

Շրջանների պատասխանատու կոմիսարների ներկայացրած քարտեզներից հետևում է, որ երկիրը բաժանված է համարակալված տեղամասերի, յուրաքանչյուր շրջան ունի պարենավորման կոմիտե, որն ունի կառավարիչ, և որի աշխատանքը կարգավորվում է Հայաստանի պարենավորման նախարարի հրահանգով[73]:

---

[72] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ.362, թ.172:

[73] Անհրաժեշտ է նշել, որ 1919թ. դեկտեմբերի 30-ի օրենքով լուծարվում է պարենավորման նախարարությունը, մթերքների գնման գործը վերապահվում է ֆինանսների նախարարությանը, իսկ բաշխումը՝ խնամատարության նախարարությանը (ՀԱԱ, ֆ. 202, ց.1, գ.333, թ.60):

Այս պարենավորման կոմիտեները պատասխանատու են իրենց շրջաններում հացի և ալյուրի ճիշտ բաշխման համար: Նրանք պարտավոր են ներկայացնել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (մատակարարման կարիք ունեցող բնակչության թիվը, պահանջվող ալյուրի չափը, առաքման վայրը) Ամերկոմի իրենց շրջանի բաշխումն իրականացնող կոմիսարին:

3. Ամերկոմը ալյուրը բաշխում է իր պահեստներից: Ալյուրի բաց թողնումը իրականացվում է միայն շրջանի պարենկոմից պահանջագիր ստանալուց հետո, որտեղ նշվելու է, թե ինչպես է տնօրինվելու ալյուրը:

Պահանջագիրը ուսումնասիրելուց հետո, եթե Ամերկոմի Կոմիսարը այն ճիշտ կհամարի, հավանություն կտա և կստորագրի: Պայմանագիրը կպահպանվի և կվկայի, որ ալյուր բաց թողնելու թույլտվությունը տրված է: Ալյուրը պահեստից ստանալուց հետո, Հայաստանի կառավարության համապատասխան ներկայացուցիչը կտա ստացական, որը նույնպես կպահպանվի իբրև ապացույց այն բանի, որ ալյուրն իսկապես բաց է թողնվել:

4. Ալյուրը պահեստից բաց թողնելուց հետո այն պետք է բաշխվի տեղերի պարենավորման կոմիտեների միջոցով: Բաշխմանը հետևելու և հսկելու են Ամերկոմի ներկայացուցիչները այնքանով, որքանով այդ հնարավոր կլինի:

5. Հայաստանի կառավարության բնակչությանը բաշխվող ալյուրի և հացի դիմաց վճարունակ բնակիչներից վճար գանձելու քաղաքականությանը Ամերկոմը հավանություն է տալիս: Ամերկոմի ներկայացուցիչները կձեռնարկեն հատուկ միջոցներ, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ, ում անվճար հաց ու ալյուր է հասնում, այն ստանա: Ալյուրի և հացի վաճառքը յուրաքանչյուր շրջանում կիրականացնեն կառավարության ներկայացուցիչները: Վաճառքը կիրականացվի վերջիններիս հավանությունն ստանալուց հետո: Ամերկոմի ներկայացուցիչները կհսկեն այս աշխատանքը այնքանով, որքանով այդ հնարավոր կլինի:

6. Սովորական արձակուրդ տրվում է 2 շաբաթ ժամանակով: Սա բավարար ժամանակ է արձակուրդի համար, բայց այն կարող է փոփոխվել շրջանային վերահսկիչի նկատառումներով:

7. Շրջանային լիազորները անմիջապես պետք է ձեռնամուխ լինեն իրենց շրջանի համար ալյուրի միասնական պահուստա-

յին ֆոնդ ստեղծելու գործին: Այդ նպատակով նրանց թույլատրվում է Ալեքսանդրապոլի պարենային գլխավոր պահեստից այն պահանջել: Այդ պահուստային ֆոնդը պետք է լինի անձեռնմխելի և չի կարող օգտագործվել առանց Գերագույն շտաբի թույլտվության:

8. Շրջանային լիազորները պետք է պահեն ստացած և բաշխած ալյուրի ճշգրիտ հաշիվը, սակայն ալյուրը չի հաշվվելու իբրև Ամերկոմի սեփականություն:

Որտեղ հնարավոր է, պետք է բացել հացաթխման կետեր և ալյուրի փոխարեն հաց բաշխել: Թխված հացի և օգտագործված ալյուրի համար ևս պետք է ճշգրիտ հաշվեթղթեր պահել: Այդ փուռերը բացառապես գտնվելու են Ամերկոմի հսկողության տակ, և այն սենյակը, որտեղից բաշխվելու է հացը, դիտարկվելու է իբրև պահեստ և հսկողության տակ է առնվելու սույն հրամանի 17-րդ ենթակետի համաձայն:

9. Շրջանային լիազորները պահեստից ալյուրը բաց թողնելուց հետո կօգտվեն բոլոր հնարավորություններից՝ ստուգելու դրա բաշխումը: Բողոքները պետք է ուսումնասիրվեն, պետք է տեղեր ուղարկվեն քննիչներ՝ պարզելու՝ ինչ է ստանում բնակչությունը: Պետք է վարձվեն գաղտնի գործակալներ՝ ստուգելու ցուցակների անճշտություններն ու դրանցում առկա չափազանցությունները, հացի վաճառքի չարաշահումները:

10. Հայկական բանակի ողջ մատակարարումն իրականացնում է Ամերկոմի երևանյան գլխավոր լիազորը: Նման մատակարարումը կատարվում է ինտենդանտի գրավոր պահանջագրի համաձայն՝ պարենավորման նախարարության միջոցով: Հայկական բանակի ինտենդանտը պարտավոր է պարենավորման նախարարության միջոցով Ամերկոմի երևանյան գլխավոր լիազորին ներկայացնել զորքի տեղակայման և բանակի թվաքանակի մասին տեղեկություններ:

11. Մթերք բաց թողնելու ուղղությամբ Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի վարած քաղաքականությունը՝ մթերք բաց թողնել միայն տեղական պարենկոմների պահանջագրերով, կիրառվելու է նաև որբանոցների, ուրիշ այլ դեպքերի համար, և անհրաժեշտ տվյալները պետք է ներկայացվեն Հայաստանի կառավարության ներկայացուցչի կողմից:

12. Ամերկոմը Հայաստանի կառավարությանն է ներկայացնելու ունեցած ալյուրի ողջ քանակի, բաշխված ալյուրի մասին տեղեկագրեր, նաև տեղեկություններ, թե ում է այն բաշխվել: Այս նպատակով շրջանային լիազորները Երևանի գլխավոր լիազորին յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ օրը պետք է ներկայացնեն զեկուցագրեր, ուր պետք է մատնանշվի պահեստում մնացած ալյուրի չափը մինչև հաջորդ շաբաթ օրը, շաբաթվա ընթացքում բաց թողնված ալյուրի չափը: Զեկուցագրի մեկ պատճենը Հայաստանի կառավարությանն է հղելու Ամերկոմի երևանյան գրասենյակը:

13. Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին պետք է ամեն կարգի աջակցություն ցուցաբերվի ալյուրի և հացի քանակի մասին ճիշտ տեղեկություն ստանալու հարցում: Եթե նրանք կցանկանան, կարող են ներկա գտնվել պահեստներից ալյուրի և հացի բաշխմանը, նրանց կթույլատրվի հսկել պահեստները: Հայաստանի կառավարության ներկայացուցիչը կարող է ցանկացած պահի ներկա լինել ցանկացած պահեստում: Նրանք, որպես այդպիսին, իշխանություն չեն կարող բանեցնել պահեստների նկատմամբ և ոչ էլ կարող են փոփոխել մթերք բաց թողնելու կարգը. նրանց ներկայությունը կկրի զուտ տեղեկացված լինելու և հսկողական բնույթ: Ցանկության դեպքում նրանց կտրամադրվեն Ամերկոմի աշխատակիցների վարած գրքերն ու բոլոր այն տեղեկությունները, որ նրանք կցանկանան ունենալ:

14.Համաձայն Հայաստանի կառավարության քաղաքականության անվճար սնունդ ստանալու են բանակը, աղքատ փախստականները, որբերն ու հիվանդանոցները...»[74]:

Հաջորդ ենթակետերում քննարկվում են մթերքի բաշխման չափաբաժնի հարցերը հիմնական և ծայրահեղ դեպքերի համար (յուրաքանչյուր անձին ֆունտի 1/2-ի կամ 2/3-ի չափով), 17-րդ ենթակետը ամրագրում է, որ բոլոր պահեստները գտնվելու են բացառապես Ամերկոմի իրավասության ներքո, որ Հայաստանի տարածքից դուրս գտնվող հայերի խնամատարությունը հոգացող Ամերկոմի ներկայացուցիչները նույնպես կատարելու են այս հրամանը, միայն թե նրանք իրենց հաշվետվություններն ու

---

[74] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ.636, թ. 313:

զեկուցագրերը ներկայացնելու են ոչ թե երևանյան դրասենյակ, այլ Ամերիկայի Թիֆլիսյան գլխավոր շտաբի պետի տեղակալին[75]:

Դեկտեմբերի վերջին տասնօրյակում Հասկելն արդեն Հյուսիսային Կովկասում էր և անձամբ հետևում էր Հայաստանի համար ցորեն և ալյուր ձեռք բերելու բանակցությունների ընթացքին:

Դեկտեմբերի 24-ին Խատիսյանը նամակով հայտնում է նրան, որ համաձայն նրա հայաստանյան այցի ժամանակ ձեռք բերած պայմանավորվածության՝ Հայաստանի կառավարությունը բանակցություններ է վարում Հյուսիսային Կովկասում ցորեն գնելու և Վրաստանի տարածքով այն Հայաստան տեղափոխելու ուղղությամբ: Խատիսյանը տեղեկացնում է, որ գեներալ Դենիկինը դեմ չէ դրան, միայն պահանջում է, որ ցորենն ու ալյուրը ամբողջովին տրվեն Հայաստանին, և որ տեղափոխությունն իրականացվի ամերիկյան դրոշի ներքո: Վարչապետը խնդրում է Հասկելին՝ Հյուսիսային Կովկաս մեկնող Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Խոջամիրյանին տալ երաշխավորագիր՝ Դենիկինին ներկայացնելու համար՝ ավելացնելով, որ Խոջամիրյանը անձամբ կներկայանա՝ նրա աջակցությունն ստանալու[76]:

Դեկտեմբերի 27-ի պատասխան նամակով Հասկելը հիշեցնում է, որ իրենց նախնական զրույցի ընթացքում քննարկվեց նաև 1920 թ. գարնանացանը կազմակերպելու համար անհրաժեշտ 400.000 փութ սերմացու ցորեն ձեռք բերելու հարցը, որը ժողովրդին կերակրելու և այլևս վարկով ցորեն չգնելու հնարավորություն կտար Հայաստանին: Հասկելը խնդրում է այս բանավոր զրույցը ձևակերպել փաստաթղթով, որի մի օրինակը կմնա իր մոտ, մյուսը կուղարկվի Ամերիկայի կառավարությանը: Հասկելը հավաստիացնում է, որ վերջինս իմանալով, որ Հայաստանը հնարավոր է համարում սեփական ուժերով իր ժողովրդին կերակրել, մեծ ջանքեր կգործադրի այս խնդիրը արագ և արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ[77]:

1920 թ. հունվարի առաջին օրերին փաստաթուղթն արդեն պատրաստ էր, որտեղ նշվում էր նաև սերմացուն Հայաստան

---

[75] Նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ.636, թ. 314:
[76] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 439, թ. 32:
[77] Նույն տեղում, գ. 638, թ.15:

հասցնելու ստույգ ժամանակը՝ մարտի 15-ից մինչև մայիսի 15-ը[78]:

Կառավարության տեղեկագրերի համաձայն՝ 1919 թ. ընթացքում Հայաստանը Ամերիկայից ստացել էր 1.295.243 փութ ալյուր: Սննդամթերքից զատ Հայաստանը պարբերաբար ստանում էր նաև տաք հագուստ, դեղորայք[79]:

1919 թ. դեկտեմբերի 29-ին գնդապետ Ուիլյամ Հասկելը Թիֆլիսից 2 գրություն է ուղարկում Ալ. Խատիսյանին, որոնցից մեկում ասվում էր, որ Ամերիկայում ցորեն և ալյուր ձեռք բերելու համար Հայաստանի անունից բանակցություններ վարող Հովհաննես Քաջազնունին չունի համապատասխան լիազորագրեր, անգամ նրա անձը հաստատող վկայականներ, որ նրա ունեցած բոլոր փաստաթղթերը փետրվար ամսվա թվագրում ունեն: Հասկելը խնդրում է հավաստել, որ Քաջազնունին իրոք գործում է կառավարության անունից, և ավելացնում է, որ այդ պետք է անել որքան հնարավոր է արագ, քանի որ դրանից է կախված ցորենի և ալյուրի առաքման պայմանագրի ստորագրումն ու նավերի բեռնումը[80]:

Հաջորդ գրությամբ Հասկելը տեղեկացնում էր, որ ինքը կարգադրել է առանձին պահեստներում զետեղել Նպաստամատույց կոմիտեի ունեցածը այն սննդամթերքից, որը Հայաստանի կառավարությունը գնել է և կշարունակի գնել Ամերիկայի կառավարությունից: Շրջանային պարենկոմներին իրազեկ կպահեն այդ մասին, և նրանց կհրահանգվի, որ սնունդը պիտի օգտագործվի միայն ու միայն սովյալներին բաշխելու համար: Հասկելը հայտնում էր նաև, որ ունեցվածքը բաժանելիս իրենց կողմից օգառ և մթերք է հատկացվել կառավարության խնամքի տակ գտնվող որբերի համար, որը կենտրոնացվել է կառավարության ունեցվածքի պահեստներում[81]:

Ինչ վերաբերում էր Քաջազնունու առաքելությանը, ապա դեռևս 1919 թ. փետրվարի 13-ին կառավարության հատուկ օրենքով թույլատրվել էր մինիստր-նախագահ Քաջազնունուն հանուն

---

[78] Նույն տեղում, թ.13:
[79] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 439, թ.17ա:
[80] Նույն տեղում, ֆ. 199, g.1, գ. 90, թ.134:
[81] Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ.638, թ. 6:

Հայաստանի Հանրապետության կապել և ստորագրել ամեն տեսակ պայմանագրեր, պարտաթղթեր, կատարել վարկային գործառույթներ, ստորագրել համաձայնագրեր և այլ կարգի ակտեր նրա՝ Եվրոպա և Ամերիկա ուղևորվելու առիթով[82]:

1920 թ. հունվարի 7-ին Հասկելին ուղղված պատասխան նամակում Խատիսյանը կրկին հաստատում է կառավարության կողմից Քաջազնունուն տրված լիազորությունները և ընդգծում, որ նա գործում է հանուն Հայաստանի Հանրապետության[83]:

1920 թ. ձմեռը իր հետ բերեց նաև մատակարարման աշխատանքները ձախողող մի լրացուցիչ խոչընդոտ ևս: Առատ տեղացած ձյունը համարյա անանցանելի էր դարձրել շրջկենտրոններից գյուղեր տանող ճանապարհները, որի պատճառով գյուղերը հայտնվել էին բացարձակ մեկուսացված վիճակում: Թեև Երևանի և Ալեքսանդրապոլի պահեստներում ալյուրի և ցորենի զգալի պաշար էր կուտակվել, սակայն այն սպառողին հասցնելը դարձել էր շատ ավելի դժվար, քան երկիր ներկրելը:

Եթե 1919 թ. ամռան և աշնան ամիսներին հնարավոր էր կենտրոնական պահեստներից երկրի ծայրամասերի մատակարարումը իրականացնել քիչ թե շատ կարգավորված ձևով, ապա այժմ ամեն ինչ կատարվում էր տարերայնորեն, որտեղ հնարավոր էր և երբ հնարավոր էր, որը դժգոհության ալիք էր բարձրացնում ոչ միայն բնակչության մեջ, այլև Հայաստանի կառավարության և Ամերիկոմի ներկայացուցիչների միջև անընդմեջ ծայր առնող փոխադարձ մեղադրանքների և անպտուղ վեճերի պատճառ դառնում:

Այս առումով շատ խոսուն է Հայաստանի խնամատարության նախարարի՝ Ամերիկոմի ներկայացուցիչ գնդապետ Ռոբինսոնին ուղղած գրության և ստացած պատասխանի համադրումը:

«Մեծարգոյ պարոն գնդապետ,- գրում է նախարարը,- այսու պատիւ ունեմ Ձեզ յայտնելու, որ իմ ստացած ամենաստոյգ տեղեկութիւնների համաձայն, Ապարանը, որ ձմեռւայ եւ ձիւնի պատճառով միանգամայն կտրւած է էջմիածնի շրջանից, որից նա

---

[82] Նույն տեղում, ֆ.199, g.1, գ. 27, թ. 86:
[83] Նույն տեղում, գ. 90, թ. 145:

մինչեւ այժմ ստանում էր իր պարէնը, այժմ սովի է դատապարտուած, և տեղի 12.000 բնակչութիւնը սովից կոտորուում է ...

Յայտնելով Ձեզ այս մասին, խնդրում եմ շուտափոյթ Ալեքսանդրապոլի վրայով ալիւր հասցնէք Ապարանի 12.000 բնակչութեանը և ապահովեք նրանց գոյութիւնը մինչեւ գարնան գալը: Միաժամանակ խնդրում եմ ալիւր ուղարկելու համար ոչ մի միջոցի առաջ կանգ չառնել. լինի դա սայլերով, սահնակներով, ուղտերով թե այլ որեւէ կերպ: Հակառակ դէպքում պէտք է միանգամայն համոզուած լինել, որ Ապարանի 12.000 բնակչութիւնը, կտրուած լինելով դրսի աշխարհից, բոլորովին կընաջնջի»[84]:

Պատասխան նամակը տեղեկացնում է, որ ալյուրը ուղարկվել է Էջմիածին, այն կտրամադրվի Հայաստանի կառավարության ներկայացուցչին, և որ վերջինիս պարտականությունն է այն ինչ-որ ձևով Ապարան հասցնելը[85]:

Իսկ երբ խնամատարության նախարարը խնդրում է լրացուցիչ սննդակայաններ բացել Իգդիրի ու Մարգարայի միջակայքում, հետևում է պատասխանը, թե անհրաժեշտ պայմաններով ապահովված շենքեր չկան, ուստի գաղթականները դարձյալ ստիպված են լինելու մեկ շաբաթվա սնունդ ձեռք բերելու համար տասնյակ կիլոմետրեր կտրել[86]:

Ղամարլուի շրջանի 11 գյուղերի հիմնական սննդակայաններից յուրաքանչյուրը սպասարկում էր հարևան 2-3 գյուղերի չքավորներին ևս, որոնք ամեն օր ստիպված էին լինում ոտքով գյուղից գյուղ գնալ և ժամերով հերթ կանգնել՝ տաք կերակուր կամ հաց ստանալու համար[87]:

Այս ամենով հանդերձ, և՛ Հայաստանի կառավարությունը, և՛ Ամերիկոմի ղեկավար պաշտոնյաները շատ լավ գիտակցում էին, որ ավելի շատ հանդամանքներն ու երկրի ծայրաստիճան անապահով վիճակն են հաճախ դժդոհությունների և խժդժությունների առիթ դառնում, քանի որ համատեղ ջանքերով դործադրում էին բոլոր հնարավոր և անդամ անհնարին թվացող միջոցները՝ երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար:

---

[84] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 801, թ. 85:
[85] Նույն տեղում, գ. 636, թ.183:
[86] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ.634, թ. 205:
[87] Նույն տեղում, գ. 806, թ. 343:

Հայաստանի խնամատարության նախարարությունը բազմիցս շրջաբերականներ էր ուղարկել գավառային կոմիտեներին՝ հորդորելով Ամերիկոմի պաշտոնյաների հետ «աշխատել ամեն կերպ բարի և սերտ յարաբերութեան մէջ լինել, կորեկտ լինել և ամէն կերպ խուսափել տարաձայնութիւնների, դժգոհութիւնների տեղիք տալուց՝ մանաւանդ ձեր կողմից»[88]:

Մի այլ շրջաբերականում ասվում էր, որ համաձայն Հայաստանի Հանրապետության և Գերագույն բարձր կոմիսար Հասկելի միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ Ամերիկոմի ամերիկացի աշխատակիցների գործունեության դեմ ուղղված բոլոր դրավոր բողոքները պետք է ներկայացվեն արտաքին գործերի նախարարություն՝ դրանց վերաբերյալ եզրակացության գալու և ընթացք տալու համար: Առաջարկվում էր նաև նկատի ունենալ այն բարձր նպատակը, հանուն որի հեռավոր Ամերիկայից եկած այդ մարդիկ այդպես անձնուրաց աշխատում են, և փոխադարձ համաձայնությամբ և բանավոր բանակցությունների միջոցով լուծել առաջացող բոլոր տարաձայնություններն ու գործը չհասցնել դրավոր բողոքների[89]:

Ժողովրդին կանոնավոր սնունդ մատակարարելու գործը խոչընդոտում էր մի հանգամանք ևս: Բանն այն է, որ 1919 թվականի ապրիլի վերջերին հայկական զորքերն ազատագրեցին նաև Կարսը, և հայկական զորքի հետ դարձանը, ապա նաև ամառանոց աշնանը գաղթականությունը ևս տեղահան եղավ և խումբ-խումբ, հաճախ տարերային ու անկազմակերպ, առանց սպասելու կառավարության կարգադրությանը, սկսեց շարժվել դեպի Կարս, դեպի սահման՝ հուսալով, որ մոտ ապագայում էլ այնտեղից կշարժվեն դեպի իրենց կորսված հայրենիքը, կհասնեն Երկիր: Սակայն այս տարերային շարժումն իր հետ բերեց և իր աղետալի հետևանքները: Ղարաքիլիսայում և Էջմիածնում օրավուր տասնապատկվում էր դեպի սահման ձգտող գաղթականների թիվը՝ սովի ու տարափոխիկ հիվանդությունների զոհ դարձնելով նրանց մեծ մասին:

Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն ստիպված էր գաղթականների ստվար կուտակումներ ունեցող վայրերում բա-

---

[88] Նույն տեղում, գ. 855, թ. 20:
[89] Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ. 438, թ.11:

ցել նոր սննդակայաններ, անվճար սնունդ ստացողների ցուցակները կարծես ավելորդ էին դառնում, քանի որ անհնարին էր հաշվառել անընդհատ տեղաշարժվող մարդկանց: Միայն Ղարաքիլիսային հարող փոքրիկ գյուղերում՝ Ղշլաղում և Վարդանլուում, Ամերկոմը բացեց մի քանի սննդակայաններ, որտեղ կուտակվող գաղթականներին օրական տալիս էին տաք կակաո և մեկ քառորդ ֆունտ հաց[90]:

Այս ամենը ստիպեցին կառավարությանը՝ կազմակերպված ձև տալ գաղթականության վերադարձին. նրանց հատկացնել սնունդ ու դեղորայք, փոխադրամիջոցներ, սահմանվեց մեծ խմբերի տեղափոխման ժամանակացույց:

Կասկած չի հարուցում այն փաստը, որ կառավարությունն էլ էր շահագրգռված այս տեղաշարժով և իր խնդիրներն ուներ իրականացնելու Կարսի նահանգում:

«Չորս գլխաւոր նպատակներ կը հետապնդէր մեր իշխանութիւնը Կարսի նահանգին մէջ: Առաջին՝ օգտագործել ցարական կառավարութենէն մնացած հարստութիւնները՝ մեքենաները, երկաթէ ձողերը, հագուստեղէնը, ռազմամթերքը, երկաթուղային արհեստանոցները, փայտը եւ բազմաթիւ ուրիշ առարկաներ... Մեր երկրորդ նպատակն էր խաղաղեցնել բնակչութեան իսլամ տարրը ու հաշտեցնել զայն քրիստոնեա զանգվածին հետ: Երրորդ՝ շահագործել բնական հարստությունները՝ անտառը, արոտատեղիները, ածխահանքերը եւ աղահանքերը: Եվ, վերջապէս, չորրորդ՝ աստիճանաբար մօտենալ թրքական սահմանին՝ դրավելով 1914 թ. սահմանին վերաբերեալ բոլոր վայրերը, եւ ապա պատրաստուիլ անցնելու Թուրքահայաստան...»[91]:

Խնամատարության և աշխատանքի նախարարության Կարսի ներկայացուցիչ Միհրան Տեր-Հովհաննիսյանի՝ նախարարությանը ներկայացրած 1920 թ. հունվարի 21-ի զեկուցագիրը[92] հավաստում է, որ նախորդ տարվա դեկտեմբերի 15-ի դրությամբ Կարսում և նրա շրջաններում նպաստ ստացողների թիվը կազմել է 59.821: Սրանցից մոտ 15.000-ը արևմտահայեր էին, որոնց ճնշող մեծամասնությունը Բասենից և Ալաշկերտից գաղթածներն

---

[90] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ.775, թ. 228:
[91] Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 157:
[92] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 799, թ. 60:

էին, որոնք «թափված էին Կարսի կայարանի մոտիկ գտնուած կազարմաներում...»: Զեկուցագրում նշվում է, որ Ամերիկոմը հնարավոր ամեն ինչ անում է ոչ միայն Կարսում հավաքված գաղթականության, այլև որբերի վիճակը թեթևացնելու համար, և վերջիններս, որ ամիսներ առաջ կիսամերկ ու քաղցած էին, այժմ շատ լավ պայմաններում են, թեև «դաստիարակչական մասը նոր են սկսել կազմակերպել»:

Կոմիտեն բացել էր սննդակայաններ, արհեստանոցներ, որոնք մասամբ օգնում էին միայն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Թիֆլիսից, Շուլավերից, Ալեքսանդրապոլից ու Էջմիածնից Կարս մտած մոտ 5000 գաղթականների:

Սակայն կոմիտեի և իշխանության տեղական մարմինների միջև երբեմն տարաձայնություններ էին առաջանում, և գաղթականության մեջ դժգոհության ալիք էր բարձրանում այն պատճառով, որ ամերիկացիները լավ չէին պատկերացնում, թե ինչքան կարևոր է գաղթականի համար հնարավորինս մոտ լինել սահմանին և չէին հասկանում գաղթականների պատճառը, երբ նրանց փորձում էին հանել քաղաքից և տեղավորել մյուս շրջաններում:

Նույն զեկուցագրով Տեր-Հովհաննիսյանը հայտնում էր.«Գաղթականների տեղաւորման գործի առթիւ առաջին անգամ թեթև ընդհարում ունեցայ Ամերիկեան Կոմիտէի ներկայացուցիչի հետ հետեւեալ պատճառով.

Նրանք պնդում էին, որ գաղթականութիւնը Կարս հասնելիս պետք է մի քանի օր պահել կազարմաներում: Նրանից յետոյ նոր դասաւորել տեղաւորումը, իսկ ես պնդում էի, որ գաղթականական գնացքը կանգ պիտի առնի այն կայարաններում, ուր որոշուած է տեղաւորացնել նրանց՝ առանց քաղաքում սպասեցնելու: Թիֆլիսից եկած առաջին գնացքը ես կարգադրեցի, որ կանգնի Սելիմի կայարանում, նրանք, հակառակ իմ կարգադրութեան, գաղթականութիւնը իջեցրին Կարսում և տեղավորեցին կազարմաներում. ես ձեռնթափ եղայ: Երեք օրւայ ընթացքում համոզեցին, որ իրենց տեսակետը անդործնական է և պատճառ է դառնում աննպատակ ծախսերի. անձամբ դիմեցին ինձ և խնդրեցին աջակցել իրենց՝ գաղթականներին Կարսից դուրս հանելու և տեղաւորելու: Ես պայման դրի, որ եթե յետ այսու գաղթականու-

թիւնը տեղաւորելու է իմ կարգադրութիւնների համեմատ, ես աջակցում եմ: Նրանք համաձայնեցին ինձ հետ, և այնուհետև տեղաւորման գործը ընթացաւ և ընթանում է կանոնաւոր կերպով»[93]:

Իրականում երկուստեք ոչ այնքան «աննպատակ ծախսերն» էին մտահոգում, որքան այն, որ Կարս հասած գաղթականներն, անգամ սովի մատնվելու սպառնալիքով չէին ուզում տեղաշարժվել Կարսից, իսկ երբ փորձում էին այլ կայարաններում նրանց իջեցնել գնացքից և սահնակներով, սայլերով տեղափոխել լքված հունական և թուրքական գյուղեր, հանդիպում էին հուսահատ ու կատաղի դիմադրության:

1919-1920 թթ. ձմռան ամիսներին ամեն օր Կարսից և Ալեքսանդրապոլից Երևան էին հասնում տասնյակ հեռագրեր ու գրություններ, որոնք ներկայացնում էին ստեղծված իրադրության ողջ լրջությունը:

Հունվարի 10-ին Ալեքսանդրապոլից հասած հեռագիրը տեղեկացնում էր, որ Ամերիկոմի և երկաթուղու աշխատակիցների ջանքերով վերջապես առանձնացվել են վագոններ՝ գաղթականներին Կարս փոխադրելու համար, սակայն Ալեքսանդրապոլում ապաստանած նախկին կարսեցիների մի մասը չի ցանկանում վերադառնալ՝ վախենալով, որ դարձյալ ստիպված կլինի տեղահան լինել, իսկ ցանկացողներն այնքան շատ են, որ ենթադրվում է ուղարկել ամբողջ գնացքներով՝ յուրաքանչյուր գնացքը քսան վագոնից[94]:

Ամերիկոմը տեղափոխվող գաղթականներին ապահովում էր սննդով, տաք հագուստով, դեղորայքով, նույնիսկ՝ ուղեկցողներով: Սակայն հենց ճանապարհին էլ ծագում էին վեճերն ու տարաձայնությունները ամերիկացիների և գաղթականների միջև, որի պատճառը մասամբ թարգմանիչների՝ լեզվի վատ իմացությունն էր, որի պատճառով չէին կարողանում իրական պատկերը ներկայացնել, մասամբ էլ այն, որ արդեն սկսել էին գաղթականներին ոչ իրենց կամքով իջեցնել ոչ թե Կարսում, այլ Սելիմում, Սարիղամիշում: Խստաշունչ ձմռան և փոխադրամիջոցների անբավարար լինելու պատճառով նրանց տեղավորումը շրջակա

---

[93] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ.799, թ. 61:
[94] Նույն տեղում, ֆ. 205, g.1, գ. 801, թ.18:

գյուղերում օրերով ձգձգվում էր, և բացօթյա ու սոված գաղթականները, որոնց, ըստ նախնական պայմանավորվածության, 10 օրվա օրապահիկի դիմաց տալիս էին 2 օրվա հաց, ուղղակի կոտորվում էին ցրտից ու սովից[95]:

1920 թ. հունվարի 19-ին Ալեքսանդրապոլի գավառի կառավարիչ Սեպուհը հաղորդում էր, որ Ամերիկոմի աշխատողները բողոքում են, որ գաղթականները չեն ենթարկվում իրենց սահմանած կարգին, որը նախատեսում էր սկզբում տեղափոխել կարսեցիներին, հետո միայն Արևմտյան Հայաստանից գաղթածներին: Կարսեցիներն էլ իրենց հերթին են ըմբոստանում՝ ասելով, որ Կարսից դեպի գյուղերը փոխադրության միջոցներ ապահովեն: Սեպուհն առաջարկում է իր ձեռքի տակ եղած գումարով կազմակերպել այդ փոխադրությունը, սակայն մտահոգություն է հայտնում, որ դա կարի իր և Ամերիկոմի՝ Ալեքսանդրապոլի գրասենյակի աշխատակիցների հարաբերությունները, քանի որ Պոլիգոնում ապրողների մի մասն էլ ցանկանում է գնալ այլ շրջաններ, բայց Նպաստամատույցի աշխատողները պնդում են՝ միայն Կարսի շրջան տեղափոխել գաղթականներին: «Պոլիգոնից 300 խնուսցիք փոխադրել են Շիրակի Բաշ-Շորագեալը առանց ամերիկացիների կարգադրության, այժմ ամերիկացիք պարէն չեն տալիս, ժողովուրդը սովից մեռնում է», -շարունակում է Սեպուհը և խնդրում խնամատարության նախարարության կարգադրությունը[96]:

Ի պատասխան խնամատարության նախարարության՝ Սարիղամիշ ուղարկած գրությունների, նախարարության Սարիղամիշի ներկայացուցիչը փետրվարի 2-ի գրությամբ հայտնում է, որ այս կարգի թյուրիմացությունների հիմնական պատճառն այն է, որ ամերիկյան կոմիտեի աշխատողները բոլորովին չեն պատկերացնում, թե ինչպիսի ծանր կացություն են ստեղծում Կարսի և Նախիջևանի գաղթականության համար, երբ նրանց բռնի իջեցնում են Սելիմ կայարանում, իսկ իրենց կամքին չենթարկվողներին գրկում են սննդից՝ այս կերպ փորձելով կարգավորել հարցը և իրենց կամքին ենթարկել գաղթականությանը: «Այս բոլորի մասին ես յայտնած եմ թէ տեղւոյս և թէ Կարսի Ամերիկեան ներկայացուցիչներուն, որոնք նոր իրազեկ ըլլալով խնդրոյն, թիւրի-

---

[95] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ. 801, թթ. 36, 43:
[96] Նույն տեղում, թ. 33:

մացութիւնն իրենց կողմէն յառաջ գալն կը խոստովանեն»,- շարունակում է գրության հեղինակը՝ միաժամանակ խնդրելով, որ գոնե փետրվար ամսին դադարեցնեն Հայաստանից դեպի Կարս, Սարիղամիշ գաղթականության տեղափոխությունը, որպեսզի կարողանան Վրաստանից և Ադրբեջանից տեղափոխվողներին «...մի կերպ ընդունել և տեղաւորեցնել՝ տալով ամենն հնարաւոր դիւրութիւնները»[97]:

1919-1920 թթ. ձմռանը Ամերկոմի հոգածության ոլորտում հայտնվեցին Հայաստանի բնակչությանը և բանակին ոչ միայն սնունդ, այլև վառելիք, տաք հագուստ մատակարարելու, բացված հիվանդանոցները և շրջիկ բուժկայանները դեղորայքով ապահովելու ոչ այնքան դյուրին խնդիրները:

Հացաթխման նպատակով սննդակայաններին վառելափայտ մատակարարելու հետ, Ամերկոմի ջանքերով Սարիղամիշում և Ղարաքիլիսայում հատված անտառափայտի ավելցուկը բաշխվում էր ազգաբնակչությանը, վառելափայտ էր գալիս նաև Բաթումից, և վառելիքի կանոնավոր մատակարարման հիմնական խոչընդոտը դարձյալ մնում էր երկաթուղու վատ աշխատանքը և շարժակազմի պակասը[98]:

Հետաքրքիր է, որ Ամերկոմի հայանպաստ գործունեությունը ոգևորության ալիք էր առաջացրել Ամերիկայում բնակվող հայերի մեջ ևս: Նրանց կողմից ևս նվիրատվության կարգով հավաքվում և Հայաստան էին առաքվում հագուստ և կոշկեղեն, բժշկական և գյուղատնտեսական գործիքներ և այլն[99]:

Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի բժշկական գծով կառավարիչ Սվերսթերի՝ խնամատարության և աշխատանքի նախարարության բժշկասանիտարական բաժնի վարիչին 1920 թ. հունվարի 16-ին ներկայացրած տեղեկագիրը փաստում է, որ Ամերկոմը Երևանում ունի 6 հիվանդանոց, որոնց մահճակալների թիվը 955 է, ընթացքի մեջ է 7-րդ հիվանդանոցի բացումը, գործում է նաև 1 ամբուլատորիա: Բացի այդ, 3 որբանոցներին կից ևս գործում են հիվանդանոցներ՝ 373 մահճակալով: Քանաքեռի 3 հիվանդանոցները (165 մահճակալով), Ղամարլուի մեկ

---

[97] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ. 799, թթ. 43-44:
[98] Նույն տեղում, գ. 566, թ.104, ֆ.199, ց.1, գ. 90, թ.134:
[99] Նույն տեղում, գ. 636, թթ. 35, 37:

հիվանդանոցը (65 մահճակալով) և 1 ամբուլատորիան, Դարաչիչակի 2 հիվանդանոցները (110 մահճակալով) և երկու որբանոց-հիվանդանոցները (310 մահճակալով), Նոր Բայազետի 1 հիվանդանոցը (30 մահճակալով) և 2 որբանոց-հիվանդանոցները (100 մահճակալով) լրացնում են թվարկվող բուժհիմնարկների ցանցը:

Զեկուցագրում նշվում է նաև, որ Ամերիկոմի ենթակայության տակ գտնվող բուժհիմնարկները սպասարկում են միայն գաղթականներին և որբերին, իսկ Իգդիրի, Էջմիածնի և Նախիջևանի բուժհիմնարկների ստույգ թիվը չունենալու պատճառով դրանց մասին տեղեկություն չի տրվում[100]:

Եթե հաշվի առնենք նաև այն, որ խնամատարության նախարարության միջոցներով պահվող բուժհիմնարկները շատ ավելի քիչ էին և դեղորայքի ու սպասարկման առումով անհամեմատ ավելի վատ վիճակում էին, ապա վերը բերված տվյալներն ավելի քան պերճախոս ներկայացնում են այն ծանր պատկերը, որի մեջ հայտնվել էր առողջապահության բնագավառը: Հայաստանի խնամատարության նախարարության բժշկասանիտարական բաժնի վարիչը բավական հաճախ խնդրագրեր է ներկայացրել Ամերիկոմի բժշկական գծով կառավարչին՝ վճարով կամ փոխարինաբար խնդրելով դեղորայք, անհրաժեշտ վիրաբուժական գործիքներ և այլն[101], կամ ուղղակի խնդրել է նոր ստացիոնարներ բացել, որպեսզի ինչ-որ չափով բավարարեն օգնության կարիք ունեցողներին:

Ահա այդ խնդրագրերից մեկը. «Վարչությունս Երևանում ունի մէկ վիրաբուժական հիւանդանոց՝ 35-40 մահճակալով, և որը լինելով միակ քաղաքացիական վիրաբուժական հիւանդանոցը, չի կարողանում բաւարարութիւն տալ այն բոլոր ծանր վիրաբուժական հիւանդներին, որոնք օպերատիվ միջնորդութեան կարիք ունեն: Այդ հիւանդանոցը հնարաւորութիւն չունի թեթև վիրաբուժական հիւանդներին ընդունել..., ուստի խնդրում եմ Ձեզ, եթե հնարաւոր է, բանալ Երևանում Ամերիկական մէկ հիւանդանոց 30 մահճակալով, որտեղ կընդունվեն վիրաբուժական ոչ ծանր հիւանդները՝ նոքա, որոնք օպերատիվ միջնորդութեան կարիք չեն ունենա, այլ միայն վիրակապական, կամ թէ Ձեզ հանձնուած

[100] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 446, թ. 1:
[101] Նույն տեղում, թ.11:

հիւանդանոցներից մեկում հատկացրեք մէկ բաժանմունք այդպիսի հիւանդների համար:

Խնդրում եմ չմերժեք տեղեկացնել ինձ, թե հնարաւորութիւն կայ այդ անելու և ինչպէս»[102]:

1919-1920 թթ. աշնան-ձմռան ամիսներին Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի համար լուրջ փորձաքար դարձավ Վրաստանում ապաստանած հայ գաղթականների ապահովության հարցը:

Բանն այն է, որ դեռևս 1919 թ. հունիսի սկզբին Հայաստանի Հանրապետության մինիստր-նախագահ Ալեքսանդր Խատիսյանը Թիֆլիսում բանակցություններ էր վարել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի պարենավորման հարցերով լիազոր կապիտան Գրինի հետ և վերջինիս հետ եկել այն եզրակացության, որ Վրաստանում ապաստանած հայ գաղթականների պարենավորման գործը կենտրոնացվելու էր Վրաստանում՝ ՀՀ դիվանագիտական միսիայում: Կապիտան Գրինը այդ մասին տեղեկացրել էր կոմիտեի նախագահ Յարրոյին (Ernest A. Yarrow), և վերջինիս կարգադրությամբ ամռան վերջին Ամերիկան այլևս ալյուր չէր մատակարարում այն հիմնարկներին, որոնք չունեին դիվանագիտական միսիայի համաձայնությունը: Անհրաժեշտություն էր առաջացել դիվանագիտական միսիային կից ստեղծել մի հատուկ գործակալություն, որի աշխատակիցները հնարավորություն կունենային գործել Վրաստանի տարածքում և ապահովել պարենի կանոնավոր բաշխումը, որն այնքան էլ դյուրին գործ չէր: Մյուս կողմից էլ՝ Արևմտյան Հայաստանից Ախալքալաքի շրջանում ապաստանած գաղթականությունն էր հայտնվել անելանելի վիճակում, քանի որ վրաց իշխանությունը պատճառաբանելով, որ Ախալքալաքը չեզոք գոտի է, այնտեղից հեռացրել էր ՀՀ խնամատարության նախարարության լիազորներին՝ սովյալ ու անօթևան զանգվածներին թողնելով միանգամայն անօգնական վիճակում:

Հունիսի 29-ին դիվանագիտական միսիայից Հայաստանի արտգործնախարարին հասցեագրված գրության մեջ մասնավորապես շեշտվում էր, որ Ախալքալաքի սովյալ գաղթականության ապահովման հարցը փորձում է իր վրա վերցնել Վիրահայ ազգա-

[102] Նույն տեղում, ֆ.205, ց.1, գ.446, թ.13:

յին խորհուրդը, և որ վրաց իշխանությունների՝ Հայաստանի լիազորներին Ախալքալաքից հեռացնելը հետապնդում է ավելի լուրջ, այն է՝ քաղաքական նպատակներ[103]:

ՀՀ կառավարության և Ամերիկոմի նախնական պայմանավորվածությամբ, 1919 թ. հուլիսի 1-ից Վրաստանի սահմաններում գտնվող որբանոցները ևս հանձնվեցին Հայաստանի խնամատարության նախարարությանը, որը դարձյալ լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց որբերի հետագա խնամքի և ապահովության հարցը: Միայն Թիֆլիսում հուլիսի վերջին հաշվառված 2000 որբերի համար, որոնք կենտրոնացված էին Հայոց բարեգործական ընկերության, Ներսիսյան դպրոցի հին և նոր շենքերում, Միրանավոր եկեղեցու բակում և մասնավոր տներում, Ամերիկոմը հանձն առավ երկարաձգել խնամատարությունը, այն էլ միայն Ամերիկայից նոր դրամական օժանդակություն ստանալու դեպքում[104]:

Թիֆլիսում և նրա արվարձաններում ապրող շուրջ 20.000 արևմտահայ գաղթականների նյութական-բարոյական ոլորտի դրությունը շտկելու նպատակով Թիֆլիսում գործող մի շարք հայրենակցական միություններ զգալով, որ առանձին-առանձին գործելով չեն կարողանում թեթևացնել իրենց հայրենակիցների աննախադեպ ծանր վիճակը, հունիսի 1-ին ստեղծեցին Թիֆլիսի Արևմտահայ հայրենակցական միությունների գործադիր մարմին, որի մեջ ընդգրկվեցին 14 հայրենակցական միություններից 1-ական ներկայացուցիչներ: Սակայն գործադիր մարմինը ևս ի զորու չէր հոգալու անդամ մի չնչին մասը այն հոգսերի, որոնք հրատապ լուծում էին պահանջում[105]:

Մինչև ամառվա վերջը Ամերիկոմը կրճատեց հայ գաղթականներին հաց բաշխող կետերի թիվը, փակեց նրանց համար բացած ջուլհականոցը, ուր աշխատում էին մոտ 3200 կին ու տղամարդ[106]:

Ամերիկոմը մեծ օգնություն էր ցույց տվել նաև Ախալքալաքի գաղթականներին՝ նրանց մատակարարելով սննդամթերք՝

---

[103] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.566, թ. 27:
[104] Նույն տեղում, թթ. 20, 64:
[105] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.566, թթ. 54-56:
[106] Տե՛ս նույն տեղում:

ալյուր, ցորեն, շաքար, դարի, բրինձ, թեյ, կաթ, կակաո, լոբի, կաղամբ և այլ բանջարեղեն: Ախալքալաքից պարբերաբար ստացված տեղեկագրերը մանրամասն ներկայացնում են մինչև 1920 թ. հունվար-փետրվար ամիսները բաշխված սննդամթերքի չափն ու բաշխման ոլորտները[107]:

Իսկ Վրաստանի այլ վայրերում ապաստանած գաղթականներին աստիճանաբար սկսեցին տեղափոխել Ղարաքիլիսա, այնտեղից էլ՝ դեպի Կարս ու Սարիղամիշ:

Այսուհանդերձ, ձմռան ամիսներն անցան ոչ այնքան աղետալի հետևանքներով՝ շնորհիվ անձամբ գնդապետ Հասկելի և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի աշխատակիցների իրոք անձնվեր աշխատանքի, որոնք սննդամթերքից բացի, ժողովրդին պարբերաբար բաշխում էին նաև տաք հագուստ, դեղորայք, վառելանյութ և այլն:

1920 թ. հունվարի 21-ին Կարսից եկած զեկուցագրում խնամատարության նախարարության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տեր-Հովհաննիսյանը, նկարագրելով Կարսում տիրող դրությունը, մասնավորապես նշում է. «Պետք է խոստովանել, որ Ամերիկական կոմիտեի և՛ ներկայացուցիչ, և՛ աշխատակից իսկական ամերիկացիներն սրտանց աշխատում են Հայաստանի Հանրապետության ժողովուրդներին աջակցելու գործում»[108]:

1920 թ. հունվարի 30-ին Հասկելը Ամերկոմի Թիֆլիսյան գրասենյակի մի քանի աշխատակիցների հետ դարձյալ ժամանում է Հայաստան: Այցի նպատակն էր ստուգել Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի պահեստները: Այցի արդյունքը արձանագրվել է «շատ գոհացուցիչ»: Հասկելը հատկապես գոհունակություն է հայտնել, որ իր նախորդ այցից հետո նվազել է փողոցներում ու սննդակայանների մոտ հավաքվող մարդկանց թիվը, թափառող որբերի մեծ մասը տեղավորվել է ապաստարաններում և, որ ամենակարևորն է, Հայաստանի կառավարության և Ամերկոմի համագործակցությունն ու վարած քաղաքականությունը ավել են իրենց դրական ու ցանկալի արդյունքը[109]:

---

[107] Նույն տեղում, ֆ. 205, g.1, գ. 689, թթ.149, 150:
[108] Նույն տեղում, գ. 799, թ. 61:
[109] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ.638, թ.106:

Հայաստանի կառավարության հետ Հասկելը քննարկեց նաև առաջիկա գարնանացանի կազմակերպման խնդիրը և անմիջապես մեկնեց Հյուսիսային Կովկաս՝ սերմացուի ձեռքբերումն ապահովելու առաքելությամբ:

Փետրվարի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարարը տեղեկացնում է Հասկելին, որ Հյուսիսային Կովկասի՝ Նովոռոսիյսկում գտնվող մի առևտրական գործակալություն, որը միշտ հուսալի համբավ է ունեցել, առաջարկում է 3.000 տոննա սերմացու՝ պահանջելով վճարումը կատարել ԱՄՆ դոլարով: Այնուհետև ավելացնում է, որ այդ քանակը կլինի լրացուցիչ ձեռքբերում այն 4.000 տոննայի հետ, որի համար Հյուսիսային Կովկասի կառավարությունը արդեն սկսել է բանակցություն վարել Ամերկոմի՝ Բաթում հասած «Կիկապու» նավի վրա գտնվող ապրանքի դիմաց այն տրամադրել Հայաստանին:

Արտգործնախարարը կառավարության անունից թույլատրում է Հայաստանի համար ԱՄՆ-ից ստացված ալյուրից 1.500 տոննա վաճառել դոլարով և գումարը տրամադրել Նովոռոսիյսկի առևտրական գործակալությանը՝ 3.000 տոննա լրացուցիչ սերմացու ստանալու նպատակով, իր վրա վերցնելով այդ գործարքի ողջ պատասխանատվությունը, եթե ինչ-ինչ չնախատեսված հարցեր ծագեն[110]:

Գարնանացանը հաջող կազմակերպելու նպատակով կառավարությունը ստեղծում է սերմանման հատուկ կոմիտե՝ ֆինանսների նախարար Ս.Արարատյանի նախագահությամբ: Կոմիտեին տրվում են արտակարգ լիազորություններ՝ կառավարությունից անմիջապես պահանջված գումար ստանալու, հերթից դուրս բոլոր կայարաններում փոխադրամիջոց պահանջելու և ստացած սերմացուն ըստ շրջանների բաշխելու համար[111]:

Մինչև մարտի սկիզբը մասամբ կարգավորվել էր նաև բնակչության զանգվածային տեղաշարժը, սակայն հարցը դեռ վերջնականորեն չէր լուծվել, և Ամերկոմը դարձյալ իր ծառայությունն առաջարկեց ՀՀ կառավարությանը: Մարտի 18-ին գնդապետ Տելֆորդը գրում է խնամատարության նախարարին.

---

[110] Նույն տեղում, գ. 638, թ. 63:
[111] ՀԱԱ, ֆ. 205, գ.1, գ. 634, թ.103:

«1. Ի նկատի ունենալով մեր խոսակցությունը Երեւանում եւ ուրիշ քաղաքներում ներկայումս հաւաքւած գաղթականներին գիւղեր ուղարկելու վերաբերեալ, որով հնարաւորութիւն կը տրւեր նրանց այնտեղ գիւղատնտեսութեամբ պարապել, ցանկանում եմ Ձեզ յայտնել, որ ես պատրաստ եմ սննդատու կայաններ հիմնել հարկաւոր տեղերում: Նոյնպէս ես կը թոյլատրեմ նրանց համար բաց թողնել բաւականին ալիւր կարեւոր ժամանակի ընթացքում: Յայտնի բան է, որ Կառաւարութիւնը իր վրայ կը վերցնի ամեն պատասխանատուութիւն այդ գաղթականների բարեյաւութեան մասին:

Նոյնպես Կառաւարութիւնը վերցնում է իր վրայ նրանց գիւղեր ուղարկելը, ամեն ընտանիքի համար մի կտոր հող յատկացնելը եւ բնակութեան տեղ նշանակելը եւ ձեռք կառնէ հարկաւոր միջոցներ նրանց պաշտպանելու եւ հիւանդութիւններից ազատ պահելու համար:

2. Ես մտադիր եմ Սուրմալուի շրջանի համար հիմնել մեկական սննդատու կայաններ Իգդիրում եւ Մարգարայում եւ, եթէ անհրաժեշտ գտնեք, մեկն էլ Իգդիրի եւ Մարգարայի մեջտեղ:

Խնդրում եմ յայտնել ինձ Ձեր եզրակացութիւնը այդ ծրագրի մասին»[112]:

Գրության վրա նախարարի ծավալուն մակագրությունը հավաստում է, որ կառավարությունը լիովին հավանություն է տալիս այս առաջարկին և հանձն առնում անմիջապես անցնել այս ծրագրի իրականացմանը:

Ուշադրությունից դուրս չի մնում նաև Ախալքալաքի գաղթականությունը: Հայաստանի կառավարությունը դիմում է դնդապետ Հասկելին՝ 30.000 փութ ալյուր փոխանակել սերմացուով՝ նրանց տրամադրելու համար[113]: Ցավոք այս միջոցառումը չի իրականացել (այդ մասին տեղեկացնում է Վիրահայ ազգային խորհրդի լիազորների՝ 1920թ. հունիսի 23-ի գրությունը՝ ուղղված ՀՀ կառավարությանը), սակայն գրությունը փրկելու և գարնանացանը չձախողելու նպատակով բնակչությունն ինքն է կարգավորել այս հարցը՝ խնդրելով Ամերիկոմի պարենավորման լիազորներին գարնան ամիսներին իրենց հասանելիք ալյուրի նպաս-

[112] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 634, թ. 201:
[113] Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 638, թ.137:

տը բաշխել սկզբից և միանվագ, որը և իրականացվել է: Ստացված ալյուրը փոխանակվել է սերմացուով, և կատարվել է գարնանացանը[114]:

Երկրի բնակչության մեջ ևս սկսվել էր ոգևորություն՝ գարնանացանը սկսելու և իրենց կարիքները մասամբ սեփական աշխատանքով բավարարելու ուղղությամբ: Ժողովուրդը կարծես հոգնել էր «մուրացկանի» կարգավիճակից և փորձում էր ինքն իր հոգսերը հոգալ:

Փամբակի գավառի Ղարաքիլիսայի շրջանի Վարդանլու գյուղում ապաստանած սասունցիները խնամատարության նախարարին ուղղած մարտի 27-ի բողոք-խնդրագրի մեջ նշելով, որ պարենի մատակարարումը բոլորովին անկանոն է, և հաճախ իրենք 15-20 օր զուրկ են լինում դրանցից, միաժամանակ ծանր դրությունից դուրս գալու առաջարկ են ներկայացնում. «Մենք՝ սասունցիներս, հողագործ մարդիկ ենք, որպէսզի ապագային չդիմենք նպաստ ստանալու մուրացկանությեան, այս շրջանում կան լքուած դիւղեր, ցանկանում ենք տեղաւորուիլ և մեր ինքնաշխատութեամբ վարուցան անել: Խնդրում ենք լծկանի, սերմացուի շուտափոյթ կարգադրութիւն, թողնելով Ձեր բարեհայեցողութեան, լիայոյս ենք, որ մեր թախանձանքները լսելի պիտի լինի, և պիտի տնօրինէք ինչ որ հարկն է»[115]:

Ապրիլի 3-ին նախարարը կարգադրել է Ղարաքիլիսայի բաշխման կոմիտեի նախագահին, որ սերմացուի բաշխման ժամանակ «անպայման ի նկատի ունենալ Վարդանլուի գաղթական սասունցիներին, հաստատ սերմացու տալ և ուղարկել ամեն կերպ լծկաններ՝ ձեռք բերելով գոնե ժամանակավորապես, վարձով»[116]:

Սերմանման հատուկ կոմիտեի նախագահ, Ֆինանսների նախարար Արարատյանի՝ Ամերիկոմի ներկայացուցիչ գնդապետ Տելֆորդին փետրվարի 4-ի ներկայացրած գրությունից տեղեկանում ենք, որ նախապես երկուստեք կազմած գարնանացանի ծրագիրը իրականացնելու համար Հայաստանին անհրաժեշտ է մոտ 60.000 փութ ալյուր, որով հնարավոր կլինի շուտափույթ սերմացու հավաքել: Նա խնդրում է հնարավորինս արագ կազմա-

---

[114] Նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ. 697, թ.147:
[115] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 775, թ. 97:
[116] Նույն տեղում, թ. 96:

կերպել այս աշխատանքը, «քանի որ սերմանման շրջանը վերահաս է և խիստ կարճատև»: Համաձայն այս գրության՝ Երևանի, Էջմիածին-Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Ղարաքիլիսայի բնակչությանը նախատեսվում էր տրամադրել 10.000-ական փութ, իսկ Դիլիջանի և Նոր Բայազետի գավառներին՝ 5.000-ական փութ ալյուր[117]:

Ինչ խոսք, այս աշխատանքը ուժերի և հնարավորությունների գերլարում էր պահանջում, և միշտ չէ, որ հաջողվել է իրականություն դարձնել ցանկություններն ու ծրագրերը: Շրջաններից ստացված հարյուրավոր գրություններ վկայում են, որ այս առումով դրությունն այնքան էլ մխիթարական չէ, և հավասարապես մեղադրվում են և՛ կառավարության, և՛ Ամերիկոմի պաշտոնյաները, որոնք ոչ միայն չեն կարողանում ջանքերը ղուդակցել, այլև հաճախ գործում են միմյանց անտեսելով և ինքնագլուխ, որի հետևանքով տուժում են թե՛ ազգաբնակչությունը, թե՛ ծրագրված աշխատանքը[118]:

Կար մի հանգամանք ևս, որը թե՛ կառավարության, թե՛ Ամերկոմի գործունեությանը ինչ-որ անորոշության և անվճռականության երանգ էր տալիս. Անդրկովկասի հանրապետություններում զգալիորեն աշխուժացել և ակտիվ գործողություններ էին ծավալել բոլշևիկները, որոնց քարոզչական աշխատանքը լուրջ վտանգ էր ստեղծել տարածաշրջանում կարգ ու կանոնը կառավարելի դարձնելու առումով:

Ամերիկայից Բաթում հասած նավերից ցորենի տեղափոխությունը Հայաստան մասամբ խանգարվում էր այս, մասամբ էլ հայ-վրացական հարաբերությունների ոչ այնքան բարենպաստ լինելու պատճառով:

Պատասխանելով Ալ.Խատիսյանի մարտի 25-ի նամակին՝ Ուիլյամ Հասկելը ապրիլի 3-ին գրում է.

«Ձերդ բարեծնություն,

Ստացել եմ մարտի 25-ի Ձեր նամակը, որում հայտնում եք, որ ներկայումս Հայաստանի կառավարությանը հետաքրքրող

---

[117] Նույն տեղում, գ.634, թ.102:

[118] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ.688, թ.166, գ.801, թ.16, գ.799, թթ.11-12, 209, գ.775, թթ.101, 104, 275, գ.634, թ.114, գ.806, թթ.51, 58, 105, գ. 636, թթ.16, 21, 22, գ. 801, թ. 26:

3 հարցերից մեկն էլ Բաթումից որքան հնարավոր է արագ Հայաստան տեղափոխելն Հայաստանի համար ստացված ապրանքն ու ալյուրը, որին վտանգ է սպառնում բոլշևիկների կողմից:

Կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ ապրանքի և ալյուրի մեծ քանակի տեղափոխմանը լուրջ խոչընդոտում է Հայաստանի երկաթուղայինների ոչ ճիշտ աշխատանքը, որի պատճառով Ամերիկոմը կանգնել է մեծ դժվարությունների առաջ, քանի որ նրանք պետք է Վրաստանի կառավարության տրամադրած վագոնները հնարավորինս արագ դատարկեն և նա վերադարձնեն:

Իմ վերջին այցելության ժամանակ Հայաստանում կար ավելի քան 150 վագոն: Ինձ հայտնել են, և ես հավատում եմ, որ հայ երկաթուղայինները չեն աշխատում համաձայն կնքված պայմանագրի, որում ամրագրված է, որ նրանք ոչ միայն չպիտի դիպչեն վրացական երկաթուղու ունեցվածքին, այլև վատ վարվեն դրա հետ կամ պահեն այդ վագոնները և օգտագործեն այլ նպատակներով: Ահա սա է պատճառը, որ մենք չենք կարողանում բավարար քանակով դատարկ վագոններ ձեռք բերել՝ ապրանքը Հայաստան տեղափոխելու: Այսպիսի իրավիճակը Հայաստանի համար կստեղծի դժվար կացություն, ուստի խնդրում եմ երկաթուղու աշխատողների և Ամերիկոմի համատեղ դործունեությունը ապահովել ըստ պատշաճի»[119]:

Այս առումով կառավարության նախագահը բացատրություն է պահանջել հաղորդակցության նախարարից, իսկ վերջինս զեկուցել է, որ 150 դատարկ վագոնի առկայությունը չի համապատասխանում իրականությանը, որում համոզվել է նաև Հայաստանում գտնվող Ամերիկոմի ներկայացուցիչը: Այնուհետև նախարարը հայտնում է, որ Հայաստանի երկաթուղին արդեն բավարար չափով վագոններ ունի և վրացիների օգնության կարիքը չի զգում, որ կայարանները կարող են երկու-երեք ապրանքատար գնացքներ ընդունել և բեռնաթափել, մինչդեռ վերջին մի քանի շաբաթվա ընթացքում Հասկելն ընդհանրապես ոչ մի գնացք չի ուղարկել[120]:

---

[119] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.638, թ.185:
[120] Նույն տեղում, թ.189:

Վերջապես մի կերպ կարգավորվում է այս խնդիրը, և Բաթումից ու Հյուսիսային Կովկասից այնքան ալյուր և սերմացու ցորեն է կուտակվում Հայաստանում, որ ապրիլի 16-ին Հասկելը գրում է վարչապետին, թե մինչև ամառվա բերքահավաքը Հայաստանի ազգաբնակչությանը կերակրելու համար Հայաստանում բավարար քանակով ալյուր կա, և երկրում տիրող դրության բարելավումը արդեն կախված կլինի միմիայն Հայաստանի կառավարության ճիշտ գործելակերպից[121]:

Միայն թե այնքան էլ դյուրին չէր «ճիշտ գործելակերպ» որդեգրելը, քանի որ գարունը կարծես թե մի փոքր ետ էր ընկել, ու սերմացու չստացած կամ շատ քիչ ստացած գյուղերի բնակիչները, շրջանների ղեկավարները փորձում էին օգտվել դրանից, ստիպում էին նպաստի բաշխման կետերից մի քանի ամսվա չափաբաժնով միանվագ ալյուր բաց թողնել, հասցնում էին այն փոխանակել սերմացուով և շարունակել ցանքը:

Երբեմն էլ դա կատարում էին տարերային, բռնի ուժով չենթարկվելով ստեղծված կարգ ու կանոնին: Բախումը գյուղացիների և Ամերիկոմի աշխատակիցների միջև անխուսափելի էր դառնում, և վերջիններս սկսել էին ձերբակալել ավելի «ակտիվ» գործիչներին ու պահել հսկողության տակ: Սրանց շարքում զգալի թիվ էին կազմում հատկապես իրենց մոտ պաշտոնավարող հայերը, որոնք դաղտնի գործակցում էին գյուղապետերի հետ, աշխատում օգնել ժողովրդին՝ բոլորովին անտեսելով այն հանգամանքը, որ մինչև բերքահավաք դեռ պետք էր ապրել:

Դարձյալ սկսվում է բողոքագրերի հոսքը կառավարության պաշտոնյաների անունով, որոնցում ժողովուրդը դատապարտում է ամերիկացիների անօրինական գործողությունները:

Երբ վարչապետը այս առիթով բացատրություն է պահանջում գնդապետ Տելֆորդից դադարեցնելու հայ քաղաքացիների ձերբակալությունները, Տելֆորդը պատասխանում է, որ կոմիտեն երբեք նման մտադրություն չի ունեցել, սակայն հայերը հենց իրենք են բողոքում կոմիտեում պաշտոնավարող կամ բաշխման ցանցում ընդգրկված հայերի չարաշահումներից, և մինչև գործի քննությունը ստիպված են վերջիններիս պահել հսկողության

[121] Նույն տեղում, թ.185:

տակ, հետո նրանց հանձնում են տեղական դատական մարմիններին՝ պատժի ենթարկելու[122]:

Ամենայն հավանականությամբ, Տելֆորդը այս մասին տեղեկացնում է նաև Հասկելին, քանի որ այս նամակագրությունից մի քանի օր անց՝ ապրիլի 27-ին, Երևանի շրջանային պարենի մատակարարման լիազոր Մակդոնալդը գրությամբ տեղեկացնում է ֆինանսների նախարարին, որ դնդապետ Հասկելից հրահանգ է ստացվել, որ ալյուրի փոխանակումը սերմացուով դադարեցվի, քանի որ մինչև հունիսի 1-ը ալյուրի նոր քանակ չի ստացվելու, իսկ եղած պաշարը հազիվ թե բավականացնի: Ավելին, նա խնդրում է, որ ֆինանսների նախարարության տրամադրության տակ գտնվող ալյուրը, որը նախատեսված էր սերմացուով փոխանակելու համար և մինչ այդ չէր փոխանակվել, դարձյալ վերադարձվի Նպաստամատույց կոմիտեին՝ ապագայում երկու ամիս ժողովրդին կերակրելու համար[123]:

Հաջորդ օրը Մակդոնալդը նույնպիսի խնդրանքով դիմել է վարչապետին՝ շեշտելով, որ 10.000 փութ ալյուրը չփոխանակվի սերմացուով և անմիջապես ետ վերադարձվի՝ զորքին և որբերին կերակրելու համար, քանի որ պահեստներում մնացել էր ընդամենը 2.100 փութ ալյուր, իսկ առաջիկա մուտքը նախատեսվում էր միայն հունիսի երկրորդ կեսին[124]:

Սակայն գլխապտույտ արագությամբ զարգացող դեպքերը մի կողմ են թողնում գարնանացանի հոգսերը, քանի որ սրվող քաղաքական անկայուն վիճակը իր հետ բերում է նաև իր անցանկալի հետևանքները:

---

[122] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 439, թ. 74:
[123] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 439, թ. 78:
[124] Նույն տեղում, թ. 79:

3. Իրադրության սրումը տարածաշրջանում և ամերիկյան օգնության կազմակերպման խնդիրը 1920 թ. 2-րդ կեսին

Արագընթաց զարգացող դեպքերը և սրվող քաղաքական անկայուն իրավիճակը ստեղծում են նույնքան բարդ և անկանխատեսելի հետևանքներով լի մի իրավիճակ:

1920 թ. մայիսի 4-ին արտգործնախարար Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս՝ հայկական միսիայի ներկայացուցիչ Թումանովին, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի ողջ կազմը կարգադրություն է ստացել անմիջապես թողնել Հայաստանի սահմանները: Խնդրում է նրան տեսակցել գնդապետ Հասկելի հետ և Հայաստանի կառավարության անունից շնորհակալություն հայտնել Ամերկոմի ողջ անձնակազմին՝ նրանց ցուցաբերած աջակցության համար: Միաժամանակ հանձնարարում է խնդրել Հասկելին, որ Հայաստանի համար խիստ անապահով և վտանգավոր այս պահին երկրում թողնվի գոնե սպայական կազմը[125]:

Իսկապես, Թիֆլիսում տեղակայված Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի գերագույն շտաբի մայիսի 4-ի հրամանով ամերիկյան միսիային առաջարկվել էր շտապ թողնել Հայաստանի սահմանները՝ կապված բոլշևիկների մայիսյան ընդվզումների հետ:

Պարզվում է, որ հեռանալուց առաջ՝ մայիսի 4-ին, Ալեքսանդրապոլի կայարանում Ամերկոմի գնացքը պահվել է բոլշևիկյան զրահագնացքի հրամանատար, կապիտան Մուսայելյանի կողմից այնքան ժամանակ, մինչև որ գնդապետ Տելֆորդին ստիպել են Ամերիկայի կառավարության անունից ստորագրել մի փաստաթուղթ, համաձայն որի՝ Ամերիկան կշարունակի ալյուր ու ցորեն մատակարարել և համագործակցել նաև Խորհրդային Հայաստանի հետ: Զուսնենալով նման լիազորություն՝ Տելֆորդը, այնուամենայնիվ, ստորագրում է նման մի թուղթ, որպեսզի կարողանա միսիան հանել Հայաստանից[126]:

---

[125] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.638, թ. 203:
[126] Նույն տեղում, գ. 439, թթ. 97-98:

Մայիսի 9-ին Տելֆորդը Բաթումից հրաժեշտի նամակ է ուղարկել Ալեքսանդր Խատիսյանին.

«Թանկագին պարոն,

Ամերիկյան բոլոր սպանների անունից և ամերիկյան ողջ անձնակազմի անունից, որոնք օրերս մեծ ափսոսանքով հեռացան Հայաստանից, ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ Ձեր սիրալիր և բարեհաճ վերաբերմունքի համար, որով Դուք շրջապատել էիք մեզ:

Մենք հատկապես Ձեզ շնորհակալություն ենք հայտնում այն նվերների համար, որոնք մենք ստացանք Երևանը թողնելիս և որոնք մենք շատ գնահատում ենք:

Անկեղծ բարեկամության զգացումով և համակրանքով դեպի Ձեր երկիրը և մեծ հարգանքով Ձեր և տիկին Խատիսյանի հանդեպ՝ մնում եմ անկեղծորեն Ձեր՝ ԱՄՆ-ի բանակի լեյտենանտ-գնդապետ Զ. Տելֆորդ»[127]:

Հայաստանի Հանրապետությունից Ամերիկոմի անձնակազմի հեռանալու օրը՝ մայիսի 4-ին, հրաժարական տվեց նաև կառավարությունը: Մայիսի 5-ին ձևավորվեց նոր կառավարություն՝ Համո Օհանջանյանի գլխավորությամբ[128]:

Նոր ձևավորված կառավարությունը շարունակում է համագործակցել Ամերիկոմի հետ, մանավանդ որ վերջինիս կողմից ևս այդ համագործակցությունը խզելու քայլեր դեռևս չէին կատարվել:

Հենց մայիսի 4-ին խնամատարության նախարարը շրջաբերական հեռագրով տեղեկացնում է շրջանների պարենավորման կոմիտեներին, որ. «Համաձայն Հասկելի հրամանի՝ Ամերիկեան կոմիտէի սպանների հեռանալը ոչ մի փոփոխութիւն չի մտցնելու Ամերիկյան կոմիտէի գործունեութեան մէջ: Սպանների հեռանալու հետևանքով առաջարկում եմ աչալուրջ հետևել պահեստների և գույքերի ապահով պահպանութեան»[129]:

Բնական է, որ Նպաստամատույց կոմիտեի անձնակազմի հեռանալուց հետո պիտի ինչ-որ ձևով անօրինվեին նրա պահեստներում սնունդը, հագուստեղենն ու գույքը:

---

[127] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 439, թ.133ա:
[128] Նույն տեղում, ֆ.199, g.1, գ.133, թ.70:
[129] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ.806, թ.106:

Այդ նպատակով կառավարությունը մայիսի 8-ին դիմում է Թիֆլիսի Ամերկոմի կենտրոնական գրասենյակ՝ խնդրելով պահեստներում եղածի տնօրինման իրավունք[130]:

Մայիսի 28-ին Բաթումից ստացվում է գնդապետ Հասկելի կարգադրությունը՝ համաձայն որի, Հայաստանի կառավարությանը թույլատրվում է ազգաբնակչությանը բաժանել Ամերկոմի պահեստներում մնացած գույքի մի մասը, այն է՝ 4.000 յարդ[131] վերմակացու գործվածք, 50.000 տեսակ-տեսակ կոճակներ, 2.000 յարդ հնդկական բամբակե գործվածք, 4.000 յարդ շորացու գործվածք, 2.000 յարդ ամերիկյան գործվածք[132]:

Սակայն մթերքի բաշխման հարցում Ամերկոմի և Հայաստանի կառավարության միջև ծագել էին տարաձայնություններ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեին, քանի որ գարնանացանից հետո բնակչության մոտ գրեթե ուտելիք չէր մնացել, և սովը Հայաստանում դարձյալ ազետալի չափերի էր հասել:

1920 թ. հունիսից Ամերկոմի կարգադրությամբ, դադարեցվում է ազգաբնակչության սննդի մատակարարումը, քանի որ վերջինս փորձում էր ամփոփել իր մեկ տարվա գործունեությունը, կարգի բերել իր հաշվեգրերը՝ Նյու Յորք ներկայացնելու համար:

Բազմաթիվ գրություններ վկայում են, թե ինչպիսի ծանր կացության մեջ էր հայտնվել երկիրը հատկապես ամռան երեք ամիսներին: Խնդրագրերն ու համախոսականներն ուղղված են ոչ միայն կառավարությանը, այլև Ամերկոմի լիազոր ներկայացուցիչներին. դրանց հեղինակները թախանձում են օգնությունից չզրկել ժողովրդին գոնե մինչև բերքահավաք: Ահա այդ գրություններից մի քանիսը, որոնց մեկնաբանությունները կարծում ենք, ավելորդ են, քանի որ դրանք առավել քան խոսուն են:

«Ամերիկեան կոմիտեի Երևանի ներկայացուցիչ գնդապետ Տելֆորդին,

Կարսի քաղաքային վարչությունը իր N 2027 գրությամբ յայտնում է, որ այնտեղի Ամերիկեան կոմիտեն կարգադ-

---

[130] Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ. 638, թ. 215:
[131] Յարդ = 0,914 մ:
[132] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 638, թ. 227:

րել է այլևս բաց չթողնել հիւանդանոցների համար կաթ, կակաո, ալիւր, շաքար, բրինձ և օճառ:

Յայտնելով Ձեզ այս մասին՝ խնդրում եմ Ձեր պատշաճ և շտապ կարգադրութիւնը բաց թողնելու Կարսի հիւանդանոցների համար վերոյիշեալ անհրաժեշտ մթերքը»[133]*:*

Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան նախարարին,

Ի լրացումն ամսոյս 23-ի մեր տուած տեղեկութեան՝ Ախալքալաքի մասին կարևոր ենք համարում յայտնել և հետևեալը:

1919 թ. յունիսի 1-ից մինչև 1920 թ. յունիսի 1-ը աղգաբնակչութեան 50.000 հոգուն բաժանուած է մոտ 219.000 փ[ութ] ալիւր, շնչին 13 1/2 գրվանքայ, բացի այդ մոտ 5.000 հոգի, որպէս ունևորներ, միշտ զրկուած են եղել նպաստ ստանալուց: Այժմ, ի նկատի ունենալով և Հայաստանի ծանր դրութիւնը պարենի կողմից, յիշեալ 50.000 հոգուց, որից 5.000 հոգին վրացիներ և թուրքեր են, կարելի է մոտ 10.000 հոգու ևս զրկել նպաստից, որոնք կարող կլինեն մի կերպ աշխատելով կամ մի զոյգ եզն ու կովը ծախելով ապրել, մնում է 40.000 հոգի: Հաշուելով ամսական շնչին 15 գրվանքայ, հարկաւոր է 15գր.×40.000=15.000 փութ՝ երկու ամսայ համար, մինչև նոր բերքի հաւաքելը: 30.000 փ[ութը] այս նպատակուն պահանջն է Ախալքալաքի կարիքի...

Լիազորներ՝ Ստեփան Հարութիւնյան

Գրիգոր Տեր- Ստեփանյան »[134]*:*

«Խնամատարութեան նախարարին,

Որովհետև Նպ[աստամատույց] Կոմիտեի բոլոր գաղթականական կայանները ժամանակաւոր փակուած են եւ Հայ Կառավարութիւնը դեռ պահում է մէկ թե աւելի այդպիսի կայաններ, յոյս ունեմ, որ մենք կը կարողանայինք գործակցել հետեւեալ կերպով, այն է՝ երբ մեզ մօտ դան գաղթականներ, մենք նրանց ուղարկէինք Ձեզ մօտ, դա չէ նշանակում, որ երբ մենք Ձեզ ուղարկենք գաղթականներին, Դուք պարտաւորուած պիտի լինէք

---

[133] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 636, թ. 34 (ստորագրությունն անընթեռնելի է):
[134] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 900, թ.167:

մեր վերաբերմամբ, բայց տեղ չունենալով նրանց պահելու, Դուք եք ներկայացնում Կառավարութեան պատասխանատու հաստատութիւնը:

Պաշտոնապէս մեր գաղթականական մասը գոցուած է, բայց եթե մենք կարող լինենք Ձեզ որևէ կերպ օգնել այդ գործում, մենք ուրախ կը լինենք գործակցել եւ աջակցել:

Երեւանի նպաստամատույց կոմիտեի շրջանային վարիչ
դոկտոր Ֆոսսում»[135]:

«Խնամատարութեան նախարարին,

Ամերիկեան որբանոցները լիկվիդացիայից հետո մնացած 90 փութ բրինձը. 390[փութ] լոբին և 100[փութ] նաֆտը մտադիր են փոխադրել Երևան: Հիվանդանոցները, բանտը մարդ չկայ, դժվար է կերակրել հիվանդներին, բանտարկեալներին: Խնդրում ենք միջնորդել Տելֆորդի մօտ շտապ կարգադրել այդ մթերքը թողնել այստեղ հիվանդանոցի, բանտի, գաղթականների կարիքների համար:

Բժիշկ Տեր-Թովմասեան»[136]:

«Ամերիկեան կոմիտեի Երևանի ներկայացուցիչ գնդ. Տելֆորդին,

Այսու ուղարկում եմ Ձեզ Նոր Բայազետից ստացած բժիշկ Տեր-Թովմասեանի հեռագրի սոյն պատճենը և խնդրում Ձեր պատշաճ կարգադրութիւնը կոմիտեի որբանոցների լիկվիդացիայից յետոյ մնացած բրինձը, լոբին և նաֆթը յատկացնելու հիւանդանոցներին:

Խնամատարութեան նախարար»[137]:

«Ամերիկեան նպաստամատոյց կոմիտեի Հայաստանի ներկայացուցիչ գնդապետ Տելֆորդին,

Ինձ հասած տեղեկութիւնների համաձայն՝ Ձեզ յանձնած Ամերիկեան կոմիտեի բժշկական վիրաբուժական գործիքները ծախւում են: Մեծ կարիք ունենալով Հայաստանի Հան-

---

[135] Նույն տեղում, գ. 900, թ. 210:
[136] Նույն տեղում, գ. 636, թ.192-193:
[137] Նույն տեղում, թ.191:

բասկետուլթիւնը գործիքների, խնդրում եմ Ձեր կարդալութիւնը այդ գործիքները ծախեն Մինիստրութեանս գլխաւոր բժշկա-սանիտարական վարչութեանը:

Բժշկա-սանիտարական վարչութեան վարիչ»[138]:

Մինչ Հայաստանի Հանրապետության կառավարության, Ամերիկոմի և բնակչության միջև տարվող բանակցությունները ինչ-ինչ հարցեր էին շտկում կամ ընդհանրապես ոչ մի դրական արդյունքի չէին հասնում, հունիսի 14-ին դնդապետ Հասկելը Բաթումից, գնդապետ Տելֆորդի միջոցով, Հայաստանի կառավարությանն է ներկայացնում Հայաստանի պարտքը Ամերիկոմին, որը ենթակա էր շուտափույթ վճարման: Այն կազմել է 1.032.791 դոլար և 01 ցենտ: Այս գումարը առաջացել էր ճանապարհածախսերի և չնախատեսված այլ քայլերի պատճառով, քանի որ Միացյալ Նահանգներից ստացվող օգնությունը Բաթումի նավահանգստից տեղափոխելու գործը պիտի ապահովվեր և իրականացվեր միայն Հայաստանի կառավարության միջոցներով, մինչդեռ այդ աշխատանքը կատարել էր կոմիտեն:

Հասկելը խնդրում էր անմիջապես վճարել պարտքը, որպեսզի ինքը կարողանար այն ուղարկել Նյու Յորք[139]:

Սպասելով, Հայաստանի կառավարության պատասխան քայլին, 1920 թ. հուլիսից Ամերիկոմը զգալիորեն կրճատեց իր գործունեությունը հանրապետության տարածքում, նվազագույն չափերի հասցրեց ստացվող մթերքի ծավալը, իր որբանոցներն ու դրասենյակները կենտրոնացրեց Ալեքսանդրապոլում և հիմնականում սկսեց զբաղվել միայն որբերի խնամքով:

Այսպիսով, 1919 թ. հունվար ամսից մինչև 1920 թ. հուլիսը Հայաստանին և Կովկասին տրամադրված ընդհանուր օգնությունը կազմել է 135.764 մետրիկ տոննա՝ 28.795.426 ԱՄՆ դոլար արժեքով: Այս ընդհանուր գումարից Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը կատարել է 11.155.591 ԱՄՆ դոլարի նվիրատվություն, ներառյալ 500.000 ԱՄՆ դոլարի հատուկ նվերը Կարմիր խաչի կողմից[140]:

---

[138] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 446, թ. 24:
[139] Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 638, թ. 231:
[140] Barton J., Story of Near East Relief (1915-1930), 1930, page 124.

Կառավարությունը դարձյալ հայտնվեց անելանելի դրության մեջ, և վարչապետ Համո Օհանջանյանին ոչինչ չէր մնում անել, եթե ոչ մեկ անգամ ևս օգնության խնդրանքով դիմել ամերիկյան կառավարության ներկայացուցչին:

Հուլիսի 27-ին գնդապետ Հասկելին ուղղած նրա ընդարձակ հեռագրում մասնավորապես նշվում էր, որ Հայաստանի կառավարությունը ցավով տեղեկացել է, թե Հայաստանի համար Ամերիկայից ստացված ալյուրը ուղարկվել է Ավստրիա: Հայտնելով, որ այդ որոշման մասին կառավարությունը տեղեկացված չի եղել և միայն թերթերից է իմացել, որ դրա պատճառը Հայաստանում ծավալված բոլշևիկյան շարժումն է, Օհանջանյանը նշում է, որ Նպաստամատույցի բոլոր պաշտոնյաները քաջ գիտեն, թե ինչ լուրջ միջոցառումներ է ձեռնարկել կառավարությունը այդ շարժումը ճնշելու ուղղությամբ, և թե ինչ պատրաստակամությամբ է երկրի ողջ բնակչությունը համախմբվել կառավարության շուրջը և սատար կանգնել նրան այս գործում:

Օհանջանյանը գնդապետ Հասկելի ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ հայ գյուղացին կանգնած է լուրջ դժվարության առաջ. քաղաքաբնակները գարնանացան չեն արել, գաղթականների հոսքը Արևմտյան Հայաստանից և հարակից շրջաններից շարունակվում է առանց դադարի, և առաջիկա բերքից ակնկալվող արդյունքով նա հազիվ թե կարողանա ութ ամսից ավելի կերակրել երկրի ողջ բնակչությանը:

Տեղեկացնելով, որ տառապյալ ժողովրդին կրկին ֆիզիկական ոչնչացման վտանգի առաջ չկանգնեցնելու համար պետք է Հայաստան ներմուծել ևս 50.000 տոննա ալյուր, Օհանջանյանը խնդրում է Հասկելին միջնորդել ԱՄՆ-ի կառավարությանը հանձն առնել առաքելու պահանջվող ալյուրը, ավելացնելով, թե երախտապարտ հայ ժողովուրդը համոզված է, որ ամերիկյան ազնիվ ժողովուրդը այս անգամ էլ չի մերժի իր օգնությունը[141]:

Բնականաբար, ՀՀ վարչապետը հեռագրում շրջանցում է մեկ միլիոն դոլարից ավել պարտքի թեման և շեշտը դնում է մարդասիրական գործոնի վրա:

Օգոստոսի 1-ին Օհանջանյանը Բաթումից ստանում է իր հեռագրի պատասխանը. «Գնդապետ Հասկելի Պոլիս մեկնելու

[141] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 638, թ. 256:

երեկոյան ստացանք Ձեր հեռագիրը, որով Դուք անհանգստություն եք յայտնում, որ իբր Հայաստանին յատկացրած Միացեալ Նահանգներից ուղարկված ալիւրից տրված է Աւստրիական նաւահանգիստները:

Գնդապետ Հասկելը ինձ կարգադրեց Ձեզ տեղեկացնել, որ ալիւրի ամբողջ պայմանագիրը Հայաստանի կառավարութեան հետ լրացված է, եւ որ Հայաստանին ալիւրի մատակարարութիւնը կատարված է լիովին: Այն տեղեկութիւնը, որ իբր Հայաստանին յատկացրած ալիւրից տարված [է] Աւստրիական նաւահանգիստները, պետք է որ լինի լրագրային կամ նոյնանման բոլորովին անհիմն լուր:

Ինչ վերաբերում է Հայաստանի ապագա կարիքներին, մասնաւորապես մթերքներին, գնդապետ Հասկելը զգում է, որ այս տեսակետից ինքը ծանօթ է Հայաստանի դրութեան հետ եւ հասկանում է նրա ժողովրդին եւ երկրի դրութիւնը: Ինքը առիթ կունենայ զեկուցելու դրանց մասին իր վերադարձին Փարիզում կամ Միացեալ Նահանգներում՝ ի հարկին: Եւ նա ի գործ կը դնէ իր փորձառութիւնը եւ ջանքերը Հայաստանին նպատակայարմար ձեւով օգնելու: Ինքը ի հարկէ խորապէս հետաքրքրւում է հայ ազգի դրութեամբ եւ Դուք կարող եք նրա այդ հետաքրքրութեան վրայ յոյս դնել Հայաստանի Հանրապետութեան ապագայ բարեկեցութեան տեսակետով:

Օգտւում եմ առիթով Ձեզ կրկին յայտնելու յարգանքներս հավատիքը:

Միացեալ Նահանգների փոխգնդապետ Լոներդան»[142]:

Ինչպես երեւում է նամակից, վարչապետի խնդրանքի իրականացումը հետաձգվում էր անորոշ ժամանակով կամ ընդհանրապես, քանի դեռ պարտք ու պահանջի խնդիրները երկու պետութիւնների միջև վերջնական լուծում չէին ստանում:

Վարչապետը ստիպված էր նոր նամակով դիմել գնդապետ Հասկելին՝ խնդրելով մանրամասն պատասխանել Հայաստանին տրված մարդասիրական օգնութեան չափի վերաբերեալ իրեն հուզող մի շարք հարցերի:

---

[142] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 638, թ. 264:

Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել վարչապետի նամակի ոչ բնագիրը և ոչ էլ պատճենը, սակայն գնդապետ Հասկելի պատասխան նամակը (սրա կառուցվածքը թույլ է տալիս ենթադրելու, որ վարչապետը խնդրել է պատասխանել իրեն հուզող 12 հարցի) սեղմ և խիստ ճշգրիտ թվերով ու փաստերով ներկայացնում է Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և, կարծում ենք, ինչ-որ տեղ նաև այդ աշխատանքը ամփոփող փաստաթուղթ է, որը հարկ ենք համարել ներկայացնել առանց կրճատումների:

«Ձերդ գերազանցություն,

Ստացել եմ Ձեր նամակը 4356 Երեւանից գրված յուլիսի 2-ին, որով Դուք խնդրում եք հարց ու պատասխանի ձեւով Հայաստանին ծրագրված եւ ուղարկված ալիւրին վերաբերեալ տեղեկություններ:

Այն տեղեկագիրը, որ Ձեզ ուղարկված էր Բաթումից գրված յունիսի 22-ի նամակի հետ ներփակ, որը պատասխան էր Ձեր 3561 յունիսի 11-ի նամակին, պարզապէս ներկայացնում էր մի տեղեկագիր միայն մի ժամանակամիջոցի ընթացքում Ամերիկեան Կառավարութեան կողմից Հայ Կառավարութեան հայթայթած ալիւրին վերաբերեալ[143]: Ձեր տուած հարցերին ես կարող եմ պատասխանել հետեւեալը.

1. Յիշուած 90.985.267 ֆունտ ալիւրի քանակութիւնը վերաբերում է միայն այն ժամանակին, երբ սեպտեմբերին հս վերցրի վերահսկողութիւնը մինչեւ մայիսի 1-ը 1920թ: Մեծ քանակութեամբ ալիւր տրուած է եղել մինչեւ իմ դալը եւ յետոյ էլ մինչ յունիսի 22-ը, երբ այդ վերոյիշեալ քանակութիւնը Ձեզ յայտնուել է նամակով:

Իսկ Միացեալ Նահանգներից ուղարկուածի հաշիւը Հայ Կառավարութեան ալիւրի ընդհանուր քանակի ներկայացուած է Ձեզ վերջերս Երեւանում յանձնված հիշատակագրի մէջ, որտեղ յուրաքանչիւր ուղարկուած քանակութիւնները մատնանշուած են եւ տալիս են ընդհանուր թիւը 81.217 տոննա:

2. Հայ աշխատաւորներ ասելով պիտի հասկանալ բոլոր այն ծառայողները, որ կապուած են Հայ Կառավարութեան ալիւր

[143] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 638, թթ. 262, 273:

յանձնելուն հետ, օր. երկաթուղային, պահեստների R.T.O-ի գրասենեակային պաշտոնեաները եւ այլն, եւ այլն: Դրանց ալիւր տրուած է իմ կարգադրութեամբ համաձայն Հայ Կառավարութեան խնդիրքին, որի հետ բոլորովին համաձայնութեան էինք եկել:

Նախարարապետի միջնորդութեամբ ինձ անընդհատ դիմումներ էին անում Հայ Կառավարութեան համար ալիւր բաժանելու կամ տեղափոխելու գործով:

3. 7.706.783 ֆունտ ալիւրը տրուած է Խնամատարութեան նախարարի ներկայացուցչին Ղարաքիլիսա եւ Երեւանի շրջաններում գիւղերին բաժանելու եւ այլնի համար եւ մինչեւ այն ամսաթիւը, երբ այդ ալիւրի հայթայթումը դրուեց Նպաստամատոյց կոմիտէի ներկայացուցիչների անմիջական հսկողութեան տակ: Ուրիշ խօսքով, առաջ ամբողջ ալիւրը յանձնւում էր Խնամատարութեան նախարարի ներկայացուցչին, որը իր կարգին բաժանում էր գիւղերի ներկայացուցիչներին, այնինչ յետոյ ալիւրը անմիջապես տրւում էր Նպաստամատոյց կոմիտէի կողմից գիւղերի ներկայացուցիչներին: Դա հայ Կառավարութեան ցանկացած ձեւն էր, որը շարունակւեց նրա խնդիրքով մի որոշ ժամանակ էլ, մինչեւ որ իմ կարգադրութիւններով այդ սիստեմը փոխւեց, եւ իմ ներկայացուցիչները կատարում էին ալիւրի մատակարարումը առանց ուրիշի միջնորդութեան:

4. 99.857.128 ֆունտ ալիւրը Հայաստանի սահմաններում տրւել է Ղարսի, Երեւանի, Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի շրջանների գիւղերին: 7.000.590 ֆունտը տրուած է իմ կարգադրութեամբ Թիֆլիսի եւ Ախալցխայի շրջանի հայերին:

Հասկանալի է այս վերաբերմունքը, որ Ամերիկայից ուղարկուած ալիւրը հայերին սովից ազատելու համար էր, առանց ի նկատի առնելու, թե այդ հայերը գտնւում էին Ախալքալաքում, Թիֆլիսում թե Երեւանում: Դրա հետ միանգամայն համաձայն էր հայ Կառավարութիւնը, քանի որ մթերքները ուղարկւում էին Հայաստան միայն այն պայմանով, որ լինի յատկապես դրա համար այստեղ ուղարկուած Ամերիկեան Միսիայի հսկողութիւնը:

5. 1.393.242 ֆունտ ալիւրը տրուած է Հայաստանի սահմաններից դուրս Բաթումի, Թիֆլիսի եւ ուրիշ վայրերի փախստականներին համաձայն հայ Կառավարութեան խնդիրքին եւ

մասնաւորապես դա վերաբերում է Ադրբեյջանից Հայաստան անցնող եւ ուրիշ երկիրներից Թիֆլիս եւ Բաթում եկող գաղթականներին:

6. Դեղերի հետ փոխանակած 3.026 ֆունտը այն ալիւրն էր, որ տուած էր Թիֆլիսում պատւաստի ասեղների եւ այլնի համար, որ գործածւել են հիւանդութեան առաջն առնելու համար Մերձաւոր Արեւելքի օգնութեան հսկողութեան տակ հայերին պատւաստելու համար: Դա եղել է համաձայն հայ Կառավարութեան ցանկութեան, որը ժամանակին յայտնել էր, որ կարելի կը լինի վճարել ալիւրով այն դեպքում, երբ փողով վճարելը հետեւանք չի ունենայ:

7. 2.240.000 ֆունտ ալիւրը ծախւել է Վրաց Կառավարութեան: Որոշ քանակութեամբ ալիւր ծախւել է վրացիներին կամ ուրիշներին կանխիկ փողով, որը մտցւած է հայ ֆինանսների հաշվին եւ յատկացւած է ի հաշիվ այն վճարքին, որ կատարւել է Մերձաւոր Արեւելքի օգնութեան Նիւ-Եօրքի օֆիսի կողմից տրված ճանապարհածախսի եւ ապահովութեան համար:

8. 14.517 ֆունտ ալիւրը Գորիի փախստականներին տրւած է ի հաշիւ Մերձաւոր Արեւելքի օգնութեան Հայաստանի ալիւրից, իսկ հայ Կառավարութիւնը ստացել է ի հաշիւ իր ֆինանսների այդ ալիւրի արժէքը:

9. 293.256 ֆունտ ալիւրը ծախւած էր Յունական Միսիային փողով որը ստացելուն պիտի վճարվիր հայ Կառավարութեանը: Սակայն յոյները փողը չը վճարեցին այդ ալիւրի համար եւ մի ժամանակից յետոյ յայտնւեց, որ հայ Կառավարութիւնը յունական Կառավարութեանը պարտք էր մեծ քանակութեամբ ալիւր յոյների տւած սերմացուի փոխարեն: Ուրեմն հայկական ալիւրով չէ, որ վճարւել է յունական Միսիային գարու համար, բայց գարին վճարւել է այն ալիւրի քանակութեամբ, որ կազմում էր զանազանութիւնը յոյներին պարտք ալիւրի եւ յունական Միսիային հայերի ալիւրի պարտքի մէջ, վերջիններիս պարտքը լինելով ի հաշիւ այն գարու, որ նրանք ստացել էին յոյներից:

Այս բոլորը պարզ ցոյց է տւած մեր տոմարներում հայկական հաշիւների բաժնում:

10. 440.800 ֆունտ ալիւրը չի տրւել վրաց Կառավարութեան Գորիի փախստականների համար, այլ այդ քանակութիւնը

ծախսած է վրացիներին, որոնք դրա գոնե մի մասը գործ են ածել ի նպաստ Գորիի վնասվածներին. մեր Միսիային միեւնոյնն էր՝ ինչպես էին գործածում վրացիք այդ 440.800 ֆունտ ալիւրը. դա իրանց էր պատկանում: Այդ ալիւրի վաճառքից ստացուած դումարը մտցուած է հայկական հաշւի մէջ՝ համաձայն այն կանոնին, որով ընդհանրապես ալիւրի վաճառքը կատարվում է:

11. 73.978 ֆունտը բաց է թողնուած Ախալքալաքի շրջանում եւ Հայաստանից Ադրբեյջան գնացող անցորդներին: Ախալքալաքին ալիւր տալու մասին իմ օֆիսում համաձայնութեան եկան հայ եւ վրացի ներկայացուցիչները, իսկ անցորդներին ալիւր տալու հարցում համաձայնեցան Ադրբէյջանի եւ հայ Մինիստրները, որ հայ Կառավարութեան խնդիրքով բանակցում էին իրենց ազգակիցների փոխադարձ հայրենիք վերադարձի համար:

12. BOARD OF SURVEY. Ով պետք է հասկանայ, որ այդ ալիւրի քանակութիւնը ստացել է Բաթումում փչացված: Ալիւրը քննութեան է ենթարկուել եւ իր արժեքը պահանջուած է ապահովագրական ընկերութիւնից: Անմիջապէս որ ապահովագրական ընկերութեան հետ այդ հաշիւը կարգադրի, այդքան ալիւրի դինը կը մտցի հայկական հաշիւների պահանջի բաժինը Նիւ-Եորքում: Մինչեւ այսօր ոչինչ չի ստացել դրա վերաբերեալ: Յիշատակագրում տրւում է միայն ալիւրի քանակը եւ թէ ալիւրի ինչ լինելը: Այդ տեսակետից Հայաստանի Կառավարութիւնը ոչ մի կորուստի չի ենթարկուում:

Վերոյիշեալով ես աշխատել եմ Ձեզ պարզաբանել զանազան հարցեր, որ Դուք առաջադրել եք, բայց նորից կրկնում եմ, որ այն թուղթը, որի հիման վրայ յարուցել եք այդ հարցերը, առանձին նշանակութիւն չունի եւ վերաբերում է Միսիային գործունեութեան միայն մի ժամանակամիջոցին, այն է՝ սեպտեմբերից մինչ մայիսի 1-ը. այնինչ այն տեղեկագիրը, որ ես Ձեզ յանձնեցի Երեւանում յուլիս ամսում, ցոյց է տալիս այն ամբողջական թւերը, որոնք ոչ թե միայն վերաբերում են ծրագրի վերջին /օգոստոսի 1-ին 1920 թ./ մօտ ժամանակներին, այլ Հայաստանում Ամերիկական ամբողջ գործունեութեան սկզբից եւեթ:

Ես խնդրել եմ ֆինանսների նախարարին գալ Բաթում, որ ես կարողանամ նրան ներկայացնել հայկական հաշիւները, որովհետեւ դժւար է հասկանալ ալիւրի հետ եղած գործողութիւնները՝

առանց տեսնելու ֆինանսական հաշուում ճիշտ որտեղ եւ ինչպէս զանազան վճարումների եւ այլ դէպքերում վարկեր են տրուած Հայաստանի Կառավարութեան: Ուրիշ խօսքով, ֆինանսական հաշիւը պետք է ի նկատի առնել ալիւրի հաշուի հետ միասին:

Յայտնում եմ յարգանքներիս հաւաստիքը եւ մնում եմ

Ձեր անկեղծարար Վիլլիամ Հասկել

Դաշնակիցների գերագոյն Կոմիսար Հայաստանում»[144]:

Ճշմարտութեան դեմ չմեղանչելու համար պետք է ընդգծել, որ իսկապես Հայաստանում աշխատած Ամերիկոմի շատ պաշտոնատար անձինք (Ուիլլյամ Հասկել (William Haskell), Չարլզ Տելֆորդ (C. Telford), Չարլզ Վիքրի (Charles Vickrey) և այլք) թե Հայաստանում, թե միջազգային խորհրդակցություններում ու համաժողովներում իրենց գործով ու ելույթներով միայն ու միայն աջակցել են հայ ժողովրդին օգնելու խնդրին, փորձել են պաշտպանել մեր երկրի շահերը, հնարավորինս շատ համակիրներ ձեռք բերել միջազգային բարեգործական հաստատությունների շրջաններում՝ Հայաստանի համար ընդունելի պայմաններով դրամական վարկ, սննդամթերք և կենսական անհրաժեշտության այլ պարագաներ հայթայթելու, ժողովրդի ծանր սոցիալական վիճակը թեթևացնելու ուղղությամբ:

Հայաստանից մեկնելուց առաջ՝ օգոստոսի 23-ին, Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի ընդհանուր քարտուղար Չարլզ Վիքրին Համո Օհանջանյանին ուղղած նամակում գրում է.

«Ձերդ գերազանցութիւն,

Բառերով չեմ կարող արտահայտել իմ խորին շնորհակալութիւնը այն հիւրասիրության համար, որ ինձ ցոյց տրուած է Հայաստանի կառավարութեան եւ հայ ազգի կողմից Ձեզի հետ ունեցածս կարճատեւ տեսակցութեան միջոցին:

Իմ սրտագին փափագս էր աւելի երկար մնալ, բայց Հայաստանին ամենալայն ծառայութիւնս մատուցանել կարող եմ առայժմ աւելի Եւրոպայում եւ Ամերիկայում, քան Հայաստանում:

Չորս եւ աւելի տարիներ ես աշխատել եմ անդադար. յաճախ գիշերները. ինչպէս եւ ցերեկները. մեր կոմիտէի մէջ Հայ ազգի բարեկեցութեան համար: Եւ այժմ բարեպատեհութիւն ու-

[144] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 638, թթ. 285, 286:

ննոլով պատահելու նրանց սեփական երկրում եւ նրանց ներկայացուցիչներին՝ Ամերիկայում, ես ի վիճակի եմ վերադառնալու Ամերիկա աւելի մեծ ոգեւորութեամբ հանդեպ երկրին եւ ազգին:

Ձեզանից բաժանուելուց յետոյ ինքնաշարժով ճամբորդութիւնս Երեւանից մինչեւ Սեւանայ լիճը, անցնելով Դիլիջանից եւ Ղարաքիլիսայից մինչեւ Ալէքսանդրապոլ եւ յետոյ Կարս ու վերադառնալով, երկրի մասին կազմւած նոր պատկերը եւս աւելի ամրապնդեց իմ հաւատքը ազգի ապագայի եւ տնտեսական հարստութեան մասին:

Ես միշտ հաւատք ունեցել եմ ազգի աշխատասիրութեան եւ նկարագրի վերաբերմամբ: Հիմա ես գիտեմ, որ նրանք ունեն երկիր եւ բնական հարստութիւններ, որոնց վրայ կարող են հիմնել մնայուն եւ անկախ ազգութիւն մը, եթե Դաշնակից Պետութիւնների կողմից տրւած լինի պատշաճ պաշտպանութիւն եւ համագործակցութիւն:

Ես վերադառնում եմ Ամերիկա՝ շարունակելու, ինչպէս անցեալում, նիւթական օգնութեան գործը. թէեւ գիտեմ, դժբախտաբար, որ մասնաւոր մարդասիրութեան արդիւնքները չպիտի լինին ապագայում այնքան առատաձեռն, որքան եղած են անցեալում:

Ես որոշել եմ, հաւանաբար աւելի կարեւոր, քան օգնութեան գործը, ոչ մի առիթը չկորցնել պնդելու իմ սեփական եւ միւս կառավարութիւնների մօտ նմանապէս համագործակցութիւն անելու իրենց դաշնակցի՝ նոր Հայաստանի հետ:

Օգտւելով սոյն առիթից՝ կրկին յայտնում եմ Ձեզ իմ խորին գոհունակութիւնը հիւրասիրութեան առթիւ, ընդունեցէք, Ձերդ Գերազանցութիւն, իմ յարգանաց հաւաստիքը:

Ջարլզ Վեկրէ»[145]*:*

Բավական ծավալուն մի տեղեկագիր, որ 1920 թ. աշնանը կազմել է Ջարլզ Վիքրին և «գաղտնի եւ ոչ հրատարակութեան համար» նշումով ուղարկել Հայաստանի կառավարության հասցեով, մանրամասն ներկայացնում է ժնևում, Լոնդոնում, Փարիզում գումարված զանազան խորհրդակցությունների համառոտ նկարագրությունները, որոնց մասնակիցն է եղել նաև ինքը և անձամբ զրուցել միջազգային ասպարեզում ճանաչված հայանի քաղաքական գործիչների, Փարիզի հայ ազգային պատվիրա-

---

[145] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 638, թ. 299:

կության անդամների հետ (Լորդ Բրայս, Լեոպոլդ Ֆավր, Լլոյդ Ջորջ, Ֆրիտյոֆ Նանսեն, Լորդ Սեսիլ, Հարոլդ Բաքստոն, Կրաֆտ Բոններ, Պողոս Նուբար փաշա, Ալեքսանդր Խատիսյան և այլք), արդեն խոսում է այն մասին, որ նամակում նրա գրած խոսքերը չեն ասվել հավուր պատշաճի և վերածվել են ակտիվ գործունեության[146]*:*

Շատ հետաքրքիր է, որ Զարլզ Վիքրիի եռանդուն գործունեությունը մեծ աղերսներ ունի հայ ժողովրդի մի այլ Մեծ բարեկամի՝ Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, Ազգերի ընկերակցության գաղթականական գծով գերագույն կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի՝ շուրջ մեկ տասնամյակ ծավալած աննախադեպ հայանպաստ գործունեության հետ:

Զարլզ Վիքրին ևս Հայաստանից հեռանալուց հետո՝ մինչև 1920-ական թվականների վերջերը, բազմաթիվ միջոցառումներով և նախանձախնդիր հետևողականությամբ հետամուտ է եղել իր առջև դրված մարդասիրական մի վեհ նպատակի, այն է՝ ինչ գնով էլ լինի օգնել ահավոր սպանդից փրկված մի բուռ ժողովրդի, որը վերապրելու ճիգեր էր անում:

Ինչ խոսք, Զարլզ Վիքրիի ձեռնարկած լավագույն միջոցառումը թերևս կարելի է համարել «Որբերի կիրակի» կամ «Ոսկեղեն պատվիրանքը» նվիրատվական միջոցառումը, որը նրա նախաձեռնությամբ և առաջարկով կյանքի կոչվեց 1923 թ. ժնևում կայացած Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հերթական ժողովներից մեկում: Բարեգործական այս միջոցառումը կոչ էր՝ ուղղված Ամերիկայի բոլոր բարեկեցիկ ընտանիքներին, որով առաջարկվում էր յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի առաջին կիրակի օրը իրենց կամովին զրկել սովորականից ավելի ճոխ սեղաններից և այդ միջոցով դոյացած զգալի խնայողությունները տրամադրել հայ որբերին[147]*:*

Զարլզ Վիքրիի այս մարդասիրական կոչին և Ամերիկյան նպաստամատույցի այս ձեռնարկին լայնորեն արձագանքեց նաև Հայ բարեգործական ընդհանուր միությունը՝ նախագահ Պողոս Նուբար փաշայի ակտիվ միջամտությամբ: Նրա ստորագրութ-

---

[146] Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ. 638, թթ. 291-293:

[147] Էդուարդ Մելքոնյան, Հայ բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 143:

յամբ հրապարակվեց «Կոչ ընդհանուր հայութեան», որում մասնավորապես ասվում էր.

«Բարեգործական Ընդհանուր Միութիւնը շատ ազնիւ եւ նպատակայարմար կը դտնէ Նիր Իսթ Ռելիյֆի մէջտեղ դրած սկզբունքը... Ամերիկացիները մեր որբերուն օրական հացը ապահովելու համար կոչում կ՚ընեն իրենց հայրենակիցներուն, որ զոհողութիւն մ՚ընեն, զրկանք մը պարտադրեն իրենք իրենց, եւ այսպիսով ստոյգ կորուստէ մը փրկեն իրենց օտար եկող ցեղի մը անբախտ զաւակները... Մենք ալ պետք է ցոյց տանք, թե գիտենք մեր պարտականութիւնները կատարել մեր որբերուն նկատմամբ...»[148]:

Արխիվային բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ մարդասիրական այս միջոցառումը թե՛ Ամերկոմը, թե՛ ՀԲԸՄ-ն իրականացրել են մինչև 1920-ական թվականների վերջերը:

Այսպիսով, 1920 թ. օգոստոսի 1-ին Հուվերի հրապարակած տվյալների համաձայն՝ ավելի քան 50.000 երեխաներ օրական սնունդ են ստացել, և Հայաստանի օգնության համար ավելի քան 108.000 տոննա պաշար է բաժանվել, և ընդհանուր ծախսերը կազմել են 21.012.000 ԱՄՆ դոլար[149]:

Սակայն իրողությունն այն էր, որ մինչև օգոստոսի վերջը Ամերկոմը դադարեցրեց իր դաղթախնամ գործունեությունը Հայաստանում և իր պահեստներում մնացած մթերքը, հագուստն ու դեղորայքը օգտագործեց բացառապես իր խնամքի տակ գտնվող որբանոցների և դրանց կից հիվանդանոցների համար:

Հայաստանի Առաջին հանրապետությունը կրկին հայտնվեց քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր կացության առաջ:

1920 թ. սեպտեմբերի 30-ին վարչապետ Համո Օհանջանյանը և ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը ստորագրեցին օրենք, որը Հայաստանի ամբողջ տարածքը հայտարարեց զինվորական դրության մեջ[150]:

Բնականաբար, այս պայմաններում Ամերկոմը այլևս ոչ մի գործնական օգնություն չէր կարող ցուցաբերել ո՛չ զորքին, ո՛չ աղգաբնակչությանը և իր միջոցները տրամադրեց ինչպես Հայաստանի, այնպես էլ նրա սահմաններից դուրս գործող որբանոցներում տեղավորված հայ մանուկների խնամքին:

---

[148] Տե՛ս Էդուարդ Սելքոնյան, նշվ. աշխ., էջ 144:
[149] The New York Times, August 1, 1920.
[150] ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ.190, թ.102:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԵՐԿՈՄԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1919-1920 ԹԹ.

Հայ որբերի խնամքով Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեն սկսել էր զբաղվել դեռևս 1915 թվականից՝ որբանոցներ բացելով Սիրիայում, Հունաստանում, Պոլսում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կովկասում և այլուր:

1918 թ. սեպտեմբերին, մինչ Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը իր խնամքի տակ կվերցներ որբերի խնամքը, երկրի սահմաններում կային 32 որբանոցներ՝ 2400 որբերով, որոնց պահում էին առանձին բարեգործական հաստատություններ (Մոսկվայի հայկական կոմիտեն, Կովկասի հայկական բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Անգլիական բարեգործական ընկերությունը և այլն)[151]:

Հանրապետության խնամատարության նախարարության 1918 թ. դեկտեմբերի և 1919 թ. հունվարի ամենամսյա տեղեկագրերից երևում է, որ դրանց թիվը հասել էր 45-46-ի՝ 6567 որբերով: Հետաքրքիր է, որ որբախնամ հաստատությունների ցանկում հիշատակված է և Ամերկոմը՝ 7 որբանոցով և 540 որբերով[152]:

1919 թ. ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության խնամատարության նախարար Սահակ Թորոսյանը և Ամերկոմի Հայաստանյան բաժնի ներկայացուցիչ կապիտան Էլդերը (John Elder) ստորագրեցին մի պայմանագիր, համաձայն որի՝ Հայաստանի տարածքում գտնվող բոլոր որբանոցների, առանձին կայանների, հիվանդանոցների, ինչպես նաև դեռևս թափառող որբերի խնամքն ու դաստիարակությունը հանձնվում էր Ամերկոմի հոգածությանը: Ամերկոմը հանձն էր առնում իր խնամքի տակ վերցնել նաև Վրաստանի տարածքում կուտակված հայ որբերին, ինչ թվաքանակ էլ որ նրանք կազմեին:

Պայմանագրով նախատեսվում էր Ամերկոմին հանձնել ոչ միայն կառավարության խնամքի տակ գտնվող, այլև Հայաստա-

---

[151] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 900, թ.1:
[152] Նույն տեղում, ֆ.199, g.1, գ. 22, թթ. 8, 9, 20, 21:

նի և Վրաստանի տարածքում բարեգործական գանձան միությունների կողմից պահվող որբանոցների որբերի խնամքը, մի պայմանով միայն, որ կոմիտեն չպիտի միջամտեր վերջիններիս ներքին գործերին, թեև նրանք պարտավոր էին հաշվետու լինել կոմիտեի առջև, որին վերապահվում էր ընդհանուր վերահսկողությունը:

Կառավարության բոլոր որբանոցներն ու մանկական հիվանդանոցները Ամերկոմին էին անցնում իրենց դույքով և գրաղեցրած շենքերով[153]:

Ամերկոմը հանձն էր առնում սկսել և շարունակել որբերի խնամքը մինչև այն ժամանակ, երբ կառավարությունն ու ինքը կամ մի այլ երկիր, որը Հայաստանի վրա ձեռք կբերեր մանդատի իրավունք, կկարողանային իրենց վրա վերցնել որբերի խնամքն ու դաստիարակությունը:

Որբերի խնամքի ողջ ծախսերը պարտավորվում էր հոգալ Ամերկոմը, իսկ որբանոցներում տիրող կրթադաստիարակչական, բարոյահոգեբանական մթնոլորտի հսկողությունը վերապահվում էր խնամատարության նախարարին: Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր չմիջամտել կոմիտեի ներքին կարգ ու կանոնին[154]:

Խնամատարության նախարարության տվյալներով, մայիսի 1-ի դրությամբ Հայաստանի տարածքում կային 86 որբանոց և 10 մանկական հիվանդանոց, որոնցում կենտրոնացված էին 13.820 որբեր[155]:

Սակայն մի քանի օր անց՝ ապրիլի 15-ին, խնամատարության նախարարը կառավարությանն է ներկայացնում մի դրություն, որով տեղեկացնում է, որ Ամերկոմի գրասենյակում քննարկել են այդ պայմանագիրը և մի կետի վերաբերյալ հայտնել իրենց անհամաձայնությունը. «...Այդ կետը,-գրում է նախարարը,- վերաբերում է Մոսկվայի կոմիտեի, Եղբայրական օգնության և Հայոց բարեգործական ընկերության որբանոցներին և խմբագրած է այն իմաստով, թե յիշեալ որբանոցների ներքին կառավարությունը մնում է վերոյիշեալ ընկերությունների ձեռքին, իսկ

---

[153] Բանբեր Երևանի համալսարանի, N2, 1968, էջ 219:
[154] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 619, թ.1:
[155] Նույն տեղում, գ. 900, թ.1:

Ամերիկական կոմիտէն նրանց ծախքերն է հոգում և դրամականի հաշիւը պահանջում: Այժմ Ամերիկական կոմիտէն պահանջում է այդ կէտը փոխել այն իմաստով, որ այդ որբանոցները ևս տրվում են Ամերիկական կոմիտէին ի կատարեալ տնօրինումն: Գտնելով, որ խնդիրը ծանրակշիռ է, Մինիստրների խորհրդի վճիռը անհրաժեշտ եմ գտնում»[156]:

Մինչ պայմանագիրը վերջնական տեսքի կբերվեր, եռանդուն գործունեություն է ծավալում Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի բժշկական գործի վարիչ դոկտոր Քլարենս Աշերը (Clarence Ussher, բժշկական միսիոներ է եղել Վանում 1898 թվականից): Վերջինս անմիջապես շրջում է Երևանում և Ալեքսանդրապոլում, ծանոթանում որբանոցների և որբերի ընդհանուր վիճակին և իր դիտողություններն ու առաջարկները ներկայացնում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի, լուսավորության, խնամատարության նախարարներին:

Գրություններից մեկում, որ գրվել է ապրիլի 26-ին, Աշերը, նախարարների ուշադրությունը բևեռելով երկրում մոլեգնող տարափոխիկ հիվանդությունների համաճարակների վրա, խնդրում է շտապ լուծել որբերին գաղթականներից մեկուսացնելու և նրանց հարմար շենքեր տրամադրելու հարցը:

«Քննելով պայմանները և լիովին ըմբռնելով, թե որքան կարևոր է մատաղ սերնդի համար բարձր կրթութեան պահանջը,- գրում է դոկտոր Աշերը,-այնուամենայնիւ, մենք եկել ենք այն եզրակացութեանը, որ վերոյիշեալ մանուկների կեանքի պահպանութիւնը կրթութիւնից առաջնակարգ տեղ պիտի բռնէ:

Այս բոլորը ի նկատի ունենալով, մենք յարգանօք խնդրում ենք հետեւեալ շինութիւնները անյապաղ մեր տրամադրութեան տակ դնել, որպէսզի մենք կարողանանք տեղաւորել որբերը:

Գիմնազիայի մեծ և կիսակատար շինութիւնը Աստաֆեան փողոցի վրայ, սրանից դատ կամ հին բերդի զօրանոցը և կամ Քանաքեռինը:

Հարիւրավոր հիւանդ փախստական երեխաների համար օրիորդաց մեծ սեմինարիան՝ Աստաֆեան փողոցի վրայ, իր բակով և պարտեզով, որը սրանից առաջ գործածւած էր զինուորական հի-

[156] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ. 22, թ. 77:

ւանդանոցի և տիֆով վարակուածների համար. այդ շէնքը այժմ դատարկ է:

Զբոսարանի և ապաստարանի համար՝ Անգլիական այդին՝ իր շինութիւններով միասին:

Ի նկատի ունենալով, որ իւրաքանչիւր օրուայ յապաղումն շատ կեանքեր պիտի խլէ, ուստի մենք խնդրում ենք, որ կարգադրութիւնները լինին անմիջապէս»[157]*:*

Հարցն ամենայն հավանականությամբ քննարկվել է նախարարների և վարչապետի կողմից և դրական լուծում ստացել: Այդ մասին վկայում է Հայաստանի որբանոցային գործերի գլխավոր կառավարիչ բժիշկ Սաղյանի՝ Հայաստանի Հանրապետության մինիստր-նախագահին ուղղված մայիսի 5-ի գրությունը, որում ասվում է. «Դոկտոր Աշբրին Ձեր տրած բանաւոր խոստման համաձայն և Ամերիկեան Կոմիտէի յանձնարարութեամբ խնդրում եմ պաշտոնապէս եւս հաստատել, որ Երեւանում նորակառուցց գիմնազիայի շենքը (Աստաֆեան փողոցի վրայ) տրւում է Ամերիկեան Կոմիտէի տրամադրութեան տակ որբանոցային կարիքների համար:

Ընդ սմին խնդրում եմ կարգադրել՝ տրամադրելու նաև այդ շինութեան զանազան պատրաստի մասերը-դուռ, պատուհան, սանդուղք, որ գտնւում են Թիֆլիսում կամ այլուր, որոնց արագ փոխադրութեանը ամեն կերպ կաջակցի Ամերիկեան Կոմիտէն»[158]*:*

Այսպիսով, մինչև 1920թ. Ամերիկոմը որբերի և գաղթականության համար ուներ 39 հոսպիտալներ՝ 5.609 անկողիններով, որոնք բաժանված էին հետևյալ կերպ՝

Գլխավոր հոսպիտալներ 10
Որբերի հոսպիտալներ 11
Ընդունող հոսպիտալներ 5
Վարակիչ հիվանդությունների հոսպիտալներ 5
Մաշկի վարակիչ հիվանդությունների հոսպիտալներ 7
Աչքի վարակիչ հիվանդությունների հոսպիտալներ 1
Ընդհանուր .....39[159]*:*

---

[157] ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ.22, թ. 85:
[158] Նույն տեղում, թ. 98:
[159] Barton J., Story of Near East Relief (1915-1930), 1930, page 126.

Սակայն եթե Հայաստանի կառավարության և Ամերիկոմի միջև ծագող տարաձայնությունները վերջինիս գաղթախնամ գործունեության ոլորտում պտտվում էին Բաթումից ստացվող օգնության տեղափոխման, բաշխումը իրականացնելու մեխանիզմների, օրապահիկի չափի, անապահով խավի ցուցակների ճշտման, որոշ բյուրոկրատական քաշքշուկների, պարտքերը ժամանակին վճարելու և նման հարցերի շուրջ, ապա որբերի խնամքը Ամերիկոմին փոխանցելը շատ ավելի խորքային և ոչ անհիմն մտահոգությունների առիթ էր կանգնեցնում երիտասարդ պետության մտավորականներին և կառավարող այրերին, քանի որ թեև բարեգործական, բայց բոլորովին օտար մի կազմակերպության էին հանձնվում երկրի ապագա քաղաքացիների ոչ միայն ֆիզիկական գոյության պահպանության, այլև նրանց դաստիարակության, կրթության, հոգևոր աշխարհի ձևավորման խնդիրները, որոնք չէին կարող անհետևանք անցնել և չբերել իրենց ոչ ցանկալի արդյունքը:

1919 թ. մայիսի 17-ին Թիֆլիսում Հայաստանի խնամատարության նախարարության ներկայացուցիչ Դ.Դավիթխանյանի բնակարանում, որբանոցները Ամերիկոմին հանձնելու հարցի շուրջ դարձյալ կայանում է մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Հայաստանի որբանոցների վարիչ բժիշկ Սաղյանը, Մոսկվայի հայկական կոմիտեի, Հայ կանանց միության, Վիրահայ ազգային խորհրդի, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, ինչպես նաև «Աշխատավոր» և «Кавказское слово» թերթերի խմբագրությունների ներկայացուցիչները:

Քննարկելով իրենց հուզող բազմաթիվ հարցեր՝ ժողովի մասնակիցները դրական գնահատեցին թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում պահվող որբերի խնամքի, բուժօգնության և կերակրելու բնագավառում արդեն նկատվող զգալի տեղաշարժը, սակայն բոլորին դարձյալ հուզում էր զանազան բարեգործական հաստատությունների և Ամերիկոմի միջև այս հարցում առկա տարաձայնությունը, քանի որ առաջինները շարունակում էին իրենց գործը ավտոնոմ իրավունքներով, մինչդեռ պայմանագրի այս կետը Ամերիկոմը շարունակում էր մերժել՝ պնդելով, թե քանի որ դրամը իրենք են տալու, իրենք էլ պիտի տնօրինեն որբանոցների գործը ամբողջովին:

Անհանգստացնող հանդամանք էր նաև այն, որ ամերիկացիները որբանոցներում կազմակերպում էին կրոնական միտինգներ և դասեր, որոնք վարում էին և՛ լուսավորչական, և՛ բողոքական դավանանքի հետևող քահանաներ: Նրանք պատճառաբանում էին, որ իրենք բարոյական ճնշում չեն գործադրում որբերի վրա, և վերջիններս չափահաս դառնալուց հետո իրենք կորոշեն, թե որ դավանանքին հետևեն:

Խորհրդակցության մասնակիցներից մի քանիսը գտնում էին, որ հայ մարդու արժանապատվությունը վիրավորված կլինի, և պետության վարկն էլ ժողովրդի աչքում ընկած, եթե կառավարությունը դոնե մի քանի որբանոց չպահի իր ենթակայության տակ, իսկ ոմանք էլ այն կարծիքին էին, որ Հայաստանի որբերի համար Ամերիկայի կառավարության հատկացրած 3 միլիոն* դոլարը պետք է տրվի հասարակական կազմակերպություններին և գործադրվի նրանց կողմից, քանի որ նրանք գործին ավելի տեղյակ են և հմուտ:

Մոսկվայի հայկական կոմիտեի ներկայացուցիչ Մամիկոնյանը պնդում էր, որ այդ գումարը հատկացվել է Հայաստանի կառավարությանը, և անբարոյականություն է, որ կառավարությունը բոլորովին հրաժարվի որբեր խնամելուց, ընդհակառակը, պետական բյուջեից չպիտի պակասեցվի որբերի խնամքի համար հատկացվող գումարը, ավելին, հայ հասարակության մեջ պետք է արմատավորել այն մտայնությունը, որ հանդանակություն կատարվի որբանոցների համար, ինչպես այդ անում է ամերիկյան ժողովուրդը:

Ավելին, Մամիկոնյանն առաջարկում էր պարզել՝ արդյոք ամերիկյան ժողովուրդը ցանկանում է, որ իր հավաքած գումարը Ամերկոմը տնօրինի իր ուզածի պես:

Վերջապես, խորհրդակցության մասնակիցները, ընդունելով հանդերձ, որ Ամերկոմը շնորհակալ և օգտակար գործ է անում և փորձում է թեթևացնել ծանր իրավիճակում հայտնված երկրի հոգսերի մի մասը, անհրաժեշտ են համարում պայմանագրի մեջ ավելացնել հետևյալ կետերը.

---

* Փաստաթղթերում նշված է միլիարդ, որը թերևս վրիպակ է (Ա.Ս.)

«1. Ուսումնական ծրագիրը եւ դաստիարակչական սկզբունքները մշակւում են Հայաստանի կառավարութեան կողմից.

2. Կրթական-դաստիարակչական գործի վերաբերմամբ հսկողութիւնը վերապահել Հայաստանի կառավարութեանը:

3. Որբանոցների դպրոցական-դաստիարակչական մասը վարում են կենտրոնում եւ տեղերում յատուկ խորհուրդներ, որոնց մէջ մտնում են՝

ա) Հայաստանի տերիտորիայում գտնւող որբանոցների համար Ամերիկական Կոմիտէի, Հայաստանի կառավարութեան եւ որբախնամ կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

բ) Հայաստանի տերիտորիայից դուրս՝ վերոյիշեալ եղողներից բացի նաեւ Ազգային խորհուրդների ներկայացուցիչները»[1]:

Խորհրդակցությունը որոշում է այս մասին տեղեկացնել Հայաստանի խնամատարության նախարարին՝ ի գիտություն հայտնելով, որ այս սկզբունքների պաշտպանությունը «անհրաժեշտ է հայ ժողովրդի ինքնուրոյն կուլտուրայի պաշտպանութեան տեսակետից»[2]:

Մայիսի 23-ին հանրային կրթության նախարարը առաջարկում է պայմանագրում ամրագրված վերահսկողի դերը վերապահել ոչ թե խնամատարության, այլ հանրային կրթության նախարարին[162]:

Բոլոր այս հարցերը մշակվել, կանոնավորվել են վերջնական պայմանագրում և ստիճանաբար գործողության մեջ դրվել:

Սակայն պայմանագրում ամրագրված մի կետ, որով նախատեսվում էր մինչև հուլիսի 1-ը Ամերկոմից ետ վերցնել մի շարք որբանոցներ, այնուամենայնիվ, դարձյալ մեկ-երկու ամսվա անորոշ վիճակի և չհամաձայնեցված գործողությունների առիթ էր դարձել: Որոշ չենքեր արդեն հանձնվել էին Ամերկոմին, և նորից ետ վերցնելը հարուցում էր ամերիկացիների իրավացի դժգո-

---

[160] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 566, թ. 47:

[161] Տե՛ս նույն տեղում:

[162] Նույն տեղում, ֆ. 207, g.1, գ. 94, թ.13:

հությունը, քանի որ նրանք ինչ-ինչ վերանորոգչական աշխատանքներ էին կատարել, դույլ և արհեստագործական գործիքներ ձեռք բերել և այլն:

Մյուս կողմից դեռ այնքան էլ հստակ չէր, թե ի վերջո քանի որբանոց ու որբ է պարտավորվում խնամել պետությունը, երբ ժողովրդին կերակրելու հնարավորություններն ու միջոցները չափից դուրս սուղ էին:

Հունիսի 10-ին խնամատարության նախարարության Դիլիջանի ներկայացուցիչը հեռագրել է Ամերիկոմի որբանոցների գծով վարիչին և խնդրել իրենց խնամքի տակ վերցնել քաղաքի փողոցներում մերկ ու անխնամ թափառող 400-ից ավելի որբերի, որոնց ճակատագրով այդպես էլ ոչ ոք չի հետաքրքրվում[163]:

Մի այլ գրությամբ հանրային կրթության նախարարը դիմել է Կարսի բերդապետ, գեներալ Փիրումյանին՝ խնդրելով, որ բերդի ձորի որբանոցների մոտ գտնվող սպաներին հատկացված երկու շինություններն ու նրանց կից հիվանդանոցի շենքը տրամադրվեն որբերին և հանձնվեն Ամերիկյան կոմիտեի Կարսի ներկայացուցիչներին: Նախարարը խնդրել է նաև քաղաքում տեղակայված 2-րդ դումարտակի 2 շենք ևս տրամադրել՝ 4.000 որբ երեխաներ տեղավորելու համար[164]:

Նաև հետևյալ պատկերը կներկայացնի 1919 թ. հունիսի 27-ին Կարսի ժամանակավոր Առաջնորդական փոխանորդ Արտակ Վարդապետի զեկույցը. «Ամերիկյան Նպաստամատույցը Կարսի մեջ երկու որբանոցներու կը նպաստեր՝ մեկը հայկական, մյուսը մահմեդական: Հայ որբերը երկու շենքերու մեջ դետեղուած էին, մեկը հայոց եկեղեցապատկան շենքին մեջ՝ 266 որբերով, մյուսը քաղաքային դպրոցի շենքին մեջ՝ 240 որբերով...»[165]:

Նույնատիպ գրություններ էլ Ամերիկոմի կողմից էին հղվում հանրային կրթության նախարարին: Ահա դրանցից մեկը.

«Քանաքեռում N 48 զօրանոցի շենքի մէջ գտնուում է Ամերիկական կոմիտէի N 27 որբանոցը մօտ 600 որբերով, որոնցից 150-ը մեծ մասամբ քոսոտներ ու քաչալներ են և խճողութեան հետևանքով վարակում են մնացեալներին:

---

[163] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 619, թ.128:
[164] Նույն տեղում, ֆ. 207, ց.1, գ. 46, թ.104:
[165] Լ. Ազատյան, Հայ որբերը Սեծ եղեռնի, Լոս Անճելես, 1995, էջ 57:

Մեր կրկնակի դիմումները առանձին շենք տրամադրելու մասին զինուորական պ. մինիստրի և պ. Դրոյի կողմից յաջողութիւն չգտան:

Ուրիշ վայրերում ազատ շենք չունենալու պատճառով խնդրում եմ Ձեր շտապ կարգադրութիւնը՝ տրամադրելի դարձնելու համար զինուորական ակումբի շենքը Քանաքեռում Ամերիկեան կոմիտեին՝ հիւանդները առանձնացնելու և յետագայ վարակումները կանխելու համար:

Խնդրում եմ Ձեր կարգադրութեան մասին հաղորդել բաժանմունքիս:

Որբանոցային բաժանմ[ունքի] գլխ[ավոր] վարիչ»[166]*:*

1919 թ. հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի՝ թիվ 96 որոշմամբ որբանոցները Ամերիկյան կոմիտեի հոգածությանը հանձնելուց հետո, հանրային կրթության նախարարության ձեռքին կենտրոնացվում էր որբանոցների դպրոցական, ուսումնական մասը[167]*:*

Վերջնականորեն հստակեցում մտցնելով որբերի խնամքի և կրթության հարցում Ամերկոմի և պետության ունենալիք դերակատարման հարցում՝ Հայաստանի խնամատարության և հանրային կրթության նախարարությունները սկսեցին աշխատել մինչև հուլիսի 1-ը Ամերկոմից 20.000 որբեր ետ վերցնելու և պետական միջոցներով նրանց խնամելու խնդիրը կարգավորելու ուղղությամբ:

Հունիսի 10-ին նախարարների խորհուրդն, ուղղում է մտցնում հունիսի 5-ի թիվ 96 որոշման մեջ՝ ավելացնելով, որ մինչև որբանոցներ պահելու համար կներկայացվի նոր նախահաշիվ, խնամատարության նախարարության համար կրկին բացել փակված որբանոցային բոլոր վարկերը[168]*:*

Հունիս ամսվա ընթացքում կառավարության, խնամատարության նախարարության և Ամերկոմի միջև կատարված գրագրությունից երևում է, որ կողմերն աշխատել են որքան հնարավոր է արագ լուծել այս խնդիրը, քանի որ առջևում նոր ուսում-

---

[166] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 94, թ.17:
[167] Նույն տեղում, թ.16:
[168] Նույն տեղում, թ.18:

նական տարին էր, իսկ դպրոցական բոլոր շենքերը զբաղեցված էին որբերով:

Խնամատարության նախարար Սահակ Թորոսյանը Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի լիազոր կապիտան Էլդերին ուղղած գրություններում խնդրում է Ամերիկայից ստացված պահածոյացված կաթի միայն մի մասը օգտագործել, մյուս մասը տրամադրել իր նախարարությանը, որպեսզի կարողանան հոգալ բացվելիք որբանոցների կարիքները,[169] առաջարկում է Երևանի դպրոցներում տեղավորված որբանոցներն ու մանկական հիվանդանոցները տեղափոխել Ալեքսանդրապոլ՝ Կաղաչի պոստ, որպեսզի հնարավոր լինի սկսել առաջիկա ուսումնական տարին[170] և այլն, իսկ կառավարությանը ներկայացրած նախահաշիվներում շեշտը դարձյալ դնելով հիմնական խոչընդոտի, այն է՝ շենքային հարմարությունների վրա, ընդգծում է, որ որքան էլ մեծ լինի որբեր խնամելու իրենց ցանկությունը, իրենք չեն կարող իրականացնել այդ խնդիրը, քանի դեռ կառավարությունը իր միջոցներով չի վերանորոգել բազմաթիվ այրված, կիսաքանդ կամ կիսակառույց շինություններ, որոնք պիտանի կլինեն որբախնամ գործը պատշաճ կազմակերպելու համար:

«Ամերիկական կոմիտէն ևս,- գրում է նախարարը,- յայտնում է, որ ինքը կշարունակի նոր որբեր հաւաքել ու խնամել, եթե կառավարութիւնը ինքը վերանորոգի շենքերը»[171]:

Այս հարցի առիթով ծավալված քննարկումներից հետո խնամատարության նախարարը հունիսի 19-ին տեղեկացնում է Ամերկոմի հայկական բաժնի լիազոր կապիտան Էլդերին հետևյալը. «Ձեզ արդեն յայտնի է, որ յարգելի միստր Եարոն Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդին յայտնեց, որ Ամերիկեան կոմիտեն Հայաստանի կառավարութեանն է վերադարձնում Վրաստանի սահմաններում եղած հայ որբանոցները և Հայաստանի սահմաններում այն որբանոցները, որոնք պատկանելիս են եղել հայ բարեգործական-կուլտուրական ընկերութիւններին՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեանը, Մոսկվայի հայոց կոմիտէին, Եղբայրական օգնութեանը և այլն: Վերա-

---

[169] ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 619, թ.141:
[170] Նույն տեղում, գ. 562, թ. 33:
[171] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ. 22, թթ.169, 170:

դարձվելու են և յիշեալ որբանոցների հետ կապված հիւանդանոցներն ու պահեստները: Պատիւ ունեմ յայտնելու Ձեզ, որ Հայաստանի կառավարութեան խնամատարութեան ու աշխատանքի մինիստրութիւնը ի վիճակի է ընդունել այդ որբանոցները 1919 թւի յուլիսի սկզբին, ուստի խնդրում եմ համապատասխան կարգադրութիւն անել: Օգտուելով դեպքից, անհրաժեշտ եմ համարում յայտնել Ձեզ, որ Հայաստանի Մինիստրների խորհուրդը իր 1919 թւի յունիսի 19-ի նիստին որոշեց որբանոցների համար անհրաժեշտ շենքերի վերանորոգութեան ծախքերը հոգալ ի հաշիւ հայոց կառաւարութեան:

Արդ կը խնդրեմ մատնանշել, թե որտե՞ղ, ի՞նչ շենք պիտի վերանորոգել»[172]:

Կապիտան Էլդերին ուղղված մի շարք գրութիւններով խնամատարության նախարարը, ներկայացնելով կառավարությանն անցնող որբանոցների ստույգ ցանկը, միաժամանակ գրում է, որ ստեղծված գրությունը պահանջում է վերադարձնել նաև որոշ հիվանդանոցներ, նախկին որբանոցային բաժնի կենտրոնական պահեստի և դրասենյակի շենքը՝ կառքով և ձիերով, որբերի կարուձևի, հյուսնության և կոշկակարական արհեստանոցները՝ իրենց ողջ պարագաներով, ինչպես նաև մայիս ամսին նրանց հանձնված հագուստեղենի գոնե մի մասը: Նախարարը խնդրում է նաև 4000 որբի հաշվարկով տրամադրել գոնե մեկ ամսվա ալյուրի, կաթի, օճառի, չամչի և լոբու պաշարը, որպեսզի որբախնամ կազմակերպությունները կարողանան դյուրությամբ սկսել գործը[173]:

Սակայն ցանկությունը՝ ցանկություն, բայց փաստն այն է, որ Հայաստանի կառավարությունը հուլիսի 1-ից Ամերիկյան կոմիտեից կարողացավ ետ ստանալ մայիսի 1-ից նրա իրավասության տակ անցած միայն 25 որբանոց և 4 հիվանդանոց՝ ընդամենը 2498 որբերով, թեև չհրաժարվեց ապագայում դրանց թիվը 20.000-ի հասցնելու իր նախնական որոշումից[174]:

Փաստորեն, որբերի ճնշող մեծամասնությունը դարձյալ մնաց ամերիկյան որբանոցներում, և Ամերիկոմի որբախնամ գոր-

---

[172] Նույն տեղում, ֆ. 205, g.1, գ. 619, թ.152:
[173] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 619, թթ.151, 153:
[174] Նույն տեղում, ֆ.199, g.1, գ. 22, թթ.169, 170:

ծունեության ծավալը համարյա թե չնվազեց, քանի որ այս ընթացքում նրա խնամքի տակ գտնվող որբանոցները շարունակեցին համալրվել հարյուրավոր անապատան երեխաներով:

Որբախնամ գործունեությանը զուգահեռ՝ Ամերիկոմը Հայաստանում փորձում էր ծավալել նաև կրթական գործունեություն:

1919 թ. օգոստոս ամսին Ամերիկոմից հանրային կրթության նախարարությանն ուղղված գրության մեջ մասնավորապես առաջարկվում է պետության հոգածության տակ վերցնել Ամերիկոմի ոչ թե առանձին որբանոցներ, այլ այդ որբանոցների դպրոցահասակ որբերին. մի կողմից այն պատճառով, որ նրանց կրթությանը հետևելու պարտականությունն արդեն ստանձնել է հանրային կրթության նախարարությունը, մյուս կողմից էլ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ամերիկոմը ևս շենքային ոչ մի հարմարություն չունի նոր ուսումնական տարին սկսելու համար[175]:

1919 թ. օգոստոսի 21-ին Ամերիկոմի նախաձեռնությամբ Ալեքսանդրապոլում բացվում է Նպաստամատույց կոմիտեի որբանոցներում աշխատող ուսուցիչների համագումարը, որի նպատակն էր քննարկումներ կազմակերպել առաջիկա ուսումնական տարվա կրթական խնդիրների շուրջ: Համագումարին մասնակցելու հրավեր է ստանում նաև հանրային կրթության նախարարությունը: Կապիտան Էլդերը հրավերին կցել է նաև համագումարի համառոտ ծրագիրը.

«... Համագումարին պիտի մասնակցեն վճռական ձայնի իրավունքով Ամերիկեան որբանոցային դպրոցներու վերատեսուչները, աւագ ուսուցիչները և մասնաւոր ուսուցիչները, ընտրուած ուսուցչական խումբի կողմէ:

Ուստի կը խնդրեի ղրկել և Ձեր ներկայացուցիչը մասնակցելու կատարուելիք աշխատանքներուն:

Համագումարին աշխատանքները պիտի ըլլան.

1. Պետութեան դաստիարակութեան ուղղութիւնն ու ծրագիրը:
2. Ամերիկեան Նպաստամատոյցի կրթութեան ուղղութիւնն ու ծրագիրը:

---

[175] Նույն տեղում, ֆ. 207, g.1, գ. 94, p. 21:

3. Կրթութեան նպատակն ու ձգտումը:
4. Տիպար դաստիարակութիւնը և ուսուցման եղանակը:
5. Արհեստագիտական և գիւղատնտեսական ուսուցումը:
6. Կրօնական դաստիարակութիւնը:
7. Դպրոցներու տիպերը (որբանոցային).
ա) մանկապարտեզ.
բ) միդասեան դպրոց 8-12 տարեկաններու
գ) երեքդասեան դպրոց (վեց ամիս) 12-16 տարեկաններու:
8. Դպրոց և կադրերու կազմութիւն:
9. Դպրոցական առողջապահութիւն (ֆիզիքական և բարոյական):
10. Դպրոցական կարգապահութիւն»[176]:

Համագումարին մասնակցում է հանրային կրթության տարրական դպրոցների բաժնի վարիչ Գ. Էդիլյանը, որի հետ էլ Ամերիկոմը հետագայում շարունակել է իր խորհրդածությունները կրթական գործի շուրջ:

Այսպես՝ սեպտեմբերի 8-ին Ամերիկոմի լիազորը գրել է Էդիլյանին, որ իրենք խնդրում են պետության աջակցությունը միայն Երևանի որբանոցային դպրոցներին, մյուսների հոգսը կհոգան իրենք: Մատնանշելով, որ Երևանի որբանոցներում տարբեր տարիքի դպրոցահասակ 3000 որբ կա, որոնց դասավանդելու համար իրենք 50 ուսուցչի փոխարեն ունեն ընդամենը 12-ը, լիազորը խնդրում է օգնել այս հարցում՝ չեշտելով հատկապես հայոց լեզվի և պատմության ուսուցիչներ ունենալու հրատապ հարցը: Ուսուցիչների վարձատրության հարցը հոգալու էր պետությունը[177]:

Պատասխան գրության մեջ Էդիլյանը ներկայացնում է նախարարության դիրքորոշումը առաջադրված հարցերի վերաբերյալ.

«1. Հանրային կրթութեան պարոն մինիստրը համաձայն է Երևանում գտնուող Ամերիկեան կոմիտէի որբանոցների ուսումնական գործին աջակցութիւն ցոյց տալ հետևեալ կերպ. մինիստրութիւնը յանձն է առնում դպրոցական տարիք ունեցող երեխաների

[176] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 46, թ.120:
[177] Նույն տեղում, գ. 94, թ. 29:

դպրոցական կրթության հոգացողությունը՝ հրաժարվելով մանկապարտեզների և արհեստանոց-դպրոցների գործերին մասնակցելուց:

2. 5-րդ, 6-րդ և 7-րդ և ավելի բարձր բաժանմունքի երեխաներին մինիստրությունը կաշխատի տեղավորել հին և նոր բացվելիք միջնակարգ դպրոցներում, մնացածների համար միայն կարող է յատուկ բաժանմունքներ ունենալ որբանոցներում: Առաջին բաժանմունք ընդունվելու են 7 տարին լրացրած երեխաները:

3. Ծրագիրը, շաբաթական ժամերի թիվը լինելու են պետական դպրոցներում ընդունվածը. կարելի է որոշ փոփոխություններ համաձայն որբանոցների առանձնայատկությունների: Կրոնի դասերի համար կրոնուսույցներին վարձատրելու է Ամերիկյան կոմիտեն, որովհետև կրոնը մեր պետական օրենքով ոչ թե պարտադիր առարկայ է, այլ ծնողների հոգացության խնդիր և ազատ:

4. Ուսուցիչների վարձը ամբողջովին կտայ Հայկական կառավարությունը և այդ մասին առաջարկ կմտցվի պառլամենտ: Պիտոյքների ծախքի հոգացողությանը ոչ մի օժանդակություն չի կարող ցույց տալ մեր կառավարությունը այն պարզ պատճառով, որ մեր կառավարությունը հնարաւորություն չունի այդպիսի պիտոյքներ ձեռք բերել իր բուն դպրոցների համար: Պետական որբանոցների և հասարակական դպրոցների պիտոյքները չի տալիս հանրային կրթ[ության] նախարարությունը:

5. Ինչ վերաբերում է դպրոցական գործի վերահսկողության և կազմակերպման գործին, հանրային կրթ[ության] մինիստրը կարծում է, որ աւելի նպատակայարմար է այդ գործը կենտրոնանայ մի իշխանության ձեռքի մէջ՝ աւելորդ թիւրիմացությունների խուսափելու համար:

Գործը կարելի է կազմակերպել այսպէս. պետությունը կունենայ որբանոցի դպրոցների համար յատուկ տեսուչ, որը կը հրավիրի ուսուցիչներ՝ ընդունելով նախ և առաջ նախկին 12 ուսուցչին: Դպրոցական ուսումնական և կրթական վերահսկողությունը կլինի այդ տեսչի ձեռքին, որը և անմիջականորէն մինիստրության ընդհանուր հրահանգներով կը կառավարի որբանոցների դպրոցական գործը սովորական կարգով: Ամերիկեան կոմիտէի

վարչությունը կունենայ հոգաբարձության ֆունկցիա, այն է՝ տեղեկանալու, թե ինչ վիճակի մեջ է դպրոցներում ուսումնակրթական գործը. նա կարող է գանգատվել և մինիստրության միջոցով շտկել որբանոցների դպրոցական գործի պակասությունները: Ամերիկեան կոմիտէն այդ խնդրում ծնողի դեր ու իրաւունքներ է ունենալու: Այս կերպ երկուութիւն և երկիշխանութիւն չի մտնիլ որբանոցների դպրոցական գործի մեջ: Գործի շահը այդ է պահանջում, այդ պատճառով էլ կըխնդրէի ձեզ համաձայնել մեր այս ձեւակերպմանը:

Եթե մեր այս առաջարկները ընդունելի են, խնդրում եմ տալ գրաւոր համաձայնութիւն, որպեսզի մօտիկ օրերս կազմի նախահաշիւ և մտցի պառլամենտ: Հակառակ դէպքում, խնդրում եմ նշանակել անձնական տեսակցութիւն»[178]*:*

Ըստ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հայաստանյան լիազորի, ինչպես նաև Թիֆլիսում տեղակայված գլխավոր շտաբի պաշտոնյաների և Հայաստանի կառավարության ու հանրային կրթության նախարարության միջև ընթացած ծավալուն գրագրության՝ կարելի է ենթադրել, որ, այնուամենայնիվ, այս հարցերի մեջ որոշակի հստակություն է մտցվել, և կողմերը եկել են համաձայնության, թեև դա չի խանգարել, որ հարկ եղած դեպքում դարձյալ դիմեն իրար՝ փոխադարձ զիջումների և օգնության ակնկալիքով:

Այսպես՝ նոյեմբերի 18-ին Թիֆլիսի գլխավոր շտաբից գնդապետ Ռեյը հանրային կրթության նախարարին ուղղած գրության մեջ[179] *խնդրում է գոնե մասամբ հոգալ Ամերկոմի որբանոցային դպրոցների համար դասագրքեր և գրենական պիտույքներ ձեռք բերելու հարցը:*

Նոյեմբերի 21-ին պատասխանելով գնդապետ Ռեյին՝ հանրային կրթության նախարարությունից հավաստիացնում են, որ ուսուցիչների վճարման հարցը, նախապես պայմանավորվածության համաձայն, կհոգա կառավարությունը, իսկ գրենական պիտույքներ ձեռք բերելու համար պետք է երկուստեք ջանքեր գործադրել:

---

[178] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 94, թթ. 30-32:
[179] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 46, թթ. 20, 21:

Ուշագրավ է, որ այստեղ շոշափվել է նաև որբանոցներին քահանաներ տրամադրելու հարցը, և մի անգամ ևս հիշատակվել, որ չնայած Ամերիկոմի բազմաթիվ խնդրանքներին, կրթության նախարարությունը իրավասու չէ լուծելու այս խնդիրը, քանի որ «... կառավարությունը որդեգրել է իր երկրի հավատացյալների կրոնական կյանքին չմիջամտելու քաղաքականություն...»:

Այնուամենայնիվ, նախարարը խոստանում է մասնավոր կարգով զրուցել այդ թեմայով Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ՝ հարցին լուծում տալու և որբերի կրոնական դաստիարակությունը կազմակերպելու նպատակով[180]:

Դեկտեմբերի 18-ին գլխավոր շտաբի փոխգնդապետ Լոներգանի և հանրային կրթության նախարարի կազմած պլանի համաձայն, 1920 թ. հունվարի 1-ից նախատեսվում էր կրթական գործը կազմակերպել այնպես, որ կառավարությունը վճարեր Ամերիկոմի որբանոցներում աշխատող 130 ուսուցիչների աշխատավարձը (դրա չափը ևս որոշելու էր կառավարությունը, թեև ուսուցիչներին աշխատանքի ընդունելու և ազատելու իրավունքը վերապահվել էր Ամերիկոմի դործակալներին):

Ըստ պլանի՝ ուսուցման առարկայական ծրագիրը պետք է համապատասխաներ պետական դպրոցների ծրագրին, նախարարությունը պետք է հսկեր դրա կատարումը, սակայն Ամերիկոմը դարձյալ իրեն էր վերապահել կրթական գործը վարելու ողջ գործընթացը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև դասագրքեր և դրենական պիտույքներ հայթայթելու հարցի շուրջ, համաձայն որի՝ Ամերիկոմը ջանալու էր նպաստել այս աշխատանքին, իսկ կառավարությունը տրամադրելու էր պահանջվող գումարը[181]:

Այս պլանի մեջ դարձյալ ոչ մի խոսք չկար կրոնի ուսուցման վերաբերյալ, ուստի դեկտեմբերի 21-ին հանրային կրթության նախարարին ուղղած գրության մեջ գնդապետ Ռեյը ընդգծում է, որ կրոնական դաստիարակության գործում ըմբռնումով մոտենալով կառավարության դիրքորոշմանը, այնուամենայնիվ, իր պարտքն է համարում զգուշացնել, որ այս հարցում Հայաստանի կառավարությունն ու Ամերիկոմը ուղղակի ստիպված են

---

[180] Նույն տեղում, թ. 24:
[181] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 46, թ. 27:

համագործակցել, քանի որ որբանոցներում դաստիարակվող որբերը Հայաստանի ապագա քաղաքացիներն են, և այս առումով կառավարությունն ինքը պետք է շատ խորը շահագրգռվածություն ունենա, թե ինչ բարոյահոգեբանական նկարագիր կունենան իրենց ապագա քաղաքացիները, կդառնա՞ն նրանք իրենց հայրենիքին արժանի մարդիկ և նրա ապագան կերտող անհատներ[182]:

Ուշագրավ զարմանալի է, որ այս մտահոգությունը հայտնել է Ամերիկոմը, մինչդեռ պարզ տրամաբանությունն ասում է, որ հենց սկզբից էլ այս հարցը պիտի դառնար Հայաստանի կառավարությանը զբաղեցնող հիմնական խնդիրը, քանի որ Ամերիկոմի հետագա գործունեության ընթացքում (կարելի է անվերապահորեն ասել, որ նաև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո էլ՝ ընդհուպ մինչև նրա գործունեության դադարեցումը) սա է եղել այն հիմնահարցը, որի շուրջ միշտ ծավալվել են վիճաբանություններ, հնչել են փոխադարձ մեղադրանքներ, քանի որ Ամերիկոմը, իր կոչումով լինելով մարդասիրական-բարեգործական հաստատություն, այնուամենայնիվ, տարածաշրջանում ծավալում էր նաև միսիոներական գործունեություն, որը չէր կարող չանդրադառնալ նրան հանձնված մատաղ սերնդի բարոյահոգեբանական, կրոնական դաստիարակության վրա:

Որբանոցներում Ամերիկոմի դաստիարակներն ու կրթական գործում ներգրավված ուսուցիչները փորձում էին «ամերիկյան առաջադիմական չափանիշին» համապատասխանող սերունդ պատրաստել՝ մոռանալով, որ հայ մանուկը ունի նաև իր ազգային հոգեկան նկարագիրը, որից նրան հեռացնելը լուրջ հետևանքներ կունենա նորաստեղծ հայկական պետության համար:

Ինչևէ, կառավարությունը վերջապես փորձում է շտկել այս հարցում իր սրդեպրած ոչ ճիշտ դիրքորոշումը և սկսում է բանակցություններ վարել Էջմիածնի կաթողիկոսարանի հետ՝ որբանոցներին քահանաներ տրամադրելու և հոգևոր դաստիարակությանը հետևելու հարցով:

Դեկտեմբերի 25-ին հանրային կրթության նախարարությունը տեղեկացնում է Լոնդոնին, որ իրենք դիմել են կաթողիկոսարանին լուծել այս հարցը և խնդրում են հայտնել որբանոց-

[182] Նույն տեղում, թ. 28:

ներին անհրաժեշտ քահանաների թիվը, որին, ի պատասխան, Լոնդոնը հայտնել է, որ 2 քահանա անհրաժեշտ են Երևանի և մեկական քահանաներ՝ Ալեքսանդրապոլի, Կարսի և Ղարաքիլիսայի որբանոցների համար[183]:

Հանրային կրթության նախարարության՝ կառավարությանը ներկայացրած տեղեկագրից երևում է, որ 1919 թ. աշնանը Ամերիկոմի և պետական որբանոցներում ընդգրկված որբերի թիվը հասել էր 23.110-ի, որից 6650-ը գտնվում էին կառավարության խնամքի տակ գտնվող 43 որբանոցներում, 10.439-ը՝ Ամերիկոմի որբանոցներում, իսկ 6021-ը Ամերիկոմի՝ տնային պայմաններում խնամվող որբերն էին: Այս թվի մեջ ընդգրկված չէին Թիֆլիսում և Հայաստանի սահմաններից դուրս խնամվող որբերը[184]:

Հանրային կրթության նախարարությունը Ամերիկոմի Կովկասյան կենտրոնական դրասենյակին տրամադրեց պետական դպրոցների առարկայական պլաններն ու կրթական ծրագիրը՝ առաջարկելով քննության առնել դրանք, հարմարեցնել որբանոցային դպրոցների պայմաններին և հնարավորություններին, այնուհետև իրենց ներկայացնել նրանց կողմից հավանության արժանացած տարբերակը, որպեսզի մոտ ապագայում այն դրվի կիրառության մեջ[185]:

Դեկտեմբեր-հունվար ամիսներին Ամերիկոմի դրասենյակի որբանոցային բաժնի ջանքերով և անձամբ փոխգնդապետ Լոնդոնի եռանդուն գործունեության շնորհիվ որբանոցային դպրոցներն ապահովվեցին նաև դասագրքերի ու գրենական պիտույքների այն նվազագույն քանակով, որն արդեն հնարավորություն էր տալիս պարապմունքները կազմակերպել շատ ավելի բարվոք պայմաններում[186]:

Այս ընթացքում լուծվեց նաև երեխաների հոգևոր և ֆիզիկական դաստիարակության խնդիրը:

Երևանի հայրապետական թեմի փոխթեմակալի պաշտոնակատար Հակոբ ավագ քահանա Խաչվանքյանը հանրային կրթության նախարարին տեղեկացրել է, որ փոխթեմակալ դերա-

---

[183] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ.46, թթ. 33, 47:
[184] Նույն տեղում, թ. 63:
[185] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 46, թթ. 43, 50:
[186] Նույն տեղում, ֆ. 207, ց.1, գ. 46, թ. 71:

պատիվ տեր Խորեն եպիսկոպոսը հանձնարարել է ամերիկյան որբանոցներում կրոնաբարոյական մթնոլորտը ազգային շահերի տեսանկյունից կազմակերպելու նպատակով նշանակել պատասխանատու քահանաներ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղարաքիլիսայում, որի մասին տեղեկացվել է նաև Ամերիկայի որբանոցային վարչությանը[187]:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբը սիրահոժար համաձայնել էր իր սպայական կազմից մասնագետներ տրամադրել, որպեսզի վերջիններս ղեկավարեին մարմնամարզության դասերը և զբաղվեին ֆիզիկական դաստիարակության հետ կապված այլ խնդիրներով ևս[188]:

Գնդապետ Ռեյը 1920 թ. հունվարի 15-ին Հայաստանի Հանրապետության կրթության նախարարություն ներկայացրեց ամերիկյան որբանոցների դպրոցների իրենց կողմից ևս ընդունված, լրամշակված կրթական ծրագիրն ու առարկայական պլանները առաջարկելով դրանք գործողության մեջ դնել հենց առաջիկա ամսից: Ծրագիրն ուներ 4 հիմնական բաժիններ՝ ուսումնական, արհեստագործական, մարմնակրթական (մարզանք և խաղեր), կրոնական դաստիարակություն:

Ուսումնական մասը ներառում էր մանկապարտեզը և բուն դպրոցը՝ 6 աստիճաններով: Մանկապարտեզի ծրագրի մեջ մտել էին նկարչություն, երգեցողություն, ֆիզկուլտուրա, ձեռքի աշխատանք առարկաները, նախատեսվել էր նաև փոքրիկներին արտասանել և հաշվել սովորեցնել՝ նրանց հնարավորությունների սահմաններում:

Դպրոցական բաժնի վեցաստիճան համակարգում ուսուցանվելու էին հայոց լեզու, թվաբանություն, գծագրություն, աշխարհագրություն, երգեցողություն, ընդհանուր և ազգային պատմություն, առողջապահություն, կրոնի պատմություն, ձեռարվեստ, մարմնամարզություն առարկաները:

Հետաքրքիր է, որ ամերիկյան դպրոցներում նախատեսվում էր զուգահեռաբար դասավանդել թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գրական լեզուները, ուշադրություն դարձնել նաև բանավոր խոսքի մաքրությանն ու ճիշտ արտասանությանը, երե-

---

[187] Նույն տեղում, թթ. 80, 184:
[188] Նույն տեղում, թ. 74:

խաների մեջ զարգացնել կարդացածը վերլուծելու և իրենց մտքերը գրագետ շարադրելու արվեստը:

«Գծագրություն» առարկայի ծրագրում մեծ տեղ էին զբաղեցրել գունավոր մատիտանկարի ժամերը. երեխաները պետք է դաստիարակվեին լույսի ու ստվերի, գունային երանգների ճաշակով համադրության մասին: Ծրագրում ասվում էր, որ այս հմտությունը շատ է անհրաժեշտ հատկապես աղջիկներին՝ ասեղնագործության, շալագործության, դերձակության մեջ գեղեցիկ աշխատանքներ ստեղծելու համար: Ժամեր էին հատկացվել նաև հայ ճարտարապետության պատմության վերաբերյալ սաներին տարրական գիտելիքներ հաղորդելու համար:

Պատմության ծրագիրն ընդգրկում էր Մովսես Խորենացուց մինչև 20-րդ դարի սկիզբն ընկած պատմական կարևոր և հիշարժան դեպքերը և դասավանդվող առարկաների մեջ ժամերի քանակով ամենածավալունն էր:

«Առողջապահություն» առարկան նախատեսվում էր դասավանդել բարձր դասարաններում և ներառում էր ոչ միայն անձնական հիգիենայի խնդիրները, մարմնամարզությունը, տարրական գիտելիքներ տարափոխիկ հիվանդությունների և նրանցից պաշտպանվելու մասին, այլև երեխաներին նախապատրաստելու էր ընդհանրապես մաքուր կենցաղավարության (բնակարանի մաքրություն, հարդարում և վերանորոգում, պարտեզի, ծաղկանոցի խնամք և այլն)[189]:

Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար պիտի ընդգծենք, որ այս ծրագիրը միայն թղթի վրա է մնացել, քանի որ ամերիկյան որբանոցների դպրոցների աշխատանքները վերահսկող տեսուչները հանրային կրթության նախարարության դպրոցական բաժին ներկայացրած իրենց ամենամյա զեկուցագրերում ներկայացնում են բոլորովին այլ պատկեր:

Դպրոցական տեսուչների՝ 1920 թ. մարտ-օգոստոս ամիսների տեղեկագրերում Ամերիկոմի որբանոցներին կից գործող դպրոցների միակ հուսադրող և գնահատության արժանի բնագավառը համարվել է որբերի քիչ թե շատ տանելի վիճակը (հագուստով և սննդով ապահովված լինելը, բժշկական հսկողությունը, կենցաղային տարրական հարմարություններ ունենալը և այլն):

---

[189] ՀԱԱ, ֆ. 207, g.1, q. 46, pp. 57-61:

Ինչ վերաբերում է ուսումնական գործընթացին, ապա այստեղ վիճակը ավելի քան անմխիթար է եղել:

Ղարաքիլիսայից հանրային կրթության նախարարության դպրոցական բաժնում ստացված տեղեկագիրը հավաստում է, որ քաղաքում Ամերկոմի միջոցներով պահվում են 3 որբանոցներ, որոնց կից դպրոցներում ընդգրկված է 573 աշակերտ: Սրանցից երկուսում դպրոցական պարապմունքները կազմակերպվել են որբանոցների սեղանատներում, որտեղ դրվել են մեկական գրատախտակներ, պարապմունքները տարվել են կեսօրից հետո՝ 4 պարապմունքով՝ 2 մեծ խմբերի համար: Աշակերտները 1-ական ժամով սովորել են միայն տառաճանաչություն և պարզագույն հաշվարկ: 10-20 աշակերտի հասել է ընդամենը 1 դասագիրք, որը ձեռքից ձեռք է փոխանցվել:

Երրորդ որբանոցի դպրոցական պարապմունքները տարվել են նույն ձևով, միայն ավելի վատթար պայմաններում, քանի որ նրանց տրամադրվել է թատրոնի դահլիճը, ուր պարապմունքներ վարելու տարրական հարմարություններ չկային:

Երբ տեսուչը աշխատանքը գնահատել է անբավարար և այդ մասին հայտնել որբանոցների կառավարչին, վերջինս ընդունել է, որ թեև որբանոցների ուսումնական գործը «մանկավարժական հիմունքների վրա չէ դրված», սակայն այդ հարցում մեղավորներ փնտրելուց առաջ անհրաժեշտ է դպրոցներին շենքեր տրամադրել, որպիսիք Ղարաքիլիսայում չկան, մինչդեռ հենց այս հարցի լուծումից է կախված կրթական գործի որակը, և որ Ամերկոմը ինքը ևս շահագրգռված է գործը նպատակաուղղված կազմակերպելու համար[190]:

Դիլիջանից ստացված զեկուցագիրը ևս նույնատիպ մի պատկեր է ներկայացնում: Ամերկոմի ենթակայության տակ գտնվող 7 որբանոցները նախկինում պահվելիս են եղել Կովկասի հայ բարեգործական ընկերության միջոցներով: Ամերկոմին անցնելուց հետո նրանցից 5-ին կից բացվել են դպրոցներ, որոնցում ընդգրկվել է որբերի մի մասը միայն, քանի որ տարածված քոս հիվանդության պատճառով որբերի մի զգալի մասը պահվել է մյուսներից մեկուսացված: Փաստորեն 5 դպրոցներում ուսումնառություն են ստացել 348 որբեր, որոնք քիչ թե շատ ապահովված

[190] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 94, թ.50:

են եղել դասագրքերով: Դպրոցներից մեկում գործել է նաև ջուլհականոց, որի կառավարիչն էր իշխանուհի Մարիամ Թումանյանը:

«Դպրոցների բոլոր ուսուցիչները միջնակարգ կրթությամբ մարդիկ են,- զեկուցագրի վերջում գրում է տեսուչ Աթաբեկովը, - թեև մի քանիսը անփորձ են դասավանդության մեջ, սակայն երևում է, որ նրանք նվիրված են գործին և արդիւնքը էն չափով, որ թույլ է տալիս յարմարությունները, երևում է:

Ամերիկացիները հետաքրքրվում են դպրոցով, շուտ-շուտ այցելում են, սակայն դպրոցական յարմարություններ ստեղծելու մեջ թերում է, թե թերացել են: Դասատուները յաճախ հիւանդացել են, որ հետևանք է անյարմար շենքի:

Ես կարծում եմ՝ ամենալաւ և ցանկալի միջոցը կլիներ դպրոցը զատել որբանոցներից, որով շատ և շատ անյարմարություններ կյարթուէին»[191]:

Զեկուցագրերի ուսումնասիրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ համեմատաբար բարվոք վիճակ եղել է միայն Ալեքսանդրապոլում և Կարսում:

Բանն այն է, որ ցարական Ռուսաստանը Թուրքիայի սահմանի մոտ՝ Կարսում և Ալեքսանդրապոլում, իր զորքերի տեղակայման համար մեծածավալ քարե շինություններ էր կառուցել՝ վարչական, սանիտարաբժշկական, ռազմական շենքեր, զորանոցներ, վառելիքի և զինամթերքի հսկայածավալ պահեստներ, լվացքատներ, բաղնիքներ, ճաշարաններ ու հացաթխման կետեր, էլեկտրամատակարարման կայաններ, քիչ թե շատ գործող երկաթգիծ և այլն, որոնք ռուսական զորքի նահանջից հետո մնացել էին լքված: Հենց այդ շենքերն էլ դարձան ապաստարաններ տասնյակ հազարավոր որբ մանուկների համար: Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն իր միջոցների մեծ բաժինը հատկացրեց այս կառույցների վերանորոգման, դույլ ձեռք բերելու աշխատանքներին, և արդյունքում ստեղծվեցին որբանոցային մեծ համալիրներ՝ քաղաք-որբանոցներ, որոնցում, ինչ խոսք, ավելի արդյունավետ աշխատանք էր տարվում:

Պետությունը Հայաստանի ողջ տարածքում թափառող որբերին հավաքելու և Երևանի, Ալեքսանդրապոլի ու Կարսի որբա-

[191] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ.106, թթ. 66, 67:

նոցներ տեղափոխելու համար չուներ ո՛չ դրամական և ո՛չ էլ փոխադրական միջոցներ, ուստի Ամերկոմը որբանոցներ էր բացել նաև գավառական խոշոր գյուղաքաղաքներում (Ղարաքիլիսա, Դիլիջան, Նոր Բայազետ, Էջմիածին, Ջալալօղլի, Դարաչիչակ, Ղամարլու), որոնց պայմաններն ու հնարավորությունները բոլորովին այլ էին:

Միայն Ալեքսանդրապոլի Պոլիգոն, Կազաչի պոստ և Սևերսկի կայաններում 1920թ. սեպտեմբերի դրությամբ պահվող շուրջ 20.000 որբերի տրամադրության տակ 170 շինություն կար, հանգամանք, որը դյուրացնում էր նրանց և՛ խնամքի, և՛ կրթության գործը:

Կազաչի պոստի և Սևերսկու որբանոցներում տեղավորված էին աղջիկները, իսկ Պոլիգոններում՝ տղաները:

Պիտի ասել, որ որբերի թիվը միշտ տատանվել է 20.000-ից 30.000-ի սահմաններում, որի պատճառը հիմնականում եղել է չափահաս որբերի՝ որբանոցից դուրս գալը, ծնողներին կամ հարազատներին գտնելն ու նրանց մոտ վերադառնալը, նորանոր փախստական որբերով որբանոցների համալրվելը և այլն:

Հանրային կրթության նախարարության ստացած զեկուցագրերից երևում է, որ Պոլիգոնի 10 որբանոցներում և նրանց կից դպրոցներում որբերի համար լավ պայմաններ են ստեղծվել. ուտելիքը եղել է բավարար, հագուստներն ու անկողինը՝ մաքուր, երեք հիվանդանոցներում առանձին պահվել են ծանր, վարակիչ և արդեն կազդուրվող հիվանդները, որի շնորհիվ նվազել է մահացության թիվը:

Դպրոցներն առաջնորդվել են կրթության նախարարության ներկայացրած ծրագրով և համեմատաբար ապահովված են եղել դասագրքերով, գրենական պիտույքներով, բանիմաց մանկավարժներով:

Այստեղ մեծ ուշադրության է արժանացել նաև արհեստագործական կրթությունը: Տղաները սովորել են նկարչություն, ատաղձագործություն, դերձակություն, կոշկակարություն, թիթեղագործություն, կաղմարարություն, հյուսնություն, սափրիչություն, երկաթագործություն, կավագործություն, փականագործություն:

Պոլիգոնի որբերը ունեցել են սեփական ուժերով կազմակերպված թատրոն, մանկական գրականությամբ համալրված գրադարան, երբեմն-երբեմն հրատարակել են շաբաթաթերթ, մասնակցել երգչախմբի պարապմունքների և այլն:

Աղջիկ որբերը վարժեցվել և հմտացել են ամեն կարգի տնային գործերի մեջ: Լ.Ազատյանը իր «Հայ որբերը Մեծ եղեռնի» գրքում անդրադարձել է այս հարցին և գրել. «...Աղջիկ մը երեք ամիս կաշխատի սպասարկող, յետոյ հիւսելու դասարանը կը յաճախէ քանի մը ամիս: Միեւնոյն աղջիկը կը վերադառնայ որբանոցային աշխատանքներու, ինչպէս՝ խոհանոց եւ լվացք ու եւոքը վեց ամսուայ կարելու դասընթացքի կը հետեւի:

Սեւվերսկիի գիւղն ու պարտէզները չափազանց հետաքրքրական էին ու արժէքաւոր: Պոլիգոնի մանչերը գիւղի տիպար տուներ կը շինէին եւ ծրագիրը՝ 50 աղջիկ՝ 15 տարեկաններ, այս տիպար տուներուն մէջ կապրէին երեք ամիս՝ գիւղական կեանքով: Զորս դասարաններ ունէին, ուր կը սորվէին տեղական կերակուրներ եփել: Աղջիկները գնումները իրենք կընէին շուկայէն: Գիւղը ունէր իր ոչխարները, կովերը եւ հաւերը: Ամբողջ տան եւ պարտէզի աշխատանքները աղջիկները կընէին: Այսպէս, երեք ամսուան միջոցին աղջիկները կը սորվէին կթել, կով խնամել, կարագ ու պանիր պատրաստել:

Անոնցմէ զատ՝ մեծ աղջիկները մասնագիտական հիւանդապահուհի դասընթացքի կը հետեւէին եւ աւարտելէ ետք հիւանդանոցներու մէջ կաշխատէին»[192]:

Կարսից ստացված զեկուցագրերից մեկում նշված է, որ ամերիկյան որբանոցների դպրոցական գործը ղեկավարում է գործին նվիրված մի մեծահարուստ՝ պարոն Քրեյնը (Crane): «Այս մարդը,-գրում է զեկուցագրի հեղինակը,- ինքը մէծ հարստութեան տէր լինելով՝ ոչ մի կոպէկ վարձ չէր ստանում իր աշխատանքի համար, այլ, ընդհակառակը, ամենայն ամիս մի քանի տասնեակ հազար ծախսում էր իր գրպանից, ըստ երեւույթին նրա Հայաստան գալը մաքուր բարեգործութեան մէջ հաճոյք ստանալու ձգտումն է եղել»[193]:

---

[192] Տե՛ս Լ. Ազատեան, Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 65:
[193] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 94, թ. 52:

Կարսի շրջանի դպրոցների տեսուչը, ներկայացնելով քաղաքում գործող 4 որբանոցների և քաղաքամերձ ձորի 3 որբանոցների կրթական, ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքն ու ծավալը, մատնանշում է դրանց կանոնավոր ընթացքը, դասավանդման ծրագրերին և ուսումնական պլաններին համապատասխան լինելը:

Երեխաները օրվա մի մասը անց են կացրել դպրոցում, մյուս մասը արհեստանոցներում: Որբանոցներում հատկապես արհեստները դրված են եղել շատ լավ հիմքերի վրա. «Որբանոցների կարիքների մեծ մասը հոգացուում է այս արհեստանոցներում,- գրում է տեսուչը: - Երեխաները իրանք պատրաստում են գդալ, գուլպայ, շորեր, սպիտակեղեն, կաւից և թիթեղից ամաններ, կոշիկ (չուստեր), տրեխ, կարասիք և ուրիշ պիտոյքներ:

Արհեստների համար ամերիկացիները ոչինչ չեն խնայել և արել են ինչ որ հնարաւոր է»[194]:

Շաբաթ և կիրակի օրերը դպրոցներում և արհեստանոցներում պարապմունքներ չեն արվել, և որբերը զբաղվել են որբանոցներում մաքրութիւն անելով, հետևել են անձնական հիգիենային և այլն[195]:

Տեսուչը դժգոհում է, որ ամռան ամիսներին դարձյալ մեծացել է որբերի զանգվածային հոսքը դեպի Կարս, որն ուննենում է իր անցանկալի հետևանքները աշխատանքի կանոնավոր կազմակերպման հարցում:

Սրա հիմնական պատճառը երկրում ստեղծված քաղաքական անկայուն դրությունն էր: Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեն ամռան ամիսներից սկսեց իր խնամքի տակ գտնվող որբանոցներից որբերին տեղափոխել Ալեքսանդրապոլ և Կարս: այդ որբանոցներին տրամադրված շենքերն ու գույքի մի մասը թողնելով կառավարության տրամադրության տակ, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա իր խնամքի տակ առնելու անապաստան ու թափառող երեխաների օրավուր աճող բանակը[196]: Սակայն այս ուղղությամբ արվող հենց առաջին քայլերը լուրջ դժվարություններ ստեղծեցին կառավարող մարմինների

---

[194] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 94, թ. 55:
[195] Նույն տեղում, թ. 54:
[196] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ.46, թթ. 98-99,118, ֆ. 205, ց.1, գ. 636, թթ.171, 203, 290:

համար, քանի որ նրանք ի վիճակի չէին ո՛չ հաղցնելու և ո՛չ էլ կերակրելու նոր որբերի:

Խնամատարության նախարարի՝ Ամերիկոմի կենտրոնական գրասենյակ ուղարկած շատ գրություններ (մոտավորապես նույն բովանդակությամբ ու խնդրանքով) մնում էին անհետևանք կամ էլ, լավագույն դեպքում, ստացվում էր պատասխան գրություն՝ ոչ այնքան հաճելի շեշտադրումով:

Ահա խնամատարության նախարարի՝ Ամերիկոմ ուղղած օդոստոսի 23-ի թվակիր գրությունը. «Այսու խնդրում եմ Ձեր կարգադրությունը բաց թողնելու նախարարությանս որբանոցների կարիքների համար Ձեր պահեստում եղած աղջկայ և տղայոց վերնազգեստներ հետևյալ չափով.

1000 զույգ մեծահասակների համար,

300 [զույգ] փոքրահասակների [համար],

30 կոմպլեկտ մատղաշ երեխաների համար:

Հետևանքի մասին խնդրում եմ հաղորդեք ինձ»[197]:

Օդոստոսի 25-ին հետևել է Լ.Թոսսումի պատասխան գրությունը.

«Այժմ այդ անկարելի է Նպաստամատույց Կոմիտեի համար, որովհետև ոչինչ չունենք որբերին հաղցնելու:

Կենտրոնացել են դրա համար մեծ թվով որբեր Ալեքսանդրապոլում և Կարսում. ամեն մի կետի վրայ մանուֆակտուրայից (մատերիալ) մենք ունենք մեծ պահանջ, և յուրաքանչյուր մեր պահեստները գործնականապես դատարկ են, հարկավոր է նորից լցնել»[198]:

Իսկ սննդով օգնելու խնդրագրերին գնդապետ Տելֆորդը դեռևս հուլիսի 19-ին տվել էր հակիրճ բացատրություն.

«1. Ես մատակարարել եմ մթերքներով և ապրանքներով Հայաստանի Կառավարությանն բոլոր որբանոցներին և հիւանդանոցներին վեց ամիս:

2. Այս պատճառով ստիպված էինք Ձեզ բաց թողնել աւելի քիչ չափով:

---

[197] Նույն տեղում, ֆ. 205, ց.1, գ. 636, թ. 284:
[198] Նույն տեղում, թ. 288:

3. Այդ վեց ամսում մատակարարել ենք հետեւեալ չափաւոր բաժնով.

ալիւր -	1/2 ֆունտ անձին ամեն օր	
կաթ -	1/5 մաս	"_____"_____"_____"
շաքար -	3 $^{3}/_{7}$ մսխալ*	"_____"_____"_____"
կակաօ -	1 $^{2}/_{7}$ մսխալ	"_____"_____"_____"
սապօն -	5/124 ֆունտ	"_____"_____"_____"»[199]:

Շուտով սկսվելու էր նոր ուսումնական տարին, և կրթության նախարարությունը, վերանայելով նախորդ տարվա կրթական ծրագրերն ու պայմանագրերը, ինչպես նաև Ամերկոմի որբանոցային դպրոցներին կցված տեսուչների զեկուցագրերը, օգոստոսի 14-ին թիվ 3412 գրությամբ նոր առաջարկ է ներկայացնում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Կովկասյան տարածաշրջանի լիազոր Յարրոյին, որում մասնավորապես ասվում էր. «Նախարարությունս 1919 թ. դեկտեմբեր ամսին Ամերիկեան Կոմիտէիդ հետ որբանոցային դպրոցների վերաբերեալ եկել էր որոշ համաձայնութեան: Նախարարութիւնս նորից ուշադրութեան առնելով այդ համաձայնութիւնը[200] և ապա ծանօթանալով Ամերիկյան Կոմիտէի դպրոցների տարեկան գործին, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1. Ամերիկեան Կոմիտէդ զբաղւած էր այն դերագոյն հոգսով, թե ինչպե՞ս պետք է ազատել որբերը սովամահութիւնից, ինչպե՞ս պետք է տեղաւորել և պահպանել նոցա, իսկ միւս կողմից կառավարութիւնը ծանր տնտեսական պայմանների հետեւանքով հնարաւորութիւն չունեցաւ աւելի մօտիկից ուշադրութեան առնելու որբերի կրթական գործը և տրամադրելու աւելի նիւթական միջոցներ: Այժմ, երբ որբերը մեծ մասամբ տեղաւորւած են և լաւ են խնամւում, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ որբանոցներիդ մէջ կրթական-դաստիարակչական գործը անցեալ տարի ոչ ցանկալի վիճակի մէջ էր, անհրաժեշտ ենք համարում աւելի լայն չափերով մօտենալ որբերի կրթական գործին...»[201]:

Նախարարությունն առաջարկում է կոմիտեին վերանայել նախորդ տարվա պայմանագիրը, նրա մեջ որոշակի շտկումներ

---

* Մեկ մսխալը հավասար է 4,266 գրամի:

[199] ՀԱԱ, ֆ. 205, g.1, գ. 900, թ. 215:

[200] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 46, թթ. 27-29:

[201] Նույն տեղում, ֆ. 207, g.1, գ. 46, թ.107:

կատարելով: Մասնավորապես առաջարկվում է կրթական գործի վերահսկողությունը, ուսումնական ծրագրերի մեջ փոփոխություններ մտցնելը, ուսուցիչների վարձատրության չափը որոշելը վերապահել հանրային կրթության նախարարությանը:

Սեպտեմբերի 6-ին հեռևել է Յարրոյի պատասխան գրությունը, որով նա տեղեկացնում է, թե շուտով Նյու Յորքից ժամանելու է նոր տեսուչ, որը կզբաղվի կրթական գործերով և կհայտնի իր վերջնական կարծիքը այս հարցի վերաբերյալ: Սակայն նա իր պարտքն է համարում տեղեկացնելու, որ կառավարության առաջարկները միանգամայն անընդունելի են Ամերիկոմի համար, և եթե կառավարությունը կշարունակի պնդել դրանք, ապա ինքը կցանկանար պաշտոնական դրություն ստանալ այդ առթիվ՝ Նյու Յորքի կենտրոնական գրասենյակ փոխանցելու համար:

Գրության մեջ Յարրոն, այնուամենայնիվ, փորձում է պարզաբանել իր անձնական դիրքորոշումը.

«Ձեզ յայտնի է, որ կոմիտէի գործունէութեան մէջ կենտրոնացած են ամբողջ Ամերիկեան ժողովրդի բարեհաճութիւնը, սիմպատիան եւ ցանկութիւնը՝ օգնելու Հայաստանին: Կոմիտէի ցանկութիւնն է նպաստել որոշակի կերպով Հայաստանի ապագային եւ նա կարծում է, որ այդ նպատակին հասնելու համար ամենալաւ միջոցն է տալ իրան յանձնուած որբերին մի այնպիսի կրթութիւն, որը միջոց կտայ նրանց դառնալ ապագայ օգտակար անդամներ Հայաստանի Հանրապետութեան: Մենք չենք ցանկանում օտարացնել մանուկներին իրենց ցեղից եւ կառավարութիւնից, բայց մենք ցանկանում ենք դաստիարակել նրանց այնպես, որ նրանք ստանան Ամերիկեան դաստիարակութեան ամենալաւ էլեմենտները, որպիսի դաստիարակության հետեւանք է այն, որ Ամերիկան դառել է երկրագնդիս ամենաառաջադէմ երկրներից մէկը: Մեր նպատակին հասնելու համար անպայման հարկաւոր է, որ մենք մեր կրթական գործի մէջ կարողանանք աշխատել նոյնքան ազատ, ինչպէս համանման կազմակերպութիւնները Ամերիկայում: Ամերիկայում գոյութիւն ունեն թէ՛ պետական եւ թէ՛ մասնաւոր պետական հիմնարկութիւններ: Առաջինները իհարկէ ամբողջապէս գտնուում են կառավարութեան հսկողութեան ներ-

քոյ, իսկ վերջիններիս տրված է մեծ ազատություն իրենց կեանքի մէջ»[202]:

Հանրային կրթության նախարարին չի գոհացրել Յարրոյի պատասխան նամակը, և որպեսզի նոր ուսումնական տարին չսկսվի դեռևս չպարզաբանված և վիճահարույց տարաձայնություններով, նա երկրորդ գրությունն է ուղարկել Ամերկոմի գրասենյակ՝ ջանալով հիմնավորել իր հարցադրումները և ակնկալելով փոխըմբռնում հետագա համագործակցության մեջ[203]:

Սեպտեմբերի 15-ին Ամերիկյան կոմիտեի կրթական մասի ղեկավար Հ.Բ.Բարթընի և նախարարի հանդիպումը պարզություն և հստակություն է մտցնում երկու կողմերի իրավունքների և պարտավորությունների մեջ[204]: *Հետագա ամիսների փոխադարձ գրագրությունները վկայում են, որ կառավարությունը և կրթության նախարարությունը ջանացել են բավարարել Ամերկոմի որբանոցային դպրոցների նկատմամբ իրենց ընդունած պարտավորությունները, իսկ վերջիններս աշխատել են իրենց գործունեությունը համաձայնեցնել նախարարությունից ստացված հրահանգների, դիտողությունների և առաջարկների հետ:*

Ամերկոմի առաջարկով և կրթության նախարարության օգնությամբ Ղարաքիլիսայում հիմնվեց կույր երեխաների դպրոց, ուր հավաքվեցին բոլոր որբանոցների կույր և վատ տեսնող երեխաները: Նախարարության ջանքերով հայթայթվում էին Ամերկոմի դպրոցական կարիքների համար պահանջվող դասագրքերը, այլ անհրաժեշտ նյութեր և այլն:

Բարթընին ուղղված գրություններից մեկում կրթության նախարարը հայտնում է, որ Նախարարների խորհուրդը պատրաստ է Կարսում դարձյալ 3 շենք տրամադրել Ամերկոմին, և ավելացնում, որ նախարարությունը գործադրում է բոլոր հնարավոր միջոցները՝ 2 հմուտ դյուղատնտես ղեկավար և տեխնիկական գործում մի հմուտ ուսուցիչ գտնելու ուղղությամբ:

«Դիմած ենք Ղարաքիլիսայի շրջանային տեսչին,- շարունակում է նախարարը,- առաջարկելով նորան հաւաքել մի վագոն

---

[202] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 46, թթ.157-158:
[203] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 46, թ.152:
[204] Նույն տեղում, թ.156:

ուռենու ճիւղեր Ձեր որբանոցների գործնական պարապմունքների համար եւ ուղարկել Ձեզ Ալեքսոլ:

Յուսով ենք՝ շուտով հնարաւորութիւն կունենանք ուղարկելու Ձեզ 2000 օրինակ «Մայրենի լեզու» (առաջին մաս՝«Դասընկեր»), իսկ երկրորդ, երրորդ մասերը կկարողանանք ուղարկել, երբ տպագրութեան գործը վերջանայ, որը դժբախտաբար մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում»[205]:

Մի այլ գրութեամբ նախարարին տեղեկացնելով, որ Ամերիկեան կոմիտեն մեծ շնորհակալութեամբ ընդունեց անվանի մասնագետ Գրիգոր Շիրմազանի առաջարկը՝ նոր բացված տեխնիկական դպրոցում 60 տեղ տրամադրել որբանոցային դպրոցների ավագ դասարաններում իրենց ընդունակութիւններով աչքի ընկած պատանիներին, Բարթընը ավելացնում է, որ որբանոցներում կան նաև շատ ընդունակ, 15-ը լրացած աղջիկներ, որոնք նույնպես շնորհալի են, և իրենք շատ շնորհակալ կլինեն, եթե կառավարությունը հնարավորություն տա նրանց եւս ուսանելու և հմտանալու տեխնիկական արվեստների մեջ[206]:

Խոսելով ուսումնական առօրյա խնդիրներից՝ Բարթընը իր գրության մեջ արծարծում է մինչ այդ չքննարկված մի հարց եւս. «Մոտաւորապես մի ամիս առաջ Ձեր մինիստրութեան մէջ աշխատող բժ[իշկ] Արծրունու հետ խօսակցելով, ես տեղեկացայ, որ նախարարութիւնը ինքը շատ հետաքրքրւում է բոյ-սկաուտիզմով և իբր թե ունի մի քանի լավ ղեկավարներ իր տրամադրութեան տակ: Նոյնիսկ խօսակցութեան ժամանակ պ. բժիշկը արտայայտեց այն միտքը, որ այդ ղեկավարներից մեկը կամ երկուսը կարող են դրւել մեր տրամադրութեան տակ: Մենք շատ շնորհակալ կլինենք լսելու, թե արդէօք կարո՞ղ եք տրամադրել մեզ երկու ղեկավար՝ մեկը Ալեքսոլի դպրոցների, միւսը՝ Կարսի համար: Ինչպես կոյրերի վարժարանի, նոյնպես սկաուտ ղեկավարների վերաբերմամբ մենք կուզէնայինք հաստատ իմանալ՝ արդէօք կարող կլինենք ստանալ նոյա Հայաստանում, որպեսզի հակառակ պարագային կարողանանք Պոլսի մեր ներկայացուցչի հետ [խոսել],

---

[205] ՀԱԱ, ֆ. 207, g.1, գ. 46, թ.135:
[206] Նույն տեղում, թ.127:

այնտեղից մեզ այդքան անհրաժեշտ մասնագետներ ստանալու համար»[207]:

Այս հարցերը ևս լուծում են գտել: Այդ մասին վկայում է նախարարին ուղղած Բարթընի հաջորդ գրությունը, որում, մասնավորապես, ասվում է. «Հենց որ կառավարությունը կը գայ որոշ համաձայնութեան Պոլսից եկած երեք սկաուտ-վարժապետների հետ, մենք մեզ պարտաւորված կը համարէինք տեղեկանալ այդ մասին, որպեսզի մենք կարողանանք յարաբերութեան մէջ մտնել այդ պարոնների հետ, որոնք պիտի ուղարկուեն Կարս եւ Ալեքսանդրապոլ, եւ որոնց աջակցութիւնը մենք իսկոյն եւեթ կը խնդրենք Հայաստանի մատաղ սերնդի նորմալ դաստիարակութեանը տալու իրենց անգնահատելի օգնութիւնը»[208]:

Մինչ կրթության նախարարությունն ու Ամերկոմի որբանոցների կրթության գծով պատասխանատու պաշտոնյաները փոխադարձ զիջումներով փորձում էին գտնել այն ոսկե միջինը, որը հնարավորություն կտար առանց լուրջ դժգոհությունների ու բախումների շարունակել գործունեությունը այս բնագավառում, երկրում տիրող քաղաքական ճգնաժամը հասավ իր գագաթնակետին և ավարտվեց Հայաստանի Առաջին հանրապետության պարտությամբ և խորհրդային կարգերի հաստատմամբ:

*

* *

Ամերկոմը շարունակեց իր համագործակցությունը նաև Խորհրդային Հայաստանի հետ, որի մասին կխոսվի սույն ուսումնասիրության առանձին գլխում, սակայն, ամփոփելով Հայաստանի Առաջին հանրապետության տարածքում Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ծավալած գործունեությունը հայ որբերի խնամքի, կրթության և դաստիարակության բնագավառում, գալիս ենք այն եզրակացության, որ այդ գործունեությունը ունեցել է և՛ դրական, և՛ բացասական կողմեր:

Ինչ խոսք, որ ամերիկյան որբանոցները շահեկանորեն տարբերվել են պետության խնամքի տակ գտնվող որբանոցնե-

---

[207] ՀԱԱ, ֆ. 207, ց.1, գ. 46, թ.127:
[208] Նույն տեղում, թ.156:

ըից՝ իրենց հնարավորություններով ու միջոցներով: Որբերը ապահովված են եղել սննդով, հագուստով, բժշկական և սանիտարահիգիենիկ պայմանները նվազեցրել են համաճարակների և մահացությունների թիվը, որբերը հանրակրթական առարկաներից բացի, սովորել են զանազան արհեստներ, օտար լեզուներ և այլն:

Սակայն արխիվային բազմաթիվ փաստաթղթերի քննությունը վեր է հանում նաև այն անժխտելի ճշմարտությունը, որ իրենց անուրանալի առավելություններով հանդերձ, Ամերիկոմի որբանոցները և դպրոցները երեխաներին դաստիարակում էին ամերիկյան դպրոցների ավանդույթներով՝ բոլորովին անտեսելով այն հանգամանքը, որ կյանք մտնելով՝ հայ երեխաները ապրելու էին միանգամայն այլ միջավայրում և պայմաններում, որ նրանց համար հետագայում շատ դժվար էր լինելու հարմարվել շրջապատին, մերվել ավանդական հայ ընտանիքներում ազգային ոգով, ազգային սովորույթներով դաստիարակված ու մեծացած իրենց հասակակիցներին:

Հայ ժողովրդի պատմությանը, հայոց լեզվին և հայ մշակույթին, հայոց կրոնի պատմությանը հատկացված խորհրդանշական ժամերն իրականում չեն ապահովել երեխաների հայեցի կրթությունը, չեն նպաստել նրանց ազգային գիտակցության ձևավորմանը. ամերիկացի դաստիարակներին ամենևին չեն հուզել այս խնդիրները, որի պատճառով էլ հաճախ լուրջ տարաձայնություններ են եղել հանրապետության կառավարող մարմինների, մտավորականների և Ամերիկոմի որբախնամ հաստատություններում աշխատող ամերիկացիների միջև:

«Ամերիկայում ստեղծված Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեն,-մի առիթով գրել է հայ անվանի գրող Մկրտիչ Արմենը,-ըստ անվան և ձևի, եղել է մարդասիրական-բարեգործական կազմակերպություն: Սխալ կլիներ ասել, թե միայն ըստ անվան ու ձևի: Ինչ խոսք, որ դա, զգալի չափով, այդպիսին է եղել նաև ըստ բովանդակության....

Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի նյութական բազան, միջոցները հիմնականում եղել են ամերիկյան ժողովրդի մեջ կատարված կամավոր հանգանակությունները: Ուստի և, որպեսզի չապառվի այդ աղբյուրը, որպեսզի ժողովուրդը շարունակի կամավոր զոհաբերություններ կատարել Մերձավոր Արևելքի ժո-

ղովուրդներին օգնություն ցույց տալու համար, բնական է, որ կոմիտեի ղեկավարները պետք է իրականում գոնե որոշ չափով ցույց տային այդ օգնությունն իսկապես: Եվ դա արվել է: Բացվել են որբանոցներ, կարիքավոր ժողովրդին ցույց է տրվել բուժական օգնություն, բաժանվել է սնունդ, հագուստ և այլն»[209].

Սակայն գրողը հիշեցնում է նաև, որ նրանց գործունեությունը չէր տարբերվում միսիոներական գործունեությունից, որ Ամերկոմի շատ սաներ իբրև Ամերիկայի կյանքին հարմարեցված էժան աշխատուժ Բաթումից նավերով տեղափոխվեցին օվկիանոսից այն կողմ՝ մեկընդմիշտ կտրվելով հայրենիքից:

Մկրտիչ Արմենի՝ 1933 թ. հրատարակած «Սկաուտ N 89» վեպը, որի վերամշակված տարբերակը՝ «Կարմիր և կապույտ փողկապներ» վերնագրով լույս տեսավ 1955 թվականին, ներկայացնում էր Ամերկոմի՝ Կազաչի պոստում տեղակայված որբանոցների կյանքը, որը, ըստ հեղինակի, «չինական պարիսպներով անջատված է ժողովրդից, և համարյա ոչինչ հայտնի չէ այնտեղի ներքին անցուդարձի մասին»[210]:

Բնական է, որ գեղարվեստական երկը բոլորովին այլ խնդիրներ ուներ լուծելու, բայց նրանում շոշափված հիմնական հարցերն ու խնդիրները լուրջ աղերսներ ունեն արխիվային փաստաթղթերում բարձրացված հարցերի հետ, հարցեր, որոնք հետագայում քիչ մտահոգություն ու անհանգստություն չպատճառեցին նաև Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ իր հարաբերությունները Ամերկոմի հետ կարգավորելու ուղղությամբ:

---

[209] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, N 4, էջ 47:
[210] Նույն տեղում, էջ 50:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թե՛ Հայաստանի Առաջին հանրապետությունում և թե՛ Խորհրդային Հայաստանում Ամերիկոմի գործունեությունը քիչ թե շատ կանոնակարգված էր և գտնվում էր պետական վերահսկողության տակ, մասամբ ուղղորդվում էր նրա կողմից: Բոլորովին այլ էր Ամերիկոմի գործելակերպը Հայաստանի սահմաններից դուրս ձևավորված խոշոր գաղթավայրերում, որտեղ հայ կարոտյալներին օգնելը պետք է համաձայնեցվեր օտար պետությունների կառավարող շրջանների, ինչպես նաև այդ երկրներում ազգանպաստ գործ կատարող հայկական տարբեր կազմակերպությունների հետ:

1912 թ. նոյեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ե-ի կոնդակով կազմվեց Հայ ազգային պատվիրակություն՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, որը կոչված էր Բեռլինի համաժողովի մասնակից պետությունների առջև բարձրացնել Հայկական հարցը, ներկայացնել և պաշտպանել հայ ժողովրդի շահերը: Պատվիրակությունը, որի կազմում էին նաև Մինաս Չերազը, Հակոբ Արթին փաշան, Գևորգ արքեպիսկոպոս Ութուճյանը, Հարություն Մոստիչյանը, լուրջ աշխատանք ծավալեց եվրոպական պետությունների կառավարող շրջաններում հայանպաստ կարծիք ձևավորելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում իրականացնելու բարենորոգումների որոշակի ծրագրեր:

Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությունն իր գործունեությունը շարունակեց նաև Առաջին աշխարհամարտի տարիներին, մասնակցեց պատերազմի ավարտից հետո կազմակերպված Փարիզի հաշտության (1919 թ.) և Սան Ռեմոյի (1920 թ.) համաժողովներին:

Ազգային պատվիրակությունը միացյալ Հայաստանի Առաջին հանրապետության պատվիրակության հետ համատեղ, որպես մեկ ընդհանուր պատվիրակություն՝ Գաբրիել Նորա-

տունկյանի գլխավորությամբ, մասնակցեց նաև Լոզանի (1922-1923 թթ.) կոնֆերանսին[211]:

1919 թ. փետրվարի 24-ին Փարիզում, Ազգային պատվիրակության նախաձեռնությամբ, հրավիրվեց հայ ազգային համագումար, որին մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ հանձինս Ավետիս Ահարոնյանի և Համո Օհանջանյանի:

Ազգային համագումարի նախագահն էր Գաբրիել Նորատունկյանը:

Համագումարի ապրիլի 2-ի նիստում որոշվեց Հայաստանի Հանրապետության պատվիրակության և Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակության միաձուլումով կազմել Ազգային նոր պատվիրակություն, որը «....պիտի շարունակէ դարձեալ իր բոլոր կարելին ընել առաւելագոյն չափու օգտակար ըլլալու համար Հայրենիքին»[212]:

1921-1924 թթ. Ազգային պատվիրակության նախագահն էր Գաբրիել Նորատունկյանը, և, փաստորեն, նրա գլխավորած պատվիրակությունն էր ներկայացնում օտար երկրներում պատսպարված հայ ժողովրդի շահերը, փորձում կամուրջ նետել աշխարհով մեկ ցրված հայերի և վերածնվող Հայաստանի միջև:

Ազգային պատվիրակության անդամները և անձամբ Գ. Նորատունկյանը բազմիցս անձնական հանդիպումներ են ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, եվրոպական մյուս պետությունների բարձրաստիճան կառավարող այրերի և բարեգործական հաստատությունների հետ՝ այս անգամ ջանալով հիմնականում լուծել հայ գաղթականությանը աջակցելու, նրան հայրենիքում վերաբնակվելու հնարավորություն տալու հարցը:

Հայ ազգային պատվիրակության տարբեր հանձնաժողովներում ընդգրկված մարդկանց մեջ էին ժամանակի նշանավոր մտավորականներ Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Զապել Եսայանը, Արշակ Ալպոյաճյանը, Լևոն Շանթը, Խան Մասեհ-

---

[211] Լոզանի կոնֆերանսում Հայ ազգային պատվիրակության գործունեության մասին մանրամասն տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 2007թ., N 1-2, էջ 98-120:

[212] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 30, թ. 8:

յանը, Ավետիս Ահարոնյանը և այլք, որոնք ակտիվ համագործակցում էին Ամերիկոմի՝ Մերձավոր Արևելքի և հարակից երկրների ներկայացուցիչների հետ, իրենց զեկուցագրերով, դիտողություններով դյուրացնում նրանց գործունեությունը, նպաստում հայապահպանության ընդհանուր գործին:

1921 թ. դեկտեմբերի 18-ին Զապել Եսայանը ծավալուն տեղեկագիր է ներկայացրել Ազգային պատվիրակության նախագահ Գաբրիել Նորատունկյանին Կիլիկիայի և Սիրիայի որբանոցների վիճակի մասին, որի մեջ քննության է առել նաև Ամերիկոմի գործունեությունը այդ տարածքներում:

Ըստ այդ տեղեկագրի՝ մինչև 1920 թ. հունիսի 10-ը Կիլիկիայում և Սիրիայում եղել են մոտ 8399 որբեր (ըստ ֆրանսիական խնամատարության վիճակագրության)՝ կենտրոնացված Ադանայում և նրա շրջակայքում (1297), Մերսինում (1055), Դորթ-Յոլում (779), Այնթապում (2000), Ուրֆայում (150), Հաճընում (750), Մարաշում (800), Հալեպում (1400), Լիրանանում (150):

Պատերազմական գործողությունների հետևանքով որբերը այս վայրերից տեղափոխվել են, և նրանց մեծ մասի խնամքը ստանձնել են ամերիկյան միսիոներները, Ամերիկյան կարմիր խաչը և Նպաստամատույց կոմիտեն:

Նշելով, որ Ամերիկոմի որբանոցներում գտնվող որբերը անհամեմատ ավելի բարվոք և ապահով վիճակում են, Զապել Եսայանը ներկայացրել է նաև իրենց համատեղ աշխատանքը որբերի կրթության հարցը կարգավորելու ուղղությամբ.

«Շնորհիւ մեր մէջ տիրող բացարձակ համաձայնութեան՝ Անգլիական և Ամերիկեան ներկայացուցիչները միշտ սիրալիր համակրութեամբ ընդունեցին մեր առաջարկութիւնները եւ սիրայօժար ընդունեցին կարգ մը փոփոխութիւններ մտցնել իրենց որբանոցներու կրթական ծրագրին եւ ուսուցման լեզուին վերաբերմամբ, քանի որ իրենց մատակարարութիւնը եւ խնամքը կատարեալ կերպով լաւ էր»[213]*:*

Տեղեկագրում նշվում էր, որ ընդհանուր վիճակագրությունից հետո նախատեսվում էր նույն քաղաքի որբանոցների մեջ պահել որքան կարելի է մեկ դավառի, մեկ քաղաքի կամ գյու-

[213] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 338, թ.11:

դախմբի պատկանող որբեր՝ հաշվի առնելով նաև նրանց ազգակցական կապերը, որբանոցներին տալով «ընտանիքի մը կերպարանք, ուր ամէն մէկ անդամ իր դերը կը կատարէ»[214]:

Եսայանը գրում է, որ քաղաքական իրադրության սրվելու և քեմալական շարժման սաստկանալու հետևանքով նախատեսվել է Կիլիկիայի որբերին տեղափոխել Սիրիա, որպեսզի ապահովվի նրանց ֆիզիկական գոյությունը: Սակայն այս ծրագիրը «...բուռն ընդդիմութեան հանդիպեցաւ տեղւոյն Ազգային մարմիններու կողմէ: Այդ ընդդիմութիւնը անհամար դժուարութիւններ եւ բարդութիւններ յառաջ բերաւ, եւ ֆրանսիական իշխանութիւնները վհատեցան պահ մը ու կարծեցին, թէ լաւագոյն է ամէն ինչ իր բախտին թողալ, քան թէ ժողովրդական այդքան մեծ դժդոհութիւն յարուցանել շատ փափուկ քաղաքական վիճակի մը մէջ»[215]:

Կիլիկիայի հայերի համար ստեղծված այս ծանր իրավիճակը թեթևացնելու նպատակով Գալուստ Կյուլպենկյանը Թուրքիայի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսին դեկտեմբերի 30-ին ուղղած նամակում տեղեկացնում է, որ նրա անունով ուղարկում է 50.000 ֆրանկ Կիլիկիայի հայ որբերին և կարիքավոր գաղթականներին հատկացնելու համար և ավելացնում. «Որոշած եմ նոյնքան մի գումար էլ ուղարկել Ամերիկեան նպաստամատոյցին՝ յատկացուելի Կովկասեան Հայաստանի մեր կարօտեալ ազգակիցներին: Ըստ իմ տեղեկութեանց՝ սոյն մարմինը ներկայ հանգամանքների մէջ լաւագոյն միջնորդն է այս նպաստի բաշխման համար»[216]:

Պատրիարքարանից Կյուլպենկյանին տեղեկացրել են, որ Պոլսում է Ամերիկայի ներկայացուցիչ դոկտոր Յարրոն (Ernest Yarrow), բայց կճշտեն և նրան կհայտնեն, թե ում միջոցով նա կարող է իրականացնել իր բարեգործական առաքելությունը[217]:

1922 թ. հունվարի 18-ին պատրիարքարանից Կյուլպենկյանին հայտնում են, որ գումարը նա կարող է փոխանցել Պոլսում

---

[214] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 338, թ.13:
[215] Նույն տեղում, ֆ.430, g.1, գ.338, թ.44:
[216] Նույն տեղում, ֆ.430, g.1, գ.731, թ.11:
[217] ՀԱԱ, ֆ.430, g.1, գ.731, թ. 2:

Ամերիկոմի ներկայացուցիչ դոկտոր Մաքքոլմին, որն այդ գումարը կօգտագործի համաձայն նվիրատուի ցուցումների[218]:

1922 թվականին Արևմտյան Հայաստանից տեղահանվեցին բազմաթիվ որբեր, որոնց մի մասը տեղափոխվեց Հունաստան, մյուս մասը՝ Սիրիա և Լիբանան:

1922 թ. նոյեմբերի 20-ին Պոլսից դեպի Հունաստան ճամփա ելավ հայ որբերի առաջին քարավանը Կուլելիի և Եոր-Կուլելի որբանոցների հայ որբերից բաղկացած, թվով 2700 հոգի, որոնք ուղղակի փոխադրվեցին Հունաստանի Կորֆու կղզի: Նորանոր խմբերի ժամանումից հետո Հունաստանում կուտակվեցին բազմահազար հայ որբեր: 1923 թ. ապրիլ ամսին որբերը, ըստ Հունաստանի տարբեր վայրերի, բաժանվում էին հետևյալ կերպ. Եոոպոսի որբանոցում՝ 7500 հոգի, Լութրաքիայում՝ 3300, Կորֆուում՝ 2720, Օրոփոսում՝ 2000, Զափիոնում՝ 2000, ընդամենը՝ 17.520 հոգի[219]:

Այս ընթացքում Ազգային պատվիրակությունը փորձում էր ինչ-որ ձևով թեթևացնել տեղաշարժվող հայերի վիճակը՝ աշխատելով այս հարցում չանտեսել Ամերիկոմի ծրագրերն ու պլանները:

Գաբրիել Նորատունկյանը 1922 թ. օգոստոսի 3-ին մի նամակով դիմել է Ամերիկայում Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Վարդան Մալքոմին և խնդրել, որ նա Ամերիկոմի կենտրոնական վարչությանը առայժմ ետ պահի Հալեպի որբանոցները փակելու (1915 թ. Հալեպում ամերիկյան հյուպատոսը հայտնել էր, որ թվով 150.000 հայ տեղավորվել են Հալեպի, Տեր Զորի և Դամասկոսի շրջաններում[220]) և նրանցում պատսպարված շուրջ 500 որբերին Բեյրութ տեղափոխելու ծրագրից և սպասի մինչև Զարլզ Վիքրիի վերադարձը Հայաստանից:

Նորատունկյանը համոզված էր, որ Զ. Վիքրին այլ ելք կառաջարկի, և վախենում էր, որ Սիրիայից հայ որբերի տեղափոխությունը շատ դժվարություններ կստեղծի տեղի իշխանությունների համար, որոնք ավելի քան 20.000 դաղթականների

---

218 Նույն տեղում, թ. 29:

219 Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից, 1965, էջ 42-43:

220 Barton J., Story of Near East Relief (1915-1930), 1930, page 72.

ապաստան են տվել և մտել նրանց հոգսը հոգալու ծանր բեռի տակ[221]:

Այսպիսով, մինչ Արևմտյան Հայաստանից մեկնումը պարոն Վիքրին ասաց. «Մենք տեղափոխել ենք ավելի քան 10.000 որբ Հունաստան մի քանի շաբաթում և ավելի շատը պետք է տեղափոխվեն... սա կբերի մեր որբերի հետ կապված ծրագրի վերջնական վերակազմակերպմանը: Աշխատողները կունենան արտոնություններ և կստանան առաջադրանք երեխաներին իրենց նոր տներում տեղավորելու...»[222]:

Հունաստանի Միտիլե քաղաքի Զմյուռնիայի հայ գաղթականների հանձնաժողովից Գ. Նորատունկյանին հասցեագրված նամակից տեղեկանում ենք, որ Միտիլեն վերածվել է գաղթականների կենտրոնացման և բաշխման կայանի, ուր գաղթականներին օգնելու հոգսը իր վրա է վերցրել Ամերիկոմը:

«Ամերիկան նպաստամատույցի միջոցով իւրաքանչիւր անձի օրական 40-50 գրամ հաց կըտրուի լոկ, ուրիշ ոչինչէ չէ օգտուած դեռ անօթիութիւնով և մերկութիւնով կմախք դարձած հայ գաղթականը՝ որն բնական է, թե 50 գրամ հացով երբէք չի կրնար ապրուիր, որով անհրաժեշտօրէն և անմիջական կը կարօտի ան՝ սնունդի, յոտից ցգլուխ հագնելիքի, անկողնի, ծածկոցի, դեղի ու դարմանի»,-գրում է հանձնաժողովի ատենադպիրը և խնդրում միջնորդել տառապյալ ժողովրդի վիճակը փոքր-ինչ թեթևացնելու[223]:

Հունաստանի որբանոցների ընդհանուր տնօրեն Հ. Խաչատրյանի տեղեկագիրը, (Ազգային պատվիրակություն է ուղարկվել 1923 թ. փետրվարի 9-ին) ներկայացնելով որբանոցների ընդհանուր վիճակը, նշում է, որ Ամերկոմի ներկայացուցիչ Զարլզ Վիքրիի հետ այցելել են Օրոփուսի որբանոցը, ուր հավաքվել էին Սկյուտարից, Օրթագյուղից և Պեշիկթաշից բերված շուրջ 190 որբեր: Այցելելով նաև Կորֆուի, Լութրաքի որբանոցները՝ միասին խորհրդակցություն են ունեցել և քննարկել իրենց հետագա գործելակերպը:

---

[221] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 252, թ. 7:
[222] The New York Times, December 24, 1922.
[223] Նույն տեղում, ֆ. 430, ց.1, գ. 873, թթ.1-2:

Խաչատրյանը նշում է, որ ամերիկացի պաշտոնյաները հնարավոր ամեն ինչ անում են որբերի համար, սակայն նրանց թվաքանակը շատ քիչ է, քանի որ ստիպված են եղել իրենց աշխատակիցների մի մասին թողնել Անատոլիայում և Պոլսում՝ մնացած որբերին օգտակար լինելու նպատակով, որի պատճառով Հունաստանում կուտակված հազարավոր որբերի համար պահանջվող պաշտոնյաների թիվը խիստ նվազել է:

«Քննադատել դիւրին է,-շարունակում է Հ. Խաչատրյանը,- բայց երբ արդարութեամբ գործը քննվի, պիտի տեսնուի, որ ամերիկացիներէն շատերը աւելի մեծ ոգի և շահագրգռութիւն ցոյց տուած են գործին մէջ, քան թէ մեր աղմուկ հանող հայ դասատուները: Յետ մանրազնին քննութեան, կրնամ խղճմտօրէն ըսել, թէ շատ մը թերութիւններ, որոնց ականատես եղայ, ոչ թէ ամերիկացւոց անտարբերութենէն առաջ եկած են, այլ դրեթէ ֆիզիքական անկարելիութենէն, եւ ես կատարեալ յոյս ունիմ ու կը վստահեցնեմ, թէ շատ մօտ ապագայի մը մէջ ամեն ինչ նախանձելի վիճակ մը պիտի ստանայ. արդէն մի քանի որբանոցներ այդ վիճակը ստացած են: Առ այժմ մաքրութեան, հագուստի, սնունդի և բնակարանի համար ամեն ջանք կը թափուի: Դիւրին գործ չէ ասանկ ստիպողական ու հապճեպ փոխադրութիւնն ու տեղաւորումը 20.000 որբերու մէկ երկրէն դէպի ուրիշ մը: Ուզենք կամ ոչ, պետք է որ ժամանակ տանք, որպեսզի ամերիկացիք կարենան բնականոն վիճակ մը ստեղծել մեր դպրոցներուն համար»[224]:

Հունաստանի որբանոցների ընդհանուր տնօրենը գտնում է, որ եթե հայ պաշտոնյաները քննադատելու փոխարեն աջակցեին ամերիկացիներին, գործը կարգավորելու ժամանակը կիսով չափ կնվազեր, և որ շատ որբանոցներ, որոնք աննախանձելի վիճակի մեջ են, ավելի շատ հայ պաշտոնյաների վստահության արդյունք են, որոնք իրենց պարտականությունները կատարելու փոխարեն ավելի շատ պահանջներ են ներկայացնում:

Տեղեկագրում ասվում է նաև, որ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն որոշել է Հունաստանի հայ որբերին կենտրոնացնել Սիրա կղզում, որտեղ ձեռնարկել է արդեն որբանոցների և արհեստանոցների շենքերի շինարարությունը: Շինարարությանը մասնակցելու է նաև Կորֆուի որբանոցի սաների մի մասը, որոնք

[224] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 881, թթ.1, 3:

սննդից և ապաստանից զատ, ստանալու են նաև օրավարձ: Դիմել են նաև Ամերիկայի հայկական համայնքին՝ դպրոցներում աշխատելու համար մի քանի հայ համալսարանականներ և եկեղեցու սպասավորներ գործուղելու խնդրանքով[225]:

Սակայն փետրվար-մարտ ամիսներին Հունաստանից Ազգային պատվիրակության հասցեով ստացված շատ նամակներ ուղղակի հակառակ և հակասական տեղեկություններ են հաղորդում:

Այսպես՝ Լութրաքի երկսեռ որբանոցի ուսուցիչների համախոսականը ցավով արձանագրում է, որ Ամերկոմը որոշել է հայ և հույն որբերին տեղավորել միևնույն որբանոցներում և նրանց տալ հունական դաստիարակություն, քանի որ չափահաս որբուհիները տեղավորվում էին հույն ընտանիքներում՝ իբրև սպասուհիներ, իսկ տղաները լրացնում էին արհեստավորների բանակը: Սրանով դամոկլյան սրի պես հայ որբերի գլխին կախվում էր ուծացման վտանգը, որի համար և իրենց անհանգստությունն էին հայտնում որբանոցի ուսուցիչները:

«Դժուար է հաշտուել այն մտքի հետ, թէ ինչպե՞ս ամերիկեան Ըլլիֆը (Ամերկոմը-Ա.Ս.) հայ կեանքի մէջ ունեցած իր նախախնամական դերէն յետոյ, որով այնքան հայասիրաբար և մարդասիրաբար ձեռք կարկառեց անլուր սպանդէն ճողոպրած վերապրող հայութեան մատաղ և մտացի սերունդին, պետութեան մը ասպնջարանին մէջ կը յղանայ ծրագիր մը, որ այնքան յանդուգն է ու աննախընթաց: Այս իրողութիւնը անվերապահ մեզի կը ցայտնեն Ըլլիֆի ամերիկացի աւագ պաշտոնեաները»,- ասվում է համախոսականում[226]:

Ուսուցիչները ներկայացրել են Ամերկոմի կրթական ծրագիրը, համաձայն որի՝ անչափահաս որբերը պիտի զատվեին չափահասներից և միանային հույն որբերի և աշակերտների հետ: Հունական կառավարությանն էր վերապահվելու կրթության վերահսկողության գործը, հայոց լեզվի, պատմության և կրոնի ժամերը հանվելու էին դպրոցական ծրագրից, դասավանդումը տարվելու էր հունարենով[227]:

---

[225] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 881, թ.4:
[226] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 883, թ. 2:
[227] Նույն տեղում, թ. 2:

Հայ մտավորականներին անհանգստացնող այս հարցերի առիթով հրապարակումներ են եղել նաև Պոլսի և այլ վայրերի հայկական մամուլի էջերում, որի առիթով Ամերիկյան նպաստամատույցի Քորֆուի որբանոցների տնօրեն Սթիվեն Լոուն շրջաբերական նամակ-հրահանգ է ուղղել բոլոր որբանոցների ուսուցիչներին և մյուս պաշտոնյաներին: Ահա այդ հրահանգն ամբողջությամբ.

«Ժամանակէ մ'իվեր Պոլիս և այլուր հրատարակուող զանազան հայերէն թերթերու մէջ կերևին յօդուածներ, որոնցմէ ոմանք կը քննադատին Ամերիկեան Նպաստամատոյցը և պաշտօնէութիւնը՝ ստորագրուած այս կազմակերպութեան պաշտօնէից կողմէ: Այդ հրատարակութեանց մեծ մասը, սակայն, իրականութեան համապատասխանելէ հեռու է, ստորագրելիս համար դժուար է ըմբռնել մտքի տրամադրութիւնը անձերու, որոնք թոշակ և ուրիշ օժանդակութիւն կընդունին Ամերիկեան Նպաստամատուցէն, որ իր բոլոր կարելին կընէ և ըրած է թէ անոնց և թէ հաղարաւոր հայերու: Այսպիսի արարք մը, առնուազն դնահատումի ահռելի պակաս մը ցոյց կուտայ:

Այս սովորութիւնը պետք է որ դադարի, ապա թէ ոչ՝ հարկ պիտի ազդու միջոցներ ձեռք առնել օրինազանցներու նկատմամբ, որոնցմէ շատերը ծանօթ են ստորագրելիս:

Սույնը պիտի ծառայէ իբր պաշտօնական յայտարարութիւն տեղւոյս իւրաքանչիւր պաշտօնեայի համար, թէ թուականէս սկսեալ հրատարակուելիք ոևէ յօդուած վաւերացման համար պետք է որ ներկայացուի մեր պաշտօնատեղին: Սոյն հրամանին հակառակ չարժող որևէ զանցառու պիտի դադրեցուցուի պաշտօնէ վարչութեանս կողմէ»[228]:

Սթիվեն Լոուի հրահանգը, սակայն, ավելի է սրում իրադրությունը Հունաստանի որբանոցներում:

1923 թ. մարտի 7-ին Արշակ Ալպոյաճյանը մի ընդարձակ նամակ է ուղարկել Գ. Նորատունկյանին՝ վերոհիշյալ հրահանգի առիթով, այն անվանելով ոչ միայն անվայելուչ, այլև անհնթեթ մի բան և խիստ անհարիր հատկապես հանրային-մարդասիրական կազմակերպության գործելաոճին:

---

[228] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 884, թ. 6:

«Փոխանակ քննադատութիւններէ օգտուիլու և իրենց սխալները, անհոգութիւնները և զանցառութիւնները դարմանելու,- շարունակում է նամակագիրը,-կը դիմեն ղղուելի միջոցի մը՝ ձայն լռեցնելու միջոցին, գրաքննութեան պէս Ամերիկեան մտքին անհաշտ միջոցի մը կիրառութեամբ:

Հոս գտնուող լրագրերի աշխատակիցներէն և թղթակիցներէն ոչ մին այնքան պիտի նուաստանար, որ ողորմութիւն կոչուելու արժանի թոշակի մը և ոչ մէկ այլ օժանդակութեան փոխարէն հրաժարեր որբերու անօրինակ տառապանքները և հոս գործադրուած խոշոր զեղծումները և զանցառութիւնները, որոնք մեծամասնաբար չարաշահ և շահախնդիր պաշտօնէութեան մը ձեռքով կը գործադրուին, ներկայացնելէ հանրութեան ուշադրութեան, անոնք ուղղակի իրենց ներկայացնելէն և աննկատ մնալէն յուսահատ:

Ամենքս ալ սիրով յանձն պիտի առնենք վտարուելու նախատինքը, սակայն երբեք մեր գրութիւնները դրաքննութեան ենթարկելու առաջարկը չպիտի ընդունենք»[229]:

Ալպոյաճյանը գրում է, որ որբանոցների ընդհանուր տեսուչ Հ. Խաչատրյանը միաժամանակ Ամերիկոմի աշխատակից է, և նրա հաղորդած տեղեկությունները միակողմանի են և աչառու: Վերջինս Պոլսի լրագրողներին հավաքել և սպառնացել է, որ եթե նրանք շարունակեն քննադատական հոդվածներ տպել Նպաստամատույցի մասին, ապա նրանք կդադարեցնեն օգնությունը, և որբերը կմնան բոլորովին անխնամ և անտեսված:

Ամերկոմի աշխատակիցներն էլ իրենց հերթին աշխատում են ինչքան հնարավոր է շատ 12-ից 15 տարեկան որբուհիների՝ իբրև սպասուհիներ, տրամադրել հույն ընտանիքների, իսկ տղաներին՝ իբրև էժան բանվորական ուժ, օգտագործել շինարարության, իրենց տարիքին չհամապատասխանող այլ ծանր աշխատանքների մեջ[230]:

Ալպոյաճյանը նամակն ավարտում է շատ ծանր շեշտադրությամբ. «Ձեմ խոսիր այն զարհուրելի ու վայրագ պատիժներու մասին, որոնք կգործադրուին Լութրաքիի ամերիկայի տնօրէնուհիին կողմէն, և որոնց արձագանք պիտի ըլլայ անշուշտ մամուլը:

---

229 Նույն տեղում, ֆ. 430, ց.1, գ. 884, թթ. 2, 3:
230 Նույն տեղում, գ. 884, թ. 4:

Մեր որբերուն ապագան փչանալէ զատ, ինչպէս կը տեսնուի, անոնց անբարոյացման և ապազգայնացման վտանգն ալ շատ բացորոշ կերևայ այս կարգադրութեանց ներքև:

Ցերդ վանմութեան աւելորդ է յիշեցնել անշուշտ, թէ Ամերիկեան նպաստամատոյցը իր գործունեութեամբ մեր անմոռաց երախտագիտութեան արժանացած է, սակայն նույնքան ալ անծանօթ չէ անշուշտ սա իրողութիւնը, թէ անիկա մինչև հիմա դրեթէ ազգային իշխանութիւններու հետ համախորհուրդ և համակամ գործած է և հոն, ուր կազմակերպուած մարմիններ կային, անոնց նիւթական օժանդակութիւն ընծայելով բաւականացած է:

Հիմայ անհակակշիռ և հանրութեան աչքէն հեռու տեղերու մէջ կուզէ ղեկավարութիւնը և վարչութիւնը ինքը ստանձնել և ծախքին կէսին մասնակից ընել ազգը, որ բնական է, չի մերժեր այս առաջարկը:

Շատ նպատակայարմար պիտի ըլլար, որ Ազգային պատուիրակութիւնը իրաց այս կացութեան մէջ բանակցութիւններով Ըլլիֆի կեդրոնին հետ, ազգային հակակշռի որևէ եղանակ ստեղծեր և չթողուր, որ մեր զգացումներուն օտար, մեր ազգային խտալներուն անհաղորդ, զմեզ սոսկ մուրացիկներ նկատող և իբր բարբոյարհամարհող անձերու ձեռքը ձգուի մեր որբերուն ճակատագիրը:

Անշուշտ Ըլլիֆի կեդրոնին մէջ շատ աւելի հաւանականութիւն կայ լայնախոհ մարդոց, աւելի սրտացաւ անձերու և աւելի ազատ մտածողներու հանդիպել, քան իրենց երկրորդական պաշտօնեաներու մէջ, որոնք կը դտնուին ապականուած մարդոց ազդեցութեան տակ և շահու նկատումներով տարուած են»[231]:

Կարծում ենք՝ մեկնաբանութիւններն ավելորդ են, միայն մի հարցում Ալպոյաճյանը սխալվել է՝ կարծելով, թե պետականութիւն ունեցող Հայաստանի թե՛ Առաջին, և՛ թե՛ Երկրորդ հանրապետութիւնների կառավարութիւնների և Ամերիկոմի միջև այս կարգի տարաձայնութիւններ չեն ծագել:

Միշտ չէ, որ Հայաստանի տարածքում Ամերիկոմը կառավարութիւնների հետ գործել է «համախորհուրդ և համակամ», եղել են նաև լուրջ բախումներ, որոնց վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան:

---

[231] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 884, թթ. 4, 5:

Ամերիկյան նպաստամատույցի գործելակերպի վրա իր բացասական ազդեցությունն էր թողնում նաև այն հանգամանքը, որ թուրքական կառավարության քաղաքական անկանխատեսելի վայրիվերումները ստիպում էին թե՛ ամերիկացիներին, թե՛ հայերին մտածել որբերի ապահովության մասին և հաճախակի նրանց տեղափոխել:

Հապճեպ, երբեմն նաև իզուր տեղաշարժված որբերը միշտ չէ, որ հայտնվում էին հետագա գոյատևման համար տարբերական հարմարություններ ունեցող պայմաններում, որն ուղեկցվում էր երկու կողմերի մեջ ծագող լուրջ բախումներով և տարաձայնություններով, նայած այն բանին, թե որ կողմի նախաձեռնությամբ էր կատարվել այդ տեղաշարժը:

Այս կարգի հապճեպ որոշումներ կայացնելու հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ թուրքերը սկսել էին պնդել, թե որբանոցներում հավաքված երեխաների մի մասը հայ չէ, այլ թուրք, և փորձեր էին անում Ամերկոմի որբանոցներից մանուկներին թուրքական որբանոցներ տեղափոխելու ուղղությամբ:

1923 թ. մարտի 9-ին Գաբրիել Նորատունկյանն այս առիթով մի նամակ է ուղարկել Ամերիկայի կառավարությունում Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Վարդան Մալքոմին՝ խնդրելով, որ Ամերկոմը հաշվի առնի որբերի տեղափոխության իրենց առաջարկը ևս, այդ հարցը քննարկի Զարլզ Վիքրիի հետ և արդյունքի մասին տեղեկացնի իրեն: Նամակում Նորատունկյանը բացատրել է նաև իր մտահոգության շարժառիթը.

«Պէյրութէն կը գրեն մեզ, թէ Հալէպի շրջանակը ֆրանսական հոգատարութենէն ազատելու համար թուրքերու կողմէ գաղտնի ձեռնարկներ կը կատարուին, որոնց հետեւանքով խռովութիւններ ծագելու պարագային երկիւղ կայ, որ հոն գտնուող հայ գաղթականները եւ որբերը վտանգի ենթարկուին, մանաւանդ որ թուրքերը մերթ ընդ մերթ խնդիր կընեն, թէ հայ որբերուն մէկ մասը իսկապես հայ չէ, այլ թուրք և կը ջանան անոնցմէ մաս մը փոխադրել թրքական որբանոցներ:

Այս կէտերը ծանօթ են անշուշտ Հալեպի մէջ գտնուող Նիր Իսթի պաշտօնէութեանը, որ հաւանաբար այս մասին տեղեկացուցած է նաեւ Նիւ Եօրքի կեդրոնին: Բայց մենք ալ մեր կողմէ հարկ կը համարինք յանձնարարել, որ եթե կարելի է, առանց

յապաղման կարգադրութիւններ ըլլան Հալեպ եւ շրջակայքը գտնուող որբերը փոխադրելու համար Սուրիոյ մէջ այնպիսի վայրեր, ինչպէս Պեյրութ եւ Լիբանան, ուր քրիստոնեայ տարրը աւելի հոծ եւ զօրաւոր է: Իրաւ է, թէ նոր փոխադրուելիք վայրերուն մէջ գտնելման դժուարութիւններ կրնան ծագիլ, սակայն այս կարգի անպատեհութիւններէ դերծ չէ նաեւ Հալեպի շրջանակը, եւ մանաւանդ վտանգի երկիւղը լուրջ կերեւի»[232]:

Նորատունկեանը նամակում տեղեկացնում է նաև, որ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունները համատեղ ստեղծել են մի հանձնաժողով և առաջարկել, որ նրա մեջ ընդգրկվեն նաև մեկական ներկայացուցիչներ Ազգային պատվիրակությունից և Ամերիկոմից, և որ հանձնաժողովի նպատակն է ուսումնասիրել և որոշել, թե Ռուսաստանի որ երկրամասում կարելի կլինի տրամադրել տարածք, որտեղ կտեղավորվեն մեծաքանակ գաղթականներ: Ազգային պատվիրակության նախագահը խնդրում է իրեն հայտնել, թե այս առիթով Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեն ինչ հրահանգներ է տվել իր ներկայացուցիչ Մոնթգոմերիին, որպեսզի հակասություններ չծագեն իրենց դիրքորոշումների մեջ[233]:

Ազգային պատվիրակությունը, փետրվար-մարտ ամիսներին քննության առնելով Հունաստանի որբանոցներից ստացվող բողոքներն ու ահազանգերը, որոշում է անձամբ քննել իրավիճակը և հնարավորության սահմաններում շտկել այն:

Գ. Նորատունկեանի հանձնարարությամբ Վահան Թեքեյանը մեկնում է Հունաստան՝ այցելելու այնտեղ հաստատված որբանոցները, անաչառ քննություն կատարելու և Ազգային պատվիրակությանը տեղեկություն հաղորդելու առաքելությամբ:

Վահան Թեքեյանին ուղղած հանձնարարականում մատնանշելով, որ Ազգային պատվիրակությունը անընդհատ իրարամերժ և հակասական տեղեկություններ է ստանում այս հարցի առնչությամբ, որ այդ կարգի տեղեկություններ սկսել են տպագրվել նաև հայ մամուլի մեջ, Նորատունկեանը խնդրում է ճշտել, թե արդյոք իրականությանը համապատասխանում են Արշակ Ալպոյաճյանի հայտնած տեղեկությունները Ամերիկոմի որ-

---

[232] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 260, թ. 22:
[233] Նույն տեղում, ֆ. 430, ց.1, գ. 260, թ. 23:

բանոցներում սաների և ուսուցիչների համար ստեղծված անբարենպաստ պայմանների մասին:

«Բնական է,-գրում է Նորատունկյանը,-որ հազարաւոր որբերու փոխադրութեան եւ զետեղման առաջին օրերուն անկանոնութիւններ պատահած ըլլան, բայց եթէ այդ սկզբնական շրջանէն վերջ ալ իրաւացի դժգոհութեանց տեղի տուող վիճակ մը շարունակած է գոյութիւն ունենալ, անտարակոյս մեղադրելի է եւ սրբագրութեան կարօտ:

Նիր Իսթ Ըլլիֆի Ամերիկայի կեդրոնական վարչութեան տնօրէնը եւ ընդհանուր քարտուղարը, ինչպես նաև Եւրոպայի ներկայացուցիչները, որոնց հետ խոսած ենք այս խնդրոց մասին, մեզ ամէն հաւաստիք տուած են, թէ գոհ կըլլան, որ մօտեն տեղեկանանք որբերու կացութեան եւ իրենց հաղորդենք ուեւէ դիտողութիւն, եթե ունինք, որպէսզի բառնան անոր պատճառը: Ըլլիֆի Հունաստանի ներկայացուցիչ մր. Ֆաուլ, որ հայասէր անձնաւորութիւն մըն է եւ զոր Փարիզէն անցած ատեն առիթ ունեցայ հիւրասիրելու, նոյն տրամադրութիւնները յայտնեց մեզ: Ուստի փափաքելի է, որ Ձեր այցելութիւնները սկսելէ առաջ կամ աւարտելէ յետոյ տեսակցիք իրեն հետ:

Միեւնոյն ժամանակ, Ըլլիֆի Քորֆուի տնօրէնին կողմէ այնտեղ հաստատուած որբանոցներուն բոլոր ուսուցիչներուն եւ միւս պաշտօնեաներուն համար հրատարակուած «Հրահանգի» մը մէջ կասկած յայտնուած ըլլալով, թէ որբանոցային հայ ուսուցիչները և պաշտօնեաներն են հեղինակները հայ մամուլին մէջ լոյս տեսած գրութեանց, կը խնդրեմ, որ թե՛ մր. Ֆաուլի եւ թե՛ Ամերիկյան Նպաստամատոյցի միւս պաշտօնեաներուն հետ Ձեր ունենալիք տեսակցութեանց միջոցին ըլլայ ուղղակի որբերէն, ըլլայ հայ պաշտօնէութենէն Ձեր քաղելիք տեղեկութիւնները ներկայացնէք իբր Ձեր քննութեանց արդիւնք, առանց պաշտօնէութեան մասին ուեւէ ակնարկութիւն ընելու եւ անոնց նկատմամբ ջանալով Ըլլիֆի կասկածները փարատել՝ ներշնչեք կատարեալ վստահութիւն»[234]:

---

[234] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 885, թթ.1-2:

Վահան Թեքեյանի շրջագայության մասին Գ. Նորատունկյանը տեղեկացնում է նաև Արշակ Ալպոյաճյանին և խնդրում նրա անաչառ օգնությունը[235]:

Հետաքրքիր է, որ Վահան Թեքեյանի շրջագայությունը Հունաստանի որբանոցներով տևել է մոտ երեք ամիս, որի ընթացքում Ազգային պատվիրակությունը պարբերաբար ստացել է նրա ուղարկած զեկուցագրերը իր կատարած ուսումնասիրությունների շուրջ և Փարիզից նրան ուղղել նոր հարցեր ճշտելու առաջարկներ:

Այսպես՝ գրություններից մեկում Թեքեյանը նշում է Հունաստանում ապաստանած հայ որբերի տեղակայման և թվի մասին (1923 թ. ապրիլի դրությամբ), ըստ որի՝ Էդիպսոսում կենտրոնացվել է 2000 որբ, Լութրաքիայում՝ 1500, Սիրա կղզում՝ 500, Քորֆուում՝ 2500, Օրոփոսում՝ 700 (ընդամենը՝ 7200 որբ)[236]:

Մեկ այլ գրությամբ հավաստում է, որ Քորֆուից հաղորդած տեղեկությունները ստույգ են, և որ հենց իր ժամանած օրը 200-ից ավելի տղա որբերի ուղարկել են Սիրա՝ Ամերիկոմի կողմից կառուցվող շենքերի շինարարության աշխատանքներին մասնակցելու, իսկ որբուհիներին տրամադրում են հույն ընտանիքներին՝ իբրև սպասուհիներ՝ պատճառաբանելով, որ նրանք էլ քրիստոնյա ազգ են, և աղջիկների վիճակը նրանց ընտանիքներում ավելի տանելի կլինի[237]:

Վերջին նամակի պատասխանի մեջ Գ. Նորատունկյանը գրում է Թեքեյանին.

«...Լութրաքիի որբանոցին մէջ գտնուող հայ որբուհիներու մասին Նիր Իսթի այդտեղի գործակալներուն ունեցած մտադրութիւնը, բնական է, թէ հաճելի չէ մեզ: Այդ աւելի Ձեր պարգած տեսակետներուն լիովին համամիտ ենք և բանակցութեան պիտի մտնենք Ըլլիֆի կեդրոնական վարչութեան հետ, որպէս զի այդ որբուհիները, որոնք կրթութիւն մը ստանալէ եւ չափահասութեան տարիքը թեւակոխելէ անմիջապէս ետք փոխադրուին Երեւան: Արդէն մեր բաղձանքն է, որ ոչ միայն որբուհիները, այլ նաեւ տարուէ տարի չափահասութեան հասնող բոլոր որբերը Նիր

---

[235] Նույն տեղում, գ. 884, թ. 9:
[236] Նույն տեղում, գ. 885, թ. 4:
[237] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 885, թթ. 18, 20:

Խաթի ծախքով տարուին Հայաստան եւ այնտեղ, կառավարութեան կարգադրութեամբ, հաստատուին իրենց ձեռք բերած արհեստին, մասնագիտութեան կամ կրթութեան պատշաճ գործերու մէջ: Այս տեսակ կարգադրութեան մը շնորհիւ կարելի պիտի ըլլայ ոչ միայն որբերու ապագան ապահովել, այլ նաև անոնց աշխատութիւնը ի սպաս դնել Հայրենի երկրին վերաշինութեան: Երեւանի կառավարութեան հետ ալ պիտի խորհրդակցինք այս մասին, երբ յաջողինք ձեռք բերել Նիր Խաթի եւ միւս օտար ու ազգային խնամատար մարմնոց հաճութիւնը եւ պիտի աշխատինք, որ զանազան որբանոցներու մէջ տրուած կրթութիւնը կամ ուսուցուած արհեստները ենթարկուին այն տեսակ ծրագրի մը, որ արդիւնքը համապատասխանէ Հայրենի երկրի պէտքերուն»[238]:

Այս ընթացքում, սակայն, Ազգային պատվիրակության գրասենյակում ստացվել են նաև Արշակ Ալպոյաճյանի նամակները, որոնցում նա, խիստ արժևորելով Վահան Թեքեյանի շրջագայությունները, նրա գործադրած ջանքերը որբանոցներում աշխատող ամերիկացի պաշտոնյաների և հայ ուսուցիչների միջև փոխըմբռնում հաստատելու, որբանոցային կյանքում ինչ-ինչ բարեփոխումներ մտցնելու ուղղությամբ, այնուամենայնիվ Ազգային պատվիրակության ուշադրությունը հրավիրում է մի շարք փաստերի վրա, որոնք սպրդել են Թեքեյանի ուշադրությունից:

Ընդգծելով, որ ամերիկացիները որբերի ցրումը որբանոցներից պատճառաբանում են նրանով, որ յուրաքանչյուր որբի համար ամերիկացիները ծախսում են ամսական 9 դոլար, և որ Նպաստամատույցը չի կարող տրամադրել այդքան գումար, Ալպոյաճյանը պնդում է, որ նույն Ամերկոմի ծախսը Պոլսում գտնվող որբի համար կազմում է ամսական 5,50 դոլար, իսկ անգլիական Լորդ Մեյերս Ֆոնդը, դարձյալ Պոլսի հայ որբերի վրա, ծախսում է ամսական 4,75 դոլար:

Ալպոյաճյանն առաջարկում է Ամերկոմի հետ բանակցել, որպեսզի նրանք յուրաքանչյուր որբի համար հատկացնեն 6 դոլար և որբերի խնամքը հանձնեն ազգային խնամատարությանը կամ Հայ բարեգործական ընդհանուր միությանը, որով և՛ ամերիկացիները կշահեն՝ տնտեսելով հսկայական գումարներ, և՛ որբե-

---

[238] Նույն տեղում, թ. 21:

ը, որոնց կրթությունն ու դաստիարակությունը կընթանա «չատ աւելի ազգային շահերու համապատասխան եղանակով մը»[239]:

Մի այլ գրության մեջ Արշակ Ալպոյաճյանը նշում է, որ, հակառակ իրենց գործադրած ջանքերին և խնդրանքին, Ամերիկոմը որոշել է Գավալա տեղափոխել Հունաստանի որբերի մի ստվար մաս, և որ իրենց խնդրանքները՝ սպասել այս հարցի առիթով նաև Հայ ազգային պատվիրակության որոշմանը, անհետևանք են մնում, և որբերին արդեն նախապատրաստում են տեղափոխման[240]:

Մայիսի 31-ին Ալպոյաճյանը հայտնում է. «Մայիս 26-ի գիշերը մեր դպրոցական տղոցմէ 300 եւ աւելի Գաւալայի համար նաւը դրինք վերջապէս՝ հակառակ իրենց խնդրանքներու եւ մեր զօրաւոր դիմումներու, ու այնպէս կերեւի, թէ Ամեր[իկեան] Ըլլիֆը իր որոշումը պիտի գործադրէ՝ որբանոցներէ հանելով 12 տարեկանէն վեր եղող բոլոր որբերը, ու եթե ազգը չի խառնուի այդ դժբախտ հայորդիները հաւաքելու իր խնամքին և հովանաւորութեան տակ, անոնք մնալի համար բացարձակապէս կորսուած պիտի ըլլան»[241]:

Ալպոյաճյանը խնդրում է Նորատունկյանին՝ Հայ բարեգործական ընդհանուր միության հետ շտապ քննարկել այս հարցերը, միջամտել Ամերիկոմի ինքնագործունեության, այլապես այս ամենի հետևանքով հազարավոր որբերի ուծացումն անխուսափելի է:

Շուտով նման խնդրանքով Ազգային պատվիրակությանն է դիմում նաև Վահան Թեքեյանը, որի անհանդստությունը վկայում է ստեղծված անբարենպաստ վիճակի մասին:

«Զափահաս որբ մանչերն ու աղջիկները ինքնապահ դարձնելու համար,-գրում է Լ.Ազատյանը,-Ամերիկեան Նպաստամատոյցը յարմար վայրեր նկատած էր Եգիպտոսը, Պուլկարիան, Մակեդոնիան և Թրակիան:

Որբերու առաջին կարաւանը հին Յունաստանի որբանոցներէն Գաւալա կու գայ 1923 մայիսին: Ամերիկեան Նպաստամատոյցը այս քաղաքին մօտիկ Զաթալճա եւ Էտրինէճիկ գիւղերուն

---

[239] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 884, թթ.10, 12:
[240] Նույն տեղում, թթ. 26, 27:
[241] Նույն տեղում, գ. 887, թ. 5:

մէջ կը հաստատէ որբանոց-կայաններ, ուր մանչերն ու աղջիկները ժամանակ մը մնալէն ետք՝ որպէս հոգեզաւակ կը յանձնուին յոյն ընտանիքներու:

Այս որբերուն ապազգայնացուցիչ կացութիւնը հայ մամուլի մէջ մեծ աղմուկ կը յարուցանէ, ուստի Փարիզի մէջ Հայ Ազգային Պատուիրակութիւնը հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Վահան Թեքէեանին կը նշանակէ իր լիազօր ներկայացուցիչը՝ զբաղելու Յունաստանի, Սուրիոյ, Եգիպտոսի եւ Զուիցերիոյ մէջ գաղթականներու եւ մասնաւորապէս որբերու կացութիւնը բարւոքելու աշխատանքով»[242]:

1924-1925 թթ. Հունաստանում իբրև չափահասներ, հազարներով արձակվել են ամերիկյան որբանոցներից և տեղափոխվել հույն կալվածատերերի մոտ՝ իբրև բատրակներ կամ աշխատում էին տարբեր քաղաքների կապիտալիստական ձեռնարկութիւններում՝ դառնալով ամենավայրագ շահագործման առարկա[243]:

Վահան Թեքեյանի, Սարգիս Խաչատրյանի, Արշակ Ալպոյաճյանի զեկուցագրերը[244] Հայ ազգային պատվիրակությունը քննության է առնում և 1923 թ. Հունիսի 2-ին Փարիզում հրավիրում խորհրդակցություն, որին մասնակցում են նաև Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի, Հայ բարեգործական ընդհանուր միության, Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներ: Այս խորհրդակցությունում Նպաստամատույցի ղեկավարները խոստանում են որբերի հետագա ճակատագիրը վճռելու հարցում հաշվի նստել նաև հայկական կազմակերպությունների կարծիքի հետ, հայ որբերին կրթել Ազգային պատվիրակության ներկայացրած ծրագրերին համապատասխան[245]:

Այս ամենի հետևանքով Հունաստանից 2500 որբեր տեղափոխվում են Եգիպտոս, իսկ որբերի տեղափոխումը Գավալա նավակում է և դադարում միայն 1926 թվականին:

---

[242] Լ.Ազատեան, Հայ որբերը Մեծ եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելէս, 2002, էջ 107:

[243] Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից, 1965, էջ 163:

[244] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 884, թթ.18, 19, 28, 34, գ. 885, թթ. 23, 30, 46, 51, գ. 887, թթ.1, 2:

[245] Նույն տեղում, ֆ. 430, g.1, գ. 885, թ. 44:

Պիտի նշել, սակայն, որ թե՛ Ազգային պատվիրակության, թե՛ Հայ բարեգործական ընդհանուր միության, անգամ Խորհրդային Հայաստանի ջանքերն այս ուղղությամբ շատ քիչ արդյունք են տվել:

Խոստումներ ու հավաստիացումներ տալով՝ Ամերիկոմը ծրագրված քաղաքականություն է իրականացրել հայ որբերի նկատմամբ՝ ամենևին հաշվի չառնելով ժողովրդի ազգային շահերը, որբերին հայ պահելու ուղղությամբ նրան արված բազմաթիվ դիմումներն ու առաջարկները, թախանձագին խնդրանքները:

1923 թ. հունիսի 20-ին հայ ժողովրդին ու համայն հայությանն ուղղած Քորֆուի որբերի կոչը, որ վերնագրված է «Ճգնաժամը հասած է», ցավագին բողոք է որբության ծանր կացության և նրա հետագա ճակատագրի մասին, սա թուրքական սպանդից մազապուրծ և ճակատագրի ծանր հարվածներից հալվի ուշքի եկած մանկահասակ վերապրողների մի վերջին խնդրանք ու խոսք է, որ անկողմնակալ ներկայացնում է ստեղծված դրությունը՝ ազգին թողնելով հետագայում իրենց հայ մնալ-չմնալու հարցի լուծման վերջին հնարավորությունները:

Հատվածաբար ներկայացնելով կոչը՝ կարծում ենք, կներկայացնենք և՛ պահի իսկապես ճակատագրական լինելը, և՛ ստեղծված իրադրության ստույգ և անկողմնակալ նկարագրությունը:

«Չորս տարիներու ընթացքին այնքան մեծ ջանքերով հաւաքուած որբերը, որոնք տառապանքի մեծութիւնը իրենց վրայ կրած ըլլալով, ապագային ազգի անխախտ սիւները կրնային ըլլալ, այժմ կորստեան դատապարտուած են:

Հայ ազգին պանդուխտ ճակատագրին վիճակուած մենք՝ որբերս՝ ուսանող և արհեստաւոր, արդէն իսկ մեր ապագան խորտակուելու վտանգին տակ զգալով կոչ կընենք Ձեզ և հայ ժողովուրդին յանուն մարդասիրական զգացումներուն, որ բարեհաճիք տածիլ հանդէպ մեր անպաշտպան հոգիներուն...

Մեր աչքերովն իսկ կը տեսնինք չափահաս որբերու ցրումը զանազան ուղղութեամբ: Մայիս 26-ին մեծ և տագնապալի վայրկեան մ'ապրեցինք: 400-ի մօտ որբերու մեկնումը կա-

տարուեցաւ Գավալայ և Սիրա՝ իբր թե ծխախոտի գործարաններու մէջ աշխատելու համար...

Միթե՞ ներելի է այս. անոնք, որ Պոլիս և այլուր չորս տարի ազգին պաշտպանութեան տակ զանազան կրթական յարկերու տակ լուսաւորին իրենց մտքերն և հիմա յոյներու քով ծառա՞յ ըլլալ... Միթե՞ ներելի է ազգային իշխանութեանց, որ տառապող որբերը դեռևս տառապին, փճանան ու կորսուին...

Հայ ազգին ճակտին անպատուութեան քօղը սկսած են քաշել ամերիկացիք: Ստոյգ նամակներէ քաղուած տեղեկութեանց համաձայն այլևայլ կղզիներ ապաստանող հայ որբուհիները 14-էն վեր սկսած են յոյներուն ծառայութեան տալ... Ողբի նամակներ են անոնք, զորս գրած են դժբաղդ որբուհիները աղորսելով ազատութիւն միայն... Այս անգամ ազգն է, որ վտանգի տակ է, որբուհիները պիտի այլասերին, նոր սերունդը պիտի փճահայ, ազգը պիտի արատաւորուի, Անդունդը դլորի...

...Մեր վերջին պարտականութիւնը կատարած ըլլալու համար կուղղենք Ձեզ մեր այս վերջին կոչը, որպեսզի հակառակ պարագային խղճերնիս հանգիստ ըլլայ...»[246]:

Վարդան Մալքումին հասցեագրած նամակներից մեկում Գաբրիել Նորատունկեանը գրում է. «Թէ Յունաստանի մեր մասնաւոր քննիչէն եւ թէ ուրիշ զանազան աղբիւրներէ Ռըլիֆի խնամքին յանձնուած մեր որբերու մասին մեր ստացած տեղեկութիւնները դժբախտաբար շատ հեռու են գոհացուցիչ ըլլալէ: Մէկ կողմ թողնելով սնունդի, բնակարանի, հագուստի, դրասեղանի, դասագրքի եւ այլն պակասները, որոնք թերեւս իրենց արդարացուցիչ պատճառը կը գտնեն Ռըլիֆի դրամական միջոցներուն անբաւականութեան եւ մեծաթիւ տղոց մէկ անդամէն հապճեպ փոխադրութեան մէջ, կը մնայ 14-էն կամ 16-էն վեր որբերու եւ որբուհիներու ցրումը, որբերու յունացումը, իբր սպասուհի կամ որդեգիր օտարներու յանձնումի եւ ազգային դաստիարակութեան պակասը: Ստուգուած է նոյնիսկ, թէ 4-5 տարեկան որբեր նուիրուած են ամերիկացի զբօսաշրջիկներու»[247]:

Հայ ազգային պատվիրակությունը հասկանում էր, որ նման անմխիթար վիճակ ստեղծվել է հատկապես Հունաստան

---

[246] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 887, թթ. 8, 10:
[247] Նույն տեղում, գ. 263, թ. 6:

տեղափոխված որբերի համար նաև այն պատճառով, որ 1921 թ. Իզմիրի զանգվածային կոտորածներին զոհ գնացին նաև տեղի հույները, և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի ջանքերով և Ամերիկայի դրոշի հովանու ներքո միայն հաջողվեց կազմակերպել տասնյակ հազարավոր հույն և հայ երեխաների հապճեպ փոխադրությունը Հունաստանի ապահով վայրեր: Ամերիկոմի աշխատողները, բնականաբար, հնարավոր ամեն ինչ անում էին այս որբերի գոնե ֆիզիկական գոյությունը ապահովելու ուղղությամբ՝ բոլորովին անտեսելով նրանց ազգային պատկանելությունը, հետագայում իրենց ժողովրդի և ազգի համար լիարժեք անհատներ ձևավորելու խնդիրները, հանգամանք, որ հույներին բոլորովին չէր անհանգստացնում հասկանալի պատճառով, մինչդեռ հայերը զգում էին դրա բոլոր վտանգավոր հետևանքները:

Վիճակը համեմատաբար վերահսկելի և կայուն է Նպաստամատույց կոմիտեի՝ Մերձավոր Արևելքի երկրներում տեղակայված որբանոցներում: Գործելով դեռևս դարասկզբից, սրանք քիչ թե շատ հարմարություններ ունեին՝ որբերի նոր խմբեր ընդունելու և պատսպարելու, ուստի 1921-1923 թթ. Սիրիա, Լիբանան, Եգիպտոս փոխադրված որբերը հայտնվել էին ավելի բարվոք պայմաններում: Այս ընթացքում մոտ 7.500 որբեր Արևմտյան Հայաստանից տեղափոխվեցին այս երկրները և տեղավորվեցին Հալեպի, Դամասկոսի, Բեյրութի և Ալեքսանդրեյի (Իսկենդեր) որբանոցներում:

Ամերիկոմը դեռևս 1920 թ. Լիբանանի Ճեպել դյուզի մոտ հիմնել էր տղաների որբանոց, ուր հավաքված էին Այնթապի որբերը: Դյուզի կիսավեր և լքված որոշ շենքեր վերանորոգելուց հետո ամերիկացիները կարողացան նոր եկած որբերին ևս տեղավորել: Ճեպելի որբանոցը ապրում էր լիարժեք կյանքով, ուներ դրական և մարզական խմբակներ, հրատարակում էր «Հոսանք» ապա՝ «Տուն» ամսաթերթը: Որբանոցը փակվեց 1925 թվականին, երբ երեխաների թիվը նվազել էր և, որ մնացած 1.000 որբերին տեղավորեցին այլ որբանոցներում (Նազարեթ, Անթիլիաս, Սայտա-Հիլթաի)[248]:

Պատահական չէ, որ հենց Բեյրութում և Հալեպում հիմնադրվեց Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի որբա-

[248] Տե՛ս Լ. Ազատեան, նշվ. աշխ., գիրք երրորդ, էջ 96, 97:

նոցներում կենտրոնացված որբերի ընկերակցությունը, որի ճյուղերը բացվեցին նաև Դամասկոսում, Ալեքսանդրեյում, սրան արձագանքեցին նաև Խորհրդային Հայաստանի Լենինականի (Գյումրի) Պոլիգոններում հավաքված որբերը, այդ շարժումը տարածվեց նաև Սիրայի, Պաղեստինի որբանոցներում: Ընկերության նպատակն էր իրականացնել որբանոցների կապը միմյանց հետ, կազմակերպել որբերի հոգևոր, ֆիզիկական և մշակութային զարգացումը:

Ընկերությունը, որը հիմնվեց Զարլզ Վիքրիի նախաձեռնությամբ, մի քանի տարի գործեց Հենրի Մըրֆիի անմիջական ղեկավարությամբ. հետագայում նրա աշխատանքներին հարեցին նաև որբանոցից դուրս գտնվող բազմաթիվ հայ երիտասարդներ:

1924-1930 թթ. 7 տարի շարունակ, Բեյրութում հրատարակվեց որբերի ընկերակցության «Որբաշխարհի աստղը» ամսօրյա հանդեսը, որն իր էջերում լուսաբանում էր որբերի առօրյան, տպագրում նրանց իսկ հոդվածներն ու գրական առաջին փորձերը, մանրամասն նկարագրում մայր հայրենիքում կատարվող իրադարձությունները:

«Որբաշխարհի աստղի» 1925 թ. (թիվ 9-10) համարում տպագրվել է Զարլզ Վիքրիի ստվարածավալ հոդվածը «Ոսկեղէն կանոնի կիրակին» վերտառությամբ, ուր հեղինակը, պատմելով բարեգործական այս կարևոր միջոցառման դերի ու նշանակության մասին, ընդգծում է նաև, որ սրա տեսլականը կերակուր հայթայթելուց ավելի բարձր մի բան է. կյանքում արմատավորել և առաջնորդվել «Ընել ուրիշներուն այն ինչ որ կուզենք, որ ուրիշներ մեզի ընեն» նշանաբանով:

Հանդեսի 1926 թ. համարներից մեկում (թիվ 21) հոդվածագիրը տեղեկացնում է, որ Բեյրութի ամերիկյան համալսարանում Ամերիկոմի ծախսերով կրթություն են ստանում որբանոցներից հավաքված երեսուն շնորհալի սաներ, որպեսզի ապագայում համալրեն հայ մտքի մշակների շարքերը:

Հայ բարեգործական ընդհանուր միության քարտուղար, արձակագիր Լևոն Բաշալյանը, «Որբաշխարհի աստղի» 1930 թ. առաջին համարում շնորհավորելով հայ որբերի ընկերակցության 6-րդ տարեդարձը, գրել է. «Ըսողներ եղան, թէ Ըլլիֆը բան մը չըրաւ իր ձեռքէն անցած սերունդին մտաւորական և նոյն իսկ

բարոյական զարգացման համար: Ըստ իս, անկարելի է, որ հայ տղաքը ոեէ բան իւրացուցած չըլլան այն բարձրագոյն քաղաքակրթութենէն, զոր ամերիկացի վարիչները, կամայ թէ ակամայ, իրենց հետ բերին առօրեայ կեանքի ամենայետին մանրամասնութեանց մէջ: Բայց ո՞վ կրնայ ուրանալ, թէ գոնե աշխատեցան և յաջողեցան ֆիզիքապէս առողջ և ամուր սերունդ մը յառաջ բերելու...

Բարոյական մարզին մէջ նոյնպէս կարելի չէ անտեսել գործ մը, որուն հիմը մը դրուեցաւ իրը վեց տարի առաջ և որ իր աստիճանական զարգացումով և ճիւղաւորումներով մեր այս օրուան կեանքին աչքառու երևոյթներէն մին կը կազմէ:

Խոսքս Մեր Ճավոր Արևելքի Որբերու Ընդհանուր Միութեան մասին է, որ Նիր Իսթ Ըլլիֆի վարիչներու դրդումովն ստեղծուեցաւ 1923-ին և որ 1924-էն ի վեր կը հրատարակէ «Որբաշխարհի աստղը» ամսագիրը, զոր միշտ առիթն ունեցեր եմ տեսնելու...

«Որբաշխարհի աստղը» հրաւէր կը կարդայ Միութեան անդամներուն յառաջ ընթանալ «հաստատաքայլ ու գօտեպինդ»: Ապրի՛ք, տղա՛ք: Մեր լաւագոյն մաղթանքները ձեզի հետ են... լաւ ըրած եք ձեզի նշանաբան ընտրելով. «Հայկական դատին ամբողջ ապագան հայ որբերէն կախուած է»[249]:

Ինչ խոսք, ճիշտ են թե՛ Լևոն Բաշալյանի և թե՛ նրանց հուշերն ու դրառումները, որոնք Ամերիկոմի որբախնամ գործունեության մեջ միայն բացասականը կամ դրականը չեն տեսել, քանի որ դրանք երկուսն էլ եղել են նրա գործելակերպի մեջ. մի դեպքում գերակշռել է առաջինը, մյուս դեպքում՝ երկրորդը՝ նայած հանգամանքներին, տեղին և ժամանակի մատուցած անակնկալներին:

Ըստ արխիվային բազմաթիվ փաստաթղթերի՝ 1919-1923 թթ. միայն Սիրիայի որբերի խնամքի համար Ամերիկոմը ծախսել էր շուրջ 9 միլիոն դոլար, իսկ հետագայում, մինչև իր լուծարումը՝ տարեկան միջին հաշվով 4 միլիոն դոլար: Փաստաթղթերը հավաստում են, որ Ամերիկոմը հաճախակի հետաքրքրվել է կյանք մտած իր չափահաս որբերի հետագա ճակատագրով, պարբերաբար նրանց ուղարկել հարցաթերթեր, տեղեկություններ հավաքել

---

[249] Տե՛ս «Որբաշխարհի աստղը», 1930թ., N1, էջ 992:

նրանց աշխատանքի, կենցաղի, ընտանեկան դրության և այլնի մասին[250]:

Սրանք անուրանալի փաստեր են, որ չի կարելի շրջանցել, ինչպես և չի կարելի անտեսել այն նպատակաուղղված ու լուրջ աշխատանքը, որ կատարել է Հայ ազգային պատվիրակությունը Ամերկոմի գործունեության մեջ հավասարակշռելու նրա գործելակերպի երկու ոճն էլ:

Վահան Թեքեյանին գրած մի նամակում Ազգային պատվիրակության նախագահը մեկ անգամ ևս մատնանշում է.

«Նիր Իսթ Ըլլիֆի մտայնութիւնը եւ գործելակերպը մեր ցանկութեանց համաձայն փոխելու գործը պետք է առաջ տարուի բարեացակամ ոգիով մղուած բանակցութիւններով, եւ լրագրական հրատարակութիւններ ու հրապարակային քննադատութիւններ, իրաւացի ալ ըլլան, բնականաբար որքան կրքերը կը գրգռեն եւ հակադարձ ազդեցութիւններ յառաջ կրնան բերել, եւ կը վախնամ, որ մեր նպատակին հասնելու չծառայեն»[251]:

Այս առումով բոլորովին այլ կարծիք ուներ Արշակ Ալպոյաճյանը: Նա գտնում էր, որ Ամերկոմի գործունեությունը կարգավորելու համար արդեն անցել է նրանց բարյացակամության վրա հույս դնելու ժամանակը, և եթե Ազգային պատվիրակությունը հակված է որբերին փրկելու գաղափարին, ապա պետք է փոխի իր քաղաքականությունը և կտրուկ միջոցներ ձեռնարկի, նոր ուղիներ փնտրի՝ հարցը կարգավորելու համար:

«Նոյնիսկ ես կը կարծեմ,-գրում է Ալպոյաճյանը Նորատունկյանին,- թէ հասած է ժամանակը, որ Ազգային պատուիրակութիւնդ կոչով մը հանուր հայութեան, և, եթե կարելի է, հանուր աշխարհի և մանաւանդ Ամերիկեան ժողովուրդին առջև պարզէ Ըլլիֆին ուղղութիւնը և հարց տա, թէ մարդասէր ամերիկացիք արդեօք իրենց նպաստները կուտան հայ որբերուն, որպեսզի անոնք իսպառ հայութեան համար մեռնին»[252]:

Ազգային պատվիրակությունը շուրջ երեք տարի համառ և հետևողական աշխատանք է տարել Ամերկոմի՝ Հունաստանի որբանոցներում ապաստանած որբերի կյանքն ու հետագա ճակա-

---

[250] ՀԱԱ, ֆ. 282, ց.1, գ. 60, թթ.1, 2:
[251] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 885, թ. 53:
[252] Նույն տեղում, գ. 884, թ. 39:

տագիրը կարգավորելու ուղղությամբ, քանի որ հենց այս հարցում է Ամերիկոմի գործունեությունը հեռու եղել դոհացուցիչ լինելուց:

Ազգային պատվիրակության հասցեով ստացված հայ ուսուցիչների և որբերի համախոսականները, Վահան Թեքեյանի, Արշակ Ալպոյաճյանի, Արշակ Զոպանյանի, Թրակիայի և Մակեդոնիայի հայկական թեմի առաջնորդարանի փոխանորդ Վարդան քահանա Կարագոզյանի, Գալուստ Կյուլպենկյանի նամակները,[253] որոնք որբերի ուծացման ահազանգ էին հնչեցնում, չէին կարող անտեսվել և անհետևանք մնալ, ուստի Ազգային պատվիրակությունը փորձում էր հարցը կարգավորել Ամերիկոմի և՛ տեղերում գործող պաշտոնյաների, և՛ Նյու Յորքի կենտրոնական դրասենյակի ղեկավար կազմի միջոցով[254]:

Ազգային պատվիրակությունը զուգահեռաբար բանակցում էր նաև Խորհրդային Հայաստանի կառավարության հետ՝ Ամերիկոմի որբանոցներից ազատվող չափահաս որբերին հայրենիք տեղափոխելու ուղղությամբ[255]: Այս կարգի բանակցություններ տարվում են նաև Հայ բարեգործական ընդհանուր միության, Պոլսի, Երուսաղեմի պատրիարքարանների, Կիլիկիո հայոց կաթողիկոսարանի և անձամբ Սահակ Բ կաթողիկոսի հետ[256]:

1924 թ. հոկտեմբերի 26-ին Երուսաղեմի, Հալեպի և Բեյրութի որբանոցների 250 սաներ Պաղեստինի Եաֆֆա նավահանգստից խորհրդային «Կերչ» նավով ուղևորվեցին Հայաստան և նոյեմբերի 15-ին ժամանեցին Երևան: Տեղափոխման բոլոր ծախսերը հոգաց ՀԲԸՄ-ը, իսկ յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությունը տվեց 100 դոլար՝ հոգալու նրանց մեկ տարվա ծախսերը[257]:

Արդեն 1925 թ. Միության կողմից հատկացված միջոցներով (5000 անգ. ոսկի) հնարավոր եղավ կազմակերպել Հունաս-

---

[253] Նույն տեղում, գգ. 241, 884, 887, 891:
[254] Նույն տեղում, գգ. 260, 263:
[255] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ.260, թթ. 30, 46:
[256] ՀԱԱ, ֆ. 430, գ. 914, թթ. 33-35, գ. 846, թթ.16-23, գ. 914, թթ. 28, 30:
[257] Պողոսեան Ս., Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը, էջ 233-234:

տանում, ինչպես նաև Կ. Պոլսում և Միջագետքում ապաստանած գաղթականների ևս մի մասի ներգաղթը Հայաստան[258]:

Սահակ Բ կաթողիկոսին հասցեագրված նամակներից մեկում Գաբրիել Նորատունկյանը ցավով տեղեկացրել է, որ իր բազմաթիվ դիմումները մեծահարուստ հայերին՝ օգնելու Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեին չափահաս որբերի տեղավորման հարցում, մնում են անհետևանք, մինչդեռ այս բարեգործական կազմակերպությունը ևս նյութական ճգնաժամ է ապրում:

«Վերջերս, -գրում է Նորատունկյանը,- Նիւ Եօրքէն մեր ստացած տեղեկութեանց համաձայն, Նիր Իսթը նոյնիսկ ստիպուած է դիմելու հայ դրամատէրներու, անոնցմէ առժամանակեայ փոխառութիւններ կնքելու համար: Այս ծանր նիւթական տագնապն է, որ զինքը կը հարկադրէ խնայողական միջոցներ ձեռք առնելու, որոնց կարգին նաեւ չափահաս որբերու եւ մասամբ ալ հայ ուսուցիչներու արձակումը: Չափահաս որբերուն ամրողջութիւնը Սուրիա և Յունաստան 4000 կը հաշուուի, եւ կը ցաւիմ լսելու, որ հակառակ թէ մեր և թէ Նիր Իսթի կողմէ եղած բազմազան ջանքերու, անկարելի եղաւ հարուստ ազգայիններ շահագրգռել անոնց վիճակով և այդ որբերուն գէթ մեկ մասին համար աշխատանքներ բանալով՝ անոնց ապագան ապահովել»[259]:

Նորատունկյանի ջանքերով Փարիզի մասնագետները պատրաստում են հայ որբերի ազգային դաստիարակության և կրթության ծրագիր,[260] որը Նորատունկյանն անձամբ հանձնում է Ամերիկոմի նախագահ Բարթոնին: Ջ. Բարթոնը այն քննարկել է Նպաստամատույցի Նյու Յորքի գրասենյակում և հանձնել Զարլզ Վիքրիին, որպեսզի վերջինս Մերձավոր Արևելքում կատարելիք իր երկարատև ճամփորդության ընթացքում իրականացնի նրա իրագործումը[261]:

---

[258] Մելքոնյան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ., 1999, էջ 68:
[259] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 846, թ.17:
[260] Նույն տեղում, գ. 241, թթ. 7, 11:
[261] Նույն տեղում, ֆ. 430, ց.1, գ. 241, թ. 3:

Ազգային պատվիրակության անդամները կարծում էին, որ ուծացման վտանգը բոլորից շատ սպառնում է Հունաստանում ապաստանած որբերին, որոնք հույն որբերի հետ ստանում էին հունական կրթություն, աշխատանքի էին անցնում հունական ընտանիքներում, և կարծես այնքան էլ դեմ չէին Հունաստանից որբերի տեղահանմանը:

1923 թ. ամռան-աշնան ամիսներին Ամերիկան Հունաստանի և Բեյրութի իր որբանոցներից Ֆրանսիա, Եգիպտոս, Կանադա, Անգլիա տեղափոխեց շուրջ 500 որբեր, սակայն Ազգային պատվիրակության ստացած տեղեկությունները նրանց մասին համարյա ոչնչով չէին տարբերվում Հունաստանից ստացված լուրերից:

Անգլիա փոխադրված հայ որբերը գյուղատնտեսական աշխատանքներ էին կատարում ագարակներում, աշխատում առավոտյան ժամը 5-ից մինչև երեկոյան ժամը 5-ը, երբեմն նաև մինչև երեկոյան ժամը 8-ը, ստանում չնչին դրամար և վատ սնունդ: Նրանց բողոքները մնում էին անհետևանք, մյուս կողմից էլ Ամերիկոմի աշխատակիցները նրանց հորդորում էին մոռանալ իրենց հայ լինելն ու Հայաստանը և օգտակար լինել Անգլիային[262]:

Մի բան պարզ էր. հայը կարող էր իր ազգային նկարագիրը և ոգին պահպանել Հայաստանում, և Ազգային պատվիրակությունը փորձում է Ամերիկոմի հետ բանակցություններ վարել և կազմակերպել չափահաս որբերի տեղափոխությունը Խորհրդային Հայաստան:

Գ.Նորատունկյանն այս առիթով դիմում է նաև Գալուստ Կյուլպենկյանին՝ ակնկալելով նրա աջակցությունը հս:

«Ազնուաշուք Տեր.

Յունաստանեն ստացուած տեղեկութիւնները մեր որբերուն մասին կը պարզեն այնքան սրտաճմլիկ եւ յուսահատական կացութիւն մը, որ Ազգ[ային] Պատուիրակութիւնս իրեն հրամայական պարտականութիւնը կը համարի զայն ներկայացնել Ազգին եւ անոր կարեւորագոյն անդամներուն:

Նիր Իսթ Բրլիֆը, որ ինչպէս գիտէք, աւելի քան 50.000 հայ որբերու խնամատարութիւնը ստանձնած է, իր հաստատներուն

---

[262] Նույն տեղում, գ. 641, թթ. 4, 5:

նուազումէն մղուած, որոշած է դադրեցնել 14 տարեկանէն վեր որբերու եւ որբուհիներու մինչեւ ցարդ իր նուիրած հոգածութիւնը: 14-18 տարեկան որբերու եւ որբուհիներու թիւը կը համարուի շուրջ 1000, որոնցմէ մօտավորապէս 100 հոգի Պոլսոյ մէջ կը յաճախէին հայ երկրորդական վարժարաններ եւ իրենց մէջ ունէին ապագայ խոստացող երիտասարդներ: Ասոնք և ասոնց նմանները այժմ ղրկուած են Գավալլա և Տրամա ծխախոտի գործարաններու եւ դաշտերու մէջ աշխատելու համար ինքնագլուխ: Իսկ 14 տարեկանէն վեր որբուհիները ստիպուած պիտի ըլլան իրը սպասուհի տալու յոյն ընտանիքներու քով:

Ձեր Ազնուութեան ուշադրութենէն չեն կրնար անշուշտ վրիպիլ այն անպատեհութիւնները, որոնք կրնան ծագիլ այս կացութենէն: Այսպէս օտար երկրներու մէջ ինքնագլուխ մնացած որբերը, առանց ընտանեկան հոգածութեան, որմէ ղրկուած են վերջին տարիներու ահաւոր աղէտներուն հետեւանքով եւ առանց հոգատար մարմնի մը բարոյական վերին հսկողութեան, դատապարտուած են այլասերելու, օտարանալու եւ գուցէ անբաղձալի ընկերակցութեանց ազդեցութեան տակ նոյնիսկ փճացնելու իրենց ապագան եւ արատաւորելու Հայ Ազգին պատիւը: Պատուիրակութիւնս, որուն փափաքը եւ մտադրութիւնն է բոլոր հայ որբերը ղրկել տալ Երեւանի Հանրապետութիւնը, ստեղծուած այս դրութեան իրը միակ դարմանը կը նկատէ չափահաս որբերու անմիջական փոխադրութիւնը: Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է զանոնք ընդունելու, եթե իրենց փոխադրութեան եւ սկզբնական հաստատման ծախքերը հոգացուին...

Կը յուսանք, թէ Ձեր Ազնուութիւնը, ինչպես նաեւ ուրիշ առաջնակարգ ազգայիններ, պիտի ուզեն նկատողութիւն առնել ներկայ հանգամանքներուն առաջ բերած ծանր կացութիւնը եւ իրենց աջակցութիւնը նուիրել այս մարդասիրական գործին, որ տարապայման ծախքերու չի կարօտիր: Ըստ Նիր Իսթ Ըլլիֆի հաշուոյն, իւրաքանչիւր որբի Երեւան փոխադրութեան եւ տեղաւորման ընդհանուր ծախքը մերձաւորարար կը յանդի 750 ֆրանքի: Եթե նոյնիսկ կարելի չըլլայ այս չափահաս մանչ եւ աղջիկ որբերուն ամբողջութեան համար հարկ եղած ծախքերը

հայթայթել, պետք է ընդունիլ, թե որքան որբ որ փոխադրուի Երեւան, այնքան շահ է իրենց եւ երկրին համար»[263]:

Նորատունկյանը նույնատիպ նամակներ է գրել նաև Թրակիայի և Մակեդոնիայի Առաջնորդական փոխանորդ Վարդան քահանա Կարակոզյանին[264], Հունաստանի հայերի հոգևոր հովիվ Կարապետ եպիսկոպոս Մազլումյանին[265], Մանչեսթրի հայերի հոգևոր հովիվ Գրիգորիս Ծայրագույն վարդապետ Պալաքյանին[266], Ալեքսանդրիայի քաղաքական ժողովի ատենապետ Տիար Տելեմաք բեյ Թուքունճյանին[267], Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին[268] և այլոց՝ առաջարկելով որքան հնարավոր է տեղերում սերտ համագործակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի տարածաշրջանային ներկայացուցիչների և կենտրոնական դրասենյակի հետ՝ որբերին Հայաստան տեղափոխելու հարցը կարգավորելու համար:

Նորատունկյանը պնդում է, որ Ազգային պատվիրակությունը միանշանակ դտնում է, որ հայ որբերի հանգրվանը Խորհրդային Հայաստանն է լինելու, այլապես ուր էլ դնան, վաղ թե ուշ նրանք դարձյալ կանգնելու են ձուլման վտանգի առաջ, և այն, ինչ արդեն սկսվել է Հունաստանում, վաղը շարունակվելու է մյուս երկրներում:

1923 թ. հուլիսի 22-ին «Հայրենիք» օրաթերթում տպագրված տեղեկությունը հաղորդում է.

«Վերջերս հայ մամուլն սկսած է խիստ քննադատութեանց նշաւակ դարձնել ամերիկեան Նպաստամատոյցի պաշտօնեաներէն մէկ քանին ի մասին Յունաստան գտնուող հայ որբերու վերաբերեալ կարգադրութեանց:

Հայ թերթերը երախտագիտութիւն յայտնելով հանդերձ հանդէպ ամերիկեան ազնիւ ժողովուրդին, չեն կրնար հաւանիլ անկարեկից քաղաքականութեան կարգ մը ամերիկացիներու, որոնք կը ջանան ուծացնել տասնորդեալ ցեղի մը որբերը իրենց մայրենի լեզուէն, պատմութենէն ու եկեղեցիէն եւ կը հարկադրեն

[263] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 284, թթ.1, 2:
[264] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 991, թթ.1, 4:
[265] Նույն տեղում, թթ.11, 12:
[266] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430 գ. 638, թթ. 4, 5:
[267] Նույն տեղում, գ. 690, թ. 21:
[268] Նույն տեղում, գ. 914, թթ. 33, 34:

չափահաս որբերը սպասավորութեան: Հարցը հետզհետէ կը ստանայ գայթակղութեան բնոյթ եւ անհրաժեշտ կը դարձնէ ամերիկեան Նպաստամատոյցի Կեդրոնական մարմնոյ միջամտութիւնը»:

Հայաստանի կառավարության հետ այս ընթացքում բանակցություններ էր վարում նաև Զարլզ Վիքրին:

Նորատունկյանը տեղյակ էր, որ Ամերիկոմի ներկայացուցիչը ևս այն կարծիքին էր, որ չափահաս որբերը պետք է հանգրվանեն հայրենիքում, իսկ փոքրերի տեղափոխությունը պետք է սկսել մի փոքր ավելի ուշ, երբ Հայաստանի կառավարությունը հնարավորություն կունենա նրանց ընդունելու:

Սակայն Վիքրիի համաձայնությունը մի բան էր, գործնական աշխատանքների ընթացքը՝ այլ բան:

Վարդան Մալքոլմին հայտնելով երկկողմ բանակցությունների մասին՝ Նորատունկյանը, այնուամենայնիվ, ստիպված էր խոստովանել, որ ամիսներ տևած իրենց դիմումներն ու բանակցությունները մնացել են անհետևանք:

«Մ-ր Վիքրի այս տեսակէտին համամտութիւն յայտնելով հանդերձ,-գրում է նա,- քանիցս կրկնեց, թե Բրլիֆը Ամերիկեան ժողովուրդին դիմում չի կրնար կատարել որբերու փոխադրութեան եւ Հայաստանի մէջ զետեղման ծախքերուն համար, ցորչափ ապահով երաշխիքներ չունի, թէ այնտեղ իր սկսած գործը որոշ ժամանակ մը (10-15 տարի) զերծ պիտի մնայ Կառավարական միջամտութիւններէ: Մ-ր Վիքրի նոյն բանը կրկնեց նաեւ, երբ հարցուցինք, թէ գաղթականներու փոխադրութեան համար ուեւէ ձեռնարկ կատարած են: Մ-ր Վիքրի ըսաւ, թէ մինչեւ ցարդ չեն զբաղած այդ խնդրով, իրենց մտահոգութեան գլխաւոր առարկան ըլլալով որբերու եւ գաղթականներու սնուցումը, բայց թէ յոյս ունին ամերիկեան ժողովուրդէն դրամական օգնութիւն ստանալ, եթէ երբեք վերոյիշեալ երաշխիքները ունենան»[269]:

Նորատունկյանը հայտնում է նաև, որ ո՛չ Մոնթգոմերին, ո՛չ Վիքրին և ո՛չ էլ Բարթոնը, որոնք խոստումներ էին տվել որբերին և գաղթականներին տեղափոխելու կապակցությամբ, ամիսներ շարունակ չեն պատասխանում նաև Ազգային պատվիրակության գրած նամակներին, որը ստիպում է մտածել, թե այս

[269] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 263, թ. 7:

խնդիրները լուծելու համար դեռ երկար ժամանակ ու ջանքեր են պահանջվելու: Նկատի առնելով Վիքրիի հայտնած լուրը, թե գաղթականներին և որբերին Անդրկովկաս տեղափոխելու համար հնարավոր է միջոցներ հայթայթել Ամերիկայի մեջ, եթե ռուսական կառավարությունը որոշակի երաշխիքներ տա, որ չի միջամտի Ամերկոմի գործերին, Նորատունկյանը հանձնարարում է Մալքոմին.

«...Հարկ կը տեսնենք, որ այդ պահանջուած երաշխիքներու մասին բանակցելու համար Ըլլիֆը ներկայացուցիչ մը ղրկէ Մոսկուա, հայ գաղթականներու գետեղման համար կազմուած մասնաւոր քոմիսիոնին մօտ, ինչպէս ռուս կառավարութիւնը ուզած էր արդէն եւ որուն կսպասէ: Խնդրին ստիպողականութիւնը ակնյայտ է, ուստի կը խնդրեմ, որ այդ մասին պէտք եղածը խօսիք թէ Մ-ը Մոնթկոմըրիի եւ թէ Ըլլիֆի գործադիր վարչութեան:

Ըլլիֆի կողմէ ղրկուելիք ներկայացուցիչը, որ հաւանաբար մ-ը Եարօն պիտի ըլլայ, պէտք է, սակայն, որ լիազօրութիւն ունենայ ի պահանջել հարկին ստորագրելու պայմանագիր մը ռուս կառավարութեան հետ: Ձեզ յայտնի է, թէ մեր ամէնուս փափաքն է Յունաստանի, Պուլկարիոյ, Սուրիոյ եւ այլ վայրերու մեր գաղթականներու մեծագոյն մասը ըստ կարելւոյն փոխադրել Անդրկովկաս՝ նախապատուութիւն տալով Երեւանի Հանրապետութեան, Սոչիի շրջանին եւ Վրաստանի Սեւ ծովու ափերուն: Ամէն պարագայի մէջ համաձայն չենք գաղթականներուն Թուրքեստան և Քըրքըզի եւ կամ Վոլկայի շրջանը փոխադրելուն, ուր բնիկ հայ տարր չկայ եւ մահմեդական բնակչութիւնն ալ ստուարաթիւ է: Մեր այս տեսակետին համաձայն են նաև Երեւանի Հանրապետութեան փափաքներն ալ, միայն թէ Հայաստանի արդի սահմաններուն մէջ դուրսէն փոխադրուելիք գաղթականներուն տրամադրելի հող ստեղծելու համար անհրաժեշտ է կատարել կարգ մը ջրաբաշխական աշխատութիւններ, որոնց համար կանխատեսուած ծախքն ալ մեծ չէ»[270]:

Ինչպես երևում է հունիս-օգոստոս ամիսների գրագրությունից, Ազգային պատվիրակությանը զբաղեցրել է ոչ միայն որբերի, այլև գաղթականության տեղափոխման խնդիրը: Բանն այն

[270] ՀԱԱ, ֆ. 430, g.1, q. 263, pp. 7, 8:

է, որ Հունաստանի կառավարությունը պատճառաբանելով, թե գաղթական հայերը, Բուլղարիայից եկող քարոզչությանը հետևելով, խանգարում են իրենց ապաստան տված երկրի անդորրը, այս ընթացքում հատուկ որոշում ընդունեց Թրակիայից և Մակեդոնիայից տարհանման ենթարկել ոչ միայն որբերին, այլև ողջ հայ գաղթականությանը, հատկապես նրանց, ովքեր բնակվում էին գյուղական վայրերում և հունահպատակ չէին:

Անգամ Ազգերի ընկերակցության միջամտությամբ հնարավոր չեղավ շտկել դրությունը, և հայ գաղթականները դարձյալ ստիպված էին բռնել գաղթի ճանապարհը:

Հունական կառավարության այս որոշմանը հետևեց նաև Ամերիկայի կարմիր խաչի որոշումը, որով նախատեսվում էր 1923 թ. հունիսի 30-ից դադարեցնել Հունաստանում տեղավորված հայ և հույն գաղթականներին տրվող նպաստը: Այս առիթով Ազգային պատվիրակությունը դարձյալ սկսում է բանակցություններ վարել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի, Ամերիկայի կարմիր խաչի հետ, որպեսզի գոնե հայերի նկատմամբ բացառություն անեն, մինչև որ հնարավոր լինի նրանց հայրենիք տեղափոխել: Նորատունկյանն իր նամակներով փորձում է բացատրել, որ եթե այս որոշումը արդեն շատ ծանր են ընդունել հույներն ու հունական կառավարությունը, ապա որքան ծանր պետք է լինի այն հայերի համար, որոնք չունեն տեղական կառավարություն, որ երբեմն-երբեմն հոգա իրենց կարիքները[271]:

«Պետք է աշխատել,- գրում է Գ. Նորատունկյանը Վարդան Մալքոլմին,- որ մինչև մեր գաղթականներուն ճակատագիրը որոշուի, Ամերիկեան Կարմիր խաչը բացառութիւն մը ընէ անոնց համար: Պետք է ի նկատի ունենալ, որ նպաստի կարոտ հայ գաղթականներու թիւը 50.000-ը չանցնի, եւ ասիկա չնչին թիւ մըն է այն այլեւայլ ազգէ 500.000 գաղթականներուն մէջ, որոնք այսօր նպաստ կը ստանան Ամերիկեան Կարմիր խաչէն: Որքան յաջողինք այդ նպաստներու բաշխման պայմանաժամը երկարաձգելու, այնքան շահ է մերիններու համար»[272]:

Նորատունկյանը տեղեկացնում է Մալքոմին, որ Փարիզում ինքը Ամերիկայի դեսպանին է հանձնել գաղթականներին

---

[271] Նույն տեղում, ֆ. 430, g.1, գ. 260, թթ. 44, 48:
[272] ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 260, թթ. 26, 27:

Հունաստանից Հայաստան տեղափոխելու իրենց ծրագիրը, և նա խոստացել է այն ներկայացնել Ամերիկոմի Նյու Յորքի գրասենյակ՝ քննության առնելու և որոշում կայացնելու[273]:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 1924 թ. միայն հունիս-հուլիս ամիսներին Հունաստանի տարբեր բնակավայրերից տեղահանված գաղթականների թիվը կազմել է 5.968, որոնցից 350 չափահաս որբեր և 780 գաղթականներ Գավալայից, Աթենքից և Սալոնիկից ներգաղթել են Խորհրդային Հայաստան[274]: Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի Հունաստանի պատասխանատու տնօրեն Հ. Մաքաֆին և Ազգային պատվիրակության ղեկավարները ամեն ինչ արել են հայերի երկրորդ տեղահանությունը համեմատաբար առանց լուրջ ցնցումների կազմակերպելու համար:

1924 թ. ամռանը Հունաստանում մնացած հայ որբանոցների ուսուցիչների՝ Ազգային պատվիրակությանը ներկայացրած հարցաթերթիկներից կազմված «Նիր Իսթ Ըլլիֆի Յունաստանի վարչության մասին եղած գանգատները» վերտառությամբ տեղեկագրում ամրագրված գանգատները համարյա թե չեն տարբերվում նախորդ տարվա եղածից: Թվարկված են խաւը կրթության, հայ ուսուցիչների վատարման, հունարենը ուսուցման միակ լեզու դարձնելու, ազգային պատմության և կրոնի ժամերը հանելու, չափահաս որբերին առանց որևէ նախապայմանի և հետադա օժանդակության արձակելու, փոքրիկ որբերին իբրև որդեղիր Ամերիկա փոխադրելու, չափահաս աղջիկներին սպասուհիներ դարձնելու, աշխատող չափահաս տղաներից ստիպողաբար նրանց հասանելիք վարձատրությունը ետ վերցնելու, նրանց ֆիզիկական հնարավորություններին անհամապատասխան աշխատանք տալու, վատ կերակրելու հարցերը, և, որ ամենակարևորն էր. «...Նիր Իսթի տեղական պաշտօնեաները առ հասարակ կարեւորութիւն չեն ընծայեր ազգ[ային] իշխանութեանց, ոչ մէկ տեղեկութիւն կուտան, ոչ մէկ խորհրդակցութեան կը հրաւիրեն, եւ երբ անոնց կողմէ որբերուն նկատմամբ պահանջ մը ըլլայ, ոչ միայն ականջ չեն կախեր, այլ նոյն իսկ արհամարհանք ու քամահրանք ցոյց կուտան»[275]:

---

[273] Նույն տեղում, թ. 49, գ. 263, թթ. 1, 2:
[274] Տե՛ս L. Ազատյան, նշվ. աշխ., գիրք երրորդ, էջ109:
[275] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ.1402, թթ. 4, 5:

1924 թ. հուլիսի 31-ին Ազգային պատվիրակությունը կազմում է նաև Հունաստանի որբանոցներում մնացած հայ որբերի ամփոփ տեղեկագիր, համաձայն որի՝ 1923 թվականին Հունաստանի որբանոցների մեջ եղել են 5600 որբեր, որոնցից 3140-ը՝ տղա և 2460-ը՝ աղջիկ: 1923 թ. Ամերիկոմը շուրջ 2000 չափահաս որբերի արձակել էր որբանոցներից՝ պահելով 3600-ին, որոնցից նախատեսվում էր 1924-ին արձակել ևս չափահաս տարիքի հասած մոտ 1300 երեխա[276]:

Մնացած 2300 երկսեռ որբերի հետագա ճակատագիրը վերահսկելու համար Հայ ազգային պատվիրակությունը դարձյալ կազմում է հրահանգներ՝ թե՛ իրենց հետագա գործունեությունը կարգավորելու և թե՛ Ամերիկոմի հետ պահվելիք հարաբերությունների վերաբերյալ:

Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի՝ 1925 թ. մարտին հրատարակած տեղեկագրի տվյալներից տեղեկանում ենք, որ 1924 թ. վերջերին Հունաստանի որբանոցներից իբրև տասնհինգ տարին լրացած չափահասներ, դուրս էին եկել 12212 հայ որբեր[277]:

Այսպիսով, Ազգային պատվիրակությունն իր կարևորագույն խնդիրն էր համարում աշխատանքի տեղավորել չափահաս որբերին, Հայաստանի կառավարությունից ստանալ ստույգ տեղեկություններ, թե տարեկան քանի որբ կարող են ընդունել, խնդրել եվրոպական պետություններին՝ հոգալու այդ որբերի Հայաստան տեղափոխելը, ինչպես նաև իրենց դրամաշնորհով բարձրագույն կամ մասնավոր վարժարաններում կրթության տալ նրանցից առավել շնորհալիներին: Պատվիրակությունը գտնում էր, որ այս հարցով պետք է դիմումներ արվեին նաև հայ կամ օտար մեծահարուստներին[278]:

Ամերիկոմին ներկայացվող պահանջները դարձյալ պտտվում էին որբերին հայեցի կրթություն տալու, ինչպես նաև իրենց հետագա գործունեության մեջ որոշ պարզություն մտցնելու շուրջ:

Հրահանգի վերջին 4 կետերը ձևակերպված են այսպես.

---

[276] Նույն տեղում, գ.1294, թթ.1, 2:
[277] Տե՛ս Կոկինոս Պ., Յունահայ գաղութի պատմությունից, 1965, էջ 43:
[278] ՅԱԱ, ֆ. 430, g.1, գ.1295, թ. 2:

«...6. Չափահասութեան հասած տղաքը, որոնք անվրէպ Հայաստան պիտի փոխադրուին, պէտք չէ ցրել աստ-անդ, եւ եթէ ժամանակի մը համար Եւրոպայի մէջ իսկ մնան, պետք է ջանալ, որ համախումբ աշխատին, ուր որ ալ ըլլայ եւ յատուկ հսկողութեան ներքեւ գտնուին:

7. Նիր Իսթ Ըլլիֆի որբանոցներուն վարիչները պէտք է Ազգ[ային] իշխանութեանց տան իրենց պատսպարած որբերուն ցանկը, անոնց մասին անհրաժեշտ ամէն մանրամասնութիւններով (սեռ, տարիք, ծննդավայր, ուրկէ առնուած ըլլալնին, ուեւէ ազգական կամ պարագայ ունենալնին եւն):

8. Որբանոցներու վարիչները պէտք է միշտ յարաբերութեան ու շփման մէջ ըլլան Ազգ[ային] իշխանութեանց, մասնաւորաբար Ազգ[ային] Պատվիրակութեան հետ եւ գանոնք տեղեակ պահեն որբերու իրական կացութեան նկատմամբ, որպէս զի այլընդայլոց քննադատութեանց, դանգատներու եւ հրատարակութեանց դուռ չբացուի:

9. Որբանոցներու վարիչները պէտք է Ազգային իշխանութեանց հաղորդեն նաեւ ցարդ արձակուած տղոց ցանկը, կարելի դարձնելու համար անոնց վրայ կատարուելիք հսկողութիւնը, ինչպէս նաեւ անոնց հաւաքումը, երբ Հայաստան փոխադրելու առիթը ներկայանայ»[279]:

Ազգային պատվիրակության, Ամերիկոմի և Խորհրդային Հայաստանի երկարատև բանակցությունների արդյունքում 1924 թ. մարտի 3-ին Անդրկենտգործկոմը որոշում կայացրեց 10000 հայ գաղթականների Մերձավոր Արևելքից, Թուրքիայից և հիմնականում Հունաստանից տեղափոխել Հայաստան[280]:

Սակայն 1924 թ. մարտի 29-ից մինչև 1925 թ. հունվարի 19-ը Հայաստանը կարողացավ ընդունել միայն 4167 գաղթականների, որոնց թվում կային նաև չափահաս և մանկահասակ որբեր[281]:

---

[279] Նույն տեղում, ֆ. 430, ց.1, գ.1295, թ.1:
[280] ՀԱԱ, ֆ.113, ց.3, գ. 419, թ.153:
[281] Նույն տեղում, գ. 418, թ. 28:

1925 թ. աշնանը Հունաստանից, Միջագետքից և այլ վայրերից Հայաստան ներգաղթեցին ևս 5016 գաղթականներ, որոնցից 3016-ը Հունաստանից էին[282]:

Հունաստանում և Միջագետքում եղած հայ գաղթականության ներգաղթն իրականացնելուն ուղղված ջանքերը պայմանավորված էին այն դժվարին կացությամբ, որը 1923-1924 թթ. ստեղծվել էր այդ տարածաշրջանում ապաստանած հայ գաղթականների համար: Այն առավել ծանր էր Հունաստանում տեղավորված և արդեն իր համար տանելի կենսապայմաններ ապահովված հայերի համար, քանի որ կառավարության հատուկ որոշմամբ Թրակիայի և Մակեդոնիայի գաղթականները պետք է շուտափույթ լքեին իրենց բնակավայրերը և տեղափոխվեին Հին Հունաստանի ապառաժուտ վայրեր, մինչդեռ իրենց մշակած հողերն ու կացարանները տրամադրելու էին Թուրքիայից գաղթած հույներին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող մի հետաքրքիր փաստաթուղթ ամբողջացնում է թե՛ ստեղծված իրադրության պատկերը, թե՛ Ամերկոմի գործունեության թեր և դեմ կողմերը:

Մեր կարծիքով այն կարծես ամփոփում է հարյուրավոր վավերագրերում ամրագրված տեղեկատվությունը՝ կատարելով իրատեսական եզրահանգումներ և տալով ճիշտ գնահատականներ: Դա Երվանդ Կարիկյանի «Աշխարհաքաղաքացիները» վերտառությամբ հոդվածն է,[283] որ հասցեագրվել է «Կոչնակ Հայաստանի» և «Պայքար» հանդեսների խմբագրություններին, ընդ որում, հոդվածի առաջին էջի աջ անկյունում թանաքով գրված է. «Ոչ հրատարակելի»:

Հոդվածը թվագրված չէ, բայց նկարագրվող դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև հեղինակի հիշատակած «այս տարի, այս տարվա մեջ» արտահայտությունները հավաստում են, որ խոսքը 1925 թ. մասին է:

Ի՞նչ է գրում այս բոլոր անցքերի ժամանակակիցն ու ականատեսը:

Գնահատելով Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի գործունեության նախնական շրջանը՝ Կարիկյանը գրում

---

[282] Նույն տեղում, գ. 396, թ. 81:
[283] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 235, թթ.16, 20:

է. «Նիր Իսթը մեզի հայ տուաւ անցեալին մէջ: Եթե չտար, շատերը կը մեռնէին, ցայսօր ալ Հայաստանի մէջ մեզ 17 հազար որբ կը պահէր, նոր կարգադրութեան համեմատ թերեւս 10 հազարի պիտի իջնայ անոնց թիւը, որ դարձեալ մեր պետութեան նիհար պիւտճէին մեծ օգնութիւն մըն է»[284]:

Սակայն հեղինակը, գնահատելով հանդերձ Ամերիկոմի «անհուն ծառայութիւնները», նշում է նաև, որ այդ ամենը չի կարող լուծման պատճառ դառնալ այն դեպքում, երբ զգում ենք, որ նրա գործունեությունը ակամա և անուղղակի վնասում է ազգի շահերին:

«Յունաստանի եւ Սիրիոյ մէջ պահած որբերը,- շարունակում է Կարիկյանը,- կը պահէ իրեն համար, իւր ծրագրերուն ու աշխարհաքաղաքացիութեան նպատակներուն համար, անոնցմէ դեռ մէկ հատ Հայաստան չը զրկեց եւ զրկելու ալ բնաւ միտք եւ տրամադրութիւն ցոյց չտուաւ. ընդհակառակը, ամէն տեղ զրկեց եւ զրկելը քաջալերեց, իսկ երբ կարգը Հայաստանին եկաւ, միշտ խուսափողական դտնուեցաւ, միշտ մեզ օրորեց, ժամանակ վատնեցաւ ու մոռցընել տուաւ եւ դեռ կը շարունակէ նոյնը: Մեկ ու կէս տարի առաջ Ազգային Պատուիրակութեան դիմումին պատասխան տրուեցաւ, որ Մր. Վիքրին Հայաստան կերթայ՝ ուսումնասիրէ այդ հարցը, յետոյ փոխադրութիւնը կը կատարէ:

Անցեալ ամառ դնաց-վերադարձաւ, եւ իրմէ յետոյ ես Հայաստան այցելեցի, եւ զարմանքս սահման չունէր, երբ տեսայ, թէ ոչ կառավարութեան, ոչ ալ Մր. Եարօյին հետ այդ մասին բան մը խոսած չէր:

Մինչդեռ Հայաստանի մէջ Նիր Իսթը 4.000 որբի համար բաց տեղ ունէր եւ ծախսը հոն՝նուազ է, քան Յունաստան կամ Սուրիայ: Իմ այս հետաղօտութիւններուս վրայ Մր. Եարօն խանդավառուած ինքնաբերաբար նամակ գրեց Վիքրին՝ ըսելով, որ անմիջապէս 1.500 տղա տեղ ունի, եթե երկու ամիս առաջ իրեն լուր տրուի, 3 մինչեւ 4.000 շունչ կրնայ ընդունիլ:

Ասոնք ամենը անհետեւանք մնացին եւ ոչ միայն այդ, այլ հակառակ, իւր հորդորներով արգելք ալ հանդիսացան ամէն անգամ, որ մեր կողմէ փորձ մը կատարուեցաւ դէպի Հայաստան...

---

[284] Նույն տեղում, p.16:

Նիր Իսթի պաշտօնեաներուն ներելի չէ Հայ պետութեան ու գաղութներու մէջ պատուար մը կանգնելը-փոխանակ կամուրջ նետելու, Հայ պետութիւնը չէզոքացնելը եւ անոր առաջ կանգ առնելու ձգտումները:

...Նիր Իսթը գիտէ, թէ տկար ազգերը դատապարտուած են կորսուելու. մենք, որ արդէն թիւով շատ չէինք, պատերազմի արթիւ կոտորակուեցանք. մեր երեխաները մեզի պէտք էին, զանոնք պահեցին, մեծացուցին, ապայ պէտք էր զանոնք մեզի դարձընէին, հաւաքէին իրենց մեծ գերդաստանին շուրջը, որուն մենք ալ յաւետ երախտապարտ պիտի մնայինք:

Բայց ինչպե՞ս բացատրել, որ այդ տղաքը 7 տարի կը կարողանան պահել, ամէն մէկուն 700 դոլար ծախսել, եւ ոչ մէկուն ճամբու ծախս մը կը կարողանան գտնել զանոնք Հայաստան ուղարկելու:

Ի՞նչ երախտապարտութիւն կարելի է սպասել, երբ հաւաքելու տեղ մեր ընտանիքը կը ցրուէ, այլասերումը կը քաջալերէ եւ իւր կերակրածները մեզնից կառնէ, ինքը կը սեփականացընէ եւ կը խառնէ իւր դաւանած համաշխարհային ազգութեան:

Ահա հոս է, որ արեւմուտքցիէն կը բաժնուինք, որ չարն ու բարին իրարէ զատել չըգիտնար եւ միմիայն երախտապարտ մնալ կը սորվեցնէ մեզի եւ կը կարծէ, թէ այդպէս Նիր Իսթը կամ Ամերիկեան ազգը կը յարգէ մեզ»[285]:

Հոդվածագրի անաչառությանը կասկածելու հիմքեր չունենք, քանի որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի կենտրոնական գրասենյակի և նրա տարածաշրջանների ղեկավարների ու Հայ ազգային պատվիրակության երկու տարվա անընդմեջ բանակցությունները, այս առիթով ստեղծված հարյուրավոր վավերագրերը հավաստում են վերը ասվածը:

Ահա այսպիսի ծանր պայմաններում Հայ ազգային պատվիրակությունը մինչև իր լուծարվելը (մայիս, 1924 թ.) արտասահմանում ապաստանած և ստվարածավալ գաղթօջախներ ստեղծած տարագիր հայերի համար փաստորեն փորձում էր կատարել այն նույն դերը, ինչ ստանձնել էին Առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի կառավարությունները, փորձում էր Ամերկոմի և մարդասիրական այլ կազմակերպու-

[285] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 235, թթ.16, 17:

թյունների հետ տարվող պարբերական և հետևողական բանակցությունների միջոցով հայրենիք տեղափոխել հնարավորինս մեծ թվով գաղթականներ ու որբեր, քանի որ իրադրությունն իսկապես խիստ անբարենպաստ էր հայերի համար, իսկ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի գործունեությունը այս տարածաշրջանում, հեռու լինելով Հայաստանի կառավարության տեսադաշտից և հաճախակի միջամտություններ կատարելու հնարավորությունից, մեղմ ասած, հեռու էր դոհացուցիչ լինելուց:

ԳԼՈՒԽ ՔՈՐՐՈՐԴ

ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հաշված օրեր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 13-ին, Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին տեղեկացնում են, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի բոլոր պաշտոնյաները շտապ ետ են կանչվել Երևանից, և Նպաստամատույցը Հայաստանում իր ներկայացուցչի լիազորությունները ժամանակավորապես տվել է բժիշկ Աշերին:

Դեկտեմբերի 14-ին Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադյանը հրահանգում են ՀՍԽՀ քաղաքացիական և զինվորական իշխանություններին՝ Ամերկոմի գործունեությանն ամեն կերպ աջակցելու կոչով.

«Ընդունելով Մերձաւոր Արեւելքի Օգնութեան Կոմիտէի գործունեութիւնը գաղթականական, որբական եւ ընդհանրապէս խնամատարական գործում օգտակար եւ անհրաժեշտ Խորհրդային Հայաստանում, ՀՍԽՀ Հեղկոմը նրա գործունեութեան շարունակութիւնը եւ ընդարձակումը համարելով անպայման ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցութիւնը եւ հավաստիացնում է բռնագրաւումների դէմ:

Ուստի առաջարկում է ՀԽՍՀ բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանութիւններին ցոյց տալ նոյն Կոմիտէի վարիչներին հարկ եղած աջակցութիւնը իրենց գործունեութեան ընթացքում»[286]*:*

Կասյանի կարգադրությամբ Ալեքսանդրապոլի դավառի Հեղկոմի նախագահ Մաթևոս Տեր-Գրիգորյանը լիազորվում է բանակցելու Ամերկոմի ներկայացուցիչների հետ՝ կարգավորելու Խորհրդային Հայաստանի տարածքում կոմիտեի գործունեության հետագա ընթացքը[287]*:*

---

[286] ՀԱԱ, ֆ.114, ց.1, գ. 22, թ. 2:
[287] Նույն տեղում, թ. 6:

Դեկտեմբերի 17-ին բժիշկ Աշերը (Clarence Ussher) շնորհակալական նամակ է ուղարկում Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որի մեջ, ընդգծելով իրենց գործունեության մարդասիրական նպատակները, մասնավորապես նշում է, որ հեղափոխությունը և երկրի իշխանությունների փոփոխությունը չպիտի անդրադառնան Ամերիկայի և Ռուսաստանի բարեկամական հարաբերությունների վրա, և քանի որ Հայաստանը Ռուսաստանի քույր հանրապետություն է, ուստի նաև՝ Ամերիկա-Հայաստան հարաբերությունների վրա: Աշերն առաջարկում է, որ ցանկալի կլիներ Հայաստանի և Ամերիկայի կառավարությունների միջև կնքված տեսնել պաշտոնական համաձայնագրեր, դրանց տալ լայն հրապարակայնություն, որից, անկասկած, կշահեին երկու երկրներն էլ[288]:

Մի քանի օր անց Աշերը նամակ է հղում նաև Ամերկոմի աշխատակիցներ Մոշերին և Ռանդոլֆին՝ ներկայացնելով իր նկատառումները Հայաստանում Ամերկոմի հետագա գործունեության մասին:

«Հայաստանը իզոլացիայի է ենթարկվել,-գրում է Աշերը,- Ղարսը և Ալեքսանդրապոլը թուրքերի ձեռքում են:

Եարլոն և Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտէի պաշտոնեաները Ղարս են գտնուում և յետ են հրաւիրուել Երեւանի կառավարութեան կողմից, որը իր կրցածը անում է՝ ապահովեցնելու ամերիկացիներին և մեզ հետ վերաբերուում է շատ սիրով:

Նրանք դրաւոր երաշխիք տուին, որ Ամերիկեան նպաստամատույց կոմիտէի ստացուածքը անձեռնմխելի մնալու է և առաջարկեցին հարկ եղած ամեն տեսակ օգնութիւն...

Նոր կառավարութիւնը եղել է շատ չափաւոր և շատ տարբեր նրանից, որ մենք ակնկալում էինք Ռուսաստանի պատմութիւնից: Եթե նրանք շարունակեն այնպես, ինչպես նրանք սկսել են, երկիրը շուտով աւելի պիտի գոհ մնայ նրանցից...»[289]:

1921 թ. հունվարի 5-ին Աշերը նամակ է ուղարկում նաև Նյու Յորք՝ Ամերկոմի կենտրոնական գրասենյակ՝ նշելով, որ նոր կառավարության հետ իրենց հարաբերությունները լավ են, և

---

[288] ՀԱԱ, ֆ. 114, ց.1, գ. 22, թ.11:
[289] Նույն տեղում, թ. 8:

խիստ անհրաժեշտ է, որ Ամերիկոմը բանակցի Հայաստանի կառավարության հետ, քանի որ «...հազարաւոր նոր գաղթականների, որբերի, իրենց ծնողից բաժանուած սոված մանուկների դրութիւնը սոսկալի է. գաղթականները արագութեամբ ընկնում են անցեալ ձմեռուայ դրութեան մէջ: Օգնութեան և որբանոցների շարունակումը Երեւանում, Ալեքսանդրապոլում և Ղարաքիլիսայում անհրաժեշտ է»[290].

1921 թ. հունիսի սկզբներով որբերի թիվը հասնում էր մինչև 25000-ի և հիմնականում կենտրոնացված էին Ալեքսանդրապոլում (Գյումրի), որը անվանում էին «որբերի քաղաք»[291].

Նաև նմանատիպ առաքելությամբ Թիֆլիս է մեկնում Վարազդատ Տերոյանը, որը ՀՍՍՀ կառավարության կողմից լիազորվում է բանակցելու Ամերիկոմի ղեկավարության հետ՝ օգնությունը շարունակելու հարցում: Տերոյանն արդեն պաշտոնավարում էր Ամերիկոմի գաղթականական բաժնում, իսկ 1922 թվականին ստանձնեց Ամերիկոմի դպրոցների վարիչի պաշտոնը[292].

ՀՍՍՀ լուսավորության ժողկոմատին ներկայացրած զեկուցագրում Ամերիկոմի կրթական բաժնի լիազորը տեղեկացնում է, որ 1920 թ. դեկտեմբերի վերջին Ամերիկոմի խնամքի տակ դեռևս գտնվում են 18500 որբեր (Ալեքսանդրապոլում՝ 9000, Կարսում՝ 7000 և Երևանում՝ 2500), որոնց խնամքը կշարունակվի մինչև մի որոշ ժամանակ, քանի դեռ երկու երկրները վերջնական համաձայնության չեն եկել կոմիտեի հետագա գործունեության հարցում[293]:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո Ամերիկայի կառավարությունը, բնականաբար, ավելի զգուշավոր էր սարածաշրջանում իր դերակատարման մեջ, քանի որ փոխվել էին մինչ այդ գոյություն ունեցող պատմական ու քաղաքական պայմանները: Ընդ որում, այդ զգուշավոր քաղաքականությունը որդեգրել էր նաև Խորհրդային Հայաստանը, քանի որ զգում էր, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ ժո-

---

[290] Նույն տեղում, ֆ. 114, ց.1, գ. 22, թ.13:
[291] Peterson M., "Starving Armenians": America and the Armenian Genocide,1915-1930 and after, 2004, page 112.
[292] ՀԱԱ, ֆ. 114, ց.1, գ. 22, թ.56, տե՛ս Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., 2006, էջ 356-357:
[293] ՀԱԱ, ֆ.122, ց.1, գ. 328, թ.15:

ղովրդի և երկրի համար որքերին ամերիկացիների բարոյահոգեբանական և կենցաղային դաստիարակության ոլորտում երկար ժամանակ թողնելը: Սակայն մի բան նաև անուրանալի ճշմարտություն էր, որ նորաստեղծ լոլշևիկյան իշխանությունը ոչ մի հնարավորություն չուներ կերակրելու ո՛չ գաղթականների, ո՛չ որբերի տասնյակ հազարների հասնող բանակը, որ համալրվում էր անասելի արագությամբ և բազմապատկվում օրեցօր, ուստի միակ ճիշտ քայլը, որ այդ պահին կատարեց կառավարությունը, Ամերիկոմի գործունեությունը երկարաձգելու ուղղությամբ ընդունած որոշումն էր, մինչև որ ինքը կկարողանար հոգալ իր բնակչության կենսապահովումը:

Սակայն կառավարությունը շատ լավ հասկանում էր նաև, որ հարցը կարգավորելու համար ինքը պիտի դնա բազմաթիվ զիջումների, երբեմն ուղղակի աչք փակի որոշ խնդիրների վրա: Բնական է, որ Ամերիկոմը ևս իր շահերն ուներ համագործակցությունը երկարաձգելու հարցում, քանի որ ամերիկյան ժողովրդի հանգանակած դրամական միջոցները, մեղմ ասած, ամբողջովին չէին ծառայում իրենց բուն նպատակին:

Ինչևէ, 1921 թ. մայիսի 7-ին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի և արտաքին գործերի ժողկոմ Ա. Մռավյանի ստորագրությամբ հատուկ գրությունը ներքին գործերի ժողովրդական կոմիսարին տեղեկացնում է կառավարության որդեգրած քաղաքականության մասին և պահանջում, որ երկրի տարածքում խիստ հսկողություն սահմանվի այն իրականացնելու համար:

«Հայաստանի Հեղկոմը,- ասվում է գրության մեջ,- լավ գիտակցելով Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի գործունեության նպատակներն ու խնդիրները, հավաստում է, որ պատրաստ է ցանկացած միջոցներով աջակցելու կոմիտեին բացելու որբանոցներ անտուն և որբ երեխաների համար, օգնելու բնակչությանը սննդամթերքով, դեղորայքով, հագուստեղենով և այլն:

Այս նպատակով ՀՍԽՀ կառավարությունը հանձն է առել.

1. Ապահովել Ամերիկոմի պաշտոնյաների ազատ ելքն ու մուտքը Հայաստանի տարածք:

2.Կոմիտեի իրավասությանը հանձնել բնակչությանը ոչ միայն մթերք բաշխելու, այլև բաշխման կարգը վերահսկելու գործը:

3.Կոմիտեի հասցեով եկող ողջ բեռը ազատել ամեն կարգի մաքսային տուրքերից, ինչպես նաև երկաթուղային բեռնափոխադրման բոլոր ծախսերից, որոնք կարող են խոչընդոտել կոմիտեի արդյունավետ գործունեությունը:

4.Կոմիտեի ողջ ունեցվածքը հայտարարել ազատ և ցանկացած հաշվառումից դուրս:

5.Կոմիտեի համար ապահովել նաև բեռնափոխադրումը դեպի Վրաստան և Ադրբեջան:

6.Կոմիտեին թույլատրել Հայաստանի տարածքում մթերել և երկրի սահմաններից արտահանել անտառանյութ՝ իր կարիքների համար:

7.Կոմիտեի համար ապահովել իր ներքին կարգուկանոնին կառավարության չմիջամտելու քաղաքականությունն:

8.Երաշխավորել, որ կոմիտեին ներկայացվող ցանկացած պահանջ ու առաջարկ կարվի միայն երկրի արտգործնախարարության միջոցով»[294]:

1921 թ. հունիսի 14-ից բժիշկ Աշերը ազատվում է Ամերկոմի լիազորի պաշտոնից, ժամանակավոր ներկայացուցիչ է նշանակվում Դորոթի Սամբոնը[295]:

Ամերկոմի և Խորհրդային Հայաստանի համագործակցությունն աստիճանաբար կանոնավորվում է, որի մասին վկայում է հոկտեմբերի 11-ին Յարրոյի՝ Ալեքսանդր Մյասնիկյանին ուղարկած նամակը:

Յարրոն հայտնում է, որ Ամերկոմի Նյույորքյան կենտրոնական գրասենյակից առաջադրանք է ստացել տեղեկացնելու Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որ վերջինս իրեն ներկայացնի Հայաստանում ապրող կարիքավորների թվի, նրանց ապահովելու համար պահանջվող պարենի քանակի, 1922 թ. գարնանացանը կազմակերպելու համար պահանջվող սերմացուի նախահաշիվ: Յարրոն խնդրում է նախահաշիվը կազմել որքան հնարավոր է հիմնավորված, չափավոր և արագ, որպեսզի ինքը վավե-

---

[294] ՀԱԱ, ֆ.116, ց. 3, գ.14, թ. 25:
[295] Նույն տեղում, ֆ.114, ց.1, գ. 22, թ. 132:

բացնի այն և ուղարկի Նյու Յորք՝ միաժամանակ զգուշացնելով, որ կառավարությունը սա մթերք տրամադրելու վերջնական խոստում չհամարի:

«Թէեւ Մերձավոր Արևելքի նպաստամատույցը գործադրելու է իր բոլոր ջանքերը, որպէսզի այդ մթերքն ստացուի, սակայն կարող է պատահել, որ այս բոլորն ի դերեւ ելնի: Կարծում եմ, որ նպատակահարմար չէր լինի այս մասին մամուլում յայտարարելը, որովհետեւ ձեռնարկի ձախողութեան դէպքում ժողովուրդը կարող է աւելի յուսախաբուած լինել, քան եթէ այդ մասին նա բան չիմանար:

Անկախ վերոյիշեալից, կարող եմ աւելացնել,- շարունակում է իր նամակում Յարրոն,- որ ես արդէն զօրեղ կոչ եմ արել Ամերիկայում առաջիկայ ձմռանը Հայաստանի խիստ կարիքաւորների հոգածութեան համար, բայց ցարդ ոչ մի պատասխան չեմ ստացել»[296]:

1921-1922 թթ. ձմռան ծանր ու դաժան ամիսները Խորհրդային Հայաստանն անցկացրեց առանց լուրջ ցնցումների: Դրանում վճռական դեր խաղաց ինչպես Խորհրդային Ռուսաստանի, այնպես էլ Ամերիկայի կառավարության ու ժողովրդի օգնությունը: Հայաստանի կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներն այս առիթով իրենց երախտագիտության խոսքն ուղղեցին և՛ Ամերիկոմի առանձին աշխատակիցներին, և՛ երկրին ու նրա ղեկավարին:

1922 թ. փետրվարի 11-ին Ալեքսանդրապոլի գավգործկոմի նախագահի՝ Ցրեդ Մարջրումին ուղղված նամակում կարդում ենք. «Թոյլ տուէք Ալեքսանդրապոլի Գործադիր կոմիտէի կողմից, յանձին Ձեզ, իմ շնորհակալութիւնը յայտնել Ամերիկեան ժողովրդին, որի ջանքերի եւ օգնութեան շնորհիւ տուի ճիրաններից ազատուեցին բազմահազար որբուկներ, գաղթականներ եւ տեղացիներ Ալեքսանդրապոլի գաւառում:

Ալեքսանդրապոլի Գործկոմը առանձնապէս գոհունակութեամբ է շեշտում Ձեր, միսսը Մարջրում, սէրն ու աշխատանքը դէպի փոքրիկ որբուկները, երեխաները, որոնց համար կարողացաք անհնարին պայմաններում ստեղծել տանելի դրութիւն:

---

[296] Նույն տեղում, ֆ. 113, ց. 38, գ. 10, թ. 40:

Արձանագրելով այդ փաստը՝ համոզված ենք, որ Դուք կը շարունակէք բարի եւ անձնազոհ գործը նոյնպիսի եռանդով, նոյնպիսի սիրով: Ձեր ունեցած եռանդով ու սիրով Դուք շատ բան եք անում որբուկներին, որոնք անպայմանօրեն Ձեզ չեն մոռանայ»[297]:

Խորհրդային Համահայաստանյան երկրորդ համագումարը նույնպես շնորհակալություն հայտնեց Ամերիկային՝ որբերի և գաղթականների ծանր վիճակի թեթևացման գործում և կառավարությանը ցույց տված օգնության համար[298]:

1922 թ. մայիսի 10-ին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը բաց նամակ ուղղեց Ամերիկայի նախագահ Ուորրեն Հարդինգին.

«Մեծարգո պարոն Հարդինգ,

Ձեզ՝ իբրև ամերիկյան ժողովրդի ներկայացուցչի, ես հայտնում եմ շնորհակալություն ինչպես իմ, այնպես էլ իմ ժողովրդի անունից բոլոր այն զոհողությունների համար, որ կատարեց Ամերիկան Հայաստանի համար: Տասնյակ հազարավոր հայեր այսօր իրենց կյանքով պարտական են վերջին մի քանի տարիներին Ամերիկայից ստացված օգնությանը: Այս բանը մենք երբեք չենք մոռանա:

Երեսուն հազար հայ որբուկներ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի ջանքերով դարձան ամերիկացիների սաներ: Այդ երեսուն հազար որբերը այժմ էլ ապրում և դաստիարակվում են այն միջոցներով, որոնք մշտապես տրամադրում են ամերիկացիները:

Ինձ հայտնում են, որ վերջին ժամանակներս նկատվում է որբերի համար կատարվող հանգանակության զգալի նվազում, և որբանոցների կառավարիչները նույնիսկ ստիպված են եղել կրճատել երեխաներին տրվող օրապահիկի չափը՝ սննդամթերք տնտեսելու նպատակով:

Եթե ինչ-որ բան հնարավոր է Ձեր կողմից, պարոն նախագահ, կամ իմ կողմից, որպեսզի ամերիկյան հասարակության հետաքրքրությունը չարժենք դեպի այդ որբուկները, կարծում եմ, որ մենք պարտավոր ենք այդ անել: Քանի որ այդ երեխաների

---

[297] ՀԱԱ, ֆ. 138, ց. 1, գ. 14, թ. 18:
[298] «Նորք», Երևան, 1922, N1, էջ 129:

բարվոք վիճակից և նրանց դաստիարակությունից է կախված Հայաստանի Հանրապետության ողջ ապագան:

Մեր երկիրը դեռ շատ աղքատ է: Բայց մենք հուսով ենք, որ հունիս-հուլիս ամիսներին սպասվող բերքը կտրուկ փոփոխություն կմտցնի պայմանները բարվոքելու հարցում: Մենք մեծ ցանկություն և ձգտում ունենք հասնելու մեր պլանների իրագործմանը: Մեր ժողովուրդը չի վախենում ծանր աշխատանքից: Եթե տևական ջանքերն ու համառությունը հաջողություն բերեն, Հայաստանը կապրի և ուժ կհավաքի:

Ես գիտեմ, սրը, որ Դուք մեզ հետ եք հոգով և սրտով: Ես գիտեմ, որ Ձեր ժողովուրդը մեզ բարիք է կամենում: Մենք կաշխատենք արժանի լինել Ձեր օգնությանն ու լավ վերաբերմունքին՝ անելով հնարավոր ամեն ինչ: Երեսուն հազար որբերը, որոնց ամերիկացիները ապաստան տվին, մեր երկու երկրների միջև բարեկամական ամուր կապերի մշտական գրավականը կլինեն:

Ձեզ հարգող

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ»[299]*:*

Անդրադառնալով Ամերկոմի կողմից Խորհրդային Հայաստանին տրամադրված օգնությանը, պետք է փաստենք, որ Ամերկոմի Կովկասյան բաժանմունքի 1922 թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ Ամերկոմը Հայաստան է ներմուծել 24 հազար 974 փութ բրինձ, 140 հազար 55 փութ ձավարեղեն, 21857 փութ լորի, 6418 փութ հացահատիկ, 1402 տուփ կաթ, 7 փութ կակաո, 4 փութ շաքար, 84 փութ յուղ և այլ մթերքներ[300]*: Այս տվյալները ևս վկայում են այն մասին, որ Ամերկոմի օգնությունը եղել է էական և որոշ չափով մեղմել է բնակչության սոցիալական դրությունը:*

Այսպես՝ 1921 թ. մայիսի դրությամբ Ամերկոմի տրամադրության տակ եղած որբանոցներում կային շուրջ 20000 որբեր, իսկ մինչև 1923 թ. դեռևս առկա դժվարությունների պատճառով այդ թիվը աճել էր և հասել 22615-ի[301]*:*

---

[299] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 24, թ. 8:

[300] Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, 2007, էջ 219:

[301] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 2 փետրվարի, 1924թ., N 27:

Հուլիսի 29-ին Հայաստանի Կենտգործկոմի անունից շնորհակալական նամակ ստացավ նաև Չարլզ Վիքրին, որը հուլիսի 25-ին դիմել էր Հայաստանի կառավարությանը և առաջարկել, որ հետագա համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է երկու երկրների միջև կնքել պաշտոնական համաձայնագիր, որը կվերացնի բարեգործական օգնության ճանապարհին ծագող անցանկալի խոչընդոտները[302]:

Կենտգործկոմի նախագահը Չարլզ Վիքրիին ուղղած նամակում մասնավորապես նշելով, որ Հայաստանի կառավարությունը լուրջ ճիգեր է անում երկրի ավերված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ և հույս ունի, որ վերջապես կկարողանա ժողովրդի համար տանելի պայմաններ ստեղծել, այնուամենայնիվ ավելացնում է, որ երիտասարդ հանրապետությունը դեռ օգնության կարիք է զգում, և հայ ժողովուրդը համոզված է, որ ամերիկյան բարեգործությունը կշարունակվի նաև ապագայում:

«Թույլ տվեք սույն նամակով խորը շնորհակալություն հայտնելու հանձինս Ձեզ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեին եվ ամերիկյան ժողովրդին մարդասիրական այն բարձր օգնության համար,- շարունակում է հեղինակը,- վոր ցուցադրվում ե Ձեր կոմիտեի եվ ժողովրդի կողմից Խորհրդային Հայաստանի որբերին եվ կարոտյալներին:

Մարդասիրական այդ օգնությունն անցյալ տարիներում սովի եվ հիվանդությունների ճիրաններից փրկել եվ կյանքի է կանչել տասնյակ հազարավոր որբերի եվ կարոտյալների, որոնք անմեղ զոհեր են համաշխարհային պատերազմի: Ձեր կոմիտեի օգնությունն առանձնապես զգալի էր այս տարվա ընթացքում, երբ յերաշտի պատճառով Հայաստանի դյուղացիության մի խոշոր մասը մատնված էր սովի սարսափներին: Մերձավոր Արեվելքի Կոմիտեի ժամանակին հասցրած առատ օգնությունը պարենային մթերքներով փրկեց մեր դյուղացիության սովյալ մասը անխուսափելի մահից»[303]:

Այս գրագրությանն անմիջապես հետևում է նաև Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի և Հայաստանի կառա-

---

[302] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 7, թթ. 26, 27:
[303] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 7, թթ. 29, 30:

վարության միջև կնքված օգոստոսի 7-ի համաձայնագիրը, որը 23 կետից բաղկացած ծավալուն փաստաթուղթ է և համապարփակ ընդգրկումով ներկայացնում է փոխադարձ համագործակցության բոլոր մանրամասները[304]:

Համաձայնագրի առաջին կետերում նշվում է, որ Նպաստամատույցը բարեգործական հաստատություն է, քաղաքական և անձնական կամ նյութական շահ չի հետապնդում, որ նրա դրամական միջոցները կուտակվում են կամավոր հանդանակությունների հաշվին, որի նպատակն է «նպաստ հայթայթել և աջակցել հայրենադարձությանը, օգնել որբերին և կարոտյալ ժողովրդին, նպաստել երկրի տնտեսական և աշխատանքային բարօրությանը»:

Այնուհետև արձանագրվել է, որ Նպաստամատույցը համաձայն է իր միջոցներով առավելագույն չափով շարունակելու նպաստի այս ծառայությունը, օգնելու Խորհրդային Հայաստանի տարածքի բարգավաճմանն ու տնտեսական առաջադիմությանը:

Հայաստանի կառավարությունն էլ իր կողմից պարտավորվել է հնարավորինս աջակցել Նպաստամատույց կոմիտեին և նրան տրամադրել շենքեր ու տարածքներ, թույլ չտալ, որ նրա աշխատանքներին խառնվեն և միջամտեն տեղական կառավարման մարմինների աշխատակիցները, կոմիտեին պատկանող նպաստի բոլոր պաշարները և տեղական արտադրությունն ու տարքավորումներն ազատել որևէ կարգի տուրքերից կամ հարկերից: Կառավարությունը համաձայնել է նաև հոդալ Ամերիկոմի ջրի, էլեկտրաէներգիայի, հաղորդակցության և կապի, ինչպես նաև Բաթումի նավահանգստից բեռնատեղափոխման բոլոր ծախսերը:

Հետաքրքիր են հատկապես համաձայնագրի 17-րդ և 18-րդ կետերը.

«...17. Կառավարությունը ժողովրդին կծանոթացնի Ամերիկոմի գործելաոճին և նպատակներին, որպեսզի երկկողմ վստահության և համագործակցության երաշխիքներ քաջալերի՝ նպաստի գործունեության առավելագույն արդյունավետությունը ապահովելու համար:

---

[304] Նույն տեղում, g. 30, գ. 14, բբ. 8, 14:

18. Կառավարությունը Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի ամերիկացի պաշտոնյաներին տալիս է Անդրկովկասի տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակվելու իրավունք, նրանց ազատում է խուզարկումներից, ձերբակալումից և արգելափակումից:

Ամերկոմը իր կողմից պարտավորվում է կառավարության պահանջով ազատել աշխատանքից և անհրաժեշտության դեպքում երկրից արտաքսել այն աշխատակիցներին, որոնք կարգազանց կլինեն և կմիջամտեն երկրի քաղաքական կյանքին, կոտնահարեն հանրապետության օրենքները»[305]:

Համաձայնագիրը կազմվել է անգլերեն և ռուսերեն լեզուներով: Ռուսերեն բնագիրը ուղարկվել է Ռուսաստանի արտգործնախարարություն: Օգոստոսի 30-ին Անդրֆեդերացիայի Միությունների խորհուրդը չեղյալ է համարել այս համաձայնագիրը արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետությունը առանց Միությունների խորհրդի հետ հարցը քննարկելու իրավունք չունի որևէ արտասահմանյան կազմակերպության հետ պայմանագիր կնքելու[306]:

Հոկտեմբեր ամսին արտասահմանյան բարեգործական ընկերություններում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լանդեը կազմել է հուշաթերթ, որում մանրամասն շարադրված է խորհրդային կառավարության դիրքորոշումը մարդասիրական օգնության ձևերի և մեթոդների մասին[307]:

Սրան հետևել է Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի կազմած հուշաթերթը[308], որից հետո նոյեմբերի 1-ին 1 տարի ժամկետով կնքվել է համաձայնագիր[309] Ռուսաստանի և Ամերկոմի միջև, որը համարյա ոչնչով չի տարբերվում չեղյալ համարված համաձայնագրից, ուղղակի ստորագրող կողմերից մեկն արդեն Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունն է, իսկ համաձայնագիրն էլ հանձնարարելի փաստաթուղթ է դարձել նաև Անդրկովկասի հանրապետությունների համար:

---

[305] ՀԱԱ, ֆ. 113, ց. 30, գ.14, թ.12:
[306] Նույն տեղում, ֆ. 113, ց. 38, գ. 24, թ.16:
[307] ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 27, թթ. 203, 211:
[308] Նույն տեղում, թթ. 196, 200:
[309] Նույն տեղում, թթ.187, 193:

Ամերիկոմի գործունեության ծավալուն ոլորտը շարունակում են մնալ որբերի խնամքն ու կրթությունը. այստեղ աշխատանքային և՛ երկարամյա փորձ կար, և՛ պայմաններ ու հնարավորություններ, և՛ կառավարության հետ մշակված համատեղ ծրագրեր:

Համաձայն Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տեղեկագրերի՝ 1923 թ. հունվարի տվյալներով Ամերիկոմի խնամքի տակ գտնվող որբանոցներում կենտրոնացված էին 1-17 տարեկան հասակի 21836 որբեր, որոնցից 20367-ը մասնակցում էին որբանոցներին կից գործող դպրոցների ուսումնական պարապմունքներին:

Կառավարությունը Ամերիկոմի որբախնամ գործունեությունը գնահատում և ընդունում էր, սակայն արդեն իսկ Սիլյուռքի և տեղի պարբերական մամուլում տպագրվող հոդվածները, որոնցում քննադատական խոսք էր հնչում Ամերիկոմի գործունեության մասին, որոշ զգուշավոր վերաբերմունք էին ձևավորել նաև կառավարող շրջաններում, և թերևս սա էր պատճառը, որ Ամերիկոմի հետ 1922 թ. նոյեմբերին կնքված պայմանագիրը դարձյալ վերանայվեց 1923 թ. հունվարի 24-ին[310], ապա՝ փետրվարի 10-ին[311]:

---

[310] ՀԱԱ, ֆ. 122, g.1, գ.112, թթ.14, 18:
[311] Նույն տեղում, ֆ. 430, g.1, գ.1280, թթ.1, 6:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ ԳՏՆՎԱԾ ՄԱՆԿԱՏՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ[312]

Հունվար 1923թ.

ՀՀ	Քաղաքների ու այլ վայրերի անուններ	Դասատուն. թիվը	Աշակերտների թիվը			Աշակերտության թիվը ըստ խմբերի										
			Ընդամ.	Տղա	Աղջիկ	Սամամասա.	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Սեմինար	Հաշվապահ.	Թարգման.	Գյուղատն.
1	Ալեքսանդրապոլ քաղաք	39	2397	1059	1338	169	1532	470	177	25	24	-	-	-	-	-
2	Ալեքսանդրապոլ գավառ. Կազաչի պոստ	98	4544	289	4255	322	2159	968	455	319	173	65	83	-	-	-
3	Ալեքսանդրապոլ գավառ. Պոլիգոն	91	4814	4743	71	526	1760	1193	742	306	123	61	46	28	29	-
4	Ալեքսանդրապոլ գավառ. Սեվերսկի կազ.	72	2431	279	2152	166	1570	336	232	87	40	-	-	-	-	-
5	Ջալալօղլի	59	2434	1081	1353	348	916	403	332	226	123	60	10	-	-	16
6	Դարա չիչագ	5	188	186	2	-	88	51	30	19	-	-	-	-	-	-
7	Յերևան	103	3559	1864	1695	197	1458	740	421	404	201	76	62	-	-	-
		467	20367	9501	10866	1728	9483	4161	2389	1386	684	262	201	28	29	16
	% %		100	46,6	53,4		ա.	Ամ	տի	ճա	ն	բ.աստ				
									18,103					2,74		
							51,5	23,2	13	7,5	3,5	1,3				
		18,365														

[312] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922-1923 թթ. հաշվետվություն, 1925, էջ 347:

Մինչ այդ, Խորհրդային Հայաստանի իշխանությունները սկսել էին հետևել Հայաստանում գտնվող զանազան մարդասիրական կազմակերպությունների գործունեությանը և դրանց մի մասի աշխատանքը հանրապետության տարածքում կասեցրել:

Փետրվարի 7-ին Հայաստանի լուսժողկոմ Ա. Մռավյանը Ս. Լուկաշինին ուղղած գրության մեջ առաջարկում է դադարեցնել նաև ամերիկյան «Բորդ» ընկերության գործունեությունը՝ տալով իր առաջարկի մանրամասն հիմնավորումը.

«Բորդ ընկերությունն ունի միսիոներական ֆունկցիաներ յեվ վաղուց աշխատում է Հայաստանում: Անցած տարի մեր վերաբերմունքը դեպի Բորդը պաշտոնապես ժխտողական չեր, նկատի առնելով այն հանգամանքը, որ Բորդի ղեկավարները կապ ունեն Ամերիկոմի հետ յեվ վախենում եյինք, որ նրանք կարող են ազդել Ամերկոմի աշխատանքի վրա անցած տարվա սովի ժամանակ: Մյուս կողմից համեմատած անցած տարվա հետ, այժմ Բորդը կրոնական լայն ագիտացիա յե վարում, յեվ Յերեվանում ու Եջմիածնի գավառում մտքերի մեջ շփոթություն և առաջացրել: Այս տեղեկությունները ստացվել են Չեկայից: Մոտ մի ամիս առաջ Բորդի ղեկավարին հայտնեցի, որ նրանք պետք և դադարեցնեն իրենց գործունեությունը, քանի որ Խորհրդային Հայաստանում սահմանադրությամբ իրավունք չե տրված ոտարերկրյա միսիոներական կազմակերպություններին ազատորեն աշխատելու յեվ քրիստոնեական պրոպագանդ մղելու: Այսպես դնելով խնդիրը, առաջարկվեց մի քանի շաբաթվա ընթացքում լիկվիդացիայի յենթարկել Բորդը յեվ դպրոցը հանձնել Լուսժողկոմատին: Մեր տեղեկությունների համաձայն դպրոցը նրանք փակել յեն հունվարի 15-ից յեվ ցանկանում եյին այն տալ Ամերկոմին: Այդ բանին մենք դեմ եյինք յեվ այդպես ել պատասխանեցինք Ամերկոմին, քանի որ դպրոցը հաճախորդ յերեխաների համար և: Կարծում եմ, որ Բորդ միսիոներական ընկերության լիկվիդացիայի խնդիրը պիտի լուծել այնպես, ինչ մտքով բանակցություններ են վարվել նրանց հետ վերջին ամսի ընթացքում»[313]:

1923 թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Հայաստանի կառավարության և Ամերկոմի միջև կնքված նոր

[313] ՀԱԱ, ֆ. 113, g. 38, գ. 30, թ.197:

պայմանագրում փորձ է արվել շատ ավելի խիստ և հնարավորինս ճշգրիտ ձևակերպումներ գտնել նախկին համաձայնագրերի որոշակի հարցերի շուրջ:

Ամենակարևորն այն էր, որ այդ համաձայնագրով որբանոցների երեխաների կրթության և դաստիարակության գործը լիովին ենթարկվում էր խորհրդային օրգանների հսկողությանը[314]:

Համաձայնագրի 4-րդ կետը ձևակերպվել է այսպես. «Մերձավոր Արևելքի Ամերիկեան Նպաստամատոյց Մարմնի գործունէութիւնը խստօրէն պետք է սահմանափակուի օգնութեան գործով եւ ոչ մի դէպքում չի կարող քաղաքական, առեւտրական եւ կրօնական քարոզչութեան բնոյթ կրել: Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյցի Մարմինը պարտաւորւում է ԱՍՖԽՀ կառավարութեան պահանջով հեռացնել ծառայութիւնից եւ երբ հարկը պահանջէ Անդրկովկասեան Դաշնակցութեան սահմաններից դուրս վանել այն օտար պաշտօնեային, որ խախտում է այս յօդուածի տրամադրութիւնը եւ հանրապետութեան օրէնքները»[315]:

Համաձայնագրում քննարկվում էր նաև երեխաների կրթության, ներմուծվող ապրանքների մաքսային գնման և այլ հարցեր:

Հետաքրքիր է հատկապես պայմանագրի 14-րդ կետը, որով ամրագրվել է Ամերկոմի արտասահմանի հետ թղթակցություն ունենալու կարգը.

«Փոստի պարկերը քննւում են Թիֆլիսում ներկայացուցչութեան գրասենյակում եւ կնքւում են ներկայացուցչութեան եւ Ամերիկեան Մարմնի կնիքներով, ներկայացուցչի ձեռքով կամ նրանից լիազօրուած անձի միջոցով, որից յետոյ թղթակցութիւնը ուղարկւում է Պաթում եւ առանց արգելքի յանձնւում շոգենաւին: Այս կերպով կնքուած փոստային պարկերը ճանապարհի տեւողութեան ընթացքին անձեռնմխելի են եւ շոգենաւի վրայ երկրորդ անգամ քննութեան չպիտի ենթարկուին:

---

[314] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, 1975, էջ 98:
[315] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ.1280, թ. 2:

Ամերիկեան կոմիտէն կերաշխաւորէ, որ ոչ մի մասնաւոր նամակ իր փոստային ծրարներով չպիտի ուղարկէ...»[316]:

Ստացվող փոստի քննությունը կատարելու էր կառավարության ներկայացուցիչը և նոր միայն հանձներ Ամերկոմին:

Փետրվարի 10-ի համաձայնագրով Ամերկոմի ծառայողների վրա տարածվում են նաև սովետական աշխատանքային օրենսդրության հիմունքները: Եթե մինչև 1922 թ. սեպտեմբերը Ամերկոմի 4500 ծառայողներից ոչ մեկը արհմիության անդամ չէր, ապա դրանից հետո նրանք ևս ընդգրկվում են արհմիությունների մեջ, և Ամերկոմի որբանոցներում ստեղծվում են տեղկոմներ, որոնք իրենց հերթին վերահսկում էին երեխաների հետ տարվող աշխատանքները[317]:

Սակայն 1923 թ. մայիս-հունիս ամիսների՝ կառավարության ստացած նամակները, գրություններն ու հրահանգները հաստատում են, որ ինչպես նախկինում, այնպես էլ այդ ժամանակ, պայմանագրի շատ կետեր խախտվել են երկու կողմից էլ:

Այսպես, կառավարությունը բազմիցս ահազանգ է ստացել, որ Ամերկոմի աշխատակիցները հին հագուստի դիմաց ձեռք են բերել և շարունակում են հավաքել հին հայկական ձեռագրեր, մագաղաթյա գրքեր՝ պատճառաբանելով, թե փրկում են դրանք կորստից, մինչդեռ դրանց մասին կառավարությունը ոչինչ չգիտի, և այդ գրքերը այդպես էլ չեն հանձնվում Հայաստանի ձեռագրատներին[318]:

Մի այլ գրություն զգուշացնում է, որ օգնության անվան տակ ամերիկացիները զբաղված են անօրինական առևտրական գործարքներ կնքելով, և քանի որ նրանց ներմուծած ապրանքը ազատված է տուրքից, նրանք հեղեղում են շուկան իրենց անորակ և էժան ապրանքով, որը վնասում է տեղական արտադրությանը[319]:

Ամերիկացիներն էլ իրենց հերթին բողոքում են, որ իրենց հատկացված շենքերը իշխանությունները հաճախ բռնագրավում

---

[316] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ.1280, թ. 3:
[317] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, 1975, էջ 99:
[318] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ.30, թթ. 86, 88:
[319] Նույն տեղում, ֆ.113, ց. 38, գ. 30, թթ. 147, 148:

են, որ իրենց օգնությանն են դիմում անխտիր բոլորը, ովքեր ինչ-որ բանի կամ բուժվելու կարիք ունեն, մինչդեռ իրենք չեն պարտավորվել ողջ երկիրը պահել և այլն[320]:

Ամերկոմի որբանոցների և դպրոցների շատ սաներ սկսել էին մասսայաբար լքել դրանք՝ պատճառաբանելով, որ որբանոցային կյանքի պայմաններն այլևս անտանելի են իրենց համար[321]: Դպրոցականների թիվը, որ տարիներ առաջ հասնում էր 25000-ի, նվազել էր և 1924-25 թթ. հասել մոտ 10000-ի[322]:

Ամերկոմի 1923 թ. գործունեության վերաբերյալ Անդրֆեդերացիայի Ժողկոմխորհի ներկայացուցչի կազմած տեղեկագիրը լույս է սփռում ստեղծված իրադրության վրա՝ մանրամասն ներկայացնելով այդ օգնությունից երկրի շահածն ու կորցրածը: Ըստ տեղեկագրի՝ 1923 թ. ընթացքում Ամերկոմը Հայաստանում պարենով օգնել է 103825 անձի, որբանոցներում պահել 4-ից 17 տարեկան 27362 որբ: Քննարկելով Նպաստամատույցի գործունեությունն ընդհանրապես, հեղինակը մասնավորապես ուշադրություն է հրավիրում մի շարք հարցերի վրա:

Նախ ընդգծում է, որ Ամերկոմի աշխատակիցների մեջ տիրում է երկու մտայնություն. նրանց մի մասը գտնում է, որ աշխատանքը Հայաստանում պետք է շարունակվի, մյուս մասը՝ ընդհակառակը: Վերջիններս գտնում են, որ հիմնական գործունեությունը պետք է ծավալել Պարսկաստանում, Թուրքիայում, Հունաստանում: Արդեն հունվար ամսից Ամերկոմը դգալի կրճատել էր իր գործունեությունը. 1922 թ. անձնակազմի 105 անդամներից 50-ը վերադարձել էին Ամերիկա, կիսով չափ նվազել էր ներկրվող պարենի ծավալը, սրա մի մասն էլ արագորեն սպառվում էր ներքին շուկայում՝ վաճառվելով մասնավոր անձանց:

Մյուս կողմից էլ Ամերկոմը պահում էր տեղացի աշխատողներից կազմված հաստիքների ուռճացած համակարգ, որի համար միայն ստացված օգնությունից 1923 թ. ծախսել է 61000 դոլար: Բացի այդ՝ իր որբանոցներում գտնվող 15-ից 17 տարեկան 7265 տղաներին և աղջիկներին կոմիտեն անվճար աշխատեցնում

---

[320] Նույն տեղում, գ. 33, թթ. 73, 138:
[321] ՀԱԱ, ֆ.122, ց.1, գ.102, թթ. 144, 146:
[322] Տե՛ս «Խորհրդային Հայաստան-1920-1925», Երևան, 1926, էջ 292:

էր իր արհեստանոցներում և ստացած հասույթը տնօրինում իր հայեցողությամբ:

Տեղեկագրի հեղինակը առաջարկում է լուրջ ուշադրություն դարձնել այս ամենին և համապատասխան հետևություններ անել[323]:

3 տարվա խաղաղ կյանքը Խորհրդային Հայաստանին հնարավորություն տվեց մասամբ վերականգնել քայքայված գյուղատնտեսությունը, տեղից տեղ թափառող գաղթականների մի մասին տեղավորել գյուղերում և ստեղծել նոր գյուղական համայնքներ:

1924 թ. գյուղացին արդեն տանելի կենսապայմանների մեջ էր, շատ գաղթականներ սկսել էին որոնել կորցրած երեխաներին, հարազատներին, Ամերկոմի որբանոցներից մարդիկ տուն էին տանում ոչ միայն իրենց, այլև ազգականների, անդամ համագյուղացիների երեխաներին:

Խորհրդային Հայաստանի համար ամենացավոտ հարցերից մեկը մնում էր չափահաս դարձած և դարձող որբերի հետագա ճակատագիրը, նրանց ապագան:

1924 թ. Ամերկոմի որբանոցներում պահվող չափահաս որբերի թիվը հասնում էր 8275-ի, պետական որբանոցներում պահվողներինը՝ 816-ի:

Ո՛չ Ամերկոմը, ո՛չ էլ կառավարությունը հնարավորություն չունեին պահելու մոտ 9000 պատանիների և աղջիկների, որոնք բոլորն էլ տիրապետում էին զանազան արհեստների և կարող էին հոգալ իրենց ապրուստը, եթե հնարավորություն տային և պայմաններ ապահովեին:

Ամերկոմը փորձում էր չափահաս որբերին տեղավորել Սարդարապատի, Զարբախի համայնքներում՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար, մոտ 210 որբեր աշխատանքի էին անցել Ղարաքիլիսայի կաթնային տնտեսություններում, 260 որբերի Ամերկոմը հանձնեց կառավարությանը, որոնց համար մեծ դժվարությամբ բացվեցին արհեստանոցներ և այլն: Սակայն երկու կողմից կատարվող այս փորձերը հարցի լուծում չէին, քանի որ որբանոցներից ազատվող չափահասների հոծ բանակը օրե-

[323] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ.30, թթ. 98, 105:

ցոր համալրում էր թափառող գործազուրկների շարքերը, որ հղի էր անկանխատեսելի ու անցանկալի հետևանքներով:

Լուսժողկոմատի որբերի հարցերով զբաղվող հանձնաժողովի տեղեկագիրը, որը վերնագրված է «Հայ որբերի տնտեսական ապագան», փաստում է, որ դատարաններում ավելի հաճախ են քննվում որբանոցներից դուրս եկած որբերի անհատական կամ խմբակային գողություններ կատարելու փաստերը այն դեպքում, երբ այդ երեխաները հմուտ կոշկակարներ, հյուսներ, բրուտներ, դերձակներ են, որոնք կարող են օգտակար աշխատանք կատարել և հասարակության, և իրենց համար:

Տեղեկագիրը, ներկայացնելով ստեղծված իրավիճակը, առաջարկում է նաև դրանից դուրս գալու ուղիներ:

Շեշտը դրվում է, իհարկե, որբերին հողին և գյուղական կյանքին կապելու վրա, քանի որ Հայաստանը ագրարային երկիր էր, և կլիմայական գոտիների բազմազանությունը հնարավորություն էր տալիս մշակել բամբակ, բրինձ, հացազգի կուլտուրաներ, ծխախոտ, ինչպես նաև զբաղվել անասնապահությամբ, մեղվաբուծությամբ և այլն: Տնայնագործությամբ և արհեստանոցներում այդքան երեխաների զբաղվածությունն անհնար էր ապահովել, ուստի նրանց ապագան պետք էր տեսնել գյուղում և գյուղական աշխատանքի մեջ:

Զափահաս որբերի 3/5 մասը (մոտ 5264) աղջիկներ էին, որոնք արդեն հմտացել էին մանելու և գործելու արհեստներում: Տեղեկագիրը առաջարկում է նրանց մեծ մասին տեղավորել Ալեքսանդրապոլում բացվելիք տեքստիլ գործարանում:

Հանձնաժողովն առաջարկում է այս հարցով զբաղվել անմիջապես, քանի որ 9000 որբերին հաջորդ տարի միանալու են ևս մի այդքան, որոնց տարիքն արդեն մոտ է չափահասությանը[324]:

1924 թ. Ամերկոմը հայտարարում է, որ սկսելու է աստիճանաբար բեռնաթափել որբանոցները և կառավարությանն առաջարկում է մտածել որբերի հետագա ճակատագրի մասին: Սկսվում է անցանկալի քաշքշուկ նաև դույքի, բժշկական

[324] ՀԱԱ, ֆ.122, ց.1, գ.339, թթ.73, 75:

օգնության, փոխադարձ աջակցության և այլ հարցեր կարգավորելու ընթացքում[325]:

1924 թ. մարտի 24-ին Անդրֆեդերացիայի Ժողկոմխորհը որոշում ընդունեց 1923 թ. փետրվարի 10-ին Ամերկոմի հետ կնքած համաձայնագիրը երկարացնել ևս մեկ տարով (մինչև 1925 թ. փետրվարի 10-ը)՝ նախորդ համաձայնագրի 7-րդ կետում մասնակի շտկում կատարելու պայմանով: Վերջինս արգելում էր Ամերկոմին խորհրդային Միության ներքին շուկայում իրացնել որևէ ապրանք, զբաղվել առևտրական գործունեությամբ[326]: *Նոր պայմանագիրը ստորագրվել է մայիսի 24-ին: Ամերկոմի կողմից այն ստորագրել է Ե.Յարրոն, անդրկովկասյան հանրապետությունների և Հայաստանի կողմից՝ Ն. Տեր-Ղազարյանը*[327]:

Ամերկոմի խնդրանքին ընդառաջելով՝ Լենդավդործկոմը քաղաքի կենտրոնում նրան տրամադրում է խանութ, որտեղ վաճառքի է հանվում որբանոցի սաների ձեռքով պատրաստված ապրանքը: Ստացված եկամուտը հավաքվում էր փոխօգնության հատուկ դրամարկղում, և նախատեսվում էր այն բացառապես օգտագործել չափահաս որբերի համար բնակարաններ կառուցելու, դույլք և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար[328]:

1924 թ. հուլիսին, ընդառաջելով Հայաստանի կառավարության կողմից արվող հարցապնդումներին, Ե. Յարրոն Վարազդատ Տերոյանի ղեկավարությամբ ստեղծում է հանձնաժողով, որը Ամերկոմից ընդունում և էջմիածնի ձեռագրատուն է հանձնում հայկական հին տպագրության արժեքավոր գրքեր, մաղաղաթյա ձեռագրեր, ինչպես նաև երկաթյա մի պահարան՝ ձեռագրերը պահելու համար[329]: *Նաև պետթանգարան է հանձնվել 82 ձեռագիրներ և 300-400 հին հայերեն ունիկում տպագրություններ*[330]:

---

[325] Նույն տեղում, ֆ.113, g. 38, գ.42, թթ.125, 148, 252, 261: Ֆ. 122, g.1, գ. 508, թ.10:
[326] ՀԱԱ, ֆ.113, g. 38, գ. 42, թ.128:
[327] Նույն տեղում, ֆ.122, g.1, գ. 508, թթ.13, 15:
[328] ՀԱԱ, ֆ.131, g. 3, գ. 25, թթ. 262, 267:
[329] Նույն տեղում, ֆ.113, g. 38, գ. 42, թ. 300:
[330] Տերոյան Վ., Միսոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, 2008, էջ 55:

Հետաքրքիր է, թե ինչպես է մեկնաբանել այս քայլը Ե. Յարրոն Սարգիս Լուկաշինին հուլիսի 4-ին գրած իր նամակում.

«Պարոն Սարգիս Լուկաշինին

Նախագահ Ժողկոմխորհի ՀՍՍ Հանրապետության

Հաճույքով ե, վոր այսօր ուզում եմ կատարել իմ պարտականություններից մեկը Հայաստանի հանդեպ, գուցե ամենեն գեղեցիկը, հանձնելով Ձեր միջոցով Եջմիածնի գրադարանին ձեռագրերի յեվ հին հայվադյուտ տպագրությունների մեր փոքրիկ ժողովածուն:

Գուցե ապագան լրիվ չափով ճշտե, թե Ամերիկոմը Հայաստանի մեջ միայն որբերին ու գաղթականներին է խնամել յեվ պաշտպանել սովի յեվ հիվանդությունների ճիրաններից, թե կատարել ե մի ուրիշ գործ ել դրանով յեվ դրա հետ զուգընթաց:

Ինձ չի ընկնում այդ մոտավոր անցյալի յեվ այսորվա փոքրիկ նվերը: Մի օր կար, յերբ Հայոց հին գրականությունը յեվ կուլտուրան նույնպես վորբ ել, ինչպես մեր այսորվա տասնյակ հազարը վորբանոցների մեջ: Այսոր մենք շատ յերջանիկ ենք, վոր առաջինի ծնողները գտնվել են հանձինս Ձեր յեվ Հայաստանի կառավարության, հուսալով, վոր յերկրորդները պիտի հասնեն մի որվա, յերբ կկարողանան ապրել առանց ծնողների ել:

Մի հաջող զուգադիպությամբ այսոր յես ուղարկում եմ Ձեզ մոտ մեր աշխատակիցներից պ. Վ. Տերոյանին, վոր անձամբ ղեկավարել ե այդ հնությունների փրկության գործը իր ժամանակին, հանձնարարելով նրան այս անգամ ել դրանց հանձնման ղեկավարությունը:

Հարգանքներով յեվ բարեկամաբար Ձերդ Ե. Ա. Յարրո

Ընդհանուր վարիչ Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույցի»[331]:

Ինչպես վերը նշեցինք, Նպաստամատույցի գործունեությունը ծավալով խիստ կրճատվել էր և ընդգրկում էր միայն որբանոցների ու դպրոցների ոլորտը:

Սակայն 1924 թ. հուլիսից Ամերկոմը սկսեց թե՛ որբանոցների, թե՛ նրանց կից դպրոցների սաների ցրումը: Այս աշխատանքը կատարվել էր նաև 1923-ի ամռանը, որի հե-

[331] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ.42, թ. 298:

տևանքով արձակվել էին 5413 դպրոցական տարիքի երեխաներ: 1924 թ. հունվար-հունիս ամիսներին որբանոցներն ու դպրոցները թողել էին 4324 երեխա, իսկ ամռան ամիսներին նախատեսվում էր կրկնապատկել նրանց թիվը: Կառավարությունը փորձում էր իր հովանու տակ վերցնել այս երեխաներին՝ չափահասներին տեղավորելով գյուղերում և մանր արհեստանոցներում, ավելի փոքրերին ընդգրկելով պետական դպրոցներում: Սակայն արձակվող որբերի քանակը աճում էր անասելի արագությամբ, իսկ պետությունը ուղղակի հնարավորություն չուներ զբաղվելու բոլորի ճակատագրով:

Ամերիկոմում Լենդավգործկոմի ներկայացուցիչ Գ. Սարգսյանը իր՝ հուլիսի 17-ի՝ Ս. Լուկաշինին ուղղած զեկուցագրում նշում է, որ այս տարերային աշխատանքի մեջ որոշակի մեղք ունի նաև որբերի արձակման աշխատանքը գլխավորող Վարագդատ Տերոյանը: Ըստ Սարգսյանի՝ վերջինս «...իր առջև խնդիր է դրել ինչ գնով էլ լինի մինիմումի հասցնել ամերիկացիների որբանոցներում պահվող երեխաների թիվը և այս աշխատանքը տանում է չափից դուրս համառ և հետևողական ձևով, հաճախ՝ ի վնաս նպատակահարմարության ու հնարավորությունների հաշվառման: Մնողներ ունեցող երեխաները արդեն տեղավորված են ընտանիքներում, մինչդեռ Դերոյանը շարունակում է ամեն օր ազատ արձակել երեխաներին՝ այս անգամ արդեն փոքրիկ խմբերով, և ստիպում է նրանց թափառել գյուղերով ու փնտրել ազգականների: Երեխաների մի մասը այդպես էլ կորսվում է տեսադաշտից, մի մասը ձեռնունայն ետ է վերադառնում»[332]:

Գ. Սարգսյանն առաջարկում է միջոցներ ձեռնարկել այս ամենի դեմ, քանի որ վտանգ կա, որ առաջիկա ուսումնական տարին հազարավոր երեխաներ կդիմավորեն դպրոցի պատերից դուրս:

Նմանատիպ մի փաստաթուղթ է ստեղծել նաև Կազաչի պոստի դպրոցների վերատեսուչ Հայկ Հովհաննիսյանը՝ Ամերիկոմի Կովկասյան ճյուղի դպրոցական բաժին ներկայացրած տարեկան հաշվետվությունը. «Անցնող ուսումնական տարին Կազաչի պոստի դպրոցների համար ամենաարդիականավեսը պիտի լինէր և նրա կանոնաւոր փակումը՝ Մ[երձարևելյան] Ն[պատակամա-

[332] Նույն տեղում, ֆ.113, ց. 38, գ. 42, թթ.353, 354:

տույց] Կ[ոմիտե]-ի՝ Հայաստանում կատարած դպրոցական գործի պատմութեան մէջ՝ յաղթանակի մի օր: Սակայն տարեվերջին յիշեալ դպրոցների այնքա՜ն անակնկալ և արագ կատարուող լիկվիդասիոնն ամեն ինչ տակնուվրայ արաւ և մեզ դրեց կատարուած տխուր իրականութեան առջև:

Թէև նման պարագաներում, երբ ո՛չ դպրոց կայ և ո՛չ աշակերտութիւն, ամեն մի ուսումնական հաշուետուութիւն, մանավանդ ապագայում նրանից օգտուելու տեսակետից վերցրած, կորցնում է իր միտքը, բայց և այնպես մեր պարտքն է, գէթ կատարուածը՝ մինչև լիկվիդասիոնի օրը, ներկայացնել Ձեզ՝ իբրև պատմութեան նիւթ»[333]:

10 թերթից կազմված զեկուցագիրը մանրամասն ներկայացնում է ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքը, և ներկայացվող թվերը խոսում են այն մասին, որ գործն իսկապես լավ ընթացք է ունեցել[334]:

Կազաչի պոստում գործել են 8 դպրոցներ՝ 118 դասարաններով և 4236 աշակերտներով: Դպրոցական տարվա ընթացքում միայն պարապմունքներին հատկացվել է 185 օր՝ 109150 դասաժամով: Դպրոցներն ունեցել են նաև մանկապարտեզի բաժանմունքներ:

Մտահոգությունն հայտնելով առաջիկա ուսումնական տարին սկսելու հետ կապված շատ խոչընդոտների առիթով, Հովհաննիսյանը գրում է. «Թե ու՞ր գնաց մեր աշակերտութիւնը, ո՞ր-քանը՝ Սևերսկի, ո՞ր-քանը՝ Պոլիգոն, և ո՞ր-քանը դուրս գնաց, ինձ յայտնի չէ: Ես այժմ նմանւում եմ մի զօրավարի, որ իր հրամանատարին հաշիւ է տալիս այն ժամանակ, երբ զօրքը չկայ»[335].

Պոլիգոնի դպրոցների կրթական բաժնի վերատեսուչ Նշան Հովհաննիսյանի զեկուցագրից պարզվում է, որ 1924-1925 ուսումնական տարին Պոլիգոնի դպրոցներն սկսել են 4545 աշակերտով, նրանց ավելացել են նաև ամռան ընթացքում Կազաչի պոստից արձակված 1300 աղջիկներ[336]:

---

[333] ՀԱԱ, ֆ.1387, ց.1, գ. 270, թ. 4:
[334] Նույն տեղում, ֆ.1387, ց.1, գ. 270, թթ. 4, 13:
[335] Նույն տեղում, թ. 7:
[336] Նույն տեղում, գ. 278, թ. 8:

Որ Ամերիկոմը արագ և հետևողականորեն կրճատում էր իր գործունեությունը, արդեն կասկած չէր հարուցում, մանավանդ որ Նպաստամատույցի պաշտոնյաները բազմաթիվ դրություններով տեղեկացնում էին, որ Ամերիկան և նրա ժողովուրդը ևս հայտնվել են տնտեսական անբարենպաստ պայմաններում, որ կոմիտեն աշխատում է պարտքերով, և հանգանակած նպաստը այլևս բավարար չէ մեծ մասշտաբի գործունեություն վարելու համար:

Այս ամենով հանդերձ՝ 1924 թ. ընթացքում Ամերիկոմը իր որբանոցներին ու գաղթականական կայաններին տվել էր 9.330000 ֆունտ ուտելիք և հագուստ և 1.488000 դոլարի արժողությամբ այլ իրեր: Սրանից 4.000000 ֆունտը կազմել են զգեստները, որոնք բաշխվել են Հայաստանի և Հունաստանի գաղթականներին, 3.300000 ֆունտը եղել է ալյուր, 500000 ֆունտը՝ եգիպտացորեն, 100000 ֆունտը՝ խտացրած կաթ, 300000 ֆունտը՝ պահածո ուտելիք: Ամերիկոմի բարեգործությունից օգտվել են ավելի քան կես միլիոն կարոտյալներ[337]:

Ամերիկոմը ծրագրել էր 1925թ. ամռանը որբանոցներից արձակել ևս 4000 երեխա, սակայն պարզ էր, որ նրանց թիվը կրկնապատկվելու էր:

Հայաստանի կառավարությունը սկսում է բանակցել Ամերիկոմի հետ, որպեսզի վերջինս ստեղծի հատուկ հանձնաժողով, որը մշակի և կառավարություն ներկայացնի իր հետագա գործունեության մանրամասն պլանը, նշելով ազատվելիք որբերի ճշգրիտ թիվը և ազատման ստույգ ժամանակացույցը[338]:

1925 թ. ապրիլի 27-ին լուսժողկոմ Ա.Մռավյանի մոտ գումարված հատուկ խորհրդակցությունը քննարկեց ստեղծված իրավիճակը և որոշեց Ամերիկոմից պահանջել շտապ ներկայացնել ազատվող որբերի սեռի, տարիքի, առողջական վիճակի և դրագիտության աստիճանի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, ինչպես նաև ճշգրիտ տվյալներ այն մասին, թե նրանցից քանիսն են վերադարձել ծնողների և հարազատների մոտ, քանիսն են որդեգրվել, մյուս որբերը որքան ժամանակ և ինչ նյութական օժանդակություն կստանան և այլն:

---

[337] Տե՛ս Հայաստանի կոչնակ, 1925թ., N 40, էջ 1167:
[338] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 98, թ. 93:

Որոշվեց նաև Ամերկոմի իրավասությունից վերցնել կույր երեխաների դպրոցը միայն այն պայմանով, եթե նա հանձն կառնի որբերին 2 տարի ևս ապահովել պարենով[339]:

Հայաստանի և Անդրֆեդերացիայի ժողկոմխորհներ տարբեր տեղերից ուղարկված բազմաթիվ գրություններ և՛ ուղղակի, և՛ անուղղակի շեշտում են, որ Նպաստամատույց կոմիտեն կտրուկ փոխել է իր աշխատաոճը, բոլոր ամերիկացիները, մասամբ մոռացության տալով իրենց հիմնական կոչումն ու առաքելության նպատակը, ավելի շատ զբաղված են առևտրական գործունեությամբ, կապիտալ են կուտակում՝ շրջանցելով ոչ միայն հայ որբերի շահերը, այլև հենց իրենց ժողովրդի մարդասիրական ձգտումները: Շուկաները ողողված են որբերի համար ուղարկված պարենով ու հագուստներով, տրամադրված գումարները ծախսվում են բացառապես իբրև աշխատավարձի ֆոնդ միայն ամերիկացիների համար և այլն:

Սրանք անհիմն բողոքներ և ահազանգեր չէին, և կառավարող շրջանները շատ լավ հասկանում էին, որ «կապիտալիստական Ամերիկան փորձում է որքան հնարավոր է շահավետ պայմաններով հեռանալ բոլշևիկների երկրից»[340]:

Հետաքրքիր է, որ Նպաստամատույցի աշխատակիցները մտածել են նաև իրենց սաների մասին: Յուրաքանչյուր որբի համար ստեղծված քարտում նշվում էին նաև նրա աչքերի ու մազերի գույնը, տարիքն ու հասակը, բարեհեսությունը, ֆիզիկական և մտավոր կարողությունները, որոշակի արհեստների, նաև անգլերեն լեզվի իմացությունը և այլն: Այս քարտերը լրացվել են կրկնակի օրինակներով, որոնցից մեկն, անկասկած, ուղարկվել է Նյու Յորքի կենտրոնական գրասենյակ: Սրանով պիտի բացատրել այն փաստը, որ Ամերկոմի հաստեմ ամերիկյան քաղաքացիներից ստացվում էին բազմաթիվ դիմումներ, որոնցով ցանկություն էին հայտնում որդեգրել այս կամ այն հայ երեխային:

1925 թ. հոկտեմբերի 10-ին այս խնդրի առնչությամբ Անդրֆեդերացիայի կողմից Ամերկոմի ներկայացուցիչ Գ. Սարգսյանը պաշտոնական գրությամբ դիմում է ՀՍԽՀ Ժողկոմխորհ՝ տեղեկացնելով, թե «Հնարավո՞ր յե արդյոք այդ նպատակով

---

[339] Նույն տեղում, թ. 89:
[340] ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 98, թթ. 49, 51:

յերեխաներին արտասահման ուղարկել, յեվ ի՞նչ կարգով կարելի յե այդ անել»[341]:

Չնայած այս ամենին՝ Ամերիկոմի գործունեությունը Հայաստանում երկրի համար դեռևս կենսական նշանակություն ուներ, և այդ գործունեությունը գնահատվել և մեկնաբանվել է այլ տեսանկյունից ևս:

«Հայաստանի կոչնակի» 1925 թ. համարներից մեկում «Բլիֆի գործունեությունը Հայաստանի մէջ» վերտառությամբ հոդվածը ներկայացնում է Պոլիգոնի և Սևերսկու որբանոցների որբերի ամառային հանգիստն ու աշխատանքները: Հոդվածում որբերի վիճակը, նրանց բուժսպասարկումը, հանգստի և աշխատանքի պայմանները նկարագրված են բավական լավատեսական և հուսադրող երանգներով, քանի որ «Տղաքը, նախորդ տարիներու հետ բաղդատելով, հիմա աւելի առոյգ են եւ զուարթ... Ճաշարանում կատարեալ մաքրութիւն կը տիրէ եւ սպասարկութիւնը իրենք տղաքները կը կատարեն: Շաբաթական հինգ անգամ միս կը տրուի: Կիրակի օրերը անուշեղէն եւ ամիսը երկու անգամ ամերիկեան պահածոյ ձուկ: Օրական մեկ փունտ հաց»[342]:

Նույն տարվա «Հայաստանի կոչնակի» մի այլ համարում տպագրված է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հիմնադիրներից մեկի՝ Բլիվլենդ Դաջի որդու՝ Բայարդ Դաջի խոսքը հայերի մասին: Վերջինս Բեյրութի ամերիկյան համալսարանի նախագահն էր և իր պատվին կազմակերպված ճաշկերույթում ելույթ ունենալով՝ ասել էր. «Մուրալու, ողորմութեամբ ապրելու վարժուող ցեղ մը չէ Հայը: Հայ ուսուցիչները հայ աշակերտներու մէջ կը սնուցանեն իրենց սեփական ուժերով կեանքի մէջ իրենց ճամբան հարթելու ոգին: Ու այդ ուսուցումը հրաշալի արդիւնքներ տուած է: Յարդ Նիյր Իսթ Բիլիֆի որբանոցներէն 16-17 տարեկան հազարաւոր պատանիներ դուրս հանուած են: Անոնք ինքզինքնին գտած են ամայութեան մէջ, բայց մոլութեանց ու մոլորութեանց դերի դարձած չեն, այլ վերաշինութեան, վերանորոգութեան գործին նուիրած են ինքզինքնին, ու այդ հազարաւորներուն մէջէն հազիւ գտնուած

---

[341] Նույն տեղում, թ.116:
[342] Տես՝ Հայաստանի կոչնակ, 1925թ., N49, p.1449:

են 2-3 անձինք, որոնք հարկադրեալ եկած ու նպաստ խնդրած են: Անոնք ողորմութիւն չեն հայցեր, չէ թէ որովհետեւ աղերսել չի գիտեն, այլ որովհետեւ իրենց արժանապատվութեան չեն կերցներ, այնքան ինքնյարգանքի զգացումը զօրաւոր է իրենց մէջ»[343]:

1925 թ. հունիսի 22-23-ին Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Լենինականի որբանոցներում հյուրընկալվեց նաև Ազգերի ընկերակցության գաղթականական հանձնաժողովի նախագահ, Մեծ մարդասեր ու հայասեր, նորվեգացի նշանավոր բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենը (Fridtjof Nansen, 1861-1930):

Այցելության ժամանակ Ֆ. Նանսենը եղավ Լենինականում (Գյումրի), որտեղ մասնաճյուղի տնօրեն Բիչի ուղեկցությամբ շրջում էր ամերիկյան որբանոցներն ու արհեստանոցները, ուր պահվում, սովորում և աշխատում էին 11000 անչափահասներ[344]:

Հայրենիք վերադառնալուց հետո նա անմիջական տպավորությունների տակ գրեց իր հանրահայտ «Խաբված ժողովուրդ» գիրքը, որի գլուխներից մեկը «Մերձարևելյան նպաստամատույցի աշխատանքները Հայաստանում», շատ հուզիչ դրվագներ է ներկայացնում որբերի հետ անցկացրած այդ երկու օրերից մատնանշելով այն հսկայական մարդասիրական աշխատանքը, որ իրականացրել և շարունակում է իրականացնել Ամերկոմը թուրքական ջարդերից փրկված երեխաների համար[345]:

Հայաստանի լուսժողկոմատի տեղեկագրերը հավաստում են, որ 1926 թ. հունվարի 1-ի դրությամբ Ամերկոմի որբանոցների մեջ մնացել էին 8234 որբեր, որոնցից տարվա ընթացքում ծնողների և ազգականների մոտ է վերադարձել 2446-ը, մանկատներից փախել է 265 և մահացել է 22 երեխա[346]: 1927 թ. հունվարի 1-ի դրությամբ որբերի թիվը կազմել է 5501:

---

[343] Նույն տեղում, N18, թ. 559:
[344] Արզումանյան Ս., Նանսենը և Հայաստանը, 1977, էջ 182:
[345] Ֆ.Նանսեն, Խաբված ժողովուրդ, Եր., 2000, էջ 143, 148:
[346] ՀԱԱ, ֆ. 39, ց.1, գ. 2, թ. 17:

Մոտավորապես նույնքան որբեր 1926 թ. խնամվել են պետական որբանոցներում (5222 երեխա)[347]:

Խորհրդային կառավարության միջոցներով 1923-1926 թթ. ընթացքում հաջողվեց որբանոցներից դուրս բերել և աշխատանքի տեղավորել ավելի քան 15000 մեծահասակ որբերի[348]: Ստանալով անհրաժեշտ նյութական միջոցներ, նրանք տեղավորվում էին գյուղերում, գործարաններում, ֆաբրիկաներում և արհեստանոցներում: Որբանոցներից դուրս եկող մեծահասակ որբերի համար ստեղծվում են նաև մի քանի աշխատանքային մանկական գաղութներ, որտեղ նրանք զբաղվում էին հողագործությամբ կամ արհեստագործությամբ:

1926 թ. փետրվարի 11-ին Ամերիկոմում իշխանությունների լիազոր ներկայացուցիչ Գ.Սարգսյանը կրկին դիմում է լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ խնդրելով քննարկել օտարերկրացիների կողմից որբերի որդեգրման և արտասահմանում ապրող իրենց ազգականների մոտ մեկնել ցանկացող որբերի հարցը: Գրությանը կից Գ. Սարգսյանը ներկայացրել է 117 որբերի ցուցակ՝ որբանոցային քարտի համարով և ազգականների վերաբերյալ տվյալներով[349]: Պահպանվել են նաև այն որբերի ցուցակները, որոնք հարազատներ ունեն Հայաստանում և ցանկանում են Սիբիրից, Հունաստանից, Լիբանանից, Երուսաղեմից, Ռումինիայից տեղափոխվել Հայաստան[350]:

Երկու հարցն էլ մի քանի անգամ քննվել է Ժողկոմխորհի մարտ-մայիս ամիսների նիստերում, և եթե երեխաների ներգաղթի հարցը միանշանակ դրական որոշման է հանգեցրել, ապա որդեգրման և արտագաղթի խնդիրները համարվել են լուրջ ուսումնասիրություն պահանջող և նոր միայն վճիռ կայացնելու հարցեր[351]:

1926 թ. ծանր կացություն էր ստեղծվել նաև դպրոցներում: 1926-1927 ուսումնական տարվա տեղեկագրերից պարզվում է, որ ամբողջ տարվա ընթացքում Պոլիգոնի դպրոցներում (իրենց

---

[347] Նույն տեղում, ֆ. 122, g.1, գ. 399, թ. 26:
[348] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, 1975, էջ 100:
[349] ՀԱԱ, ֆ. 113, g. 43, գ. 294, թթ. 40, 46:
[350] Նույն տեղում, ֆ. 122, g.1, գ. 399, թթ. 68, 72:
[351] Նույն տեղում, ֆ. 113, g. 43, գ. 294, թթ. 36, 37, ֆ.113, g. 38, գ. 98, թ.115:

ուսուցիչների հետ այդտեղ էին տեղափոխվել նաև Սևերսկիում լուծարված դպրոցների սանները) կանոնավոր պարապմունքներ համարյա թե չեն եղել, և որ «պարապմունքների նորմալ ընթացքը խանգարող հանգամանքներն յեղել են յերկրաշարժը, շենքի անպատրաստ լինելը, ցրտի, որբանոցային նոր խմբավորումների, մարդահամարի, բժշկական քննության և այլ պատճառներով տեղի ունեցած բացակայությունները և այլն, և այլն»[352]:

1926 թ. հոկտեմբերի 22-ի Լենինականի երկրաշարժը ծանր հարված էր Հայաստանի տնտեսությանը: Ամերկոմի լենինականյան մասնաճյուղում ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Մետի Զոնսոնի գլխավորությամբ, որն անմիջապես սկսեց համագործակցել Հայաստանի կարմիր խաչի, ՀՕԿ-ի հետ՝ երկրաշարժի ավերիչ հետևանքները վերացնելու ուղղությամբ: Ամերկոմը Հայաստանի կարմիր խաչին տրամադրեց 20000 դոլար՝ թեյարաններ և կաթի մատակարարման կետեր բացելու, ազգաբնակչությանը կերակրելու համար:

Որբանոցները և բնակարանները լրջորեն վնասվել էին և դարձել անբնակելի: Որբերը և անձնակազմը բնակվում էին վրաններում, իսկ հոսպիտալները տեղակայված էին բրեզենտե ծածկերի տակ: Քաղաքն ավերակ էր դարձել, իսկ շրջակա գյուղերում հաճախ տներ էին քանդվում, իրենց տակ թողնելով այնտեղ բնակվողներին: Դա կրկին նոր սկիզբ էր նշանակում, որի համար պահանջվեցին զգալիորեն ավելի շատ ծախսեր՝ մանկատները վերանորոգելու և քաղաքն ու մերձակա գյուղերը վերականգնելու համար[353]:

Մինչև 1927 թ. մայիս ամիսը Ամերկոմը շարունակում էր հագուստով և սննդով օգնել երկրաշարժից տուժածներին[354] շարունակելով նաև իր հիմնական՝ որբախնամ գործունեությունը: Պահպանված մանրամասն և ծավալուն հաշվետվությունները վկայում են, որ կրթական գործը շարունակվել է սովորական հունով, թեև 1927-1928 ուսումնական տարում դպրոցներում

---

[352] ՀԱԱ, ֆ. 1387, ց.1, գ. 296, թ. 2:
[353] Barton J., Story of Near East Relief (1915-1930), 1930, page 136-137.
[354] ՀԱԱ, ֆ.154, ց. 3, գ. 6, թթ. 47, 52, 53:

ընդգրկված տների թիվը նախորդ տարվա համեմատությամբ գգալի անկում է ապրել[355]:

Ամերկոմի Պոլիգոնի դպրոցներից մեկը վերակազմվել էր մանկավարժական տեխնիկումի, որտեղ ընդգրկվել էին դպրոցների ավարտական դասարանների ուսման առաջավորները: Տեխնիկումը պատրաստել է դիտակ և բանիմաց ուսուցիչներ, որոնք հետագայում համալրել են պետական դպրոցների ուսուցիչների շարքերը:

1927 թ. նոյեմբերի 15-ին Ամերկոմի կրթական բաժնի ընդհանուր վարիչ Հ. Բ. Ալլենը դիմել է ՀՍԽՀ լուսժողկոմատ հետևյալ խնդրանքով. «Դեկտեմբերի 26-ին Լենինգրադում գումարվելիք «Մարդու ռեֆլեկտոլոգիային» նվիրված համամիութենական համագումարին ցանկալի և անհրաժեշտ է ունենալ նաև մի ներկայացուցիչ Ամերկոմի դպրոցներից:

Իբրև այդպիսին մենք կը ցանկանայինք առաջարկել Ամերկոմի Պոլիգոնի մանկավարժական տեխնիկումի վարիչ և մանկաբանության դասատու ընկ. Սիրական Տիգրանյանին:

Ուստի խնդրում ենք նրան ևս տալ այն բոլոր հնարավորությունները, որպիսիք տրվում են Հայաստանից ուղարկվող մյուս ներկայացուցիչներին, և դրա մասին հաղորդել մեզ ժամանակին, որպեսզի կարողանանք նրա առջև պարտականությունների կատարման վերաբերյալ անհրաժեշտ կարգադրություններ նախօրոք անել»[356]:

Ֆինանսական ճգնաժամի պատճառով Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն կանգնեց ինքնալուծարման սպառնալիքի առջև:

Սակայն Ամերկոմը զգալով, որ իր գործունեությունը Հայաստանում երկարատև լինել չի կարող, այնուամենայնիվ շարունակում էր խնամել որբերին, հետաքրքրվում էր որբանոցներից հեռացած որբերի ճակատագրով, փորձում էր ինքը տեղավորել նրանց այս կամ այն վայրում և այլն[357]:

1928 թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանի կառավարության և Ամերկոմի միջև կնքվում է մի համաձայնագիր, որով Ամերկո-

---

[355] Նույն տեղում, ֆ.1387, g.1, գ. 301, թթ. 1-8, գ. 302, թթ. 1, 9:
[356] ՀԱԱ, ֆ.1387, g.1, գ. 272, թ. 17:
[357] Նույն տեղում, ֆ.131, g.1, գ. 272, թ. 20:

մը, պետությանը հանձնելով իր խնամքի տակ գտնվող 200 արատավոր երեխաների, հանձն էր առնում նրանց հետագա խնամքի համար տրամադրել 30000 դոլար, ինչպես նաև 4000 դոլար արժողությամբ հագուստ և այլ իրեր[358]:

Նույն թվականի հոկտեմբերին Ամերկոմը Սևծովյան շրջաններ և հատկապես Սուխումի և Բաթում է տեղափոխել զգալի թվով երեխաներ, որոնց մի մասը տեղավորվել է գյուղերում, մի մասն էլ, ինչպես ժամանակակիցներն են վկայել ու հենց իրենք՝ որբանոցներում մեծացած երեխաներն են հետագայում վերապատմել, Բաթումից նավերով տեղափոխվել է Ամերիկա:

Որբերի տեղափոխությունը Սևծովյան շրջան սկսվել էր դեռևս 1926 թվականից: Աբխազիայի գյուղական խորհուրդները մշակված վկայականների ձևով Ամերկոմի՝ Սուխումի գրասենյակին հայտնում էին այն ընտանիքների ցուցակը, որոնք ցանկանում էին իրենց խնամքի տակ վերցնել որբ երեխաների: Գյուղխորհուրդը գրավոր երաշխավորում էր, որ տվյալ ընտանիքը տնտեսապես ապահովված է, որ ընտանիքի անդամները առողջ են և այլն: Այս ճշտված ցուցակներն ուղարկվում էին Ամերկոմի Լենինականի բաժանմունք, որտեղից էլ՝ կառավարություն:

Գյուղական տնտեսությունները ներկայացնում էին երկու փաստաթուղթ՝ մեկը խնամակալության, մյուսը՝ որդեգրման:

Հարցին ընթացք տալու համար պետք է եղել նաև Հայկենտգործկոմի որոշումը:

1926 թ. Աբխազիա է տեղափոխվել 110 որբ, 1927-ին՝ 361 չափահաս տղաներ և 90 փոքրահասակ աղջիկներ, 1928 թվականին նրանց թիվը հասել է 617-ի: Որբերը բաշխվել են 38 հայկական գյուղերում: Նաև 1926-1928 թթ. Սոչիի շրջան է տեղափոխվել 1844 երեխա[359]:

Աբխազիայի և Սոչիի հայաբնակ գյուղերում տեղավորված էին Արևմտյան Հայաստանից գաղթած հայերը: Այդ ընտանիքներից շատերը կա՛մ երեխա չունեին, կա՛մ էլ գաղթի ճանապարհին կորցրել էին նրանց, ուստի սիրով որդեգրում էին

---

[358] ՀԱԱ, ֆ.119, ց.1, գ.13, թ. 20:
[359] Նույն տեղում, ֆ.122, ց.1, գ. 347, թ. 35, 46:

հատկապես փոքրահասակ երեխաներին: Ահա այս երեխաների մի մասը անդառնալի կորուստ եղավ Հայաստանի համար:

«Երեխաների մի մեծ խումբ, Բաթում ուղարկված, ետ վերադարձվեց՝ դեռ նավ չնստած,- գրել է Մկրտիչ Արմենը,- բայց հաշվա՞ծ է, արդյոք, իրենց ծնողների կամ իբր թե ծնողների մոտ Ամերիկա ուղարկված առանձին երեխաների ընդհանուր թիվը»[360]:

Ամերկոմի՝ 1928-1930 թթ. գործունեությունն արտացոլող փաստաթղթերում արդեն զգալի տեղ են զբաղեցնում նաև լուսժողկոմատի հասցեով ստացվող բազմաթիվ բողոքները ոչ միայն ուսումնական պարապմունքների որակի, այլև մանկավարժական անընդունելի մեթոդների կիրառման վերաբերյալ[361]:

ՀՍԽՀ լուսժողկոմին ուղարկած գրություններում մեջ Ամերկոմին կից Հայաստանի Ժողկոմխորհի ներկայացուցիչ Գ. Սարգսյանը բազմիցս անդրադարձել է այն հարցին, որ որբանոցներում կարգուկանոն պահպանելու համար երեխաները դաժան ծեծի և պատիժների են ենթարկվում: Իր բազմաթիվ դիտողություններին ամերիկացիների տված պատճառաբանությունները Գ.Սարգսյանը ընդունելի չի համարում, քանի որ այդ ամենը բացատրվել է «վարչական պերսոնալի ծանրաբեռնվածությամբ, ջղային դրությամբ և որբության մեջ բացասական էլեմենտների գոյությամբ»[362]:

Պոլիդոնի գյուղատնտեսական 7-ամյա դպրոցի վարիչ Ի.Շինդյանը՝ ՀՍԽՀ լուսժողկոմին ուղղված նամակում բողոքում է հատկապես Ամերկոմի Կովկասյան բաժանմունքի տնօրեն Դ. Բիչի անօրինական, հակաբարոյական և հակամարդասիրական գործունեությունից: Վերջինս, 1928-29 ուսումնական տարում ստանձնելով նաև կրթական բաժնի վարիչի պարտականությունները, այդ ոլորտն էր տեղափոխել նաև իր աշխատատեղը, որը ոչ մի կապ չուներ կրթության հետ: Հոգևորական-միսիոներ Բիչը, որի մանկավարժական հիմնական մեթոդները ծեծն ու հայհոյանքն էին, որբերին քաղցած պահելը և այլն, ամեն կերպ փորձել է

---

[360] Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, N 4, էջ 49:
[361] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ.174, թ. 66, գ. 664, թթ. 7, 10:
[362] Նույն տեղում, ֆ.113, ց. 3, գ. 204, թ.115:

որբերի մեջ խեղդել սեփական արժանապատվության զգացումը, ստորացնել ու ահաբեկել նրանց:

«Առաջին խոսքը, որ ուղղել է քաղ. Բիչը սաներին,- գրում է Շինդյանը,- այս է եղել. «Ո՞վ է քեզ այս կոշիկը հագցրել, ու՞մն են այս շորերը, ո՞վ է քեզ կերակրում, գիտե՞ս՝ քո վրա ինչքան փող է ծախսված...» և այլն: Քաղ. Բիչը իր այս վարմունքով ապացուցեց, որ այսպես ատել, արհամարհել կարող է միայն գազանական ատելությամբ լցված մարդը, որ ատելության թույնը վաղուց է կուտակված եղել նրա սրտի մեջ դեպի ինքնագիտակցության եկող ակտիվ որբությունը...»[363]:

Վերոհիշյալ թեր և դեմ կարծիքները Ամերկոմի գործունեության վերաբերյալ այնուամենայնիվ հանգեցնում են միակ տրամաբանական եզրակացության, այն է՝ 1928-1929 թթ. Ամերկոմի գործելաոճը կտրուկ շրջադարձ էր ապրել: Խորհրդային Հայաստանը իր գոյության 9 տարիների ընթացքում ամրապնդել էր և՛ կոմունիստական վարչակարգի դիրքերը, և՛ երկիրը դուրս էր բերել ճգնաժամային վիճակից, ուստի ամերիկացիները շատ լավ զգում էին, որ տարածաշրջանի հետ ապագայի հույսեր փայփայելն անիմաստ է, որ իրենք այլևս պայմաններ թելադրել և դրության տերը լինել չեն կարող, և հենց այդ պատճառով էլ մարդասիրական կեցվածքը տեղի էր տվել ոչ այնքան հաճելի և ընդունելի պահվածքի:

Պետք էր փոխադարձ համաձայնությամբ դադարեցնել Նպաստամատույցի գործունեությունն այնպես, որ երկու կողմերն էլ հիշեին ու պահպանեին նաև այն լավն ու դրականը, որ եղել էր Ամերկոմի գործունեության մեջ երկրի համար շատ ծանր տարիներին:

1928 թ. հուլիսից Ամերկոմի ներկայացուցիչ Բարկլայ Աչիսոնը (Barclay Acheson) բանակցություններ է վարում Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահ Շալվա Էլիավայի հետ՝ Ամերկոմի գործունեությունը Անդրկովկասի հանրապետություններում դադարեցնելու վերաբերյալ:

Որոշվում է աշխատանքը շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ ամերիկյան ժողովրդից բարեգործական նպատակով

---

[363] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 664, թ. 8:

հավաքված գումարը չի սպառվել: Ժամկետ է սահմանվում 1929 թ. նոյեմբերի 1-ը[364]:

Բանակցությունների հաջորդ փուլը վերսկսվում է 1930 թ. մայիսին: Որոշվում է, որ Ամերկոմը իր օգնությունը կդադարեցնի հունիս ամսից: Իսկապես, Նպաստամատույցը արդեն հունիսից դադարեցրել էր ցանկացած տիպի օգնություն և՛ Բաթումում, և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում[365]:

1930 թ. օգոստոսի 2-ին նոր համաձայնություն է ստորագրվում Ամերկոմի և ՀՍԽՀ-ի միջև, ըստ որի Նպաստամատույցին ժամանակ է տրվում լուծարման գործընթացը ավարտել մինչև 1931 թ. հունվարի 1-ը:

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի կարգադրությամբ Ամերիկյան նպաստամատույցին կից Լենինականի ներկայացուցիչ Մելիք-Քարամյանը նշանակվում է լուծարային հանձնաժողովի ղեկավար[366]:

Լուծարման գործընթացը ներկայացնող փաստաթղթերից երևում է, որ Ամերկոմը իր ունեցած գույքի, տեխնիկայի մի մասը վաճառել է, մի մասը դուրս բերել երկրի սահմաններից, որոշ բան էլ հանձնել Հայաստանի կառավարությանը:

Այսպես՝ Ամերկոմը գյուղատնտեսական դպրոցի դասընթացների համար ձեռք բերած հարուստ գրականությունը ժամանակավորապես ի պահ է հանձնում Հողժողկոմատին, որն ավարտին էր հասցնելու այդ ուսումնական տարին և ղեկավարելու էր ուսումնառության ընթացքը, միայն որոշակի պայմանով, այն է. «Հողժողկոմատը պարտավոր է ապահովել գրադարանի անձեռնմխելիությունը՝ այն օգտագործելով բացառապես դպրոցի կարիքների համար այն հաշվով, որ առաջին իսկ պահանջի դեպքում այն ամբողջական վերադարձվի Ամերկոմին»[367]:

Ինչպես վերը նշեցինք, Խորհրդային Հայաստանում Ամերկոմի գործունեությունը դադարեցվեց երկուստեք համաձայնությամբ ու ցանկությամբ, կոմիտեի լուծարման գործընթացն ավարտվեց առանց լուրջ ցնցումների՝ պահպանելով երկու ժողովուրդների միջև ստեղծված բարեկամական հարաբերությունները:

---

[364] ՀԱԱ, ֆ. 119, g.1, գ.13, թթ. 46, 47:
[365] Նույն տեղում, ֆ. 39, g.1, գ.17, թ. 36:
[366] ՀԱԱ, ֆ. 39, g.1, գ.17, թթ. 34, 38:
[367] Նույն տեղում, ֆ. 39, g.1, գ.17, թ. 32:

ՎԵՐՋԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Մերձավոր Արևելքի ժողովուրդներին օգնելու նպատակով կյանքի կոչված Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հայ ժողովրդին ցուցաբերած մարդասիրական օգնության հիմնահարցի ուսումնասիրությունը հետաքրքիր է ոչ միայն կոմիտեի աշխատանքը լուսաբանելու տեսանկյունից, այլև շուրջ 15 տարվա հայ-ամերիկյան համագործակցության, Հայաստանի Առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի, ինչպես նաև Սիբիրում, Հունաստանում, Լիբանանում և այլուր կուտակված հարյուր հազարավոր հայ գաղթականների, որբերի ճակատագրին հետևելու, պատմական այդ ժամանակաշրջանի իրատեսական պատկերը քննելու առումով:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում թուրքերի իրականացրած ցեղասպանությունից մազապուրծ և աստանդական դարձած մոտ մեկ միլիոն հայության համար ստեղծվեց ծայրահեղ լարված սոցիալ-տնտեսական իրավիճակ թե՛ բուն Հայաստանում, ուր ապաստանել էր շուրջ կես միլիոն տարագիր, թե՛ Մերձավոր Արևելքի երկրներում, որտեղ գաղթականների ստվարածավալ գաղթօջախներ էին ձևավորվել:

Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն սկզբնական շրջանում հայանպաստ իր գործունեությունը ծավալեց այդ երկրներում բազմաթիվ կարոտյալների համար հիմնելով սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ, որի շնորհիվ ֆիզիկական ոչնչացումից փրկվեցին հարյուր հազարավոր վտարանդիներ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Ամերկոմը քայլեր ձեռնարկեց նաև նորանկախ Հանրապետությանն օգնելու ուղղությամբ, որը կանոնակարգված բնույթ կրեց 1919 թ. մայիսի վերջերից և շարունակվեց մինչև հանրապետության անկումը, ավելին՝ շուրջ 10 տարի Ամերկոմը շարունակեց իր գործունեությունը նաև Խորհրդային Հայաստանում:

Հետաքրքիր է, որ շուրջ 15 տարիների ընթացքում մարդասիրական այս կազմակերպության գործելաոճն ու նպատակները տարբեր են եղել և՛ Սիբիրում, և՛ Հայաստանում, որը մեզ

հիմք է տվել եզրակացնելու, թե բարեգործական այս կազմակերպությունը, օգնության ձեռք պարզելով մեզ, այնուամենայնիվ, տարածաշրջանում վարել է իր երկրի շահերից և հեռահար նպատակներից բխող քաղաքականություն, որը հանգեցրել է այդ գործունեության գնահատման տարաբնույթ տեսակետների, հաճախ առիթ դարձել լավն ու վատը իրարից չզանազանելու, արածն ու չարածը դերագնահատելու ոչ ցանկալի միտումների:

Ամփոփելով Ամերկոմի գործունեության ուսումնասիրությունը, կարող ենք եզրակացնել, որ այդ գործունեությունն իսկապես եղել է կարևոր և օգտակար սովի ու հիվանդությունների ճիրաններում տառապող թե՛ բնիկ, թե՛ գաղթական հայության համար:

Ինչպես նշել ենք, այդ գործունեությունն ընդգրկել է նորաստեղծ հանրապետության խնամատարության գրեթե բոլոր բնագավառները՝ գաղթականների և տեղացի չքավոր բնակչության, որբերի խնամքի, բժշկական օգնություն, նաև օգնություն բանակին և գյուղատնտեսությանը և այլն, մի բան, որ այնքան անհրաժեշտ էր թուրքերից մինչև վերջին թելը կողոպտված ու թալանված երկրին, որն առանց այդ օգնության ուղղակի չէր կարող ծայրը ծայրին հասցնել:

Ինչ խոսք, Ամերկոմի օգնությունը ավելի նպատակասլաց, տեղին և արդյունավետ կլիներ, եթե Թիֆլիսում տեղակայված Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Կովկասյան գրասենյակի պատասխանատու պաշտոնատար անձինք ավելի տեղեկացված լիներին Հայաստանում տիրող դրության իրական պատկերի մասին, եթե Հայաստանի համար հանդանակվող օգնությունը հաճախ չփոշիանար և չկորչեր Վրաստանի և Սևծովյան շրջանների տարածքներում, եթե սննդամթերքի բաշխումը իրականացվեր ավելի խելամիտ և նպատակահարմար ձևով և այլն:

Արխիվային բազմաթիվ վավերագրերի քննությունից հանգել ենք նաև այն եզրակացության, որ մարդասիրական-բարեգործական հաստատություն լինելով հանդերձ՝ Ամերկոմը շատ քիչ է տարբերվել միսիոներական մյուս կազմակերպություններից հատկապես մանուկների բարոյահոգեբանական, կրոնական դաստիարակության գործունեության բնագավառում, կա-

րողացել է հավաքագրել էժան և որակյալ աշխատուժ իր երկրի համար, որը իրավացիորեն հարուցել է թե՛ Հայաստանի Առաջին Հանրապետության, թե՛ Խորհրդային Հայաստանի կառավարող շրջանների և մտավորականների դժգոհությունը:

Փաստաթղթերը հավաստում են նաև, որ ամերիկացիների մարդասիրական օգնությանը երբեմն խոչընդոտել են նաև տեղական անբարենպաստ պայմանները՝ կաթվածահար եղած երկաթուղային հաղորդակցությունը, ավերված ու շարքից դուրս եկած ճանապարհները և այլն:

Սակայն երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ առանց այդ օգնության Հայաստանն ուղղակի գոյատևել չէր կարող, և Ամերկոմի մարդասիրական օգնությունը փրկեց տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր, երիտասարդ հանրապետությանն ընձեռեց ոտքի կանգնելու հնարավորություն:

Անդրադառնալով Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած հայ գաղթականների և որբերի խնամատարության խնդրին, պիտի ասենք, որ այդ երկրներում դեռևս 1895-1896 թթ. գործում էին ամերիկյան միսիոներական կազմակերպություններ, որոնց Նպաստամատույցը հետագայում ձուլեց իր մեջ՝ որդեգրելով նաև նրանց աշխատանքի ոճը:

Եթե Արևելյան Հայաստանում ձևավորված երկու հանրապետությունների հետ Ամերկոմի գործունեությունը որոշակի համաձայնագրերով, պայմանագրերով քիչ թե շատ կանոնակարգված էր, ապա բոլորովին այլ էր իրադրությունը այս երկրներում, քանի որ Ամերկոմը, իր շահերն ու խնդիրներն ունենալով հանդերձ, ստիպված էր հաշվի նստել նաև օտար պետությունների կառավարող շրջանների շահերի, այդ երկրներում բարեգործական առաքելություն իրականացնող հայկական տարբեր կազմակերպությունների, մասամբ նաև Հայաստանից ստացվող դիտողությունների ու առաջարկների հետ:

Թեմայի ամբողջական ուսումնասիրությունը մեզ հանդեցրել է այն եզրակացության, որ այս կենսական հարցերը հարթելու, հայկական գաղթօջախների փոշիացումը կանխելու, գաղթականությանը մայր հայրենիքին մոտ պահելու և նրանց որոշ մասի ներգաղթը ապահովելու խնդրում հսկայական ներդրում և ջանքեր է գործադրել Հայ ազգային պատվիրակությունը, որը,

փաստորեն, կամավոր իր վրա էր վերցրել այն դերը, որ իրականացնում էին հայկական երկու պետությունների կառավարությունները:

Այս հարցում Հայ ազգային պատվիրակության ծավալած շուրջ 10-ամյա գործունեությունը անդերագնահատելի է: Նախագահներ Պողոս Նուբար փաշայի, Գաբրիել Նորատունկյանի սերտ համագործակցությունը Ամերիկայի նյուսյորքյան կենտրոնական գրասենյակի, Հայաստանի կառավարող շրջանների, Հունաստանի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի պետական պաշտոնյաների հետ հնարավորինս թեթևացրել են աստանդական հայերի վիճակը՝ նրանց մի ստվար հատվածին փրկելով ուծացման ստույգ վտանգից:

Հարկ ենք համարում հատկապես շեշտել նաև հայ նշանավոր մտավորականներ Վահան Թեքեյանի, Արշակ Չոպանյանի, Արշակ Ալպոյաճյանի, Լևոն Բաշալյանի և այլոց, մեծահարուստ Գալուստ Կուլպենկյանի, հայ եկեղեցու նվիրյալ այրերի բարձրացրած ահազանգը՝ հայերին սպառնացող ձուլման վտանգը կանխելու ուղղությամբ:

Կարող ենք անվերապահորեն պնդել, որ Հայ ազգային պատվիրակությունը գլխավորեց և համախմբեց Սիյուռքի բոլոր առաջադիմական ուժերի հետևողական և նպատակասլաց պայքարը ազգանվեր այս գործում, ապահովեց գոնե որոշ կրթօջախներում մանուկներին հայեցի կրթություն տալու գործը, որպեսզի նրանք չկտրվեն իրենց արմատներից, մնան հայ և իրենց հայացքն ուղղեն դեպի հայրենիք, իրենց վերջնական հանգրվան տեսնեն միայն Հայաստանը:

Շատ ավելի բարդ ու վիճելի, նաև՝ սենկանխատեսելի հետևանքներով հղի է եղել Ամերիկայի գործունեությունը խորհրդային Հայաստանում: Անդրադառնալով Ամերիկայի շուրջ 10 տարվա գործունեությանը, հանգել ենք այն եզրակացության, որ թեև խորհրդային Հայաստանի կառավարությունը չկարողացավ հրաժարվել Նպաստամատույցի օժանդակությունից, սակայն կոմունիստական վարչակարգի կայունացումն ու երկրի սոցիալ-տնտեսական կյանքի փոքր-ինչ բարելավումը պետության ուշադրությունը բնակչության ֆիզիկական դոյությունն ապահովելու հոգսերից կենտրոնացրեց նաև այլ՝ ոչ պակաս կարևոր մի խնդրի

վրա, այն է՝ ինչպես կարգավորել իր հետագա հարաբերությունները Ամերիկայի հետ, երբ տարեցտարի այս կազմակերպությունը, կորցնելով տարածաշրջանում իր երկրի դիրքերն ապահովելու և նրան գերիշխող տերություն դարձնելու հույսերը, սկսել էր ավելի հաճախ զբաղվել ոչ թե հայ ժողովրդին մարդասիրական օգնություն ցույց տալու իր հիմնական առաքելությամբ, այլ եկած օգնության և միջոցների զգալի մասի յուրացմամբ, որբանոցներում և դպրոցներում հակակոմունիստական քարոզչությամբ, մատաղ սերնդի ապակողմնորոշման, ազգային արժանապատվության ոտնահարման և նրանց հայացքը օվկիանոսից այն կողմ ուղղելու անընդունելի և վտանգավոր քաղաքականությամբ:

Ինչ խոսք, Խորհրդային Հայաստանի կառավարությունը երբեք երախտամոռի կեցվածք չի ընդունել և բազմիցս իր շնորհակալության խոսքն է ուղղել ամերիկյան ժողովրդին, սակայն առանց այն էլ մի բուռ դարձած ժողովրդի համար ցանկալի չէր կորսված տեսնել արդեն ոտքի կանգնած, ապագային քիչ թե շատ հավատով նայող իր մատաղ սերնդի գլխին կախված վտանգը, - որի պատճառով էլ գնալով լարվում էին կառավարության և Ամերիկյան նպաստամատույցի հայաստանյան ներկայացուցիչների հարաբերությունները:

Ականատեսների, ժամանակակիցների, նաև որբանոցի սանների պատմած հուշերը՝ հարյուրավոր սանների Բաթումից Ամերիկա իրր հարազատների մոտ կամ որդեգրման ուղարկելու փաստերը հաստատում են նաև արխիվային վավերագրերը:

Մյուս կողմից, զգալով իրենց երկրին սպառնացող տնտեսական ճգնաժամի մոտալուտ լինելը, 1928-1930 թթ. ամերիկացիները Անդրկովկասի տարածքի շուկաներում սկսել էին զբաղվել առևտրով, որի արդյունքում կուտակված կապիտալով ձեռք էին բերում արվեստի և հնության արժեք ունեցող բազմաթիվ առարկաներ, գորգեր, կարպետներ, նկարներ, մագաղաթյա գրքեր ու ձեռագրեր, որոնք չստուգվող և չքննվող հարկերով տեղափոխում էին Ամերիկա: ՀՍԽՀ կառավարության, լուսժողկոմատի հաստատությամբ ստացված բազմաթիվ բողոքներն ու ահազանգերը, բնականաբար, անհետևանք մնալ չէին կարող, ուստի Ամերիկայի լուծարումն ու Հայաստանի տարածքում նրա գործունեության

կասեցումը կարծես թե զուգադիպեց երկու երկրների շահերին էլ, և գործընթացն ավարտվեց առանց լուրջ ցնցումների, բարեկամական հարաբերությունների ֆոնի վրա:

«Աշխատանքի երկար ամիսներ, հարիւրաւոր աշխատողներ, միլիոնաւոր կերակրուածներ, հազարաւոր մահէն փրկուածներ, բազմաթիւ զինուորներ, որոնք իրենց քաղցը կը յագեցնէին ամերիկեան ալիւրով, ծախսուած տոլարներու միլիոններ-ահա Ամերիկացիներու մարդասիրական գործունեութեան իսկական պատկերը»[1], -հետագայում գրել է Ալ. Խատիսյանը:

Ամերիկյան նպաստամատույցը իր գործունեության 15 տարիների ընթացքում որբանոցներ, հիվանդանոցներ, սննդակայաններ հիմնեց Թուրքիայում, Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Պարսկաստանում, Կովկասում և հատկապես Հայաստանում: Հայաստանում Ամերկոմը ծախսել էր մոտ 91 միլիոն 150 հազար դոլար[2], որի հայթայթումն իրականացվեց այդ հաստատության հետևողական քարոզչության և նպատակասլաց գործունեության շնորհիվ, քարոզչություն, որ տարվում էր ոչ միայն բուն երկրում, այլև նրա սահմաններից դուրս, և որից ստացված հասույթը ֆիզիկական ոչնչացումից փրկեց միլիոնավոր մարդկանց:

Բարեբախտաբար, այդ գործունեության մեջ նկատված բացերը վճռորոշ չեն եղել և չեն խաթարել երկու ժողովուրդների հարաբերությունները:

Ամփոփելով, եկել ենք այն եզրահանգման, որ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի՝ տարածաշրջանում ծավալած գործունեությունը, ինչ խոսք, ունեցել է և՛ իր դրական, և՛ բացասական կողմերը, սակայն, կարծում ենք, որ հատկապես Հայաստանի համար ճգնաժամային այդ տարիներին անգնահատելի դեր է կատարել:

---

[368] Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 193:

[369] Տե՛ս Լ. Ազատեան, նշվ. աշխ., գիրք երկրորդ, էջ 166:

СУРЕН АВЕТИСЯН

ДЕЯТЕЛЬНОСТЬ АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА ПОМОЩИ БЛИЖНЕГО ВОСТОКА В АРМЕНИИ (1918-1930)

РЕЗЮМЕ

Исследование проблемы гуманной помощи, оказанной армянской нации от американского комитета помощи Ближнего Востока, который был основан с целью помочь нациям Ближнего Востока во время первой мировой войны, интересна не только с точки зрения освещения работы комитета, но также с точки зрения пятнадцатилетнего армяно-американского сотрудничества, первой республики Армении и советской Армении. Это также интересно для того, чтобы наблюдать за судьбами сотни тысяч эмигрантов и сирот, скученных в армянских колониях, изучать реальную картину того исторического периода.

Это исследование также важно с точки зрения представления полной картины обсуждаемого исторического периода, актуальный факт, что наша нация столкнулась с проблемой выживания в начале 1990-ых, и в настоящее время трудно вообразить как развились бы процессы без внешней помощи.

Цель работы состоит в том, чтобы представить в регионе деятельность АмерКом в течение почти 15 лет, основанной так же на исследовании недавно обнаруженных архивных документов, требующих новых комментариев и заметок относительно темы.

В предисловие хорошо обоснованы современность, цели и проблемы, теория источников, научно-практическая новинка и важность темы.

В первой главе книги "НАЧАЛО СОТРУДНИЧЕСТВА МЕЖДУ ПРАВИТЕЛЬСТВОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И

АМЕРИКАНСКИМ КОМИТЕТОМ, ПОМОЩЬ АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА АРМЕНИИ" представлена трудная политическая ситуация в стране, которая непосредственно создала такую же трудную экономическую ситуацию. Из-за этой ситуации много просьб о помощи, которые были адресованы правительству республики от почти всех населенных пунктов, часто оставались без ответа, поскольку целая страна была в когтях голода и эпидемий. Почти 40 000 сирот в Армении были в безутешном положении, 15.612 из них Правительство поместило в приютах с октября 1918 до первых месяцев 1919гг. Число заброшенных сирот, блуждающих по улицам, превзошло несколько раз число сирот, которые находились под опекой государства. Ежедневно несколько сотен сирот умерали под стенами и на улицах перед глазами взрослых, которые были столь же беспомощны, как сироты,и нуждались в заботе.

Как указано выше, деятельность АмерКом с мая 1918 до апреля 1919 на территории Первой Республики Армения носила стихийный характер, проявлялась только в отдельных, частных случаях и почти не производила изменений в проблеме выхода Республики из пагубного состояния.

Таким образом, первая отрегулированная деятельность АмерКом с Республикой Армения началась с мая 1919г. Но к этому времени страна была в чрезвычайно разрушенном и трагическом состоянии, и деятельность АмерКом включала почти все сферы внутренней жизни недавно основанной Республики - попечение эмигрантов и бедного населения, вербовка сирот и открытие приютов, создание больниц, мобильных пунктов первой помощи, мастерских, организация образования, помощь армии и солдатам, строительство, приобретение семян зерна и

других культурных растений, организация посевов, обработка и так далее.

Согласно данным Правительства, в течение 1919г. Армения получила помощь из Америки 1.295.243пуд муки, которая продолжалась до апреля 1920г. Помимо продуктов питания, Армения время от времени получала также теплую одежду и медикаменты.

Однако, по приказу Генерального Штаба Комитета помощи Ближнего Востока в Тбилиси от 4-ого мая, американскому Комитету было предложено немедленно покинуть границы Армении из-за майских бунтов Большевиков. В июне 1920г. по приказу АмерКом снабжение пищи для населения Армении было приостановлено, поскольку Комитет пытался подготовить отчет о своей деятельности в течение одного года, урегулировать свои исчисления, для предсотавления в Нью-Йорк. Так, начиная с июня 1920г. Американский Комитет значительно уменьшил свою деятельность на территории Республики, сократил до минимального объем получаемой пищи, сконцентрировал свои приюты и офисы в Александрополе (Гюмри) и в основном начал заниматься заботой о сиротах.

Согласно данным архивных документов, гуманитарная помощь Американского Комитета имела свое положительное влияние на всей территории первой республики Армения.

Во второй главе - "ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АМЕРКОМ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ЗАБОТЫ О СИРОТАХ В АРМЕНИИ ОТ 1919_1920гг." обсуждается о том, что Комитет помощи Ближнего Востока начал заботиться о сиротах с 1915г. Приюты были открыты в Сирии, Греции, Константинополе, Египте, Палестине, Кавказе и в других регионах.

12-ого апреля 1919г. Министр попечения Республики Армения Саак Торосян и представитель армянского отдела АмерКом капитан Элдер подписали соглашение, согласно которому забота и воспитание сирот, живущих во всех приютах,отдельных убежищах, больницах, а также блуждающих сирот передавалась под опеку АмерКом. АмерКом обязался заботиться об армянских сиротах,живущих на территории Грузии.

АмерКом обязался взять на себя все расходы для заботы о сиротах, и контроль над образовательной и морально-психологической атмосферой приюта был оставлен за министром попечения. Правительство Армении обязалось не вмешиваться во внутренний порядок Комитета. Согласно данным министра попечения от 1мая, на территории Армении было 86 приютов и 10 детских больниц, где было 13.820 сирот.

Параллельно с деятельностью заботы о сиротах АмерКом попыталась стимулировать образовательную деятельность в Армении. В августе 1919г. в письме АмерКом, адресованном Министерству государственного образования , было главным образом предложено взять под заботой государства не отдельные приюты, а всех сирот школьного возраста из всех приютов. С одной стороны, причина состояла в том, что Министерство государственного образования обязалось заботиться об образовании сирот, с другой стороны, учитывался факт, что АмерКом не имеет никакого здания, чтобы начать новый учебный год.

Но американские приюты очень отличались от приютов, находящихся под заботой государства их возможностями и средствами. Сиротам предоставляли пищу, одежду, санитарно-гигиеническая и медицинская внимательность уменьшили число эпидемий и смертности.

Сироты, помимо общих образовательных предметов, изучали разные ремесла, иностранные языки и так далее.

Таким образом, изучение различных архивных документов выявляет ту бесспорную правду, что со всеми их неоспаримыми преимуществами школы и приюты АмерКом воспитывали детей с традициями американских школ, абсолютно игнорирующих обстоятельство, что вступая в жизнь, армянские дети живут в другом окружении и в других условиях,что для них будет трудно приспособиться к окружающей среде и к детям того же самого возраста, которые были воспитаны в традиционных армянских семьях, национальным духом и традициями.

В третьей главе - "ВЗАИМОСВЯЗЬ И СОТРУДНИЧЕСТВО АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА БЛИЖНЕГО ВОСТОКА И НАЦИОНАЛЬНОЙ ДЕЛЕГАЦИИ", представлено сотрудничество АмерКом и армянской Национальной Делегации, действующей в армянских колониях и за границей.

С 1921 до 1924гг. главой Национальной Делегации был Габриел Норатункян и делегация во главе с ним представляла интересы армянских людей, нашедших убежище в зарубежных странах, она попыталась построить мост между армянами, проживающими по всему миру и Возродившейся Арменией. У членов Национальной Делегации и самого Г. Норатункяна было много встреч с чиновниками США, Великобритании и других европейских стран и благотворительных учреждений, на сей раз делались попытки решить проблему помощи армянским беженцам и сиротам, проблемы предоставления им возможности переселиться на свою родину.

Все письма, поступающие по адресу Национальной Делегации, рассказывали об отчуждении сирот и не могли быть проигнорированы или остаться без последствий, таким образом Национальная Делегация

попыталась решить проблему с помощью чиновников АмерКом и администарации центрального офиса в Нью-Йорке. Национальная Делегация одновременно вела переговоры с Правительством Советской Армении о передаче взрослых сирот из приютов АмерКом на Родину. Норатункян утверждает, что согласно Национальной Делегации, Советская Армения будет приютом для армянских сирот, иначе, везде, куда бы они не ехали,рано или поздно они снова будут стоять перед опасностью сплава. При таких трудных условиях армянская Национальная Делегация незадолго до ее роспуска попыталась сыграть ту же самую роль для армян эмигрантов, приютившихся за границей и создавших пространные колонии, что и во время Правительства первой Республики и Советской Армении. Она пыталась перевести как можно больше эмигрантов и сирот на родину с помощью постоянных и последовательных переговоров с АмерКом и другими гуманитарными организациями, поскольку ситуация была действительно неблагоприятной для армян, но действия Комитета Ближнего Востока в этих областях были далеки от того, чтобы быть удовлетворительными.

В четвертой главе - "ДЕЙСТВИЯ АМЕРКОМ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ. СОТРУДНИЧЕСТВО С ВЛАСТЯМИ" говориться о новой стадии деятельности АмерКом в Армении, связанной с учреждением Советской власти в Армении. 14-ого декабря 1920г., спустя несколько дней после учреждения Советской власти, председатель Комитета по Революции С. Касян и председатель Национального Комитета по Иностранным делам А. Бекзадян проинструктировали гражданских и военных властей Советской Республики Армения способствовать действиям АмерКом всеми возможными способами.

После учреждения Советской власти в Армении Правительство Америки действовало, естественно, более осторожно в области, поскольку все существующие исторические и политические условия изменились. Советская Армения также действовала осторожно, поскольку чувствовала, какими могут быть результаты и для людей, и для страны, если сироты в течение долгого времени останутся в сфере морально-психологического каждодневного воспитания американцев. Но была одна бесспорная правда - недавно созданная большевистская власть не имела возможности кормить большую армию ни эмигрантов, ни сирот, которая пополнялась с большой скоростью и умножалась день за днём, таким образом, единственный правильный шаг, который Правительство сделало тогда, было решение продлить действия АмерКом, пока страна не будет в состоянии заботиться о своем населении сама. Но Правительство поняло очень хорошо, что для того, чтобы решить проблему, оно должно было пойти на уступки, иногда даже закрывать глаза на некоторые проблемы.

Естественно, что у АмерКом были некоторые интересы продлить сотрудничество, поскольку финансовые средства, пожертвованные американскими людьми, мягко говоря, не были потрачены на саму цель.

Вышеупомянутое, за и против мнения о деятельности АмерКом привело к единственному логическому выводу, что более поздняя политика АмерКом взяла крутой поворот. В течение долгих лет Советская Армения и усилила положения коммунистического режима, и вывела страну из кризиса, таким образом, американцы очень хорошо понимали, что уже бессмысленно лелеять надежду на будущие действия в области, что они не смогли продиктовать свои условия, не смогли стать лидером

ситуации и именно поэтому гуманитарные действия уступили место не очень приятному поведению.

Таким образом, до 1930г. АмерКом значительно помог Советской Армении, но позже у Советской Армении были подозрения, что АмерКом занимался не оказанием гуманитарной помощи армянским людям, а занимался присвоением большей части помощи. Он также занимался антикоммунистической пропогандой в школах и приютах, недопустимой политикой направления их взглядов к другой стороне океана, таким образом его дальнейшая деятельность была приостановлена.

Обобщая все проблемы, обсужденные в исследовании, мы пришли к выводу, что пятнадцатилетяя деятельность американского Комитета Помощи Ближнего Встока в регионе имела и позитивные,и отрицательные стороны, но мы считаем, что во время кризиса в Армении положительная сторона сыграла и значительную и спасительную роль для людей.

Это исследование будет поучительно для того, чтобы развить отношения со многими иностранными общественными организациями в Республике Армения и для того, чтобы исследовать армяно-американские отношения.

SUREN AVETISYAN

THE ACTIVITY OF THE AMERICAN COMMITTEE FOR RELIEF IN THE NEAR EAST IN ARMENIA (1918-1930)

SUMMARY

The study of the problem of the humane help shown to the Armenian nation from the American Committee for Relief in the Near East, which was founded with the aim to help the nations of Near East during World War I, is interesting not only from the point of the elucidation of the work of the committee, but also from the point of the Armenian-American collaboration. It is also interesting for looking after the fate of the first Republic of Armenia and Soviet Armenia and the fates of hundreds of thousands emigrants and orphans crowded in Armenian colonies, as well as discussing the real picture of that historical period.

This study is also important from the point of getting the complete idea of the historical period being discussed and it is actual by the fact that our nation clashed with the problem of surviving at the beginning of the 1990's and nowadays it is difficult to imagine how the processes would have developed without external help.

The aim of the work is to represent the activity of the AmerCom stimulated in the region for nearly 15 years based on the research of newly brought to light as well as archival documents, which require new commentaries and memorandums concerning the theme.

In the foreword the modernity, the goals and the problems, the theory of the sources, the scientific and practical novelty and importance of the theme are well founded.

In the first chapter of the book - "THE BEGINNING OF THE COLLABORATION BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE AMERICAN COMMITTEE AND THE AID OF THE AMERICAN COMMITTEE TO ARMENIA" the hard political situation in the country is represented, which itself resulted in hard economic situation. Because of this situation many pleas asking for help, which were addressed to the government of the republic from nearly all settlements, were often left unanswered as the whole country was in the clutches of famine and epidemics. Almost 40 000 orphans in Armenia were in inconsolable state. 15.612 of them found shelter in orphanages with the help of the Government from October 1918 until the first months of 1919. The number of neglected orphans wandering in the streets surpassed for several times the number of orphans who were under the care of the State.

Every day several hundreds of these orphans were dieing under the walls and in the streets before the eyes of the adults who were as helpless and hard up for care as the orphans.

As stated above, the activity of AmerCom from May 1918 to April 1919 in the territory of the First Republic of Armenia was spontaneous, manifested itself only in separate, private steps and nearly didn't make any changes in the problem of getting the republic out of the disastrous state.

So the first regulated activity of AmerCom with the Republic of Armenia began from May 1919. But the country was in extremely shattered and tragic state and the activity of AmerCom included nearly all the spheres of the internal life of the newly founded republic - guardianship of the emigrants and the poor population, recruitment of the orphans and opening of orphanages, founding hospitals, mobile emergency rooms, workshops, organizing the education, aid to the army and to the soldiers, building, acquisition of seeds of grain and other cultured plants, organizing the sowing and cultivation and so on.

According to the accounts of the Government during 1919 Armenia got from America 1.295.243 pods of flour which continued until the April of 1920. Besides the food products Armenia received also warm clothes and drugs from time to time.

But by order given on the 4th of May by the Supreme Headquarters of the Committee for Relief in the Near East in Tbilisi it was suggested to the American Committee to leave Armenia because of the riots of the Bolsheviks in May. In June 1920 by order of AmerCom the provision of food for the population was stopped as the Committee tried to summarize its activity during one year, to regulate its enrolments in order to represent them to New York.

So since July 1920 the American Committee has considerably reduced its activity in the territory of the republic, cut down to the minimal extents the volume of the food received, concentrated its orphanages and offices in Alexandrapol (Gyumri) and mainly began to take care of the orphans.

Many archival documents state that the humane aid of the American Committee has had a positive influence upon the territory of the first Republic of Armenia.

In the second chapter - "AMERCOM'S EDUCATIONAL ACTIVITY AND THE ACTIVITY OF TAKING CARE OF THE ORPHANS IN ARMENIA IN 1919-1920" it is discussed that the Committee for Relief in the Near East has begun to take care of the orphans

since 1915. Orphanages were opened in Syria, Greece, Constantinople, Egypt, Palestine, Caucuses and in other places.

On the 12th of April the Minister of Guardianship of the Republic of Armenia Sahak Torosyan and the Representative of the Armenian Department of AmerCom Captain Elder signed an agreement according to which the solicitude and upbringing of the orphans living in all orphanages, aid posts, hospitals and also of wandering orphans was left to the solicitude of the AmerCom. AmerCom was obliged to take care of the Armenian orphans crowded in the territory of Georgia.

AmerCom was obliged to comply with all the expenses for the care of the orphans and the control over the educational and moral-psychological atmosphere in orphanages was reserved for the Minister of the Guardianship. The Government of Armenia obliged not to interfere in the interior order of the Committee. According to the datum of the Minister of Guardianship by the 1st of May there were 86 orphanages and 10 children's hospitals in the territory of Armenia where there were 13.820 orphans.

The AmerCom tried to stimulate educational activity in Armenia in parallel with the activity of taking care of the orphans. In August 1919 in the letter addressed to the ministry of public education from AmerCom it was mainly suggested to take under solicitude of the State the orphans of school age from all orphanages and not the separate orphanages. On the one hand the reason was that the Ministry of Public Education was obliged to look after the education of the orphans, and on the other hand taking into account the fact that AmerCom didn't have any building to begin the new school year either.

But the American orphanages greatly differed from the orphanages under the solicitude of State by their opportunities and means. The orphans were provided with food, clothes, sanitary hygienic and medical attention lessened the number of epidemics and death-rates. The orphans besides general educational subjects studied different handicrafts, foreign languages and so on.

So the examination of various archival documents reveals the very indisputable truth that with all their undeniable advantages the schools and orphanages of the AmerCom were bringing up children with the traditions of American schools absolutely ignoring the circumstance that being born Armenian children live in other surrounding and conditions, that it will be difficult for them to adapt to the environment, to make it up with the children of the same age who have been brought up in traditional Armenian families with national spirit and customs.

In the third chapter - "THE INTERRELATION AND COOPERATION OF THE AMERICAN COMMITTEE FOR RELIEF IN THE NEAR EAST AND NATIONAL DELEGATION", the cooperation of AmerCom and the Armenian National Delegation which acted in the Armenian colonies and abroad is presented.

From 1921 to 1924 the head of the National Delegation was Gabriel Noratunkyan and the delegation led by him was presenting the interests of Armenian people sheltered in foreign countries, it tried to build a bridge between Armenians spread around the world and reviving Armenia.

The members of the National Delegation and G. Noratunkyan himself had many meetings with dignitaries of the U.S.A., Great Britain and other European countries and charitable establishments trying to solve the problem of assisting Armenian migration and orphans, of giving them opportunity to transmigrate to their motherland.

All the letters got by the address of the National Delegation which were ringing the tocsin of alienation of the orphans could not be ignored and left without consequences, so the National Delegation tried to solve the problem with the help of AmerCom's current officials and the leading stuff of the central office in New York. The National Delegation was simultaneously negotiating with the Government of Soviet Armenia about transferring adult orphans from AmerCom's orphanages to motherland.

G. Noratunkyan maintained that according to the National Delegation Soviet Armenia would be the haven for Armenian orphans otherwise wherever they go they would face the danger of fusion.

Under such difficult conditions the Armenian National Delegation, until its dissolution, was trying to play the same role for emigrant Armenians sheltered abroad and who have established voluminous colonies as the Governments of the first Republic and Soviet Armenia. It was trying to transfer as many emigrants and orphans to motherland as possible due to constant and consecutive negotiations with AmerCom and other humane organizations, as the situation was really inauspicious for the Armenians but the activities of the American Committee for Relief in the Near East in these regions were far from being satisfactory.

The fourth chapter - "THE ACTIVITIES OF THE AMERCOM IN SOVIET ARMENIA, THE COOPERATION WITH THE AUTHORITIES", tells about the new stage of AmerCom's activity in Armenia connected with the establishment of Soviet rule in Armenia. A few days after the establishment of the Soviet system on 14th of December, 1920, the president of the Revolution Committee S. Kasyan and the National

Commissar of Foreign Affairs A. Bekzadyan instructed the civic and military authorities of Soviet Socialist Republic of Armenia to assist the activities of AmerCom in every possible way.

After the establishment of the Soviet system in Armenia the Government of America was naturally more wary in playing his role in the region as all the existing historical and political conditions had changed. Soviet Armenia also adopted this wary politics as it anticipated the results of leaving the orphans to American's moral-psychological everyday upbringing for a long time for both the people and the country. But there was one indisputable truth, the newly created Bolshevik authority had no opportunity to feed neither the great number of the emigrants nor the orphans which was proliferating with great speed and was multiplying day by day, so the only right step that the Government took at that time was the decision to prolong the activities of the AmerCom until it would be able to take care of its population itself. But the Government realized very well that it had to make concessions to solve the problem, sometimes even by closing eyes on some problems. It was natural that AmerCom had its own interests in prolonging the cooperation as the financial means donated by American people, to put it mildly, weren't wholly spent for the very purpose.

So the extended sphere of AmerCom's activities still continued to be the care and education of the orphans. There were both long-term experience, conditions and opportunities, and programs worked out together with the Government.

The Government appreciated and accepted the activity of AmerCom of taking care of the orphans but the articles had already been published in Diaspora and local periodicals where AmerCom's activity was being criticized, some wary treatment was developed in the ruling regions and probably this was the reason why the contract with AmerCom which had been signed in November of 1922 was reconsidered on the 24th of January in 1923, then on the 10th of February.

The above-mentioned for and against opinions concerning the activity of AmerCom resulted in the only logical conclusion that later AmerCom's policy took sharp turn. Soviet Armenia strengthened the positions of communist regime and took the country out of the crisis during years, so the Americans felt very well that it was pointless to cherish a future hopes with the region, that they could not dictate their conditions, could not be the leader of the situation, and that's why the humane manner changed to not such pleasant and acceptable behavior.

So until 1930 AmerCom considerably aided Soviet Armenia but later when Soviet Armenia had suspicions that AmerCom was not engaged in showing humane help to Armenian people but it was engaged in appropriating the main part of the aid. It was also engaged in anti-communist preaching in schools and orphanages, in the unacceptable policy of directing their stare to the other side of the ocean, so its further activity was stopped.

Generalizing all the problems discussed in the study we have come to the conclusion that the fifteen-year-old activity of the American Committee for Relief in the Near East had both positive and negative sides, but we think that during the crisis in Armenia the positive side was the considerable and life-saving role for people.

This study will be instructive for developing relations with a number of foreign public organizations in the Republic of Armenia and for investigating the Armenian-American relations.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Ա) Արխիվային նյութեր

1.1 Հայաստանի ազգային արխիվ /ՀԱԱ/
Ֆ. 39- Մերձավոր Արեւելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի մանուկների խնամատարության բաժին, g.1, գ.17:
Ֆ. 57- Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, g.5, գ.169:
Ֆ.113- ՀՍԽՀ ժողկոմխորհ, g. 3, գ.174, 204, 235, 396, 418, 419, 664, g. 30, գ.14, g. 38, գ. 7, 10, 24, 27, 30, 33, 42, 98, g. 43, գ. 294:
Ֆ 114- ՀՍԽՀ արդգործժողկոմ, g.1, գ. 22: Ֆ.116, g. 3, գ.14: Ֆ.119, g.1, գ.13:
Ֆ.122- ՀՍԽՀ լուսժողկոմ, g.1, գ.102, 112, 328, 339, 347, 399, 422, 508:
Ֆ.131- ՀԽՍՀ բանվորագյուղացիական և կարմիրբանակայինների պատգամավորների Լենինականի քաղաքային-գավառային գործադիր կոմիտե, g.1, գ. 272, g. 3, գ. 25:
Ֆ.138- ՀՍԽՀ Երևանի գավառի և տեղամասային հեղափոխական կոմիտեներ, g.1, գ14:
Ֆ.154- Կարմիր խաչի ընկերության Հայաստանի Կենտրոնական կոմիտե, g. 3, գ. 6:
Ֆ.199- Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդ, g.1, գ. 22, 27, 90, 133, 190:
Ֆ.200- Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն, g.1, գ.362, 438, 439, 638:
Ֆ.202- Հայաստանի առաջին հանրապետության ֆինանսների նախարարություն, g.1, գ. 333:
Ֆ.205- Հայաստանի առաջին հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարարություն, g.1, գ.446, 484, 562, 566, 619, 634, 636, 688, 689, 697, 732, 755, 767, 775, 777, 799, 801, 806, 855, 873, 900:
Ֆ.207- Հայաստանի առաջին հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարություն, g.1, գ.46, 94, 106:
Ֆ.282- Չոպանյան Արշակ, g.1, գ. 60:
Ֆ.430- Հայ ազգային պատվիրակություն, g.1, գ. 30, 241, 252, 260, 263, 284, 338, 638, 641, 690, 731, 846, 873, 881, 883, 884, 885, 886, 887, 891, 914, 944, 991, 1280, 1294, 1295, 1402:
Ֆ.1387- Հովհաննիսյան Հայկ Հակոբի – մանկավարժ, հասարակական գործիչ, g.1, գ. 270, 272, 278, 296, 301, 302:

Բ) Տպագիր սկզբնաղբյուրներ

1.2. Զախարյան Ա., Ամերկոմի գործունեությունը Հայաստանում, փաստաթղթերի հավաքածու, Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, N 4, էջ 47-68:
1.3. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատար., 2000:-455 էջ:
1.4. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922-1923 թթ. հաշվետվությունը, Յերեվան, Կենտգործկոմի հրատարակություն, 1925: - 536 էջ:
1.5. Геноцид армян: ответственность Турции и сообщества. Документы и коментарий обязательства мирового . В 2 т.-М.: Гардарики, 2000. - т.1. -816 с.-М. Гардарики, 2003-т.2,ч.1. -912 с. - М., Гардарики, 2005 - т.2, ч.2. -608 с.

2. Աշխատություններ

ա) հայերեն

2.1. Ազատեան Լիպարիտ, Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, 240 էջ: Գիրք երկրորդ, Լոս Անճելըս, 1999, -312 էջ: Գիրք երրորդ, Լոս Անճելըս, 2002, -263 էջ:
2.2. Արծրունի Վահէ, Հայ-տաճկական պատերազմը:Հայ սպայությունը: Շատախ, Երևան, Մուղնի հրատար., 2002, -456 էջ:
2.3. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, տպ. «Համազգային», Պեյրութ 1968, -487 էջ:
2.4. Հովհաննիսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Առաջին տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2005, -604էջ:
2.5. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1985, -474 էջ:
2.6. Մելքոնյան Էդ.., Հայ բարեգործական ընդհանուր միության պատմություն, տպ. «Մուղնի», Եր., 2005, -582 էջ:
2.7. Նանսեն Ֆ. Խաբված ժողովուրդ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2000, -285 էջ:
2.8. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, -684 էջ:
2.9. Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., Պատմ. ինստ., 2006, -434 էջ:

2.10. Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ. Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 1999, -539 էջ:
2.11. Ղազախեցյան Վ ., Հայաստանը 1920-1940թթ. Եր.: Պատմ. ինստ., 2006, -564 էջ:
2.12. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007,-260 էջ:
2.13. Արզումանյան Մ., Նանսենը և Հայաստանը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1977, -378 էջ:
2.14. Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940թթ.), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 1975, -294 էջ:
2.15. Պողոսեան Ս., Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը, Եր., Զանգակ-97, 2004, -264 էջ:
2.16. Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927թթ.), Երևան 1965, -264 էջ:
2.17. Մելքոնյան Էդ., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., Նոյյան Տապան, 1999, -202 էջ:
2.18. Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում. Ե.: «Գիտություն» հրատ., 2008, -122 էջ:

Բ/ Անգլերեն
2.19. James L. Barton, Story of Near East Relief (1915-1930) an interpretation, the Macmillan company New York 1930.
2.20. Merrill D. Peterson, “Starving Armenians”: America and the Armenian Genocide,1915-1930 and after, University of Virginia Press, 2004.
2.21. Kerr E. Stenley, The Lions of Marash: Personal Experiences with American Near East Relief, 1919-1922, 1973.

3. Հոդվածներ

3.1. Բալասանյան Թ., Մանկատները Հայաստանում 1917-1920թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1968թ., N 2(5), էջ 217-220:
3.2. Ղազախեցյան Վ., Հայկական միացյալ պատվիրակության գործունեությունը Լոզանի կոնֆերանսում (1922-1923թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների, 2007թ., N 1-2, էջ 98-120:
3.3. Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության

կրթության ոլորտում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, թիվ 2, էջ 60-73:
3.4. Ավետիսյան Ս, Սոցիալ-տնտեսական իրադրությունը Հայաստանում 1918-1920թթ. և Ամերկոմի առաջին քայլերը հանրապետությանը օգնելու ուղղությամբ, «Հայոց պատմության հարցեր», 2006, թիվ 7, էջ 132-140:
3.5. Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի որբախնամ գործունեությունը Խորհրդային Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 89-99:
3.6. Ավետիսյան Ս., Հայ ազգային պատվիրակության և Ամերկոմի համագործակցությունը 1920-ական թվականներին, «Հայոց պատմության հարցեր», 2007, թիվ 8, էջ 287-295:

4. Ատենախոսություններ

4.1. Դանիելյան է.Գ., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996: 162 էջ:
4.2. Հայրապետյան Կ.Պ., Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. հունիս-1919թ. մայիս), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006: 173 էջ:

5. Պարբերական մամուլ

Ամսագրեր
5.1. Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1971:
5.2. Որբաշխարհի աստղ: Հանդես ամսօրյա: Օրգան Մերձավոր Արևելքի որբերի դաշնակցության: Տպ. Ս. Թաշճյանի, ապա՝ «Ազատ», Բեյրութ, 1930:
5.3 Հայաստանի կոչնակ, Նյու Յորք, 1925:
5.4. Խորհրդային Հայաստան-1920-1925, Երևան 1926:
5.5. Նորք, հանդես, Երևան, 1922:
Թերթեր
5.6. Ժողովուրդ, Երևան, 1918:
5.7. Աշխատանք, Երևան, 1919:
5.8. Խորհրդային Հայաստան, 1924:
Օտարալեզու
5.9. The New York Times, 1920, 1922.

ՀԱՎԵԼՎԱԾ

N 1

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 հունիսի 1919թ.
Երևան

Լսեցին.-

Խնամատարության մինիստրի զեկուցումը որբանոցների դպրոցական ուսումնական մասը Հանրային կրթության մինիստրությանը հանձնելու մասին:

Որոշեցին.-

Ի նկատի ունենալով, որ որբանոցները Ամերիկյան կոմիտեին հանձնելուց հետո մնում է հայոց կառավարության ձեռքին միմիայն որբանոցների դպրոցական ուսումնական մասը, կենտրոնացնել այդ Հանրային կրթության մինիստրության մեջ:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 94, թ. 16: Տպագիր:

N 2

ԱՄԵՐԿՈՄԻ ԿՈՎԿԱՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

6 սեպտեմբերի 1920թ.
Ալեքսանդրապոլ

Պատիվ ունեմ հայտնելու, որ Ձեր N 3412 գրությունը օգոստոսի 14-ից ստացել եմ և ցավում եմ, որ իմ գրասենյակիցս բացակա լինելու պատճառով պատասխանը ուշացել է:

Առաջ, քան Ձեր նամակի մեջ բերած առաջարկություններին պատասխանելս, ես կարծում եմ, որ լավ կլիներ, եթե ես գծեի

Մերձավոր Արևելքին օգնող կոմիտեի նպատակը և կրթական ծրագիրը իր որբանոցների վերաբերմամբ:

Նյու Յորքի գլխավոր կոմիտեի կողմից նշանակված է մի կրթական վերատեսուչ, որ դեռ Կովկաս չի հասել, բայց շուտով կլինի այստեղ: Հետագա տողերը չպիտի լինեն վերջնական, մինչև վերոհիշյալ պարոնի որոշումը, բայց համոզված եմ, որ նրանք կլինեն համաձայն կոմիտեի ղեկավարների ընդհանուր քաղաքականության հետ:

Ձեզ հայտնի է, որ կոմիտեի գործունեության մեջ կենտրոնացած են ամբողջ ամերիկյան ժողովրդի բարեհաճությունը, սիմպատիան և ցանկությունը՝ օգնելու Հայաստանին: Կոմիտեի ցանկությունն է նպաստել որոշակի կերպով Հայաստանի ապագային, և նա կարծում է, որ այդ նպատակին հասնելու համար ամենալավ միջոցն է տալ իրեն հանձնված որբերին մի այնպիսի կրթություն, որը միջոց կտա նրանց դառնալ ապագա օգտակար անդամներ Հայաստանի Հանրապետության: Մենք չենք ցանկանում օտարացնել մանուկներին իրենց ցեղից և կառավարությունից, բայց մենք ցանկանում ենք դաստիարակել նրանց այնպես, որ նրանք ստանան ամերիկյան դաստիարակության ամենալավ էլեմենտները, որպիսի դաստիարակության հետևանք է այն, որ Ամերիկան դառել է երկրագնդիս ամենաառաջադեմ երկրներից մեկը: Մեր նպատակին հասնելու համար անպայման հարկավոր է, որ մենք մեր կրթական գործի մեջ կարողանանք աշխատել նույնքան ազատ, ինչպես համանման կազմակերպությունները Ամերիկայում: Ամերիկայում գոյություն ունեն թե' պետական և թե' մասնավոր պետական հիմնարկություններ: Առաջինները, իհարկե, ամբողջապես գտնվում են կառավարության հսկողության ներքո, իսկ վերջիններին տրված է մեծ ազատություն իրենց կյանքի մեջ:

Կոմիտեի որբանոց դպրոցները Հայաստանում շատ մոտ են վերջին տեսակի ամերիկան հիմնարկություններին և պիտի աշխատեն ձեռք ձեռքի տված կառավարության հետ, բայց մնալով բոլորովին ազատ նրա իսկական հսկողությունից:

Այն փոփոխությունները, որ Դուք առաջարկում եք ներկա կոմիտեի և Հայաստանի կառավարության միջև կնքվելիք Ձեր պայմանագրի մեջ, այնպիսի բնավորություն ունեն, որ բոլորովին անընդունելի են կոմիտեի կողմից:

1. Կրթական մինիստրը վերապահում է իրեն վերահսկողության և կոնտրոլի իրավունքը:

2. Որ միայն այն ուսուցիչները պիտի աշխատեն կոմիտեի դպրոցներում, որոնք նշանակվում են մինիստրի համաձայնությամբ:

3. Որ կրթական ծրագրի մեջ մտցվելիք փոփոխությունները կատարվեն մինիստրի համաձայնությամբ:

Հավատացնում եմ Ձեզ, որ կոմիտեն ոչ այժմ, ոչ էլ երբևիցե չի կարող ընդունել վերոհիշյալ առաջարկությունից և ոչ մեկը: Եթե Հայաստանի կառավարությունը որոշել է թե' այժմ և թե' ապագայում հաստատ

մնալ իր այդ պահանջների մեջ, ես կխնդրեի, որ այդպիսին ուղարկվեր ինձ գրավոր կերպով, որպեսզի ես կարողանայի ուղարկել այդ գրությունը Նյու Յորքի գլխավոր կոմիտեին միանգամ ընդմիշտ վճռելու այդ շատ նշանավոր խնդիրը:

Մենք պատրաստ ենք համաձայնել սկզբնական պայմագրին, բայց ես կցանկանայի մի նկատողություն անել նրա հոդված 3-ի վերաբերյալ:

Այդ հոդվածը ասում է, որ կոմիտեի դպրոցները պիտի ունենան Հայաստանի պետական դպրոցների ծրագիրը, համենայն դեպս դասարաններում ավանդվելիք առարակաների վերաբերմամբ մենք պիտի հետևենք ըստ կարելվույն մոտիկ, սակայն ես դարձնում եմ Ձեր ուշադրությունը այն հանգամանքի վրա, որ մեր դպրոցները այսպես թե այնպես զանազանվում են սովորական դպրոցներից: Այդ վերջինների աշակերտը ունի ընտանիք, և ծնողները կարող են հոգալ նրա մասին մինչև նրա 21 և ավելի տարեկան հասակը, մինչդեռ մեր որբանոցներում մենք պիտի կրթենք մանուկներին այնպես, որ նրանք 15-16 տարեկան հասակում կարողանան թողնել դպրոցը և աշխատել իրենց համար ապրուստի միջոցներ: Այդ հանգամանքը անհրաժեշտորեն կպահանջի մեզնից որոշ կրճատումներ կատարելու դասարանում անցկացրած ժամերի մեջ, որպեսզի նրանց միջոց տրվի արհեստներ սովորելու:

Մեր աշակերտները միևնույն ժամանակ, որի ընթացքում ուրիշ երեխաներ հետևում են իրենց սովորական դպրոցական պարապմունքներին, պիտի ստանան թե՛ ընդհանուր կրթություն և թե՛ որևէ արհեստ:

Կարծում եմ, որ վերոհիշյալից Դուք մի գաղափար կստանաք կոմիտեի կրթական նպատակների և վերաբերմունքի մասին: Ինչպես վերևում հիշեցի, այս տողերը չպետք է համարել որպես վերջնական բացատրություն մեր քաղաքականության, մենք միայն աշխատեցինք Ձեզ տալ մի գաղափար այն հիմնական սկզբունքների մասին, որոնց վրա հիմված են մեր հիմնարկությունները: Եթե ցանկանում եք, մենք կվերդարձնենք այդ խնդիրը ավելի մանրամասնորեն մի քանի շաբաթից հետո, երբ տեղս կհասնի մեր վերատեսուչը:

Հավաստիացնելով Ձեզ իմ դեպի Ձեզ ունեցած հարգանքի մեջ,
մնում եմ պարոն Ձեր Յարրոու

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թթ. 157-158: Պատճեն: Մեքենագիր:

N 3

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՔՇՄԱՆ ՄԱՍԻՆ

9 սեպտեմբերի 1920թ.
Երևան

Ձեր 6 սեպտեմբերի գրությունը ստացանք:

Ինչպես երևում է մեր նախկին՝ N 3412 գրությունը այնքան էլ չի պարզել նախարարությանս տեսակետը մեր փոխհարաբերությունների վերաբերյալ:

Շատ լավ գիտակցում ենք, որ թե՛ Ձեր և թե՛ կառավարության, որը այժմ որբերի վերաբերմամբ ծնողների պարտականությունն է ստանձնած, նպատակն է որբերին տալ այնպիսի կրթություն, որ նրանք ապագայում դառնան պիտանի գործնական կյանքի համար, հայրենասեր և ազնիվ քաղաքացիներ: Կարծում ենք, որ մեր հարաբերությունների մեջ առաջուց չպետք է որևիցե կետ մուք մնա, որպեսզի առիթ չդառնա ապագայում իրար չհասկանալուն:

Դուք Ձեր գրության մեջ հիշում եք, որ պետք է ազատ լինեք դպրոցական ծրագրերի խնդրում, ինչպես այդ լինում է մասնավոր դպրոցների նկատմամբ Ամերիկայում: Եթե նախարարությունս գրում է, որ ծրագրի փոփոխությունը պիտի կատարվի նախարարությանս հաճությամբ, դա չի նշանակում, թե մեր դպրոցական պաշտոնական ծրագիրը պիտի ամբողջությամբ առանց փոփոխությամբ կիրառվի Ձեր որբանոցներում: Մենք արդեն առիթ ենք ունեցած Ձեզ վստահեցնելու, որ նախարարությունս այն կարծիքին է, որ գործնական բնույթ կրող պարապմունքները որբանոցային դպրոցներում պետք է առաջնակարգ տեղ գրավեն, ուստի և պարզ է, որ նախարարությունս չի կարող ընդդեմ լինել այն փոփոխություններին, որ առաջ պիտի գան ուսմանը գործնական բնույթ տալու պատճառով: Մյուս կողմից նախարարությունս, որբերի ապագայի վերաբերմամբ պատասխանատու լինելով ժողովրդի առաջ, չի կարող վերահասու չլինել այն մասին, թե ինչպես է տարվում որբերի կրթական և դաստիարակչական գործը: Դա այն հայրական պարտականությունն է, որը Ամերիկայում ծնողներին հնարավորություն է տալիս վերահասու լինել ազատ դպրոցների կյանքին և գերադասություն տալ իր ցանկացած դպրոցին: Այդ պարտականությունն է, որ ստիպում է մեզ վերապահել վերահսկողության և ծրագրերի փոփոխության իրավունքը:

Ինչ վերաբերում է մեր վերահսկողությանը, նա հանդես է գալիս նաև այն ընդհանուր սկզբունքից, որ պետությունը վերահասու պետք է լինի դպրոցների կյանքին, երկրորդ, որ անցյալ տարի, ինչպես երևում է մեր շրջանային տեսուչների զեկուցումներից, ամերիկյան դպրոցներում կային մի շարք անպատրաստ ուսուցիչներ, որ չունեին ոչ մի կրթական ցենզ: Պետությունը չի կարող անտես առնել նաև այն, որ կարող են դասատուների ցանկի մեջ ընկնել այնպիսի անձինք, որ ճանաչվում են իբրև մեր պետության դեմ պայքարողներ, օրինակ բոլշևիկ, մինչդեռ կոմիտեդ, ծանոթ չլինելով տեղական պայմաններին և հասարակությանը, կարող է այնպիսի սխալանքի մեջ ընկնել, որից դպրոցական կյանքը մեծապես կարող է տուժել: Մենք պարտականություն ենք զգում այդպիսի սխալների առաջն առնելու նպատակով վերահասու լինել Ձեր դպրոցական կյանքին:

Ահա այն հանգամանքները, որ, կարծում ենք, կհամոզեն Ձեզ, թե ինչու կառավարությանն անհրաժեշտ է վերահսկողության իրավունքը:

Լիահույս ենք, որ կոմիտեդ, ի նկատի առնելով մեր բացատրությունը, կհամաձայնի մեր տեսակետին:

Հանրային կրթության և արվեստի նախարարի օգնական՝
Սոտնիկյան

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թ. 152 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 4

ՀՍԽՀ ՀԵՂԿՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՍԽՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1920թ.
Երեւան

Ընդունելով Մերձավոր Արեւելքի օգնության կոմիտեի գործունեությունը գաղթականական, որբական եւ ընդհանրապես խնամատարական գործում օգտակար եւ անհրաժեշտ Խորհրդային Հայաստանում, ՀՍԽՀ հեղկոմը նրա գործունեության շարունակությունը եւ ընդարձակումը համարելով անսահման ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցությունը եւ հավաստիացնում է բռնագրավումների դեմ:

Ուստի առաջարկում է ՀՍԽՀ բոլոր քաղաքացիական եւ զինվորական իշխանություններին ցույց տալ նույն կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցությունը իրենց գործունեության ընթացքում[370]:

Հեղկոմի նախագահ՝ Ս.Կասյան

Արտաքին գործերի
ժողովրդական կոմիսար՝ Ա.Բեկզադյան

Պատճեն: Մեքենագիր:

N 5

Թարգմանություն անգլերենից

Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև Համաձայնագիր

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության, փաստաթղթում այսուհետ «Կառավարություն» և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև:
2. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը բացառապես մարդասիրական կազմակերպություն է, որը հանդիսանում է Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսի հատուկ գործողությունների մաս, և որի նպատակները, համաձայն իր Կանոնադրության, հետևյալն են՝

   «տրամադրել օգնություն և աջակցել Մերձավոր Արևելքի և հարակից տարածքների տառապած և հալածված ժողովրդի հայրենադարձությանը, իրավունքների վերականգնմանը, վերստեղծմանը; հոգ տանել որբերի և միայնակների մասին և նպաստել նրանց սոցիալական, տնտեսական և արդյունաբերական ապահովվածությանը, ովքեր պատերազմի փոփոխություններից ուղղակիորեն կամ անուղղակիորեն հայտնվել են աղքատության և հալածանքի մեջ, մարդկանց գազանություններից և այլ իրենց վերահսկողությունը կորցրած պատճառներով»:
3. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը չունի քաղաքական նպատակներ, պատճառներ և դրդապատճառներ, ինչպես նաև չի ներկայանում որպես հատուկ ձևի քաղաքական, սոցիալական կամ արդյունաբերական կազմակերպություն:

---

[370] ՀԱԱ, Ֆ.114, ց. 2, գ.46, թ. 33, նաև տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 89-90:

4. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը չի հետապնդում առևտրային կամ ֆինանսական նպատակ: Այն չի նպաստում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ մասնավոր կոմերցիոն կամ առևտրային ձեռնարկությանը, ինչպես նաև դրանց վստահված անձանց կամ մասնակիցներին՝ տվյալ գործունեությունից ֆինանսական կամ կոմերցիոն շահույթ ստանալու հարցում:
5. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի ամերիկյան անձնակազմը և աշխատակիցները չունեն իրենց գործողություններից անձնական, ֆինանսական կամ կոմերցիոն օգուտ:
6. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հիմնադրամներն ու սնունդը տրամադրվում են կամավորական անհատների կողմից, որպես բարի կամքի դրսևորում, որոնք բացառապես գործում են առաջնորդվելով առանց օթևան մնացածներին, որբերին և այլ անհաջողակներին օգնելու գաղափարով:
7. Գործելով վերը նշված Կոնգրեսիոնալ կանոնակարգի և պայմանների համաձայն, Մերձավոր Արևելքի նպաստամատույցը և գործընկեր գործակալությունները ծախսել են ավելի քան 25000000 ԱՄՆ դոլար տարածքում և Անդրկովկասի Միութենական Հանրապետությունների մարդկանց նպաստավորելով:
8. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը պատրաստակամ է իր կարողությունների սահմաններում ամբողջ ուժով շարունակել իր օգնության առաքելությունը, ցանկանալով իրականացնել ցանկացած ծառայություն ուղղված Սովետական Պետության տարածքում գալիք տնտեսական զարգացմանն ու բարգավաճմանը՝ համագործակցելով Կառավարության հետ :
9. Հաշվի առնելով վերոգրյալ նորմերը, որոնք հանդիսանում են Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի մի մաս, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Կառավարությունը հայտնեց իր Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հետ ամբողջ ուժերով աշխատելու և համագործակցելու պատրաստակամության մասին:
10. Ընկալելով, որ սույն պարագրաֆը չի փոփոխում որևէ գործող գրավոր պայմանագրի դրույթներ, Կառավարությունը սույնով հաստատում է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի գործողությունների իրականացման ընթացքում ներկայումս Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից զբաղեցրած կամ օգտագործվող կամ հետագայում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին տրվող բնակարանների, հողատարածքների և այլ սեփականության վարձակալությամբ վերցնելը, ազատ զբաղեցնելը և օգտագործելը:
11. Կառավարությունը խոստանում է պաշտպանել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի գործողությունները տեղական իշխանությունների չլիազորված գործակալների և Կառավարության ցանկացած մասնաճյուղի կամ վարչության կողմից, որոնք չեն ստորագրել սույն փաստաթուղթը, միջամտությունից:

12. Օգնության նպատակներով կամ Ամերիկայի Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի անձնակազմի կողմից զբաղեցված կամ օգտագործվող օգնության բոլոր ապրանքները, տեղական արտադրանքը, մեքենաները, սարքավորումները և սեփականությունը չեն կարող ենթարկվել բռնագրավման, պետականացման, հարկման կամ վարձակալման:
13. Օգնության կամ Ամերիկայի Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի անձնակազմի կողմից օգտագործվելու նպատակով ներկրված բոլոր ապրանքները պետք է ազատված լինեն մաքսավճարներից կամ այլ հարկերից:
14. Կառավարությունը համաձայնում է ապահովել Նպաստամատույցի ապրանքների և դրա անձնակազմի անվճար տեղափոխումը երկաթուղով Բաթումից կամ Անդրկովկաս մուտք գործելու համար անհրաժեշտ այլ նավահանգստից օգնության գործողությունների արդյունավետ վերահսկման և կազմակերպման անհրաժեշտության դեպքում, և այս օգնության գործողությունների ընթացքում կհաստատի Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից իր անձնակազմի բացառիկ օգտագործումը և երկաթուղով ապրանքների տեղափոխումը: Նպաստամատույցի ապրանքների տեղափոխումը երկաթգծով պետք է առաջնահերթություն ունենա առևտրային կամ այլ տեսակի տեղափոխումների նկատմամբ, եթե Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կարծիքով նախընտրելի վերաբերմունք ցուցաբերելու անհրաժեշտություն կա:
15. Կառավարությունը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին անվճար կտրամադրի գործող հեռագրային, հեռախոսային, փոստային և սուրհանդակային ծառայությունների օգտագործման հնարավորությունը և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի համար կապահովի ուղերձների արագ տեղափոխման նույն առաջնահերթությունը, որն ունի Կառավարությունը: Կառավարությունը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի համար կապահովի ջրի և էլեկտրականության անվճար օգտագործումը այնտեղ, որտեղ դա հնարավոր է օգտագործել՝ հոսպիտալներում, մանկատներում և Ամերիկյան Նպաստամատույցի աշխատողների բնակարաններում:
16. Կառավարությունը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին աջակցություն կտրամադրի արտոնյալ պայմաններով ձեռք բերելու և տեղափոխելու որոշ քանակությամբ վառելափայտ և քարածուխ Անդրկովկասի անտառներից, այն վայրերից, որոնք մատնացույց կարվեն Կառավարության կողմից և հարմար կլինեն երկաթուղու համար, քանի որ դա անհրաժեշտ է Նպաստամատույցի աշխատանքների իրականացման համար: Կառավարությունը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին կապահովի համապատասխան քանակությամբ վառելիքով, քսայուղով, նավթով, բենզինով, և այլ

յուղերով, որոնք անհրաժեշտ են Նպաստամատույցին և տրանսպորտային փոխադրումներին:

17. Կառավարությունը կներկայացնի Անդրկովկասյան Հանրապետությունների բնակչությանը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի նպատակներն և մեթոդները, հստակ կերպով իրականացնելով Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և ժողովրդի միջև համագործակցություն և համատեղ համաձայնություն, և կապահովի Նպաստամատույցի գործողությունների մաքսիմալ արդյունավետությունը:
18. Կառավարությունը կապահովի Ամերիկայի Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի ամբողջ անձնակազմին Անդրկովկասյան Հանրապետությունների տարածքում ազատ բնակություն հաստատելու և տեղաշարժվելու իրավունք, և զերծ կպահի անձնական փնտրտուկներից և հետապնդումներից:
19. Կառավարության և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև համագործակցությանը աջակցելու նպատակով անհրաժեշտ է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցում ընտրել կամ նշանակել Կառավարության կողմից ներկայացուցիչ, որի պարտականությունը կլինի նպաստել Կառավարության և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև համագործակցությանն ու համատեղ համաձայնությանը: Այդ ներկայացուցիչը կարող է ցանկացած ժամանակ փոխվել երկու կողմերի՝ Կառավարության և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի պահանջով, իրավահաջորդը պետք է նշանակվի վերոգրյալ կերպով:
20. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը տարբերվում է բոլոր առևտրական և շահույտ հետապնդող կազմակերպություններից՝ ա/ այն զբաղվում է բացառապես աշխատողներին աշխատանք հայթայտելու օգնությամբ, բ/ նրա գործունեության հիմնական ուժերն ուղղված են որբ և կախման մեջ գտնվող երեխաներին նյութական օգնություն տրամադրելուն, և գ/ այն չունի իր գործողություններից բխող որևէ մասնավոր եկամուտ. սույնով սահմանվում է, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը աշխատանքային պայմանագրեր կնքելու համար պետք է դիտարկվի որպես Կառավարական կազմակերպություն և օգտվի Կառավարության կողմից նմանատիպ կազմակերպությունների համար հաստատված բոլոր արտոնություններից:
21. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցից նամակ ստանալու և փոխանցելու համար անհրաժեշտ է հետևյալի առկայությունը՝
Ուղարկվող նամակ. փաթեթը, որն իր մեջ է պարունակում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի նամակը, կարող է ստուգվել և վավերացվել Սովետական դիվանագիտական կնիքով 19-րդ կետում նշված Մերձավոր Արևելքի Նպաստամատույցում գործող Կառավարության ներկայացուցչի կամ նրա լիազորված անձի կողմից:

Այդպիսով, կնքված փաթեթը անձեռնմխելի է և հետագա վերստուգման ենթակա չէ, կարող է առանց հետաձգման անմիջապես ուղարկվել նշված ուղղությամբ:

Ստացվող նամակ. դրսից ստացված նամակի փաթեթը պետք է կնքվի մուտքի ժամանակ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և Կառավարության ներկայացուցիչների կողմից առանց այն բացելու և ստուգելու: Այդպիսով, կնքված փաթեթը անձեռնմխելի է և պետք է անմիջապես ուղարկվի Մերձավոր Արևելքի Նպաստամատույց՝ մինչև նշված ուղղությամբ հասնելն առանց կնիքը վնասելու:

22. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի ներկայացուցիչները իրավունք ունեն շոգենավով ազատ մուտք գործել Բաթումի կամ այլ նավահանգիստներ, ինչպես նաև իրենց բնակության վայր: Որպեսզի այդ առաջարկը ուժի մեջ մտնի, Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի պահանջի համապատասխան, այն հաստատվում է Կառավարության կողմից: Կառավարությունն օգնության առաջարկով իր վրա պատասխանատվություն է վերցնում իրականացնել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի աշխատակիցներին համապատասխան նավահանգստում՝ Բաթումում կամ այլ նավահանգիստներում մուտք գործելու համար:
23. Սույն համաձայնագիրը վավերացվել և ամրագրվել է Անգլերեն և Ռուսերեն լեզուներով: Երկուսն էլ համազոր արժեք ունեն[371]:

Վավերացված է Կառավարության կողմից՝

Ա.Մռավյան
ՀՍՍՀ վարչապետ

Ն.Տերոլազարյան
ՄԱՆ հետ համագործակցության
Կառավարության հանձնաժողովի
անդամ

Վավերացված է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից՝

Չ. Վ. Վիքրեյ
Գործադիր Հանձնաժողովի Անդամ
և Գլխավոր Քարտուղար
Նյու Յորք

Հ. Ք. Ջաքվիթ
Ադմինիստրատիվ Հանձնաժողովի
Անդամ և Կառավարող Տնօրեն
Կոնստանտնուպոլիս

Ջեսս Կ.Մառդեն
Գործող Տնօրեն, Կովկասյան Մասնաճյուղ

---

[371] Story of Near East Relief (1915-1930) an interpretation, by James L. Barton, the Macmillan company New York 1930. Page 132-136.

N 6

ԱՄԵՐԿՈՄԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՑՈՒՑԱԿՆԵՐ

16 սեպտեմբերի 1920թ.
Երևան

/ Դասացուցակ մանկապարտեզի առարկներու/

1. Մտավոր մասը.
   ա/ Պատմություններ-պատմողական և նկարչական եղանակով,
   բ/ Բնապատմություն-բնության մեջ և ավազի սեղանի վրա,
   գ/ Աշխարհագրություն,
   դ/ Տառաճանաչություն-7 տարեկաններու,
   ե/ Թվաբանություն-երկրաչափ ու փայտե ֆորմերով,
   զ/ Արտասանություններ-ոտանավորներ:

2. Նկարչական մասը.
   ա/ Նկարել գունավոր մատիտներով,
   բ/ Նկարել կրաներկերով,
   գ/ Պատմություններ նկարելու վարժություն,
   դ/ Պարզ ներկելու դասեր-վարժություններ:

3. Ձեռարվեստի և ձեռագործի մասը.
   ա/ թուղթ կտրել,
   բ/ թուղթ ծալել,
   գ/ կավից կաղապարել,
   դ/ հյուսել,
   ե/ կարտոնի գործ,
   զ/ կարի դաս,
   է/ կտորներով կարի դասեր:

4. Գեղարվեստի մասը.
   ա/ երգեր պիանոյի ընկերակցությամբ,
   բ/ մարզանք և երգ,
   գ/ խաղեր:

5. Մաքրության զբաղմունք-իրենց ազատ ժամերին:

II դասացուցակ

Մի դասյան դպրոցի 8-12 տարեկան երեխաներու համար

NN	Առարկաներ	I	II	III	IV	Ծանոթություն	NN
1	Հայոց լեզու	8	8	6	5		1
2	Անգլերեն	-	-	4	4		2
3	Ռուսերեն	-	-	-	3		3
4	Թվաբանություն	6	6	5	4		4
5	Կրոնագիտություն	2	2	2	2		5
6	Բնագիտություն	2	2	3	2	I և II-ին մեջ իրա-զննություն	6
7	Աշխարհագրություն	-	-	-	2		7
8	Հայրենագիտություն	-	-	2	-		8
9	Ազգային պատմությունն	-	-	2	2		9
10	Գծագրություն	2	2	2	2		10
11	Երգեցողություն	3	3	2	2		11
12	Ձեռարվեստ	3	3	2	2	Մարզանք ամեն օր	12
	Գումարը	26	26	30	30		12

Ժամերու տախտակը

8^{45}-9^{15}	մարզանք		8^{20}
9^{15}-9^{30}	դադար և աղոթք		8^{50}
9^{30}-10^{15}	դաս	Ա. պահ.	9^{00}
10^{15}-10^{25}	դասամիջոց		9^{40}
10^{25}-11^{10}	դաս	Բ պահ.	9^{50}
11^{10}-11^{20}	դասամիջոց		10^{30}
11^{20}-12^{00}	դաս	Գ պահ.	10^{40}
12^{00}-2^{00}	հանգիստ և ճաշ		11^{20}
2^{00}-2^{45}	դաս	Դ պահ.	11^{30}
2^{45}-2^{55}	դասամիջոց		12^{20}
$2^{55}3^{40}$	դաս	Ե պահ.	2^{30}

III դասացուցակ

Երեքդասյան դպրոցի 12-16 տարեկաններու համար

NN	Առարկաներ	I	II	III	IV	V	VI	Ծանոթու-թյուն
1	Հայոց լեզու	8	8	6	5	5	5	
2	Անգլերեն	-	-	3	4	4	4	
3	Ռուսերեն	-	-	-	3	4	4	
4	Թվաբանություն	6	6	5	4	4	4	
5	Կրոնագիտություն	2	2	2	2	2	2	
6	Բնագիտություն	2	2	2	2	2	-	I և II իրազննություն
7	Ազգային պատմություն	-	-	2	2	2	2	
8	Ընդհանուր պատմություն	-	-	-	-	2	2	
9	Աշխարհագրություն	-	-	2	2	2	2	III-ին մեջ հայրենագիտություն
10	Հայաստանի աշխարհագրություն	2	2	2	2	1	1	
11	Գծագրություն	2	2	2	2	1	1	
12	Երգեցողություն	2	2	2	2	2	2	
		22	22	26	28	30	30	

Ժամերու տախտակը

Առավոտյան բաժնի դպրոցի

8^{20}-8^{50} մարզանք

8^{50}-9^{00} դադար և աղոթք
9^{00}-9^{40} դաս-Ա պահ.
9^{40}-9^{50} դասամիջոց
9^{50}-10^{30} դաս-Բ պահ.
10^{30}-10^{40} դասամիջոց
10^{40}-11^{20} դաս-Գ պահ.
11^{20}-11^{30} դասամիջոց
11^{30}-12^{10} դաս-Դ պահ.
12^{10}-12^{20} դասամիջոց
12^{20}-2^{30} ճաշ և հանգիստ
$2^{30}5^{00}$ արհեստ

Պատճեն, Ձեռագիր[372]:

Իրիկնապահի դպրոցի

8^{20}-9^{00} մարզանք և դադար

9^{00}-12^{30} արհեստ
$12^{30}2^{00}$ ճաշ և հանգիստ
2^{00}-2^{40} դաս Ա պահ.
2^{40}-2^{50} դասամիջոց
2^{50}-3^{30} դաս Բ պահ
3^{30}-3^{40} դասամիջոց
3^{40}-4^{20} դաս Գ պահ.
4^{20}-4^{30} դասամիջոց
4^{30}-5^{10} դաս Դ պահ.

[372] ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թթ. 141-142: Տես նաև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, թիվ 2, էջ 71-73:

N 7

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՅՑԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՄԵՐԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԲԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

29 հունիսի 1923 թ.

Օտար թէ ազգային կազմակերպութեանց հոգատարութեան ներքև գտնուող հայ որբերուն դաստիարակութեան և կրթութեան հարցը Ազգ. Պատուիրակութեան մտահոգութեան առարկայ եղած էր սկիզբէն ի վեր: Պ. Գ. Նորատունկեան այդ հարցին շուրջ կարծիքներու փոխանակութիւն մը ունեցած էր անցեալ աշնան և ձմրան մասնաւորապէս ամերիկեան Նիր Իսք Ըլլիֆի նախագահ Տր. Պարթընի հետ թէ Բարիզ և թէ Լօզան, և յետոյ Բարիզ մասնագէտներու յանձնած էր պատրաստել ծրագիրը այն ազգային դաստիարակութեան և կրթութեան, որ պէտք էր տրուէր մեր որբերուն: Մասնախումբը, որ շարք մը նիստեր ունեցաւ, իր խորհրդակցութեանց արդիւնքը խտացուց յուշագրի մը մէջ, ուր յանձնարարուած է մանչ թէ աղջիկ որբերու տրուելիք ազգային դաստիարակութեան հետ երկրագործութեան և յարմարագոյն կարգ մը արհեստներու ուսուցումը, և զոր Ապրիլ 19-ին Պ. Գ. Նորատունկեան Տր. Պարթընի ղրկեց նամակով մը որով կըսէր թէ որբերուն ազգային դաստիարակութեան և արհեստագիտական կրթութեան հետ նոյնքան էական է անոնց նկարագրին կազմութիւնը կամ մանաւանդ վերակազմութիւնը: Պէտք է աշխատիլ, որ մեր որբերը դառնան ուղղամիտ և անկեղծ էակներ, թշնամի սուտին և ստրկամտութեան, գիտակ իրենց պարտականութեանց և իրենց պատասխանատուութեանց: Մեր նպատակը պէտք է ըլլայ մեր որբերուն մէջ արմատացնել անգլեսաքսոն նկարագրին սկզբունքները, և ասիկա այնքան կարևոր է, որքան ուսումնական երիտասարդներ կամ ճարտար բանուորներ պատրաստելը: Առանց դաստիարակութեան կրթութիւն մը բարիք մը չէ և կրնայ նոյն իսկ վտանգաւոր ըլլալ:

Ուրախ ենք յայտնելու, որ Տր. Պարթընը, Յունիս 6-ին պատասխանելով Ազգ. Պատուիրակութեան նախագահին, կըսէ թէ ղրկուած ծրագիրը անմիջապէս քննութեան առնուած է Նիր Իսք Ըլլիֆի Գործադիր ժողովին կողմէ, որ սրտագին համամտութիւն յայտնած է այդ ծրագրին և յանձնած է զայն իր ընդհանուր քարտուղար Պ. Վիքրիի որպէս զի այս ամառ իր Մերձաւոր-Արևելքի մէջ կատարելիք երկար ճամբորդութեան միջոցին կարելին ի գործ դնէ իրականացնելու համար յուշագրին բովանդակած թելադրութիւնները: Տր. Պարթընը կըսէ թէ իրենք ալ համամիտ են, որ հայ որբերը մեծցուին վերոյիշեալ սկզբունքներուն հետևողութեամբ, փոխադրուին հետզհետէ Երևա-

նեան Հանրապետութեան մէջ, անոնց համար պատրաստելով այնտեղ հաստատուելու և ապրելու միջոցներ:

Այս առթիւ պէտք է յիշել, թէ Նիր Ռսթ Ռըլիֆի Արևելքի բոլոր տնօրէնները Օգոստոսին համագումար մը պիտի ունենան Աթէնք, ի միջի այլոց զբաղելու համար հայ որբերուն դաստիարակութեան և կրթութեան յիշեալ ծրագրին գործադրութեամբը, և Ազգ. Պատուիրակութեան կողմէ ներկայացուցիչ մը պիտի մասնակցի այդ ժողովներուն:

Ազգ. Պատուիրակութիւնը միանգամայն անգլիական Լորտ Մէյրոս Ֆնտի առաջարկած էր վերոյիշեալ ծրագիրը, և Ֆընտը Մայիս 3-ին պատասխանած է թէ համաձայն է պարզուած սկզբունքներուն հետ և ձեռք կառնէ պէտք եղած միջոցները որպէս զի իրենց խնամքին տակ գտնուող հայ որբերուն տրուելիք մտաւորական և արհեստագիտական կրթութիւնը անոնցմէ պատրաստէ հայ լաւ քաղաքացիներ:

Ֆ. 430, ց. 1, գ. 241, թթ. 5-6: Պատճեն: Մեքենագիր:

N 8

ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԲԵՐ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 հոկտեմբեր 1925թ.
Լենինական

Ամերկոմը արտասահմանում բնակվող ամերիկյան քաղաքացիներից դիմումներ է ստանում՝ որբանոցներում գտնվող հայ երեխաներին որդեգրելու համար: Հնարավո՞ր է արդյոք այդ նպատակով երեխաներին արտասահման ուղարկել եւ ի՞նչ կարգով կարելի է այդ անել:

Ներկայացուցիչ՝ Գ.Սարգսյան

Ֆ. 113, ց. 38, գ. 98, թ. 116: Բնագիր: Մեքենագիր:

N 9

ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ՝ ԱՄԵՐԿՈՄԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

30 հոկտեմբեր 1925թ.
Լենինական

Պատասխանելով Ձեր այս գրությանը՝ հարկ եմ համարում նշել, որ ինչպես անցյալ տարի, նույնպես եւ այս տարի, Ամերկոմի որբության մի մասի լիկվիդացիան կատարվում է ոչ այնքան Ամերկոմի նախաձեռնությամբ, որքան այդ որբության ծնողների եւ ազգականների պահանջներին ընդառաջ գնալու համար: Ամերկոմի սաների 75 տոկոսը (անցյալ տարվա թվերը նկատի ունենալով) ունեն ծնողներ կամ ազգականներ, որոնք, աստիճանաբար ապահովվելով տնտեսապես, ցանկություն են հայտնում իրենց խնամքի տակ առնել որբանոցներում պատսպարված իրենց երեխաներին:

Անցյալ տարի այս գործին ուղղություն տալու համար կազմակերպված լիկվիդացիոն բաժինը իր գործունեության սկզբնական շրջանում մի քանի սխալներ թույլ տվեց, որոնք անցանկալի հետեւանքներ ունեցան, սակայն ներկայումս արմատական միջոցներ են ձեռք առնված բոլոր թյուրիմացություններից խուսափելու համար: Յուրաքանչյուր երեխային արձակելուց առաջ՝ քննվում է նրա ծնողների կամ ազգականների տնտեսական դրությունը, եթե այդ դրությունը տանելի է, երեխային Ամերկոմի ծառայողները անձամբ հանձնում են այդ ծնողներին ներկայացուցչությանս թույլտվությունը եւ ծնողների համաձայնությունն ունենալուց հետո:

Այս ձեւով երեխաների վերոհիշյալ մասի լիկվիդացիային ձեռնարկված է, պետք է ասել, դեռ այս տարվա սկզբից, իսկ մայիսից հատուկ խորհրդակցությամբ, որին մասնակցել են ժողկոմխորհի ներկայացուցիչը, Լենքաղգավգործկոմի նախագահը եւ Ամերկոմի ներկայացուցիչները: Անդրժողկոմխորհի ներկայացուցչության գիտությամբ որոշված է ընթացիկ տարվա մեջ իրենց ծնողներին եւ ազգականներին հանձնել 3000-ի չափ երեխաներ: Ներկայումս այս ծրագիրը կատարված է արդեն 75 տոկոսով եւ մինչեւ դեկտեմբերի սկիզբները կամբողջացվի:

Ներկայացուցիչ՝ Գ.Սարգսյան

Ֆ.113, ց.38, գ.98, թ.118 : Բնագիր: Մեքենագիր:

N 10

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՀԱՏՈՒԿ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ն. ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՈՐԴԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ Ա.ՄՈՒԱՎՅԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

9 նոյեմբերի 1925թ.
Երեւան

Համաձայն Ձեր N 2340 գրության՝ հայտնվում է լուսժողկոմ ընկ.Մռավյանի մակագրությունը. «Եթե որբերի որդեգրումը ամերիկացիների կողմից կախված է այդ երեխաների մեկնման հետ Ամերիկա, ապա լուսժողկոմը դեմ է»:

Գաղտնի բաժնի վարիչ՝ Ա. Նիկողոսյան

Ֆ.113, ց.38, գ.98, թ.113: Բնագիր: Մեքենագիր:

Մերձավոր Արևելքի նպաստամատույցի սննդամթերքի նավը



Նպաստամատույցի խորհուրդի անդամները, ձախից՝ Ուիլյամ Ու. Պիտ, Հարոլդ Ա. Հաչ, Ջեյմս Լ. Բարտոն, Էդուարդ Ս. Մուր, Թ. Հ. Փ. Մեյն, Ջորջ Հ. Ուոշբրն, Արթուր Կուրտիս Ջեյմս և Արթուր Սաֆիերլենդ: Հունվար 1919 թ.

Ամերկոմի որբանոցում խոհարարական դասարան: Լենինական (Գյումրի):

Ամերկոմի որբանոցում կարուձևի խմբակ: Լենինական (Գյումրի):

Ամերկոմի որբանոցում մանածագործական խմբակ,
հայուհիներ, Սիրիա:

Գորգագործություն



Ասեղնագործություն

Անօթևան որբերին օգնության մեկնող բուժօգնության կառք:

Առողջության զննում Ամերկոմի որբանոցում



Կովկասում երեխաների երկհարկանի հայտն անկողիններով առաջին շենքը:



Ամերիկայի հոսպիտալ, որտեղ մեկ անկողնում գտնվում է 3-4 հիվանդ որբեր:

Անօթևան որբեր

Ամերիկայից հագուստ ստացած անօթևան որբեր



Որբեր որոնք մեկ տարի է գտնվում են Ամերիկայի որբանոցում

Անտուն տղա, Երևան:

Նախքան մանկատուն ընդունվելը



Սերծավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի երեխաները



Հայ աղջիկներ

Մահացածները կենդանիների մեջ

Հագով չէ, բայց լավ է, որ կա

Աղաղակում են, որ հավաքագրվեն

Ա[մերկոմ]ից դեռ հագուստ չեն ստացել



«Պոլիգոնի որբանոցը», " ձեռքերը վեր", Ալեքսանդրապոլ, 1925թ. հոկտեմբեր:



Ամերկոմի որբանոցի բակում, Լենինական /Գյումրի/:

Փողոցում



Կույր հայ մայրն իր երեխաների հետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԿՈՄԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 13

1. Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը և Ամերկոմի գործունեության սկիզբը 13
2. Ամերկոմի օգնությունը Հայաստանին (1919թ. մայիս -1920թ. մայիս)..... 23
3. Իրադրության սրումը տարածաշրջանում և ամերիկյան օգնության կազմակերպման խնդիրը 1920թ. 2-րդ կեսին 64

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ԱՄԵՐԿՈՄԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1919-1920թթ. 80

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 113

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.
ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 152

ՎԵՐՋԱԲԱՆ 186

РЕЗЮМЕ 192

SUMMERY 200

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 206

ՀԱՎԵԼՎԱԾ 210

ՆԿԱՐՆԵՐ.....227

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 239

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ (ԱՄԵՐԿՈՄ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918-1930 թթ.

СУРЕН АВЕТИСЯН

ДЕЯТЕЛЬНОСТЬ АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА ПОМОЩИ БЛИЖНЕГО ВОСТОКА В АРМЕНИИ (1918-1930гг.)

SUREN AVETISYAN

THE ACTIVITY OF THE AMERICAN COMMITTEE FOR RELIEF IN THE NEAR EAST IN ARMENIA (1918-1930)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
ՏՊԱԳՐԻՉ՝ ԼԵՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24գ

Սուրեն Ռուբիկի Ավետիսյանը ծնվել է 1981թ. սեպտեմբերի 7-ին Արագածոտնի մարզի Կարբի գյուղում: 1998թ. ավարտել է Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցը: 1998-2004 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում. 2002 թ. ստացել է բակալավրի, իսկ 2004-ին՝ մագիստրոսի աստիճան:

2004թ. Սուրեն Ավետիսյանը ընդունվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 2007թ. պաշտպանել է «Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի /Ամերկոմ/ գործունեությունը Հայաստանում 1918-1930թթ.» թեկնածուական ատենախոսությունը, որը կազմում է սույն մենագրության հիմքը: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների: 2008թ. Ս. Ավետիսյանը աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնում՝ որպես գիտաշխատող:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Սուրեն Ավետիսյանը զբաղվում է դասախոսական աշխատանքով: Նա ԵՊՀ-ի Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս է:

[2000/1

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

Ա
II
99562

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ